

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

*Նվիրվում է պրոֆեսոր Ալեքսանդր
Վիլենի Սաֆարյանի ծննդյան 60-ամյակին*

*К 60-летию профессора
Александра Виленовича Сафаряна*

*Festschrift in Honour of Professor
Alexander V. Safarian*

№ 25

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
2024

*Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ
գիտական խորհրդի կողմից:*

Գլխավոր խմբագիր՝

Մելքոնյան Ռուբեն

պ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ

Խմբագրական խորհուրդ

Մելիքյան Գուրգեն

բ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ

Հովհաննիսյան Դավիթ

բ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ

Սաֆարյան Ալեքսանդր

պ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ

Ոսկանյան Վարդան

բ.գ.թ., պրոֆեսոր, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ

Քոչարյան Հայկ

պ.գ.թ., դոցենտ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետ

Տեր-Մաթևոսյան Վահրամ

պ.գ.դ., Հայաստանի ամերիկյան համալսարան

Պիոտրովսկի Միխայիլ

պ.գ.դ., պրոֆեսոր, ՌԴ ԳԱ ակադեմիկոս, Արևելագիտական ֆակուլտետ, Մանկո Պետերբուրգի պետական համալսարան, Պետական էրմիտաժ, ՌԴ

Մասլով Ալեքսեյ

պ.գ.դ., պրոֆեսոր, Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտ, Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ

Րեպենկովա Մարիա

բ.գ.դ., պրոֆեսոր, Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտ, Մոսկվայի պետական համալսարան, ՌԴ

Կուզնեցով Վասիլի

բ.գ.դ., Արևելագիտության ինստիտուտ, ՌԴ ԳԱ

Էքմեքչիողլու Լեռնա

Մասաչուսեթսի տեխնոլոգիական համալսարան, ԱՄՆ

Ուռազանա Կուռալայ

բ.գ.դ. պրոֆեսոր, Եվրասիական ազգային համալսարան, Ղազախստան

Սարգսյան Անի

բ.գ.թ., Համբուրգի համալսարան, Գերմանիա

© ԵՊՀ հրատ., 2024

Editor-in-chief

Professor Dr. Ruben Melkonyan,
Dean of the Faculty of Oriental
Studies, YSU

Editorial Board

Professor Dr. Gurgen Melikyan	Faculty of Oriental Studies, YSU
Professor Dr. Davit Hovhannisyan	Center for Civilization and Cultural Studies, YSU
Professor Dr. Alexander Safarian	Faculty of Oriental Studies, YSU
Professor Dr. Vardan Voskanyan	Faculty of Oriental Studies, YSU
Dr. Hayk Kocharyan	Faculty of Oriental Studies, YSU
Dr. Vahram Ter-Matevosyan	American University of Armenia, RA
Professor Dr. Mikhail Piotrovsky	Faculty of Asian and African Studies, SPBSU, State Hermitage, RF
Professor Dr. Alexey Maslov	Institute of Asian and African Studies, MSU, RF
Professor Dr. Mariya Repenkova	Institute of Asian and African Studies, MSU, RF
Dr. Vasilii Kuznetsov	Institute of Oriental Studies, Russian Academy of Sciences, RF
Dr. Lerna Ekmekcioglu	Massachusetts Institute of Technology, USA
Professor Dr. Kuralay Urazaeva	Eurasian National University, Kazakhstan
Dr. Ani Sargsyan	University of Hamburg, Germany

Главный редактор

Рубен Мелконян д.ист.н., профессор, декан факультета востоковедения ЕГУ

Члены редакционной коллегии

Гурген Меликян к.ф.н., профессор, факультет востоковедения ЕГУ

Давид Оганнесян к.ф.н., профессор, факультет востоковедения ЕГУ

Александр Сафарян к.ист.н., профессор, факультет востоковедения ЕГУ

Вартан Восканян к.ф.н., профессор, факультет востоковедения ЕГУ

Айк Кочарян к.ист.н., доцент, факультет востоковедения ЕГУ

Ваграм Тер-Матевосян д.ист.н., Американский университет, РА

Михаил Пиотровский д.ист.н., профессор, академик РАН, Восточный факультет СПбГУ, Государственный Эрмитаж РФ

Алексей Маслов д.ист.н., профессор, Институт стран Азии и Африки, МГУ, РФ

Мария Репенкова д.ф.н., профессор, Институт стран Азии и Африки, МГУ, РФ

Василий Кузнецов д.п.н., доцент Института востоковедения, РАН, РФ

Лерна Экмекчиоглу д.ист.н., Массачусетский технологический институт, США

Куралай Уразаева д.ф.н., профессор, Евразийский национальный университет, Казахстан

Ани Саргсян к.ф.н., Гамбургский университет, Германия

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Մելքոնյան

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՅՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆԽՈՆՋ
ՍԱՐՏԻԿԸ. ՊՐՈՖԵՍՈՐ ԱԼԵՔՍԱՆԴԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ 60-ԱՄՅԱԿԻ
ԱՌԻԹՈՎ..... 11

ԻՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Սաֆրաստյան

XX ԴԱՐԻ ՓԱՐԻԶԸ ԻՐԱՆԱԿԱՆ ՎՏԱՐԱՆԴԻ ԳՐՈՂԻ ԿՅԱՆՔՈՒՄ 16

Աստղիկ Գեղամյան

«ՎԻՍ ԵՎ ՌԱՄԻՆ» ՊՈԵՄԻ ԴԵՐԸ ՇԱՀՆԱՄԵԱԿԱՆ ՍԻՐԱՅԻՆ
ԴԱՍՏԱՆՆԵՐԻՑ ՆԻԶԱՄԻԱԿԱՆ ՍԻՐԱՎԵՊԵՐԻ ԱՆՑՄԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԻՆ..... 31

ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ալեքսանդր Սաֆարյան, Աշոտ Սողոմոնյան, Միրանույշ Գալշոյան

ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ (ԹՈՒՐՔԵՐԵՆԻ,
ՕՍՄԱՆԵՐԵՆԻ, ԱԴՐԲԵԶԱՆԵՐԵՆԻ, ՂԱԶԱԽԵՐԵՆԻ,
ԹՈՒՐՔՄԵՆԵՐԵՆԻ) ԳՈՅԱԿԱՆԻ ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ
ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ..... 50

Ռուբեն Մելքոնյան

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԸ ԹՈՒՐՔ ԵՎ ԱԴՐԲԵԶԱՆՑԻ ՌԱԶՄԱ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ 65

Վարուժան Գեղամյան

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԵԴԻԱ ԴԱՇՏԻ ԱՌԱՆՁԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԱԶԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ..... 84

Անուշիկ Մարտիրոսյան

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՍԼԱՄԱԿԱՆ
ՎԵՊԵՐՈՒՄ..... 105

Նաիրա Պողոսյան

Թոմար-Հոնոլուսիսի «ԲԱՅ ԳԱՂՏՆԻՔ». ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ
ՓՈՒԽՆԱԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ Զ. ԹԱՆԻ «ԿԱՐՈՏ» ՎԵՊՈՒՄ..... 128

Լիլիթ Մովսիսյան

ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԱՂԲԵՋԱՆԵՐԵՆԻ
ՕՐԻՆԱԿՈՎ..... 141

Տաթևիկ Հակոբյան

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ «ՊԱՏՄԱԿԱՆԱՑՎԱԾ» ԿԵՐՊԱՐԻ
ՍՏԵՂԾՈՒՄԸ. ՍՈՒԼԹԱՆ ԱԲԴՈՒԼ ՀԱՄԻԴ II - ՆԱԽԱԳԱՀ ՌԵՋԵՓ
ԹԱՅՅԻՓ ԷՐԴՈՂԱՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ..... 164

Միլեր Աբրահամյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
19-ԲԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԸ..... 179

Գոռ Հովհաննիսյան

ԹՈՒՐԻՔ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄԻՆԹԵԶԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ԱԶԳԱՅԻՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (1960-ԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1983 Թ.)..... 192

Հայկ Դարբինյան

ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ
ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ..... 216

Վոլոդյա Մկրտչյան

ԿՈՍՈՎՈՅԻ ՃԳՆԱԺԱՍԸ ԵՎ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1990-1999 ԹԹ.) 231

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Արա Հովհաննիսյան

ՍՓՅՈՒՌՔԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ 2009 Թ. ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻՆ..... 247

Վարդան Ալեքսանյան

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐԶ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1019–1045 ԹԹ. 272

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Mann, Oskar. “Our Steppe Is Vast ...”: Kurdish Epics and Tribal Stories from Urfa, 1906. Kurmanji – English. Edited by Barbara Sträuli, Göttinger Orientforschungen, Reihe 3, Iranica, 19, Wiesbaden, Harrassowitz Verlag, 2021, XI+270pp., ISBN 978-3-447-11663-3..... 322

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Նաիրա Գինոյան

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՍԵՎԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ..... 332

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, Պ.Գ.Թ.,
ՊՐՈՖ.ԱԼԵՔՍԱՆԴԻ ՎԻԼԵՆԻ ՄԱՖԱՐՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿ 341

CONTENT

Ruben Melkonyan

THE TIRELESS WARRIOR OF THE DEVELOPMENT OF THE ARMENIAN SCHOOL OF TURKIC STUDIES: ON THE OCCASION OF PROFESSOR ALEXANDER SAFARIAN'S 60TH ANNIVERSARY	11
--	----

IRANIAN STUDIES

Lilit Safrastyan

XX CENTURY PARIS IN THE LIFE OF AN IRANIAN EXILE WRITER	16
---	----

Astghik Geghamyan

THE ROLE OF THE POEM «VIS AND RAMIN» IN THE TRANSITION FROM SHAHNAMEH LOVE STORIES TO NIZAMI'S ROMANCES	31
---	----

TURKIC STUDIES

Alexander Safaryan, Ashot Soghomonyan, Siranuysh Galshoyan

ON THE FEATURES OF TEACHING THE ACCUSATIVE CASE OF NOUNS IN TURKIC LANGUAGES (TURKISH, OTTOMAN TURKISH, AZERBAIJANIAN, KAZAKH, TURKMEN) TO ARMENIAN STUDENTS.....	50
---	----

Ruben Melkonyan

COMMANDER ANDRANIK IN MEMOIRS OF TURKISH AND AZERBAIJANI POLITICIANS AND MILITARY OFFICERS.....	65
---	----

Varuzhan Geghamyan

PECULIARITIES OF TURKEY'S MEDIA LANDSCAPE DURING AKP PERIOD	84
---	----

Anushik Martirosyan

GENERAL CHARACTERISATION OF THE CONTENT STRUCTURE OF ISLAMIC IDENTITY IN TURKISH ISLAMIC FICTION.....	105
---	-----

Naira Poghosyan

TURKISH-GREEK «SECRET REVEALED»: REFLECTIONS OF POPULATION EXCHANGE IN J. TAN'S NOVEL «HASRET» (LONGING).....	128
---	-----

Lilit Movsisyan

MAIN CHARACTERISTICS OF TRANSLATION WORK ON THE
EXAMPLE OF ARMENIAN AND AZERBAIJANI LANGUAGES 141

Tatevik Hakobyan

CREATING A "HISTORICIZED" IMAGE OF THE HEAD OF STATE:
JUXTAPOSITION OF THE IMAGES OF SULTAN ABDUL HAMID II AND
PRESIDENT RECEP TAYYIP ERDOGAN 164

Mher Abrahamyan

POLITICAL PROCESSES IN THE OTTOMAN EMPIRE IN THE 19TH
CENTURY AND THE CONDITION OF ARMENIANS 179

Gor Hovhannisyan

THE TURKISH-ISLAMIC SYNTHESIS: FROM POLITICAL ADVENTURISM
TO NATIONAL STRATEGY (1960'S TO 1983) 192

Hayk Darbinyan

MANIFESTATIONS OF PUBLIC DIPLOMACY AND SOFT POWER IN
ARMENIAN-TURKISH RELATIONS..... 216

Volodya Mkrtchyan

THE KOSOVO CRISIS AND TURKEY'S FOREIGN POLICY (1990–1999) 231

HISTORY

Ara Hovhannisyan

ATTITUDE OF THE DIASPORA TO THE PROCESS OF NORMALIZATION
OF ARMENIAN-TURKISH RELATIONS IN 2009 247

Vardan Alexanyan

ECCLESIASTICAL AND POLITICAL ACTIVITY OF CATHOLICOS PETROS
GETHADARDZ 1019–1045..... 272

REVIEWS

Mann, Oskar. "Our Steppe Is Vast ...": Kurdish Epics and Tribal Stories from
Urfa, 1906. Kurmanji – English. Edited by Barbara Sträuli, Göttinger
Orientforschungen, Reihe 3, Iranica, 19, Wiesbaden, Harrassowitz Verlag,
2021, XI+270pp., ISBN 978-3-447-11663-3 322

RESEARCH NOTE

Naira Ginosyan

POLITICAL NOTES ON THE TREATY OF SÈVRES 332

THE LIST OF PROF. ALEXANDER V. SAFARIAN'S SCHOLARLY AND
METHODOLOGICAL PUBLICATIONS 341

ՀԱՅԿԱԿԱՆ ԹՅՈՒՐՔԱԳԻՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆԽՈՆՋ ՄԱՐՏԻԿԸ. ՊՐՈՖԵՍՈՐ ԱԼԵՔՍԱՆԴԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

Ընդհանրապես հոբբեյանների նկատմամբ կա երկակի մոտեցում. կլոր տարեթվերը կամ պատճառ են դառնում պաթոսային, երբեմն արհեստական ու ստանդարտ գնահատականների, կամ փորձում են դա դիտարկել որպես հերթական ծննդյան օր և չկարևորել: Ես փորձում եմ հարցին մոտենալ մի փոքր այլ դիտանկյունից. եթե մարդն ունի արժանիքներ, վաստակ, անցած ճանապարհ, ապա կլոր տարեթվերը լավ ու հարմար առիթ են դրանց մասին առավել համապարփակ խոսելու, քանի որ հոբբեյանի հաղորդած հանդիսավորությունը, ասես, ժանրային առումով հարմար է նման տեքստերի: Ուստի, օգտագործելով ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի երկարամյա վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանի ծննդյան 60-ամյա հոբբեյանի առիթը՝ կփորձեմ խոսել հատկապես կրթության ու գիտության ասպարեզում նրա վաստակի մասին:

Նախ ուզում եմ սահմանել հետևյալը. Արևելքում և արևելագիտության մեջ «Ուսուցիչ» եզրույթն ու հասկացությունը փոքր-ինչ այլ իմաստ, բովանդակություն և ընկալում ունի: Այդ եզրույթը կիրառողը և դրան արժանացողը որոշակի պատասխանատվությամբ պետք է մոտենան հարցին, որովհետև կարգավիճակն իրոք դառնում է բացառիկ: Բացի այդ, բառի նշանակությամբ պայմանավորված, մարդիկ ունենում են երախտագիտության և հպարտության զգացումներ ու պահեր՝ Ուսուցիչն իր աշակերտի հաջողություններով պայմանավորված՝ հպարտություն ու անկեղծ ուրախություն, իսկ աշակերտը երախտագիտության զգացում, որը նրան պետք է ուղեկցի կյանքի բոլոր փուլերում՝ Ուսուցչի գործունեության ակ-

տիվ և ոչ ակտիվ փուլերում: Այս ամենը ֆիքսելուց հետո, պետք է ասեմ, որ Ալեքսանդր Սաֆարյանն իմ Ուսուցիչն է թյուրքագիտության ասպարեզում, ընդ որում՝ հարցի նաև իրավական, ձևակերպումային առումով: Հիմա արդեն հեռավոր թվացող 1996 թվականին, երբ ընդունվեցի ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոն՝ մեզ մեր մասնագիտության մասին առաջին դասընթացը՝ «Թյուրքագիտության ներածությունը», դասավանդում էր ամբիոնի վարիչ Սաֆարյանը: Այսինքն՝ հենց նա է ինձ ծանոթացրել իմ մասնագիտության այբուբենին, սկզբունքներին, առանձնահատկություններին և այլն: Ավելի ուշ՝ արդեն ասպիրանտական ուսմանս տարիներին, Սաֆարյանը դարձավ իմ թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավարը, և երբ քննարկում էինք ուսումնասիրության թեման՝ նա առաջարկեց զբաղվել 20-րդ դարի թյուրքական գրականությամբ: Խոստովանեմ, որ սկզբում առաջարկը դուրս չէր եկել, քանի որ ես հետաքրքրված էի պատմությամբ և ցանկանում էի պատմագիտական բնույթի աշխատանք գրել: Սակայն Սաֆարյանը ոչ շատ ուղղակի բացատրեց երկու կարևոր հանգամանք. առաջինը՝ թյուրքագիտությունը և արևելագիտությունը համալիր գիտություն է և առանց բանասիրական գիտելիքի ու իմացության լիարժեք մասնագետ հնարավոր չէ դառնալ, և երկրորդ՝ թյուրքական գրականություն իմացող մասնագետների դպրոցն ավելի վատ վիճակում է, դրա շարունակականությունը վտանգված է և ճիշտը այդ պահին գրականությամբ զբաղվելն է, իսկ հետագայում կարելի է նաև ուսումնասիրություններ անել պատմագիտության բնագավառում: Դրանից հետո ես սկսեցի թյուրքական գրականության ընթերցումը, որի առաջին 30 գրքերը ինձ փոխանցեց Սաֆարյանը: Հիմա հետահայաց նայելով նկարագրված իրավիճակին՝ պետք է փաստեմ. այսօր Հայաստանը հետխորհրդային տարածքում և ընդհանրապես համաշխարհային

արևելագիտության ասպարեզում համարվում է «արևելագիտական գրականագիտության» կարևոր կենտրոններից մեկը, քանի որ կան արևելյան գրականության (արաբական, իրանական, թյուրքական) բարձրագույն որակավորում ունեցող մասնագետներ՝ գիտնականներ: Այսինքն՝ դպրոցը շարունակելու խնդիրը լուծվեց. հետագայում ես էլ ղեկավարեցի ասպիրանտների ինչպես թուրքական գրականության, այնպես էլ Թուրքիայի պատմության բնագավառներում: Եվ արդեն ես եմ լիարժեք գիտակցելով՝ փոխանցում իմ ուսանողներին, որ իրական արևելագետը ուղղակի պարտավոր է խորքային գիտելիքներ ունենալ արևելյան գրականությունից, որը հարստացնում է նրա իմացությունների ընդհանուր շտեմարանը և ընդհանրապես պետք է ունենա բանասիրական գիտելիքների հենք ու պատրաստվածություն:

Պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանի գիտամանկավարժական գործունեության մի կարևոր ուղղություն է դասագրքաստեղծ աշխատանքը. նրա համահեղինակությամբ կամ խրախուսմամբ ստեղծվել են թուրքերեն, ադրբեջաներեն, օսմաներեն լեզուների, Թուրքիայի պատմության, թուրքական գրականության դասագրքեր: Սաֆարյանը նաև խրախուսում ու աջակցում է երիտասարդ մասնագետներին գիտական կոչումներ և աստիճաններ ստանալու հարցում. ԵՊՀ թուրքագիտության ամբիոնը, իրոք, տարբերվում է երիտասարդ ու բարձրագույն որակավորում ունեցող մասնագետների թվով:

Պրոֆեսոր Սաֆարյանի գիտական և հասարակական կերպարի կարևոր առանձնահատկություններից է նրա բացառիկ իմացությունը թյուրքալեզու ժողովուրդների մշակույթի և, հատկապես, գրականության ասպարեզում: Առանց չափազանցության կարելի է ասել, որ դազախական, թուրքմենական, թաթարական գրականությունների նման խորագիտակ մասնագետ հայկական արևելագի-

տական դպրոցում չկա: Իր այս իմացությունը պրոֆեսոր Սաֆարյանը օգտագործում է նաև հանրային դիվանագիտության, հասարակական-մշակութային կապերի ամրապնդման գործում, ինչի վկայությունն են նախ նրա մեծ ճանաչումն այդ երկրներում, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների կողմից նրան շնորհված պետական պարգևները:

Ամփոփելով՝ ուզում եմ հստակ նշել մի փաստ, որը կարող է նաև ուղենշային ու օգտակար լինել հայկական արևելագիտական դպրոցի պատմությամբ հետաքրքրվողների, այդ պատմությունը գրողների հետագա սերունդների համար. եթե չլինեին պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանի ջանքերը, ապա վստահաբար կարելի է ասել, որ հայկական թյուրքագիտությունը չէր կարող ունենալ այն գիտական մակարդակը, այն միջազգային ճանաչումը և այն կրթական հաջողությունները, որոնք այսօր ունի: Նրան հաջողվեց իրականացնել շատ կարևոր և միևնույն ժամանակ դժվար խնդիր՝ 1990-ականների կեսերի բարդ, անցումային փուլում ապահովել համալսարանական թյուրքագիտական դպրոցի շարունակականությունը, ինչպես նաև հիմքեր դնել դրա հետագա շարունակման համար ևս: Սա անքննելի փաստ է և Սաֆարյանի անուրանալի ներդրումն է, որի մասին պետք է հիշել այսօր և վաղը: Պետք է հիշել շնորհակալությամբ:

Ես՝ որպես պրոֆեսոր Ալեքսանդր Սաֆարյանի և՛ աշակերտ, և՛ արևելագիտության ֆակուլտետի դեկան, ուզում եմ շնորհակալություն ասել նրան իր գիտամանկավարժական արդյունավետ գործունեության համար, մաղթել առողջություն և երկար տարիների մասնագիտական գործունեություն:

**ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկան
պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ռուբեն Մելքոնյան**



ҚАЗАҚСТАН РЕСПУБЛИКАСЫНЫҢ
АРМЕНИЯ РЕСПУБЛИКАСЫНДАҒЫ
ЕЛШІСІ

AMBASSADOR
OF THE REPUBLIC OF KAZAKHSTAN
TO THE REPUBLIC OF ARMENIA

24 մարտի 2024թ.

Հարգելի՛ պարոն Մաֆարյան,

Ընդունեք անկեղծ շնորհավորանքներս և լավագույն բարեմաղթանքներս Ձեր 60-ամյակի կապակցությամբ: Դուք Հայաստանի գիտության և հայ մշակույթի պարծանքն եք, ականավոր գիտնական, պրպտող հետազոտող, գիտական աշխատանքի հմուտ կազմակերպիչ և նվիրյալ հայրենասեր, ով վայելում է արժանի հեղինակություն Հայաստանում և արտերկրում: Ձեր ամբողջ մասնագիտական կյանքը տքնաջան աշխատանք է՝ գուգորդված ստղանդով և մեծ հոգով:

Հայաստանի Հանրապետությունում Ղազախստանի Հանրապետության դեսպանությունը բարձր է գնահատում Ձեր ներդրումը ղազախական մշակութային ժառանգության առաջնդման և մեր երկրների միջև գիտական, ակադեմիական, մշակութային և հումանիտար կապերի զարգացման գործում:

Այս նշանակալից օրը սրտանց մաղթում եմ Ձեզ քաջառողջություն և երկար տարիների անսպառ եռանդ, խաղաղություն, բարօրություն և ստեղծագործական նորանոր հաջողություններ գիտական և ակադեմիական գործունեության մեջ: Թո՛ղ իրականանան Ձեզ հասցեագրված բոլոր բարեմաղթանքները:

Հարգանքներով՝

Քուլտ Իմանբակ

Երևանի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսանդր Վիլենի Մաֆարյանին

ք. Երևան

XX ԴԱՐԻ ՓԱՐԻԶԸ ԻՐԱՆԱԿԱՆ ՎՏԱՐԱՆԴԻ ԳՐՈՂԻ ԿՅԱՆՔՈՒՄ

Լիլիթ Սաֆրաստյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.016

Քաղաքն անընդհատ շարժման մեջ գտնվող դինամիկ համակարգ է: Քաղաքը՝ որպես պատմամշակութային երևույթ, իր արտահայտումն է գտել գեղարվեստական գրականության մեջ: Դարեր շարունակ աշխարհի բոլոր ստեղծագործողներն իրենց վտարանդիության ճանապարհին տանելով հարազատ քաղաքները իրենց մեջ՝ հայտնագործել են նոր քաղաքներ, որոնք դարձել են ուրախության և դառնության ճակատագրական հանգրվաններ: Փարիզի կերպարը ամերիկյան և ռուս գրականության մեջ ի հայտ եկավ 1920–1930-ական թվականներին: Իրենց ստեղծագործություններում վտարանդի գրողները ներկայացրեցին քաղաքի ազգային բնութագիրը, քաղաքային միջավայրը, կյանքի ոճը, ինչպես նաև քաղաքի «ոգին»: Պարսիկ վտարանդի ստեղծագործողների գրական մտորումներում Փարիզը զրկվում է գեղարվեստականությունից, քաղաքը հանդես է գալիս սփյուռքում ներգաղթյալների ցավի և օտարության փորձառության աշխարհագրական վավերագիր:

Բանալի բառեր: Փարիզ, մշակութաբանություն, քաղաք, գեղարվեստական գրականություն, Իրան, Սփյուռք, վտարանդիություն, փորձառություն, օտարություն:

¹ Լիլիթ Սաֆրաստյանը ԵՊՀ թուրքագիտության ամբիոնի դոցենտ է, բանասիրական գիտությունների թեկնածու, Էլ. փոստի հասցե՝ lilit.safirstyan@ysu.am, ORCID 0009-0008-0307-6752:

*Դեզերումի ճամփաներին,
նա կտանի Քաղաքը իր մեջ
Նա, ինքը՝ Քաղաքը կդառնա²:*

Գրականության մեջ քաղաքը ներկայացվում է որպես մշակութաբանական և իմացաբանական միջավայր, որի պատմաքաղաքակրթական դիմագիծը հաճախ ձևավորվում է այլաբանության և փոխաբերության գրական հնարքների օգնությամբ: Գրական տեքստերում քաղաքի պատկերը հանդես է գալիս որպես իմաստակերպված իրականություն: 19-րդ և 20-րդ դարերի գրականության մեջ ստեղծվեց քաղաքի երկու հակադիր կերպար՝ հումանիստական և հակահումանիստական՝ օտարված քաղաքներ: 1985 թ. բելգիացի պոետ Է. Վերհարնը հրատարակեց «Քաղաք-ծովահրեշ» վեպը, որտեղ ներկայացվում էր եվրոպական քաղաքների սարսափ կերպարը, որոնք ծովահրեշների նման դեպի անդունդ էին տանում քաղաքաբնակներին: 1913 թ. լույս տեսավ Ա. Բելլի «Պետերբուրգ» վեպը, որտեղ նկարագրվում էր Պետերբուրգի՝ հյուսիսային Վենետիկի վանող կերպարը³:

«Կորած իդևերի քաղաք» Նյու Յորքի հակահումանիստական կերպարը վառ ընդգծված է Ս. Ֆիջերալդի, Դոս Պասոսի, Հ. Միլլերի, Թ. Դրայզերի արձակում: Մ. Գորկու բնորոշմամբ. «Նյու Յորքը դեղին սատանայի քաղաք է», իսկ Բելլի, Բուլգակովի, Տոլստոյի, Յամպոլսկու բնորոշմամբ՝ Մոսկվան հանդես է գալիս որպես «սարսափազդու, չար պառավ»⁴: Բուլգակը ներկայացնում է Փարիզը որպես սոցիալա-

² Հայկական արմատներով լեռն պոետ Զբիգնև Հերբերտ (1924–1998), «Հաղորդում պաշարված քաղաքից»:

³ Набилкина Л., Образ города в мировой литературе. Теория и практика общественного развития. № 3, 2014, с. 219–222.

⁴ Там же, с. 219–222.

կան օրգանիզմ. «Փարիզը կատարյալ հրեշ է, նրա տանիքները նման են գիտությամբ և տաղանդներով բեռնված գլուխների...»⁵:

Լեհ հետազոտող Բ. Ժիլկոն իր «Քաղաքի ընթերցումներ» աշխատության մեջ գրում է, որ քաղաքի «ոգին» ի հայտ է գալիս, նախ և առաջ, սիմվոլների միջավայրում, օրինակ. այն քաղաքները, որոնք կառուցված են բլուրների վրա և մոտ են երկնքին՝ սուրբ են համարվում, իսկ, սհա ծովափնյա քաղաքները ունեն սահմանայնություն և կործանման վտանգ, այդ իսկ պատճառով քաղաքի լեգենդներում և միֆերում ի հայտ է գալիս «*memento mori*» մոտիվը⁶:

Քաղաքի գեղարվեստական կերպարի մեջ կարևոր նշանակություն է ձեռք բերում միֆապոետիկ տեղանվանաբանությունը: 1972 թ. լույս ընծայված Իտալո Կալվինոյի «Անտես քաղաքներ» պոստմոդերնիստական վեպում, գլխավոր հերոսներ Մարկո Պոլոյի և Խուբիլայ խանի միջև ընթացող երկխոսությունն է, կյանքի, հիշողության, մահվան, մարդկային փորձառության թեմաներով: Այդ երկխոսության առանցքը կանանց անուններ կրող 55 քաղաքներն են, որոնցից յուրաքանչյուր հինգը սահմանվում է մեկ գաղափարի շուրջ.

Քաղաքներ և հիշողություն

Քաղաքներ և ցանկություն

Քաղաքներ և նշաններ

Առևտրական քաղաքներ

Քաղաքներ և այքեր

Քաղաքներ և անուններ

Քաղաքներ և Մեռյալներ

Քաղաքներ և երկինքը

Շարունակական քաղաքներ

⁵ Анциферов Н., Проблемы урбанизма в русской художественной литературе: опыт построения идеи города Петербурга у Достоевского на основе анализа литературных традиций. М., 2009, с. 74–75.

⁶ Шукин В., Поэтика города. Морфология поэтосферы. Альманах теории и истории науки. N 7, 2013, с. 317–318.

Թաքնված քաղաքներ⁷

Հաճախ քաղաքի կամ քաղաքային նկարագրությունների պոետիկայի մեջ քաղաքը ինքնին դառնում է գլխավոր հերոս: Մ. Ամպերի «La Gre'ce Rome et Dante» (Paris 1850) աշխատության մեջ առաջ է քաշվում 19-րդ դարի ուրբանիստական խնդիրներին, մասնավորապես Հռոմին բնորոշ հետևյալ հայեցակարգը. «Քաղաքը իրենից գաղտնիք ներկայացնող յուրահատուկ անհատականություն է, որին ի գորու են բացահայտել բացարձակ լուսավորյալները, «նվիրյալները», իսկ այլոց համար՝ դա անհասանելի գաղտնիք է»⁸:

20-րդ դարում տպագրվեցին հիմնարար աշխատություններ, որոնք դիտարկեցին քաղաքը, որպես խնդիր, գեղարվեստական գրականության մեջ. Հարկ է հիշատակել Յացևիչի «Պուշկինյան Պետերբուրգը», Ն. Անցիֆերովի «Դոստոևսկու Պետերբուրգը», Բ. Չենսելորի «Չարլզ Դիկենսի Լոնդոնը», Դ. Դելաֆարժի և Ն. Ստեվենսոնի ներկայացրած «Բողլերի, Ռեմբոյի, Հյուգոյի, Ֆլոբերի, Ջուլյայի, Գոթիեյի, և, մասնավորապես Բալզակի Փարիզը»:

Քաղաքը, որպես տեքստ. Փարիզ

Քաղաքը կարող է դիտարկվել որպես ֆիզիկական մանիֆեստ, կամ հայելի, որը արտացոլում է իր մեջ ողջ մշակութային բազմազանությունը: Արտագաղթի ներկա դարափուլում գործածության մեջ է դրվում «diasporic urbanism» եզրույթը, որը իր հետ բերում է համաշխարհային քաղաքների նոր՝ «global cities», «multicultural cities» բնութագիրը: Դարեր շարունակ աշխարհի բոլոր ստեղծագործողները իրենց վտարանդիության ճանապարհին տանելով հարազատ քաղաքներն իրենց մեջ հայտնագործել են նոր քաղաքներ, որոնք դարձել են ուրախության և դառնության ճակատագրական հանգրվաններ:

⁷ Calvino I., *Invisible Cities*, Boston, Classics, 1978.

⁸ Анциферов Н., Указ. соч., с. 13–14.

Ս. Ռուշդին նշում է, որ «Շատ արտագաղթողների նման, շատերի նման, որոնք կորցրել են իրենց քաղաքը, նա գտավ այն իր ճամպրուկում հին, բարակ արկղի մեջ փաթեթավորված: Կունդերայի՝ Պրահան, Ջոյսի՝ Դուբլինը, Գրասի՝ Դանզիգը. վտարանդիները, փախստականները, գաղթականները քարշ են տվել բազում քաղաքներ իրենց քնապարկերում այս թափառական դարի մեջ»⁹:

Փարիզը միշտ եղել է ու կմնա «կաստալյան աղբյուր»¹⁰, «մշակութային Մեքքա» օտարազգի արվեստագետների և ստեղծագործողների համար: «Փարիզը քաղաք չէ: Փարիզը կերպար է, նշան, Ֆրանսիայի սիմվոլը, նրա այսօրը և վաղը: Նրա պատմության, աշխարհագրության և գաղտնի էության դեմքը:»¹¹ Յուրաքանչյուր ստեղծագործող իր ներաշխարհում կերպարում է իր մասնավոր Փարիզը. Բալզակի համար այն «կորած իդձերի» քաղաք է, Ֆ. Սագանի համար՝ «քաղաք, որը երբեք չի քնում»:

Ինչպես նշում է գրող, գրականագետ Ն. Բերբերովան. «Փարիզը պետք չի դիտարկել որպես տեղանք, այլ հարկ է ընկալել որպես նշանային մի ընդհանրություն, անհնար է ապրել Փարիզում, և անտեսել նրան, թաքնվել, միևնույն է նա ներս կխուժի տուն, սենյակ, մեր մեջ, կսկսի փոխել մեզ, կստիպի մեզ հասունանալ, կծերացնի մեզ, կխեղի կամ կվեհացնի, միգուցե, նաև կսպանի »¹²: Շատ գրականագետների կարծիքով *գրական Փարիզի* կայացման համար նշանակալից պատմավուր է 1920-1930-ականները: Վերոնշյալ ժամանակների Փարիզը միայն ընթացող իրադարձությունների ֆոն չէր, այլ առանձին գործող անձ, իր բնավորությամբ, իր կամքով և իր ճակատագրով:

⁹ Rushdie S., *Imaginary Homelands: Essays and Criticism 1981–1991*, London, 1991, p. 277.

¹⁰ Ըստ հին հունական լեգենդի՝ Կաստալյան աղբյուրը գտնվում է Դելֆիի մոտ՝ Պառնաս լեռան լանջին: Աղբյուրի ջուրը անտիկ երաժիշտներին և գրողներին պարգևել է ստեղծագործական ներշնչանք:

¹¹ Беспалова Е., *Париж глазами эмигрантов. Мировая литература на перекрестье культур и цивилизаций*. N 1–2 (17–18), 2017, с. 28.

¹² Там же, с. 28–29.

1920–1930-ականների Փարիզը ամերիկյան «կորած սերնդի» (Գ. Մթայն, Ֆ. Ս. Ֆիցջերալդ, Է. Հեմինգուեյ, Հ. Միլլեր, Է. Փաունդ, Շ. Անդերսոն) ուներ երկակի՝ ցավի և ուրախության զգացողություն: Առավել ուշագրավ է այս շրջանի գեղարվեստական գրականությունը, որը իր մեջ հավաքում և ամբողջականացնում է Փարիզի հեմինգուեյական խճանկարը:

Մոնպառնաս 17 հասցեում գտնվող փարիզյան «La Closerie des Lilas» սրճարանը համարվում է մշակութային Մեքքա բոլոր այն արվեստագետների, մտավորականների ու ստեղծագործողների համար, որոնք գեթ մեկ անգամ եղել են Փարիզում: Տարբեր տարիներին փարիզյան այս գողտրիկ վայրը սիրելի է եղել Ֆ. Ս. Ֆիցջերալդի, Օ. Ուայլդի, Է. Ջոլայի, Պ. Պիկասոյի, Պ. Սեզանի, Ա. Մոդիլիանիի և այլոց համար: Փարիզի մասին հուշերը հենց այս սրճարանում է հավերժացրել ամերիկացի գրող Է. Հեմինգուեյը: Գրողի գրական Փարիզը ուներ ինքնատիպ դիմանկար: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո և կյանքի վերջում Հեմինգուեյը վերադարձել է Փարիզ: Ընդհանրացնելով հուշերը իր սիրելի քաղաքի մասին, նա գրել է. «Փարիզը երբեք չի լինի այնպիսին, ինչպիսին նախկինում էր, չնայած նա միշտ մնացել է Փարիզ, իսկ դու փոխվել ես նրա հետ միասին...»¹³:

Հեմինգուեյի մեկ այլ հայտնի ասույթ. «*տոն, որը միշտ քեզ հետ է*» դարձել է 1956 թ. հրատարակված հուշագրության խորագիրը: «Եթե երիտասարդ տարիքում քեզ բախտ է վիճակվել բնակվել Փարիզում, ապա, ուր էլ որ լինես, մինչև քո կյանքի ավարտը, այն կմնա քեզ հետ, քանզի Փարիզը տոն է, որը միշտ քեզ հետ է»¹⁴: Հեմինգուեյը իր վերջին կնոջ՝ Մերիի հետ, լինելով Փարիզում, իջնանում է «Ռից» հյուրանոցում: Այնտեղ անվանի գրողին են վերադարձնում նկուղում ավելի քան 30 տարի պահպանված իր ճամպուկը, որի մեջ եղած հուշագրությունը հետմահու տպագրվելով՝ ստանում է «Տոն է, որը միշտ քեզ

¹³ Там же, с. 17–31.

¹⁴ Там же.

հետ է» խորագիրը: Հարկ է նշել, որ փարիզյան տեքստը Հեմինգուեյի կյանքում ձևավորվել է դեռևս «Ֆիեստա. երբ ծագում է արևը» վեպի մեջ:

1920-ականներին Պետերբուրգից և Մոսկվայից հետո ռուսական մշակութային մայրաքաղաք դարձավ Փարիզը: Ռուս ներգաղթյալ մտավորականների Փարիզը այլ կերպ կոչվեց «Ռուսական Փարիզ»¹⁵: Ռուս ներգաղթյալների ստեղծագործական դրսևորումների մեջ մեծ դեր խաղաց գրականությունը: Անվանի գրողների (Բավունտ, Մերեժ-կովսկի, Կուպրին, Բունին, Խոդասևիչ, Գազդանով, Տեֆֆի, Գիպիուս, Ցվետանա) համար Փարիզը դարձավ ստեղծագործական մտքի էպիկենտրոն: Ի. Բունինը, առաջին ռուս գրողն է, որին 1933 թ. շնորհվել է Նոբելյան մրցանակ, ավելի քան 30 տարի վտարանդիության մեջ բնակվող Բունինը գրեց հայրենիքի մասին: Բունինի լավագույն գործերը տպագրվել են Ֆրանսիայում:

Փարիզը իրանական վտարանդի ստեղծագործողների մտորումներում.

Իրիկնամուտին սիրում եմ թափառել

Հեռուներում քաղաքի,

անդին սահմաններից մեր անհույս ազատության:

Չ. Հերբերտ

Բոլոր վտարանդի ստեղծագործողների և՛ անհատական և՛ գրական կենսագրությունը նման է, և միևնույն ժամանակ՝ խիստ տարբեր: Վտարանդի պոետ Մ. Էմադին նշում է. «Այժմ, ապրելով այլ ծայրահեղությունների սահմաններում, օրինակ, ինչպես կյանքը Ֆինլանդիայում՝ լճերի, կղզիների, ձյան, միայնության և տխրության մեջ, Պրահայում՝ անհավատարիմ, գեղեցիկ կանանց միջավայրում, հետո Մեխիկոյում, որը նման է մետրոպոլիտեն մի հրեշի, ես տեսնում եմ Թեհրա-

¹⁵ Биск А., Русский Париж 1906–1908 гг. Воспоминания о Серебряном веке. М., 1993.

նր իմ հայրենաբաղձության լույսերի մեջ: Ես կրում եմ Թեհրանը և այլ քաղաքներ իմ մեջ:»¹⁶:

Փարիզը պարսիկ վտարանդի գրողների ստեղծագործություններում դառնում է ինքնահայտնաբերման և ինքնագոհաբերման քաղաք: Գաղափար – իրականություն - կերպար առանցքի շուրջ է հյուսվում գրական Փարիզը, որը դառնում է քաղաք վավերագիր, քաղաք ժամանակագրություն: Փարիզաբնակ երգիչ, երգահան Շ. Գուլիին իր «Աղջիկը Փարիզում» հուշագրության նախաբանում մեջբերում է իսպանացի պոետ Խ. Բերգամինի խոսքերը. «Վտարանդիությունը ամենահարկու անսխտործությունն է, քանի ծերանում ես, նա այնքան վատթար է դառնում»¹⁷:

XX դարի Փարիզը պարսիկ շատ վտարանդիների համար դարձավ ողբերգական ելակետ, հոգևոր և ֆիզիկական ավարտ: Նրանցից շատերը ոչ միայն հայտնագործեցին այս մեծ քաղաքի ներքին, անողոր ժամանակը, այլ ապրեցին նրա կենսական և անատոմիական իրողության մեջ:

1925 թ. Եվրոպա մեկնած պարսիկ անվանի գրող, գիտնական Ս. Հեդայաթը ճակատագրի աննկատ արահետով հանգրվանում է Փարիզում, որտեղ 1927 թ. իրագործում է ինքնասպանության առաջին փորձը՝ նետվելով Մառն գետը, և փրկվում է ձկնորսական նավակի շնորհիվ: 1930 թ. վերադառնում է Իրան, 1950 թ. դեկտեմբերի 3-ին մեկնում է Փարիզ՝ իր ծանր ու տառապալից դեգերումների վերջին հանգրվանը: Փարիզյան այցի հենց առաջին օրերը պարուրվում են անկայունության և հոռետեսության զգացումով:

Ընկերներից մեկին՝ Աբդոլղասեմ Էնջավի Շիրազիին, ուղղված նամակում Հեդայաթը գրում է. «Ես այստեղ ուրախություն չգտա, մե-

¹⁶ The City and Writer: In Tehran with Mohsen Ehmadi, Words Without Borders, April 17, 2015. <https://www.wordswithoutborders.org/dispatches/article/the-city-and-the-writer-in-tehran-with-mohsen-emadi> (մուտքի ամսաթիվ՝ 15.03.2024).

¹⁷ Guppy Sh., A Girl in Paris: A Persian Encounter with the West. New York: Tauris Parke Paperbacks, 2008, p. XV.

կուսացել եմ բոլորից, հասկապես իրանցիներից, գումարն էլ վերջանում է, սակայն ինչ հոգ: Ոչ մի գույն այնքան թանձր չէ, որքան սևը»¹⁸: Փարիզում հեղայաթյան դեգերումների քարտեզագրումը սկսվում է Մոնպարնասի և հաջորդաբար՝ Սուրբ Միքայելի էժանագին հյուրանոց-կացարաններով:

Փարիզում Հեղայաթի միակ ընկերն ու նրա ողբերգական օրերի ակնատեսն ու ուղեկիցն էր երիտասարդ ուսանող Մուսթաֆա Ֆարգանեն, որն ապրիլի 1-ին, գրողին կատարած հերթական այցի ժամանակ, «Denfert-Rochereau» փողոցի էժանագին հյուրանոցային սենյակի նախաշենին դրված զամբյուղը գտնում է՝ լի ճմրթված թղթերով, որոնց մեջ էին Հեղայաթի մահագուշակ խոհերը. «Ես ինձ հիվանդ եմ զգում, երբ վերցնում եմ գրիչը ձեռքս»¹⁹:

Հեղայաթի հուսալքված, անտարբեր պահվածքի մասին են խոսում նաև հայտնի ֆրանսիացի իրանագետներ, Հեղայաթի և Ջամալ-զադեի մտերիմ ընկեր Պիեռ Մենասը և Հենրի Մասեն: 1951 թ. ապրիլի 4-ին Հեղայաթը ինքնասպանություն է գործում 37 «Rue Chapionnet» հասցեում գտնվող իր վերջին հանգրվանում: Փարիզյան մի մզկիթում սակավաթիվ ընկերների և ծանոթների ներկայությամբ և Հ. Մասեի կարճ մահախոսական ճառով հրաժեշտ են տալիս Իրանի մեծ զավակին, հանճարեղ գրողին՝ դեպի հավերժական կյանք:

Հեղայաթը թաղված է Պեր Լաշեզ 87-ում, շիրմաքարին դաջված է Քոռ բու հիշեցնող պարսկերեն և ֆրանսերեն գրառում: Մահվանից առաջ Հեղայաթի գրած խորհրդավոր էսսեներից մեկն է «Կաֆկայի ուղերձը» (1948), պարսիկ գրականագետների դիտարկմամբ՝ այն եզակի փաստաթուղթ է, որը պատկերացում է տալիս ոչ միայն Կաֆկայի հեղայաթյան ըմբռնումների, ընթերցումների ու թարգմանությունների,

¹⁸ Katouzian H., Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer. London, New York: I. B. Tauris & Co, 2002, p. 247.

¹⁹ Ibid., p. 252.

այլ նաև վերջինիս՝ արդի պարսկական գրականության տեսլականի մասին²⁰:

Հեղայաթի ինքնասպանության լեգենդը բանավոր ավանդույթի մի մասնիկը չէ, այլ, հակառակը, տարատեսակ տարբերակներ կարելի է գտնել տասնյակ գրքերում, հոդվածներում, հուշերում և հիշատակումներում, որոնք տպագրվել են նրա մահվանից սկսած: Դեռևս 1949 թ. Թեհրանում նա կորցրել էր որևէ հետաքրքրություն կյանքի հանդեպ, սակայն ցանկություն չունեի վերջ տալու սեփական կյանքին, քանզի Թեհրանը համարում էր անարժան մի վայր կամ սիրում էր Փարիզը և ցանկություն ուներ թողնել հենց այդ քաղաքում:

Կար մեկ այլ տարբերակ. Հեղայաթը չէր ցանկանում կյանքն ավարտին հասցնել Իրանում, քանզի չէր ուզում սեփական դիակով աղտոտել Արիական հայրենիքը²¹: 2009 թ. կինոռեժիսորներ Մ. Շահրնազդարի և Ս. Քալանթարի հեղինակությամբ նկարահանվում է գրողի կյանքի վերջին օրերը լուսաբանող «No 37-ից» ֆիլմը: Իսկ ահա 2004 թ. Սփյուռքում բնակվող կինովարպետ Ղ. Էրրահիմյանը նկարահանում է «Մուրբ և աբսուրդ» կարճամետրաժ ֆիլմը, որը ներկայացվում է Թրիբեկայի կինոփառատոնում: Ֆիլմում հնչում է Գ. Մահլեբի «Հինգերորդ սիմֆոնիան»:

Փարիզի ողբերգական բնակիչներից էր նաև իրանական գրականության մեկ այլ անվանի գրող, դրամատուրգ Ղուլամ Հոսեյն Սաեդին²², որը վտարանդիության ու տխուր վախճանի ուղին էր ընտրել:

²⁰ Rahimieh N., Hedayat's translation of Kafka and the logic of Iranian modernity. -Katouzian H., Sadegh Hedayat: His Work and His Wondrous World. New York: Routledge, 2008, pp. 124–136.

²¹ Katouzian H., Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer. London, New York: I. B. Tauris & Co, 2002, pp. 243–244.

²² 1969 թ. Սաեդիի և Դ. Մեհրոջիի համատեղ գլուխգործոցից՝ «Կոլը» հոգեկան իրապաշտական կինոկտավից հետո նրանց համատեղ ստեղծագործական միությունը շարունակվում է մինչև Սաեդիի ողբերգական մահը: Steu` Dabashi H., Corpus Anarchicum: Political Protest, Suicidal Violence and the Making of Posthuman Body. London: Palgrave Macmillan, 2012, eBook (PDF), p. 167.

«Վտարանդիությունն ինձ համար վերցրեց բառի ոչ թե «nos» հաստվածը, այլ երկրորդ «algia»-ն՝ հեռավորության տենչանք, հեռավորության սեր: Արտիստը սահմանային բնակիչ է, ապրում է իր սեփական լեզվի տանը, իր սեփական ավանդույթների, իր սեփական անցյալի բացարձակ կուրության մեջ: Բոլոր գրողներն են սիրում տարօրինակ հեռավորությունը: Կյանք մահից հետո, լինելով վերջինիս ծայրահեղ ձևը՝ մենք հորինեցինք վերակենդանացումը, քանզի այն հիմնված է բացարձակ մթության վրա»²³:

Պարսիկները իրենց պատմությունների միջոցով ստեղծում են նոր ինքնություն, ըստ Ա. Գիդենսի «Սեփական ինքնության գոյաբանական հարցադրումը պատված է ինքնակենսագրության նուրբ բնությամբ, որով անհատը ներկայացնում է ինքն իրեն»²⁴:

Ղուլամ Հոսեյն Սաեդին վտարանդիությունը նույնացնում է պարսկերեն «ավարեգի»՝ շրջմոլիկություն, թափառաշրջիկություն բառի հետ: «Համարյա երկու տարի է, ինչ դարձել եմ փախստական այս վայրում՝ անցկացնելով ամեն երկրորդ գիշերը ընկերներիս տանը: Ոչինչ չի թվում իրական: Փարիզյան շինությունները թատերական զարդարանքների են նմանվում: Ինձ թվում է, ես ապրում եմ փոստային նամակի մեջ: Սարսափում եմ երկու բանից՝ քնելուց և արթնանալուց»²⁵: 1981 թ. Սաեդին ապաստան է գտնում Փարիզում, 1982 թ. վերակազմավորում է «Իրանի գրողների միությունը վտարանդիության մեջ» կառույցը և վերականգնում «Ալեֆրե» պարբերականի հրատարակությունը, ինչպես նաև հիմնում է «Իրանի թատերական միությունը»: 1983թ. հրատարակում է «Փարիզյան եռագրություն» ժողովածուն:

²³ Baraheni R., *Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend.* -Modern Drama, 46 (1), Spring, 2003, pp.114–115.

²⁴ Giddens A., *Modernity and Self Identity, Self and Society in Late Modern Age.* Stanford: Stanford University Press, 1991, p. 54.

²⁵ Naficy H., *The Making of Exile Cultures: Iranian Television in Los Angeles,* Univ. of Minnesota Press, 1993, p. 11.

Վտարանդի տարիների գրողի արձակը տանջահար ու անկենդան է, երբեմն նույնիսկ կցկտուր, ոչ նման նրա նախկին տարիների պերճախոս ոճին: 1986 թ. գրում է «Օթելլոն հրաշքների երկրում և հայելի հղկող պատմասացները» երգիծական ողբերգական պիեսը՝ ցույց տալով Շեքսպիրի իսլամականացումը Իրանում:

Վտարանդիության տարիներին են ծնվում նաև մի շարք ֆիլմերի սցենարներ, այդ թվում՝ «Մուլուս Քորփուսը» իր սիրելի կինովարպետ Դ. Մեհրջոնի ֆիլմի համար²⁶: 2005 թ. «Ավատարը վտարանդիության մեջ» էսսեում գրում է. «Վտարանդիները պետք է բարձրաձայնեն աշխարհին, բոլոր լեզուներով, թե ինչ է տեղի ունեցել իրենց երկրում»²⁷:

«Միջին Արևելքի բոլոր գրողներն օտարներ են՝ ուր էլ որ լինեն, տանը, թե դրսում»²⁸:

Գրողի դիտարկմամբ. «Դեռ համակրանք կա այն գրողների հանդեպ, որոնք ենթարկվել են հետապնդման կամ ազատագրկման, սակայն ոչ ոք չի կռահում, որ այդ տառապանքների պատճառը գրքերն են, որոնք կմնան չհրատարակված կամ, եթե հրատարակվեն, նրանց գինը կլինեն կտտանքները, դատավճռի ասի, և վերջապես, ինչպես նշում է իմ կենսագիրը՝ կոտրված հոգին»²⁹:

Վտարանդիության իր ողիսականի վերջին բաբախյունների մասին այսպես է գրում գրողը. «Ես իմ ժամանակը վատնում էի խմելով: Ամիս առ ամիս ձևանում էի կույր... Մի օր ես այլևս չձևացա կույր: Ես կույր էի: Ես կարիք ունեի մարդկանց, որոնք փողոցում կուղեկցեին ինձ: Նստած էի տանը՝ սպասելով մահվան: Հայրենաբաղձությունը այլ կողմում էր: Կուրացած հուշերն ամենուրեք են: Կար միայն մի ելք. խմել, խմել՝ երևույթները բառերի վերածելու խորհումով: Ես մահացա

²⁶ Farrokh F., Yavari H., Sa'edi, Gholam- Hosayn. - Encyclopedia Iranica, 19 May, 2016 <http://www.iranicaonline.org/articles/saedi-gholam-hosayn> (մուտքի ամսաթիվ՝ 15.03.2024).

²⁷ Hosayn S. Gh., Avatars in Exile. Trans Pakravan S., Chanteh, Spring: 35, 1993.

²⁸ Baraheni R., Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend. Modern Drama, 46 (1), Spring 2003, p. 115.

²⁹ Ibid, 117.

Փարիզում 1985 թ.: Այստեղ եմ, Պեր Լաշեզում, ճիշտ տասնմեկ շիրիմ Մարսել Պրուստից այն կողմ, որից ոչինչ չեմ ընթերցել, և հեռու Մադեղ շեղայաթից: «Նա՛ շեղայաթը, հեռացավ իր երկրից՝ սպանելու համար իրեն մեկ այլ երկրում: «No nos, no algia»: Տան ավարտը: Վտարանդիության ավարտն է»³⁰:

Այսպիսով, Փարիզը պարսիկ վտարանդի ստեղծագործողների կենսագրության մեջ դարձավ գրական տեքստ, որը ծնեց նոր տեքստեր, դարձավ տոպոս՝ կենսական տարածություն:

Պարսիկ վտարանդի ստեղծագործողների գրական մտորումներում Փարիզը գրկվում է գեղարվեստականությունից, քաղաքը հանդես է գալիս ներգաղթյալների ցավի և օտարության փորձառության աշխարհագրական վավերագիր:

Յուրաքանչյուր պարսիկ վտարանդի գրող Փարիզի ներսում, անկախ Փարիզից, ստեղծեց իր ֆիզիկական և հոգևոր գոյության ներքին ժամանակագրությունը: Ո՛չ շեղայաթի, և ո՛չ էլ Մադեղի համար Փարիզը չդարձավ «տոն, որը միշտ քեզ հետ է», այլ մնաց «առանց ճանապարհ լաբիրինթ, ոչ մի տեղ չուղեկցող, կորած փողոցների մթության մեջ»³¹:

XX CENTURY PARIS IN THE LIFE OF AN IRANIAN EXILE WRITER

*Lilit Safrastyan*³²

The city is a dynamic system that is constantly in motion. As a historical and cultural phenomenon, the city has found its expression in artistic literature. For centuries, writers from around the world carried their native cities within themselves on their paths of exile. They have discovered new cities that have become harbingers of joy and sorrow in their destinies.

³⁰ Ibid, 117-118.

³¹ Бунин И., Темные аллеи. Собрание сочинений в 9-ти т. Т. 7. М.: Художественная литература, 1966.

³² Lilit Safrastyan is an Associate Professor at the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU. E-mail: lilit.safrastyan@ysu.am, ORCID 0009-0008-0307-6752.

The literary image of Paris appeared in American and Russian literature in the 1920s and 1930s. In their works, exiled writers depicted the city's national character, urban environment, lifestyle, as well as the «spirit» of the city. In the literary reflections of Iranian exile writers, Paris loses its artistic quality and emerges as a geographical record of the pain and alienation experienced by immigrants in the diaspora.

Keywords: *Paris, Cultural Studies, City, Fiction, Iran, Diaspora, Exile, Experience, Alienation*

ПАРИЖ XX ВЕКА В ЖИЗНИ ИРАНСКОГО ПИСАТЕЛЯ В ИЗГНАНИИ

*Лилит Сафрастян*³³

Город – это динамическая система, постоянно находящаяся в движении. Как историко-культурное явление город нашел свое выражение в художественной литературе. На протяжении веков писатели со всего мира, неся свои родные города внутри себя на путях изгнания, открывали новые города, которые становились предвестниками радости и печали в их судьбах.

Литературный образ Парижа появился в американской и русской литературе в 1920–1930-х годах. В своих произведениях писатели изображали национальный характер города, городскую среду, образ жизни, а также «дух» города. В литературных размышлениях персидских писателей в изгнании Париж теряет свою художественную ценность и становится географическим свидетельством боли и отчуждения, испытываемых иммигрантами в диаспоре.

Ключевые слова: *Париж, культурология, город, художественная литература, Иран, диаспора, изгнание, опыт, отчуждение.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Анциферов Н. П., Проблемы урбанизма в русской художественной литературе: опыт построения идеи города Петербурга у Достоевского на основе анализа литературных традиций. М., ИМЛИ РАН, 2009.

³³ Лилит Сафрастян – к.ф.н., доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: lilit.safrastyan@ysu.am, ORCID 0009-0008-0307-6752.

2. Беспалова Е. К., Париж глазами эмигрантов. Мировая литература на перекрестье культур и цивилизаций, № 1–2, 2017, с. 17–31.
3. Биск А., Русский Париж 1906-1908 гг. Воспоминания о Серебряном веке. М., 1993.
4. Бунин И., Темные аллеи. Собрание сочинений в 9-ти т. Т. 7. М., Художественная литература, 1966.
5. Набилкина Л. Н. Образ города в мировой литературе. Теория и практика общественного развития, № 3, 2014, с. 219–222.
6. Шукин В. Г. Поэтика города. Морфология поэтосферы. Альманах теории и истории науки, № 7. 2013, с. 299–336.
7. Baraheni R., Exilic Blindness: The Unwritten Autobiography of a Dramatist in Paris Posthumously Dictated to a Friend. *Modern Drama*, V. 46, Number 1, Spring 2003, pp.113–118.
8. Calvino I., *Invisible Cities*, Boston: Mariner Books, Classics, 1978.
9. Dabashi H., *Corpus Anarchicum: Political Protest, Suicidal Violence and the Making of Posthuman Body*, London: Palgrave Macmillan, 2012, eBook.
10. Farrokh F., Yavari H., Sa'edi, Gholam-Hosayn. *Encyclopedia Iranica*, 19 May, 2016 <http://www.iranicaonline.org/articles/saedi-gholam-hosayn>
11. Giddens A., *Modernity and Self Identity. Self and Society in Late Modern Age*, Stanford: Stanford University Press, 1991.
12. Guppy Sh., *A Girl in Paris: A Persian Encounter with the West*. New York, Tauris Parke Paperbacks, 2008.
13. Katouzian H., *Sadegh Hedayat: The Life and the Legend of an Iranian Writer*. London, New York: I. B. Tauris & Co, 2002.
14. Naficy H., *The Making of Exile Cultures. Iranian Television in Los Angeles*, Univ. of Minnesota Press, 1993.
15. Rahimieh N., Hedayat's translation of Kafka and the logic of Iranian modernity. Katouzian H., *Sadegh Hedayat: His Work and His Wondrous World*, New York: Routledge, 2008.
16. Rushdie S., *Imaginary Homelands: Essays and Criticism 1981–1991*. London: Granta Books, 1991.
17. Hosayn S. G., *Avatars in Exile*, trans Pakravan S., Chanteh, 35, Spring 1993.

**«ՎԻՍ ԵՎ ՌԱՄԻՆ» ՊՈԵՄԻ ԴԵՐՈՇ ՇԱՀՆԱՄԵԱԿԱՆ
ՍԻՐԱՅԻՆ ԴԱՍՏԱՆՆԵՐԻՑ ՆԻԶԱՄԻԱԿԱՆ ՍԻՐԱՎԵՊԵՐԻ
ԱՆՑՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ**

Աստղիկ Գեղամյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.031

Ճախրեղդին Գորգանիի «Վիս և Ռամին» պոեմն առանցքային տեղ է զբաղեցնում պարսից սիրավեպի ժանրի զարգացման գործում: Նրանում հեղինակային կենսափորձի և գեղարվեստական հնարքների դերի մեծացումն ավելի է ընդգծում ժանրի կայացման հանգամանքը: Երկի պլոտեն, ի տարբերություն հերոսական էպոսի սիրային պատումների սխեմատիկ կառույցի, հյուսված է առանձին անհատների միջև ձևավորված հարաբերությունների շուրջ: Հիմնական կոնֆլիկտը խթանող գործողությունների ընթացքը պայմանավորված է հերոսների խառնվածքով, այլ ոչ հասարակական մասշտաբի երևույթներով: Այն իր առաջադրած խնդիրներով հիմնովին լուծում է ժանրի կառուցվածքին բնորոշ սկզբի և հանգուցալուծման ամբողջականության հարցը:

Գորգանին, օգտագործելով Ղազնավյան շրջանի իր նախորդների փորձը, սիրային ստեղծագործությունը բարձրացրեց նոր հարթության՝ ճանապարհ հարթելով իր մեծ հաջորդի՝ Նիզամի Գանջավիի սիրավեպերի համար: «Վիս և Ռամին» պոեմն իր գեղարվեստական լուծումներով յուրօրինակ կապող օղակ է շահնամեական սիրային դաստանների և նիզամիական սիրավեպերի միջև:

Բանալի բառեր¹ պարսից գրականություն, էպիկական պոեզիա, սիրավեպ, էպոս, սիրային դաստան, նիզամիական սիրավեպ, կերպար, «Վիս և Ռամին», «Շահնամե»:

¹ Աստղիկ Գեղամյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս է, էլ. փոստ՝ geghamyanastghik@ysu.am, ORCID 0009-0003-4378-4431:

Պարսից գրականության մեջ ոչ մի երկ երբևէ չի հարուցել այնքան հակասական կարծիքներ, որքան «Վիս և Ռամին» պոեմը, հանգամանք, որն ընդգծում է այդ ստեղծագործության ոչ սխեմատիկ բնույթն ու ինքնաստիպությունը: Թե՛ միջնադարյան աղբյուրներում, թե՛ ժամանակակից իրանագիտության մեջ դրվատանքի խոսքերից բացի, հանդիպում են նաև ստեղծագործության բարոյականության և գաղափարական ուղղվածության վերաբերյալ սուր քննադատություններ: Վերջիններս ի հայտ են եկել XVII դարի կեսերից և, երբեմն, փորձում են անգամ կասկածի տակ դնել պոեմի գեղարվեստական արժեքը:

Հայտնի թագքերեագիր² Մ. Աուֆին հիացմունքով գրում է, որ Գորգանին «այնպես վարպետորեն է բովանդակություն տվել այս պոեմին, որ դրա կատարելությունը երբևէ չի մոռացվի»:³

«Վիս և Ռամինը» հիշատակվում է նաև «Մաջմա աթ-թավարիի» (XII) անանուն ժամանակագրության մեջ: Երկի մասին որոշ ակնարկներ կան նաև Միրհոնդի երկում (XV)⁴: Դովլաթշահի մոտ ևս հանդիպում է «Վիս և Ռամին» պոեմի անվանումը⁵, բայց, ինչպես ենթադրում է արևելագետ Ե. Բերտելսը, հեղինակը, հավանաբար, միայն լսել է պոեմի մասին, անձամբ այն չի տեսել, քանի որ, ըստ նրա, պոեմը գրվել է Նիզամի Արուզիի կամ Նիզամի Գյանջավիի կողմից: Եթե XIII դարի բանաստեղծ Ֆարիդ ադ-Դին Էսֆարայիի Գորգանիին համեմատել է Ֆիրդուսիի և Խաղանի Շիր-

² Թագքերե (արաբ. tazkere «հիշատակում») արևելյան միջնադարյան գրականության մեջ բանաստեղծական անթոլոգիա, ծաղկաբաղ, որն ընդգրկում էր նաև հեղինակների մասին կենսագրական տեղեկություններ և նրանց ստեղծագործությունների վերաբերյալ մեկնաբանություններ:

³ Muḥammad 'Awfi, Kitāb-iLubāb al-albāb, ed. Edward Granville Browne and Muḥammad Qazvīnī. Leiden: Brill, 1903–6, p. 2.

⁴ Бертельс Е., Избранные труды, История персидско-таджикской литературы. М, 1960, с. 268.

⁵ Cemerón Cross, The Poetics of Romantic Love in VIS & RĀMIN. Chicago, 2015, p. 411.

վանիի հետ⁶, ապա XIV դարի իրանցի հայտնի երգիծաբան Օբայդ Ջաբանին գրում է. «Այն կնոջից, որը կարդացել է «Վիս և Ռամին», առաքինություն երբեք չսպասեք»⁷: Այս առումով ուշագրավ են Մալեք օշ-շոարա Բահարի խոսքերը՝ մեջբերված հայտնի իրանագետ Նիկողայոս Մառի «Թեհրանյան գրական տպավորություններ» հոդվածում. «Վիս և Ռամին» սիրավեպը անբարոյական ստեղծագործություն է, որն էլ խանգարել է դրա հայտնիությանն ու տարածմանը: Որ Վիսը քիչ էր մնում ամուսնանալ սեփական եղբոր հետ, Ռամինն անվայել վարքագիծ էր դրսևորում դայակի նկատմամբ, Մոբեդն ուներ ստոր և զզվելի կերպար, նպաստում են տիրակալների՝ պոեմը «սև ցուցակ» զցելու քաղաքականությանը, թեև այն ունի ավելի բարդ ու լարված սյուժետային գիծ, քան «Լեյլի և Մեջնուն» պոեմը»⁸:

Նմանօրինակ գնահատականներ տվել են նաև արևմտաեվրոպական որոշ արևելագետներ: XIX դարի նշանավոր արևելագետ Ա. Նյոլդեքեն իրանական էպոսի մասին իր ուսումնասիրության մեջ գրում է. «Ամենաընդունելի ձևով են «Վիս և Ռամին» պոեմում պատկերված տղամարդու և կնոջ միջև շաբաթներով ձգվող սիրային արկածները: Այս պոեմի գեղագիտական արժեքը բարձր չէ նրա բարոյական արժեքից»⁹: Գրեթե նույն կարծիքն է արտահայտել նաև իտալացի գիտնական Պիցցին: Նա իր «Պարսից գրականության պատմություն» գրքում, հակադրվելով Ի. Գրաֆին, որը բարձր է գնահատել պոեմը, գրում է. «... եթե որևէ մեկը հարցնի, թե մենք ինչն⁰ էնք այսպես մանրամասն քննության առել նման «անարժան» ստեղծագործությունը, կպատասխանենք, որ մենք դրանով

⁶ Mahjub M., Moqaddame bar Vis va Rāmin, Tehrān, 1337/1959, s. 8.

⁷ Закани О., Веселая книга, М, 1965, с. 61.

⁸ Март Ю., Статьи и сообщения, том II, М.-Л., 1939, с. 259.

⁹ Nöldeke T., Das Iranische Nationalepos, Berlin, 1920.

չէինք էլ զբաղվի, եթե չհայտնաբերեինք, որ այն գովասանքի է արժանացել մեր հարգարժան գիտնականի կողմից (Ի.Գրաֆ), որը հավանաբար, իրեն նեղություն չի տվել կարդալ ու գնահատել պոեմը ըստ արժանվույն: Քանի որ դա նաև մեզ է վերաբերում, ապա ցանկացել ենք պոեմը ներկայացնել իր արժանի տեղում»¹⁰:

«Վիս և Ռամին» պոեմի գեղարվեստական արժանիքները քարձր են գնահատել նշանավոր գիտնականներ Մ. Մինովին, Մ. Մահջուբը, Ի. Բրագինսկին, Վ. Նիկիտինան, Ա. Գվախարիան, Ա. Մասսեն, սակայն նրանք էլ տարակարծիք են որոշ հարցերի շուրջ:

Վիճահարույց է պոեմի ծագման և բնույթի խնդիրը: Այսպես, ըստ դանիացի արևելագետ Ա. Քրիստենսենի, պոեմի բովանդակությունն ամբողջովին մտացածին ու հորինված է¹¹: Այլ տեսակետի է հանգել Վ. Մինոսկին՝ պնդելով, որ պոեմի մի քանի գործող անձիք ունեն իրենց պատմական նախատիպը, իսկ ստեղծագործությունը պարթևական սիրավեպի քիչ թե շատ ճշգրիտ վերաշարադրանք է, որն արժեքավոր տեղեկություններ է տալիս պարթևական դարաշրջանի կյանքի և հասարակական հարաբերությունների վերաբերյալ¹²: Ե. Բերտելսը «Վիս և Ռամին» պոեմը համարում է ինքնուրույն ստեղծագործություն, որը պարթևական տարբերակից վերցրել է միայն սյուժեն: Ընդ որում՝ նրա կարծիքով պոեմն ունի մերկացնող բնույթ¹³: Ավելի ծայրահեղ տեսակետի է հանգում Ի. Բրագինսկին: Ըստ գիտնականի՝ պոեմը պալատական արատա-

¹⁰ Брагинский И., 12 миниатюр, М., 1976, с. 134.

¹¹ Сахранов В., О некоторых особенностях поэмы Фахраддина Гургани «Вис и Рамин». *Актуальные проблемы иранистики*, Тбилиси, 1970, с. 427.

¹² Minorsky V., Vis u Ramin: A Parthian Romance, Bulletin of the School of Oriental and African Studies, vol. XI, 1943-46, pp. 741-63; vol. XII, 1947-1948, pp. 20-35; vol. XVI, 1954, pp. 91-92; New Developments, vol. XXV, 1962, pp. 275-286.

¹³ Бертельс Е., Указ. соч., с. 267-286.

վոր նորմերի վրա հիմնված երգիծանք է, սոցիալական սատիրա¹⁴: Առավել ուշագրավ է Վ. Ժիրմունսկիի կարծիքը պոեմի վերաբերյալ: Ըստ նրա՝ «Վիս և Ռամին» պոեմը մարմնավորում է այդ դարաշրջանի բնորոշ կոնֆլիկտը՝ անհատի սիրո և ամուսնական պարտականությունների բախումը, ընտանիքի խնդիրը, որ ֆեոդալական հասարակության մեջ կառավարվում են ոչ թե սիրո, այլ քաղաքական ու շահադիտական այլ հետաքրքրություններով¹⁵:

Մինչև վերջերս գիտական շրջանակներում ընդունված էր այն կարծիքը, որ «Վիս և Ռամին» պոեմը միջին դարերում հայտնի չի եղել¹⁶: Եթե այդպես է, ապա ինչպես է այն XII դարում արձակ տարբերակով վրացերեն թարգմանվել Սարգիս Թմոխվելիի կողմից՝ ստանալով «Վիստամիանի» անվանումը: Այն Գորգանիի երկին արժանի թարգմանություն է, որը վրաց ժողովրդի կողմից ընդունվել է որպես ազգային ստեղծագործություն¹⁷: Ընդ որում՝ կարելի է նկա-

¹⁴ Брагинский И., Очерки из истории таджикской литературы. Сталинабад, 1956, Брагинский И., 12 миниатюр, М., 1976.

¹⁵ Жирмунский В., Народный героический эпос. М.-Л., 1962, сс. 65–74.

¹⁶ Այս կարծիքի ձևավորման գործում, հավանաբար, մեծ դեր է խաղացել Ալիշեր Նավոյի այն խոսքը, որ իր ժամանակ այս սիրո պատմությունը գրեթե մոռացված է եղել և հանդիպել է շատ քիչ: Այդպիսի կարծիքի տարածմանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ մինչ օրս գտնվել է այս ստեղծագործության վեց ձեռագիր: Գորգանիի պոեմի առաջին ձեռագիրը գտնվել է 1850թ. Հնդկաստանում Ս. Շպենսգերի կողմից, որն էլ ընկած է կալկաթյան հրատարակության հիմքում (1864թ.): Այս հրատարակությունը գոհացուցիչ համարել դժվար է, քանի որ նրանում առկա են բավականին շատ բացթողումներ, որն էլ տեքստը որոշ տեղերում դարձնում են անհասկանալի: «Վիս և Ռամին» պոեմի կալկաթյան հրատարակությունը, չնայած թերություններին, թույլ է տվել մասնագետներին զբաղվել երկի ուսումնասիրությամբ, որից հետո հայտնաբերվել են ևս երեք-չորս ձեռագիր XVII-XVIII դարերով թվագրվող:

¹⁷ Պետք է նկատել, որ արևելյան գրականության մեջ բանաստեղծությունները թարգմանվում էին բացառիկ դեպքերում: Նրանում առավել ընդունված է ընդօրինակելու երևույթը և այն կոչվում է նազիրե կամ ջավաբ (թարգմ. «ընդօրինակում», «պատասխան»): Բանաստեղծը, վերցնելով արդեն հայտնի ստեղծագործության թեման, ստեղծում է նորը, փորձում այլ տեսանկյունից ներկայացնել իր ասելիքը, նույնիսկ գերազանցել իր նախորդին՝ պահպանելով ընդօրինակվող ստեղծագործության հանգը, չափը, անգամ բառերի քանակը:

տել մի կարևոր ու հետաքրքրական փաստ: Ինչպես գրում են վրացի ուսումնասիրողներ Ա. Գվախարիան և Ս. Թոուդան, վրացական դասական գրականության բոլոր հուշարձաններում, որոնցում հիշատակվում են Վիս և Ռամին անունները, նրանք ընդունվում են որպես «օրինակելի սիրահարներ»՝ առանց որևէ բացասական հատկանիշի կամ որակման¹⁸:

XVI դ. թուրք բանաստեղծ Լամին գրել է նույնանուն պոեմ, որը սակայն պոեմով ու բովանդակությամբ չի համապատասխանում Գորգանիի ստեղծագործությանը: Վ. Մինորսկիի կարծիքով Լամին լսել է Գորգանիի սիրավեպի մասին և նրանից էլ փոխառել է որոշ դեպքեր ու դրվագներ¹⁹:

Սելջուկյան արքունիքում գտնվելու ժամանակ Գորգանին ծանոթանում է Սպահանի կուսակալ Ամիդ ադ-Դին Աբուլ-Ֆաթիհի հետ, որը և նրան պատմում է պահլավական «Վիս և Ռամին» վեպի մասին և հանձնարարում թարգմանել նոր պարսկերեն:

Այս վեպից լավ ծանոթջե ինձ այլ մի երկ
 Այն խնդության մի պարտեզ է, համակ երգ,
 Սակայն լեզուն պահլավերեն է հնազանդ այդ վեպի
 Ոչ ամեն մարդ, որ կարդում է, նրա իմաստն էլ գիտի.
 Ամեն մարդ չէ, որ դյուրությամբ, լավ կարդում է այն լեզուն,
 Եվ թե կարդա, դեռ նշան չէ, որ միտքն էլ է հասկանում:²⁰

Ինքը՝ հեղինակը, գրում է, որ մշակել է հին պահլավական պոեմը²¹: Այս վկայությունը բանասերների շրջանում քննարկման

¹⁸ Висрамиани. Перевод С. Иорданишвили, предисловие А. Гвахария, М. Тоуда, Тбилиси, 1938.

¹⁹ Сахранов В., նշվ. աշխ., էջ 469:

²⁰ Թարգմանությունը Է. Աղայանի, Դրվագներ Արևելքի գրականության պատմության, Երևան, 1971, էջ 83:

նյութ է դարձրել այն հարցը, թե պոետը ֆարսի լեզվով թարգմանությունն ից է օգտվել²¹, թե՞ ինքն է ձեռնարկել պահլավերենից թարգմանությունը: Այդ ամենն այնքան էլ էական չէ, քանի որ, եթե անգամ Գորգանին փոխառել է հին պահլավական սյուժեն, ապա, ըստ էության, այն ոչ թե սոսկ թարգմանություն է, այլ ինքնուրույն ստեղծագործություն, որը ծնվել է իր ժամանակների ոգու և նրա հեղինակի քանաստեղծական տաղանդի արդյունքում:

Պոեմն ունի բավականին հետաքրքրաշարժ սյուժե: Ի տարբերություն դյուցազներգական ժանրի, այս ստեղծագործության համար նյութ են ծառայում ոչ թե Իրանի դյուցազունների մարտական սխրագործությունները, այլ նրանց անձնական կյանքը, ընտանեկան ինտրիգները, վարքուբարքը, կենցաղը: Սակայն չի կարելի ասել, որ «Շահնամե»-ում իրանական հերոսների անձնական-ընտանեկան կյանքը ներկայացված չէ: Պարզապես, դրան շատ քիչ տեղ է հատկացված, և լուսաբանված այնքանով, որքանով ուղղակի կամ անուղղակի ձևով առնչվում է Իրանի ու Թուրանի հարատև պատերազմներին: Այսպես՝ Ջալի ու Ռուդաբեի սիրո պատմությունը կապվում է դյուցազնավեպի հիմնական նյութի հետ և ներկայացվում այն չափով, որ առիթ է դառնում մի կողմից թշնամական Քարուլի և Իրանի հաշտության, մյուս կողմից՝ հող նախապատրաստում Ռուստամ Ջալի ողբերգական վախճանի համար: Միավուշի դրամատիկ պատմությունը ևս ստեղծագործության բովանդակության հետ կապված է նրանով, որ նոր ուժով է բորբոքում Իրանի ու Թուրանի հնամենի թշնամությունը:

²¹ Նշենք նաև, որ պոետը կենսագրական այլ վկայություններ չի պարունակում. այստեղ բացակայում է անգամ ստեղծագործությունը գրելու տարեթիվը: Բայց, քանի որ պոետը, ինչպես երևում է տեքստից, գրվել է Թուրքիլ Բեկի կողմից Սպահանը գրավելուց հետո (1042 թ.) և նրանում հիշատակություն չկա 1055 թ. Բեկի կողմից Բաղդադի գրավման մասին, ապա ստացվում է, որ Գորգանին այն գրել է իր երկու իրադարձությունների միջև ընկած ժամանակահատվածում (1042–1055):

«Վիս և Ռամին» պոեմի սյուժեն, ըստ էության, երկու հերոսի սիրային արկածների պատմությունն է: Քանի որ խոսքն ամուսնացած կնոջ արտամուսնական կապի մասին է, բացասական երանգ է տալիս ինչպես ամբողջ սիրավեպին, այնպես էլ նրա գլխավոր հերոսներին: Այս ստեղծագործության առանձնահատկությունը պայմանավորված է հերոսների կերպարակերտման հեղինակային մեթոդով: Ի տարբերություն էպոսի, որտեղ բնավորությունները նախապես սահմանված, պատրաստ ու անփոփոխ են, Գորգանիի հերոսներն անհատականություններ են, փոփոխական, բազմակողմանի, հակասություններով լի բնավորություններ: Ֆաբուլայի շարժիչ ուժը գտնվում է ոչ թե արտաքին գործոններում՝ արկածային իրավիճակներում, այլ հերոսների փոխհարաբերությունների խորքում: Բոլոր բախումներն ու հանկարծակի շրջադարձերը կապված են նրանց բնավորությունների դրսևորման հետ, որի հետևանքները հաճախ անսպասելի են լինում իրենց իսկ՝ հերոսների համար: «Այստեղից էլ այն մեծ հոգեբանական լարվածությունը, որով շնչում է ողջ պոեմը: Գորգանին անսխալական չէ սյուժեի կառուցման մեջ, նրա մոտ թեև այս առումով առկա է անհամաձայնություն, սակայն այն երբեք չի անդրադառնում հերոսների բնավորությունների կառուցման և նրանց արարքների ներքին պատճառաբանվածության վրա», - նկատում է Ի. Կալաձեն²²:

Գորգանին կարծես ջնջել է բացարձակապես դրական և բացարձակապես բացասական հերոսների միջև կտրուկ սահմանը, ուստի պատահական չէ որոշ քննադատներ պոեմում չեն գտել դրական կերպարներ: Գորգանիի տաղանդը զարմացնում է իր ժամանակների համար մարդկային էության բարդ մեխանիզմը ճշգրիտ պատկերելու վարպետությամբ՝ կերտելով ոչ թե իդեալա-

²² Каладзе И., У истоков персидского романического эпоса. Актуальные проблемы иранистики, Тбилиси, 1970, с. 422.

կան կերպարներ, այլ սովորական մարդկային բնավորություններ: Եթե Ֆիրդուսիի մոտ իրանական անցյալի հերոսները պատկերված են իբրև իդեալներ, որպես անցյալի փառապանծ ներկայացուցիչներ, որոնց նմանվել պետք է փափագեր իր ժամանակի յուրաքանչյուր պարսիկ ազնվական, ապա Գորգանիի մոտ նրանք իրենց արքայական վեհ բարձունքներից իջնում են սովորական մարդու, հասարակ մահկանացուի աստիճանի՝ իրենց կենցաղով, բնավորության լավ ու վատ հակումներով: Ֆիրդուսին դեռ հավատում էր, որ կարելի է հնի իդեալականացումով իրանական ազնվականության մեջ անցյալը վերականգնելու ձգտում առաջացնել և դրանով իսկ բորբոքել պայքարը հանուն Իրանի ազգային անկախ թագավորության: Հակառակ, Գորգանին իր ապրած տարիների անվերջ պատերազմների շրջանում, երբ իրար հետևից կործանվում էին արքայական տները և հայտնվում նորերը, երբ սելջուկները վերջնականապես տիրել էին ողջ Իրանին և Արևելքի մյուս երկրներին, և հողս էր ցնդել Ֆիրդուսիի երբեմնի երազը, բանաստեղծը ոչ մի հիմք չունեի նման հույս փայփայելու: Բացի այդ, նա ինքն էլ տեսնում էր, որ բախտի պատահականությամբ երջանիկ այդ ընտրյալներն առանձնապես արժանի էլ չեն իդեալականացման և իրենց վարք ու բարքով չեն տարբերվում սովորական շարքային մարդկանցից: Նա դիտում էր այդ մարդկանց նոր բեմ ելնող դասի աչքերով ու տեսնում նրանց մեջ հազար ու մի մարդկային արատներ: Ինչպես նկատում է ակադեմիկոս Հ. Օրբելին, «Գորգանին նայում էր կյանքին ու քաղաքին և ամբողջի՝ դեպի վեր խոյացող աշտարակին քաղաքային հրապարակից, որտեղ մարդիկ, ողջունելով ասպետական փառահեղ նծույզների վրա հեծած անցորդներին, իրենց պատկերացումներում նրանց իդեալականացնելու համար հիմք չէին տեսնում»²³:

²³ Орбели И., Предисловие к «Висрамиани». М.-Л., 1938, с. 5.

Այս առումով Գորգանիի ընկալումները մոտենում են Նիզամիի ստեղծագործությանը: Ինչպես գիտենք, Նիզամին, օգտագործելով բանահյուսական հարուստ նյութը, ստեղծել է «Խոսրով և Շիրին», «Լեյլի և Մաջնուն» սիրավեպերը և սիրային դրվագներով հարուստ «Յոթ գեղեցկուհի» պոեմը: Նա թեև նշում է, որ իրեն հայտնի է Ֆիրդուսիի և իր նախորդների շարադրանքի ոճը, սակայն «Նոր պոեզիայի առաջնորդին» հարիր չէ գնալ ուրիշի հետքերով²⁴:

Եթե Ֆիրդուսիի ստեղծագործության առանցքում Խոսրով արքայի գովերգումն է, ապա Նիզամին առաջ է քաշում սիրո պրոբլեմը: Պետք չէ մոռանալ, որ պոետներին բաժանում էր պատմական իրադարձությունների երկու դար, և նրանք ստեղծագործում էին բացարձակապես տարբեր իրավիճակներում՝ հետապնդելով տարբեր նպատակներ: Կարելի է ասել, որ Նիզամին ձևի առումով չի խզել կապը ավանդույթի հետ, սակայն բովանդակությամբ նրա սիրավեպերը նոր խոսք ու տեսակ էին Մերձավոր Արևելքի ժողովուրդների դասական գրականության մեջ: Ի տարբերություն Գորգանիի՝ Նիզամին չի ձգտում ընթերցողին գրավել դեպքերի առատությամբ, գործողությունների արագ փոփոխությամբ, ասպետական արկածների ֆանտաստիկայով: Նրա խնդիրն այլ է՝ պատկերում է իր հերոսների բնավորությունների տարբերությունները, ցույց տալիս նրանց հակասությունները բախումների ժամանակ:

Իրականության պատկերման Գորգանիի մեթոդը, որին բնորոշ է կենցաղային կոնկրետությունն ու հոգեբանական համոզակալությունը, մոտ է Նիզամիի ռեալիզմին: Այս իմաստով նրա պոեմն առանձնանում է ժամանակի կամ այս ժանրին մոտ այլ հուշարձաններից: Կենցաղային հավաստիությունն ու մանրամասնումը հատկապես աչքի են ընկնում մի քանի տեսարաններում ու

²⁴ Бергельс Е., Избранные труды. Низами и Физули, М., 1956.

դրվագներում, ինչպես օրինակ՝ դայակը Մոբեդի անկողնում, Վիսի ու Ռամինի հանդիպումը փակ ամրոցում և այլն: «Երևակայությունն ու միաստիկան Գորգանիի մոտ հասել են մինիմումի: Այն, ինչը կարող ենք մտացածին համարել, ծառայում է լոկ որպես դեկորացիա գործողությունների զարգացման համար: Մակայն դա այնքան պարզ է, որ չի խանգարում այս ստեղծագործությունը ռեալիստական պլանով ընկալելուն», - եզրափակում է Ի. Կալաձեն²⁵: Այս հանգամանքը հատկապես աչքի է զարնում «Տրիստան և Իզոլդա» սիրավեպի հետ համեմատելիս: Երկու հուշարձանների մեծաթիվ դրվագներից կարելի է առանձնացնել կրակի միջով անցնելու Վիսի հավատարմության փորձության դրվագը: Այս տարածված փորձության մոտիվը կառուցելու համար տարբեր երկրների ու ժամանակների հեղինակներ իրենց հերոսների վարքը, սովորաբար, պատճառաբանում են կամ գերբնական ուժերի միջամտությամբ, կամ երկիմաստության, այսինքն՝ հերոսների կեղծ երդմամբ²⁶: Գորգանին ընտրում է հերոսների փրկության ամենաճիշտ ու իրական ճանապարհը՝ նրանք պարզապես խույս են տալիս փորձությունից:

«Վիս և Ռամին» պոեմը մարդու ազատագրված զգացումնքների ու ձգտումների գովքն է: Մակայն դա հեղինակի համոզմամբ չպետք է ուրիշների ինքնությունն արհամարհելու աստիճանի հասնի: Այս գաղափարների հիման վրա էլ հեղինակը կերտել է սիրավեպի ամենաբարդ կերպարներից մեկին՝ արքա Մոբեդին: Եթե նա՝ ամենակարող, խիզախ, անվանի ու արդարադատ արքան, էպոսի հերոս լիներ, անպայման սիրված կլիներ հեղինակի ու ընթերցողի կողմից: Մակայն սիրավեպը դիտում է իր հերոսներին որպես անհատներ՝ հետաքրքրվելով նրանց հասարակական ու ան-

²⁵ Каладзе И., նշվ. աշխ., էջ 422:

²⁶ Կրակի միջով փորձությունն անցնելու մոտիվը առկա է «Տրիստան և Իզոլդա», «Մին-բադնամե», Լամիի «Վամեղ վա Ագրա», «Շահնամե» (Միավուշի դրվագը) պոեմներում:

հատական վարքով, ոչ թե վերացական և ընդհանուր արժեքներով: Մոբեդի պարագայում վճռական է դառնում այն փաստը, որ նա հաշվի չի նստում անհատի կարծիքի հետ, արհամարհում է նրա զգացմունքները և ամուսնանում մի կնոջ հետ, որն ուղղակի ասում է նրան: Դա ճակատագրական սխալ էր, մեծ մեղք, որը և դառնում է արքայի դժբախտությունների ու անփառունակ վախճանի պատճառը: Ուստի և հեղինակի աչքերով երիտասարդների անօրինական սերն արդարացված է որպես կյանքի օրենք, որն առաջինը խախտել է Մոբեդը:

Հեղինակը խորը կարեկցանքով ու համակրանքով է պատկերել երկու սիրահարների սերը, զգացմունքը, որը երկրային է, գուրկ ամեն տեսակ անբնական չափազանցություններից ու իդեալականացումից: Իրենց երջանկության և սիրելու իրավունքի համար պայքարում նրանք պատրաստ են ամեն ինչի: Այսպես, Ռամինը ամեն զնով մտերմություն է հաստատում Վիսի դայակի հետ, որպեսզի համոզի նրան օգնելու իրենց երջանկությանը, կամ էլ Մոբեդին երդում է տալիս մոռանալ Վիսին, սակայն նույն պահին էլ խախտում է այն: Այնուամենայնիվ, նպատակին հասնելու ճանապարհին միջոցների ընտրության հարցում խտրություն չդնելը մեր հերոսներին չի դարձնում անսկզբունքային անհատներ, ինչպես դա ներկայացնում են որոշ հետազոտողներ²⁷:

Ռամինն իրանական երիտասարդ արքայազնի տիպար է: Նա գեղեցիկ է, քաջ, հմուտ ասպետական խաղերում և անկրկնելի է կանանց սրտերը գրավելու հարցում: Սիրահարվելով գեղեցկուհի Վիսին՝ նա դիմում է ամեն կարգի կեղծիքների, անգամ եղբայրասպանության (Ջարդի սպանությունը): Սակայն այս արարքներին Գորգանին տվել է հոգեբանական համոզություն: Լինելով կյանքի

²⁷ Бергельс Е., Указ. соч., Брагинский И., 12 миниатюр. М., 1966.

հաճույքներին անձնատուր եղած երիտասարդ՝ նա իրական, սովորական մարդ է իր թերություններով ու խոցելի, մերժելի կողմերով: Ռամինը լավ է հասկանում, որ իր սերն անօրինական է ու անընդունելի, նույնիսկ փորձում է ճնշել իր զգացմունքներն ու մոռանալ Վիսին: Գեղեցկուհի Գոլով տարվելու փաստը և Վիսին ուղարկած նամակն այս մտադրության ապացույցն են: Պոեմում այս հանգամանքը շատերին հիմք է տվել հերոսին բնորոշելու որպես անհաստատ, փոփոխամիտ անհատ, «անհավատարմության դասական օրինակ, որը կարող է անվերջ երդումներ տալ, բայց միաժամանակ էլ խախտել դրանք՝ առանց դյուզն-ինչ խղճի խայթ զգալու»²⁸:

Սակայն դա այդպես չէ: Գորգանին չի իդեալականացրել իր հերոսներին, նրանք կատարելապես երկրային հերոսներ են, որոնք իրենց սիրային տվայտանքների մեջ ոչ միայն ընդունակ չեն տարիներով տառապել՝ հեռու իրենց սիրելիից, և ինչպես Ռամինը, չեն կարող անցկացնել իրենց սիրելիից հեռու նույնիսկ մի կարճ ժամանակ՝ չղավաճանելով ու չմոռանալով նրան՝ հանուն կյանքի ճանապարհին հանդիպած գեղեցկուհու²⁹: Չէ որ Ռամինը ինքն էլ անկեղծորեն զգուշացնում էր Սոբեդին, որ Վիսը երբեք էլ չի սիրելու նրան՝ ասելով.

Դու չես հասնի նպատակիդ, ո՛վ արքա,
 Վիսը երբեք քո սիրելին չի դառնա...
 Հիշի՛ր, գոնե քո տարիքը շահնշահ,
 Դու շատ ծեր ես, իսկ Վիսը՝ գեղեցկուհի աննման,
 Դու ուզում ես երիտասարդ, չքնաղ կին,
 Վիսին նույնպես պետք է ջահել ամուսին³⁰:

²⁸ Бергельс Е., նշվ. աշխ., էջ 284:

²⁹ Орбели И., նշվ. աշխ., էջ 4:

³⁰ Թարգմանությունը՝ Ա. Գ.:

«Վիս և Ռամին» պոեմի արժանիքներից մեկը կանացի կերպարներ կերտելն է: Ընդ որում՝ սա առաջին սիրավեպն է, որի գլխավոր հերոսը կին է: Թեև «Շահնամե»-ում ևս կանայք հանդես են գալիս, բայց տղամարդկանց համեմատությամբ նրանց հոգեբանության, բնավորության և զգացմունքների վերլուծությունը չափազանց աղոտ է պատկերված, մինչդեռ «Վիս և Ռամին» պոեմում ներկայացված են կանացի հոգեբանության, նրա ներաշխարհի բոլոր անկյունները:

Վիսի տառապանքը հարազատ Վիրոյից բաժանվելու և ծերունի Մոբեդի կինը դառնալու պատճառով, Ռամինի սիրո մասին իմանալը, նրան տեսնելն ու սիրահարվելը, իր նոր զգացմունքների դեմ պայքարելը և, ի վերջո, ցանկացած խոչընդոտ արհամարհելով Ռամինի սիրուն անձնատուր լինելը ընթերցողի առջև բացում են կանացի հոգեբանության բոլոր շերտերը: Վիսը, չնայած իր սիրո, ըստ էության, հանցավոր լինելուն, այնուամենայնիվ, ներկայանում է որպես մի կին, ում սերն անսահման է ու անեզր, կարող մինչև վերջ հավատարիմ մնալու իր սիրուն: Այս տեսանկյունից Գորգանիի ստեղծագործությունը նմանվում է Բոկկաչոյի երկում առկա ամուսնական անհավատարմության ու «անօրինական սիրո» պատմություններին:

Ստիպողաբար ամուսնանալով՝ կինը դավաճանում է չսիրած ամուսնուն և դավաճանությամբ վրեժ լուծում իր տառապանքների համար: Նրա դավաճանությունը սիրո անկախ, գերագույն ուժի դրսևորում է³¹: Ե. Բերտելսը Վիսին համարում է իր հերոսին արժանի, քանի որ նրա սուտն էլ չունի սահմաններ, նա էլ կարող է անամոթաբար խախտել իր խոստումը և թաքցնել անպարկեշտ արարքները ոչ թե զգացմունքից դրդված, այլ վախենալով դրա

³¹ Мокульский С., Итальянская литература. М., 1966, с. 87.

հետևանքներից³²: Սակայն, Վիսը թեև իր գործադրած միջոցներով այնքան էլ ազնիվ ու համակրելի չէ, բայց նրան վախկոտության մեջ մեղադրելն անհիմն է: Չէ՞ որ նա վճռականորեն պատասխանում է Սոբեդի սպառնալիքներին ու հայիոյանքներին՝ ասելով, իր սիրտը միայն Ռամինին է պատկանում:

Կանացի հոգեբանության իր իրաճանաչ մոտեցմամբ հեղինակը չի իդեալականացրել իր հերոսուհուն, այլ ներկայացրել է նրան իբրև հողեղեն, աշխարհիկ մի կին, որը իր առավելությունների հետ ունի նաև թերություններ:

Կանացի կերպարների մեջ առանձնանում է նաև դայակի կերպարը: Գորգանիի պոեմի դայակ-կավատն իրավամբ կարող է համարվել պարսից հարեմների հարազատ, բոլոր ժամանակների և սիրային արկածների մասնակից միջնորդ կնոջ դասական կերպար: Գորգանին վարպետորեն է կերտել նրա կերպարը և կարողացել թափանցել նրա հոգու խորքերը: Նա խուզեստանցի ճարպիկ, խորամանկ, ամեն տեսակ խարդախությունների ընդունակ կին է: Երբ հարազատներից հեռու Վիսը տանջվում է ու լալիս, դայակը գործնականորեն է գնահատում իրադրությունը և բացատրում Վիսին, որ ներկայիս նրա վիճակն ավելի մեծ հնարավորություններ է բացում նրա առջև: Ինչ փույթ, որ արքան ծեր է, և Վիսը նրան չի սիրում: Կարելի է օգտվել նրա անսպառ հարստությունից և զվարճանալ որևէ երիտասարդի հետ, ինչպես անում են մյուս կանայք: Հնուտ խարդախուհին գործադրում է բոլոր ջանքներն ու միջոցները, մինչև որ հաջողվում է Վիսի և Ռամինի միջև սիրային կապ հաստատել: Նրա առաքելությունն արդեն հասել է իր նպատակին, և ամեն կերպ օժանդակում է այդ կապի ամրապնդմանն ու տևական լինելուն: Նրա հանդգնությունն այնտեղ է հասնում, որ

³² Бергельс Е., նշվ. աշխ., էջ 284:

համարձակվում է փոխարինել Վիսին ամուսնական մահճում՝ իր տիրուհու և Ռամինի տեսակցությունն ապահովելու համար:

Գորգանին չի պատկերում սիրո հեքիաթային ու իդեալական պատմություն: Նա դրսևորում է արտասովոր տաղանդ ու վարպետություն՝ իրատեսորեն պատկերելու գործող անձանց վարքն ու ապրումները: «Նրա այս վարպետությունը կարելի է համեմատել Բոկկլաչոյի հետ, որը համարվում է եվրոպական գրականության առաջին հոգեբանական սիրավեպի հիմնադիրը»³³: Ստեղծագործության մեջ նկատելի երգիծական երանգը, հեղինակի ծաղրը մի քանի հերոսների հանդեպ որոշ հետազոտողների հիմք է տալիս պնդելու, որ երկը յուրօրինակ սատիրա է: «Այն, որ դայակի կախարդանքի միջոցով Մոբեդը կորցնում է իր տղամարդկային ուժը, այն, թե ինչպիսի հնարամտությամբ է Վիսը եղջուրներ աճեցնում ամուսնու գլխին, այս ամենը պարզորոշ կերպով ցույց են տալիս պոեմի երգիծական բնույթը: Ամեն նոր գլխում աճում է հետաքրքրականությունը, պատկերավոր բովանդակության կենդանությունը, առավել սուր է դառնում լեզուն, իսկ հերոսներն էլ՝ ավելի ծիծաղելի»³⁴: Սակայն ամբողջովին համաձայնել Բրագինսկու այս բնութագրականի հետ չենք կարող: «Վիս և Ռամինը» առաջին հերթին սիրավեպ է, պոեմ, որի բովանդակության կորիզը հերոսների սիրո պատմությունն է, որոնց նկատմամբ հեղինակը դրսևորում է ակնհայտ համակրանք: Հեղինակի ծաղրը նկատելի է պոեմի մի շարք հատվածներում, երբ ծիծաղելի ու խղճուկ են պատկերվել Իրանի շահնշահ Մոբեդը և որոշ երկրորդական անձիք: Այս առումով հատկանշական է այն տեսարանը, երբ դայակն ամուսնական մահճում փոխարինում է Վիսին, իսկ վերջինս շտապում է սիրելիի հետ հանդիպման: Դրան հաջորդում է մի այլ կոմիկական տեսա-

³³ Сахранов В., նշվ. աշխ., էջ 434:

³⁴ Брагинский И., Указ. соч., 1966, с. 135:

րան, որի ավարտին հայտնված Վիսը խորամանկորեն զբաղեցնում է իր տեղն ամուսնու կողքին և նույնիսկ ստիպում արքային ներողություն խնդրել:

Պոեմը որպես երգիծանք ընկալելը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ կարճ ժամանակ անց Վիսն ու Ռամինը դառնում են ամենաերջանիկը, ամենաբարոյականն ու արդարադատը: «Վայրի խոզի օգնությամբ գալիս է վայրկենական հանգուցալուծումը, որն էլ իր հետ բերում է միջնադարյան քաղաքային բնակչության սոցիալական ուտոպիան արդար թագավորության, արդարադատ միապետի մասին: Ահա թե ինչպես է ամրագրված սոցիալական սատիրայի անցումը սոցիալական ուտոպիայի»³⁵:

Այսպիսով՝ նախորդ շրջանի սիրերգակների փորձի յուրացմամբ, հումանիստական իդեալների, ռեալիզմի տարրերի կիրառմամբ, ինչպես նաև հերոսներին հոգեբանական խորքով ու ներաշխարհով կերտելով, Գորգանին ճանապարհ հարթեց պարսից սիրավեպի զարգացման նոր փուլի համար, որն իր կատարելությանը հասավ Նիզամի Գանջավիի ստեղծագործության մեջ:

THE ROLE OF THE POEM «VIS AND RAMIN» IN THE TRANSITION FROM SHAHNAMEH LOVE STORIES TO NIZAMI'S ROMANCES

*Astghik Geghamyan*³⁶

Fakhreddin Gorgani's poem «Vis and Ramin» occupies a special place in the development of the Persian romance genre. The increasing role of the author's life experience and artistic tricks in it further emphasizes the circumstance of the genre's establishment. Unlike the schematic structure of the love stories of the heroic epic, the plot of the story is woven around the relationships between

³⁵ Фахриддин Гургани, Вис и Рамин. (<https://coollib.net/b/641210-fahriddin-gurgani-vis-i-ramin/read>) (մուտքի ամսաթիվ՝ 11.12.2023).

³⁶ Astghik Geghamyan is Lecturer at the Chair of Iranian Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: geghamyanastghik@ysu.am, ORCID 0009-0003-4378-4431.

individuals. The course of action that drives the main conflict is determined by the characters' temperaments, not societal-scale phenomena. With the problems it poses, it fundamentally solves the question of the integrity of the beginning and the conclusion characteristic of the structure of the genre.

Gorgani, using the experience of his predecessors in the Ghaznavian period, raised the love-related works to a new level, paving the way for the masterpieces of his great successor, Nizami Ganjavi. The poem «Vis and Ramin» with its artistic solutions is a unique connecting link between Shahnameh love stories and Nizami's romances.

Keywords: *romance, Persian literature, epic poetry, epic, love story, Nizamiyan romance, «Vis and Ramin», «Shahname».*

РОЛЬ ПОЭМЫ «ВИС И РАМИН» ПРИ ПЕРЕХОДЕ ЛЮБОВНЫХ ДАСТАНОВ «ШАХНАМЭ» К РОМАНТИЧЕСКИМ ПОЭМАМ НИЗАМИ

Астхик Гегамян³⁷

Поэма «Вис и Рамин» занимает значительное место в развитии жанра романтической поэмы. Использование разных видов художественных приемов и жизненного опыта автора в поэме еще больше подчеркивает особенности жанра. Сюжет повести, в отличие от схематической структуры любовных историй героического эпоса, построен вокруг отношений отдельных лиц. Основной конфликт, стимулирующий развитие действия, вытекает из сферы личного начала, а не из общественных явлений национального масштаба. В поэме полностью решена проблема целостности начала и концовки, присущей жанру, вопрос композиции, проблема начала, конца и полноты.

Горгани, используя опыт своих предшественников газневидского периода, поднял жанр романтической поэмы на новый уровень, проложив путь шедеврам своего великого преемника Низами Гянджеви. Поэма «Вис и Рамин» своим художественным решением представляет собой уникальное связующее звено между любовными историями «Шахнаме» и романами Низама.

³⁷ Астхик Гегамян – преподаватель кафедры иранистики ЕГУ, Эл. почта: geghamyanastghik@ysu.am, ORCID 0009-0003-4378-4431.

Ключевые слова: романтическая поэма, персидская литература, эпическая поэзия, эпос, любовные дастаны, романтические поэмы Низами, «Вис и Рамин», «Шахнамэ».

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է., Դրվագներ Արևելքի գրականության պատմության, Երևան, 1971:
2. Бертельс Е., Избранные труды. Низами и Физули. М., 1962.
3. Бертельс Е., Избранные труды. История персидско-таджикской литературы. М., 1960.
4. Брагинский И., 12 минатюр. М., 1976.
5. Брагинский И., Очерки из истории таджикской литературы. Сталинабад, 1956.
6. Висрамиани. Перевод С. Иорданишвили, предисловие А. Гвахария, М. Тоуда, Тбилиси, 1938.
7. Жирмунский В., Народный героический эпос. М.-Л., 1962, 65-74.
8. Каладзе И., У истоков персидского романического эпоса. Актуальные проблемы иранистики, Тбилиси, 1970, 422.
9. Закани О., Веселая книга. М., 1965.
10. Сахранов В., О некоторых особенностях поэмы Фахраддина Гургани “Вис и Рамин”. Актуальные проблемы иранистики, Тбилиси, 1970.
11. Марр Ю., Статьи и сообщения. Том II, М.-Л., 1939.
12. Мокульский С, Итальянская литература. М., 1966.
13. Орбели И., Предисловие к «Висрамиани». М.-Л., 1938.
14. Minorsky V., Vis u Ramin: A Parthian Romance. *Bulletin of the School of Oriental and African Studies*, vol. XI, 1943–46, 741–763; vol. XII, 1947–1948, 20-35; vol. XVI, 1954, 91-92; New Developments. vol. XXV, 1962, 275-86.
15. Cross C., The Poetics of Romantic Love in VIS & RĀMIN. Chicago, 2015.
16. Nöldeke Th., Das Iranische Nationalepos. Berlin, 1930.
17. Awfī M., Kitāb-iLubāb al-albāb, ed. Edward Granville Browne and Muḥammad Qazvīnī. Leiden, Brill, 1903–6.
18. Mohammad Ja’far Mahjub, Moqaddame bar Vis va Rāmin. Tehrān, 1337/1959.
19. Гургани Ф. Вис и Рамин (<https://coollib.net/b/641210-fahriddin-gurgani-vis-i-ramin/read>) (մուտքի ամսաթիվ՝ 11.12.2023).

**ՀԱՅ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ ԹՅՈՒՐՔԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ
(ԹՈՒՐՔԵՐԵՆԻ, ՕՍՄԱՆԵՐԵՆԻ, ԱՂԲԵԶԱՆԵՐԵՆԻ,
ՂԱԶԱԽԵՐԵՆԻ, ԹՈՒՐՔՄԵՆԵՐԵՆԻ) ԳՈՅԱԿԱՆԻ
ՀԱՅՑԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ
Ալեքսանդր Սաֆարյան¹, Աշոտ Սողոմոնյան²,
Սիրանույշ Գալշոյան³**

DOI 10.46991/jos.2024.25.1.050

Հոդվածում, ա) հիմնվելով հայերեն և թուրքերեն լեզուների համեմատական վերլուծության վրա և բացահայտելով կոնկրետ «կոռեյացիան», բ) շրջանցելով հայոց լեզվի ձևաբանության մեջ հինգ, վեց կամ յոթ հոլովի առկայության տեսությունների փաստարկման շուրջ ավանդական վեճերն ու քննարկումները, գ) նպատակ ունենալով ուսանողներին առավել մատչելի ձևով ներկայացնել թուրքական (թուրքերեն, ադրբեջաներեն, դազախերեն, թուրքմեներեն) լեզուներում գոյականի հոլովական համակարգի առանձնահատկությունները և, հնարավորինս համառոտ ձևակերպված գիտելիքներ (իհարկե նաև խոսակցական և թարգմանչական հմտություններ) փոխանցել, առաջարկվում է հետևյալ բանաձևը. «ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջածանց, եթե հայերենի համապատասխան-գուգադիր ձևում գոյականը ստացել է -ը, -ն, -ու, -դ հոդերը»:

¹ Ալեքսանդր Սաֆարյանը ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի վարիչն է, պատմական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, էլ. փոստ՝ alexander-safarian@ysu.am, ORCID 0009-0006-2250-4877:

² Աշոտ Սողոմոնյանը ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ է, պատմական գիտությունների թեկնածու, էլ. փոստ՝ ashot.soghomonian@ysu.am, ORCID 0009-0002-5208-5723:

³ Սիրանույշ Գալշոյանը ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնի դոցենտ է, բանասիրական գիտությունների թեկնածու, էլ. փոստ՝ siranuysh.galshoyan@ysu.am, ORCID 0009-0003-9495-1471:

Բանալի բառեր՝ դասավանդում, հայ ուսանողներ, թուրքերեն, աղբրեջաներեն, հայցական հոլով:

Երևանի պետական համալսարանում թուրքերենը դասավանդվել է 1943 թվականից, սակայն խորհրդային տարիներին ԵՊՀ-ում թուրքերենի և օսմաներենի դասավանդման համար օգտագործվել են առավելապես ռուսերեն դասագրքեր և ձեռնարկներ, որոնք ստեղծվել են նախկին Միության առաջատար՝ մոսկովյան և լենինգրադյան գիտակրթական կենտրոններում: Շուրջ կես դար ԵՊՀ նախ քանասիրական, այնուհետև արևելագիտության ֆակուլտետի դասախոսները ժամանակակից թուրքերենի քերականության դասավանդման գործընթացում օգտագործել են Մ. Այլարովի հեղինակած և Մոսկվայի թյուրքագիտական և օսմանագիտական դպրոցի հիմնադիր, ակադեմիկոս Վ. Գորդլիսկու կողմից խմբագրված «Թուրքերենի դասագիրքը»⁴, որի համապատասխան բաժինները թարգմանվում էին հայերեն և դասախոսությունների ժամանակ թելադրվում մեր թուրքագետ-ուսանողներին⁵:

Ուսանողների ընկալման համար «խրթին» հիմնահարցերից էր հատկապես թուրքերենի հայցական հոլովի ներկայացումը, քանզի հաճախ անհասկանալի էր մնում, թե ուղիղ խնդիրը թուրքերենում ե՞րբ կարող է ստանալ հոլովական վերջածանց, և ե՞րբ՝ չստանալ: Այլարովյան դասագրքում հարցը արտացոլված էր՝ երկարաշունչ մանրակրկիտ բացատրություններով, տարաբնույթ օրինակներով՝ ելնելով թուրքերենում և ռուսերենում համապատասխան կոնկրետ գուգադիր-համարժեքների բացակայության հրամայականից (ռու-

⁴ Айляров М., Учебник турецкого языка (под ред. академика В.А. Гордлевского), М., 1954.

⁵ Մանրամասն տե՛ս Սաֆարյան Ա., Գալշոյան Ս., Հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման որոշ առանձնահատկությունների մասին, Արևելագիտության հարցեր, N13, 2017, էջ 416-435:

սերենը, ինչպես հայտնի է, չունի որոշյալի և անորոշի քերականական կարգ)⁶: Հավելենք, որ խորհրդային ժամանակաշրջանում կուրսային և դիպլոմային աշխատանքներ գրելիս թուրքական բաժնի ուսանողներին, որպես կանոն, հանձնարարվում էր ծանոթանալ առաջատար թյուրքագետ լեզվաբանների՝ Է. Սևորտյանի և Ա. Կոնոնովի համապատասխան աշխատություններին: Է. Սևորտյանը թուրքերենի ուղիղ խնդրի հիմնահարցին անդրադարձել է դեռևս անցյալ դարի 40-ական թվականներին հրապարակված և տարբեր թյուրքագետների աշխատանքներում հղվող մի հիմնարար հոդվածում:⁷ Ակադեմիկոս Ա. Կոնոնովը թուրքերենի քերականության ամենատարբեր հարցերը լուսաբանող իր ստվարածավալ մենագրության «Ձևաբանություն» բաժնում հանգամանորեն անդրադառնում է հոլովական համակարգին (այդ թվում՝ հայցական հոլովին)⁸, իսկ «Շարահյուսություն» բաժնում՝ ուղիղ խնդրին և նրա՝ հայցական հոլովի վերջածանց ստանալու կամ չստանալու դեպքերին՝ իր բանաձևումների՝ թուրքական գեղարվեստական գրականության տարբեր երկերից և անգամ հեքիաթներից վերցված օրինակներով հիրավի հարուստ «պատկերազարդմամբ» (այսուհանդերձ այս տեղեկատվությունը ևս ներկայացվում է մի քանի պարագրաֆներում և բազմաթիվ էջերում)⁹:

Անցյալ դարի 80-ական թվականներին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում հայերենի դասավանդման գործընթացում գե-

⁶ St' u և հմմտ. Айляров М., Указ. соч., с. 59–63, Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազուրյան Թ., Լեզվաբանական բառարան, Երևան, 1975, էջ 248, ինչպես նաև Սաֆարյան Ա., Գալշոյան Ս., նշվ. աշխ., էջ 425–429:

⁷ St' u Севортян Э., Прямое дополнение в турецком языке. Вестник Московского университета, No 12, 1948, с. 41–65.

⁸ St' u Кононов А., Грамматика современного турецкого литературного языка. Изд-во Академии Наук СССР, М.-Л., 1956, с. 78–97.

⁹ St' u Кононов А., Указ. соч., с. 396–405.

րիշխում էր «հինգ հոլովի» մոտեցումը, որն ընդհանրապես բացառում էր հայցական հոլովի առանձնացման հիմնավորվածությունը: Այսուհանդերձ հայերենի դասագրքաստեղծման գործում բացառիկ ավանդ ունեցող ու գիտամանկավարժական հարցերում բացառիկ լայնախոհություն ցուցաբերող պրոֆեսոր Մանվել Ասատրյանը, որը ձևաբանության հիմնահարցեր լուսաբանելիս առաջնորդվում էր կոնոնոլյան մեթոդաբանությունից ու նրա «դավանած» սկզբունքների հայաստանյան կողմնակիցներից միանգամայն տարբերվող մոտեցմամբ, հավանաբար կանխագալով, որ դեռևս դպրոցական նստարանից «յոթ հոլովի» վարժված ուսանողների մոտ կարող է առաջանալ որոշակի «դիսոնանս կամ դիսկոմֆորտ», իր հեղինակած բուհական ուսումնական ձեռնարկում միանգամայն հիմնավորված կերպով ու վարպետորեն (համառոտ, բայց համապարփակ) ներկայացնում է արդի հայերենում հոլովական համակարգի հիմնահարցի ուսումնասիրության պատմությունը՝ «գոյականի հոլովի քերականական կարգը» թեման լուսաբանելիս: Կարծում ենք, նպատակահարմար է մի ծավալուն մեջբերմամբ ներկայացնել պրոֆ. Մ. Ասատրյանի՝ հայերենում հոլովների թվի մասին լեզվաբանական բանավեճերի ակնարկը. «Չնայած որ յոթ հոլովի տեսությունը ներքնապես հակասական էր, որովհետև կենդանի լեզվի օրինաչափությունները մի զգալի չափով վերաձևում էին գրաբարի քերականության կաղապարներով, այնուամենայնիվ երեսնական թվականներին այն արմատավորվեց միջնակարգ ու բարձրագույն դպրոցներում և մինչև վաթսունական թվականների սկզբները միակ իշխող տեսակետն էր (ընդգծումը մերն է - Ա. Ս., Ա. Ս., Ս. Գ.): Սակայն վերջին տարիներս մոտիկ անցյալի հայ քերականագիտական ժառանգության գնահատման և առանձնապես լեզվաբանական նորագույն դպրոցների ու հոսանքների առաջ քաշած հարցերի ու դրույթների հետ կապված՝ կրկին առաջացավ այն

խնդիրը, թե արդյոք ժամանակակից հայերենի հոլովների հարցը ճիշտ է լուծված: Այսպիսով՝ սկսվեց վեճերի ու տարակարծությունների երրորդ շրջանը, որ շարունակվում է մինչև այսօր:

Այժմ այս հարցի մասին եղած կարծիքներն ու դրույթները բաժանվում են երեք խմբի: Լեզվաբանների մի մասը պաշտպանում է յոթ հոլովի ավանդական տեսությունը, մի ավելի ստվար մասը գտնում է, թե ժամանակակից հայերենում կա միայն հինգ հոլով, իսկ մի քանի լեզվաբաններ էլ բռնելով միջին դիրք և ժխտելով հայցականը՝ գտնում են, որ սեռականը անկախ հոլով է, և, հետևաբար, հոլովների թիվը վեց է (ընդգծումը մերն է՝ Ա.Ս., Ա.Ս., Ս.Գ.):

Այս երեք տեսակետներն արտացոլված են վերջին տարիներս լույս տեսած լեզվաբանական մի շարք աշխատությունների ու հոդվածների մեջ»:¹⁰

Գիտաբանական ու մանկավարժական ավանդույթների առավել լայն պատկերը գծագրելու համար ստորև նպատակահարմար ենք գտնում (ծավալուն մեջբերմամբ, բայց օրինակների կրճատումներով) ներկայացնել անցյալ դարի 70-ական թվականներին ՀՄՍՀ ԳԱ կողմից հրատարակված (ակադեմիկոս Էդ. Աղայանի խմբա-

¹⁰ Ասատրյան Մ., նշվ. աշխ., էջ 63: Հեղինակը գիտական բարեխղճությամբ և հետաքրքրասեր ուսանող-ընթերցողի շահերից ելնելով՝ ներկայացնում է համապատասխան հետևյալ հիմնարար հրապարակումները. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, Ասատրյան Մ., Հին և նոր բանավեճեր ժամանակակից հայերենի հոլովական համակարգի շուրջը (Բանբեր Երևանի համալսարանի, 1969, 2), Բարսեղյան Հ., Մ. Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր ինքնադատությունները, Երևան, 1968, Ղարիբյան Ա., Հայոց լեզվի քերականության ավանդույթային հարցերի մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1967, 1), Շարաբխանյան Պ., Պիվագյան Է., Արդի հայերենի հոլովների մասին (Պատմա-բանասիրական հանդես, 1967, 4), Պողոսյան Պ., Սեռական հոլովը ժամանակակից հայերենում (Պատմա-բանասիրական հանդես, 1968, 3), Ջահուկյան Գ., Ժամանակակից հայերենի հոլովական համակարգը, Երևան, 1967, Պապոյան Ա., Տեղաշարժեր հայերենի հոլովական հարացույցում (Պատմա-բանասիրական հանդես, 1968, 4), Իշխանյան Ռ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1972: Տե՛ս նույն տեղում:

գրությամբ լույս տեսած) ու բանասիրական և արևելագիտական ֆակուլտետների դասախոսների և ուսանողների շրջանում պահանջարկված «Լեզվաբանական բառարանի» «Հայցական հոլով» բառահոդվածի հիմնական բովանդակությունը. «Թեք հոլովներից մեկը, որը, որպես գլխավոր կիրառություն, ցույց է տալիս գործողության անմիջական առարկան: Իր այս իմաստով հայցականը կապվում է անցողական (արդի հայերենում՝ ներգործական, ներառյալ պատճառականները) բայերի հետ (ընդգծումը մերն է - Ա. Ս., Ա. Ս., Ս. Գ.): Արդի հայերենում հայցականի այս իմաստը, երբ խնդիրը անձի անուն է կամ անձի առումով է օգտագործվում, արտահայտվում է տրականի ձևով...: մնացած դեպքերում օգտագործվում են բառերի ուղիղ ձևերը...: Տարբերակում են հայցականի կիրառության հետևյալ դեպքերը՝ ուղիղ խնդիր հայցական՝ ուղիղ խնդրի հոլովը (ընդգծումը մերն է - Ա. Ս., Ա. Ս., Ս. Գ.), որն իր հերթին կարող է լինել արտաքին խնդրի հայցական... հետևանքի հայցական... ներքին խնդրի հայցական... կրկնակի կամ երկրորդական խնդրի հայցական, վերածման հայցական... ժամանակի հայցական... տեղի հայցական... չափ ու քանակի... գնի կամ արժեքի հայցական... նպատակի հայցական, որը քիչ է տարածված... ստորոգելիական վերադիր հայցական... հարաբերության հայցական, որոշչային հայցական կամ հունական հայցական: Որոշ լեզուներում տարբերակում են հայցականի այլ կիրառություններ ևս, ինչպես՝ սահմանափակ հայցական... և այլն»:¹¹ Իսկ նույն բառարանի «Ուղիղ խնդիր» բառահոդվածում նշվում է, որ այն «ցույց է տալիս գործողության առարկան, որի վրա անմիջականորեն անցնում է ներգործական բայի գործողությունը... Ուղիղ խնդիրը դրվում է հայցական հոլովով, հազվադեպ նաև տրական... Արդի հայերե-

¹¹ Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., նշվ. աշխ., էջ 169:

նում տարբերակել են նաև ուղիղ խնդրի հետևյալ տեսակները՝ արտաքին ուղիղ խնդիր, հետևանքի ուղիղ խնդիր, ներքին ուղիղ խնդիր, երկրորդական ուղիղ խնդիր...»:¹²

Հայերենին տիրապետող ուսանողներին՝ թուրքերենի հայցական հոլովը ներկայացնող (այլարժանի մուսերեն դասագրքում հինգ էջ զբաղեցնող) տեղեկատվության իմաստը հնարավորինս հակիրճ ներկայացնելու և գիտաուսումնական խնդիրը դյուրացնելու նպատակով անկախության տարիներին ԵՊՀ թյուրքագիտության ամբիոնում ստեղծված բուհական դասագրքում առաջարկվել է, կարծում ենք, համեմատաբար պարզ և «ինովացիոն» լուծում՝ թուրքերենի ուղիղ խնդրի՝ հայցական հոլովի վերջածանց ստանալու և հայերենի գուգադիր ձևերում որոշյալ առման (որոշիչ կամ ստացական հոդերի)¹³ առկայության դեպքերի կապի բացահայտմամբ: Դասագրքի՝ թուրքերենի հայցական հոլովի (Belirtme Durumu/ Yükleme Hali/ i - Hali) մասին պարագրաֆը շարադրված է հետևյալ կերպ. «Հայցական հոլովը կազմում է – ı, i, u, **ü** – ածանցների միջոցով: Այն պատասխանում է ո՞ւմ (kimi?) և ի՞նչը (neyi?) հարցերին: Նախադասության մեջ հայցական հոլովով դրված գոյականը կամ դերանունը կատարում են ուղիղ խնդրի շարահյուսա-

¹² Նույն տեղում, էջ 300:

¹³ Կարևոր է նաև մեր թյուրքագետ-ուսանողների՝ հայագիտական և այլ դասընթացների ժամանակ ստացվող տեղեկատվության ու թուրքերենի (աղբբեջաներենի) բուհական դասագրքերից կամ համապատասխան դասախոսություններից քաղվող գիտելիքների հնարավորինս ներդաշնակ ընկալումը: Այս առումով, կարծում ենք, հիշարժան է հետևյալ հղումը՝ հայերենի որոշյալ և անորոշ առումների մասին. «Գոյականի որոշյալ առումը կազմվում է ուղիղ ձևի՝ անորոշին (եզակի կամ հոգնակի թվով ուղղական կամ սեռական-տրական հոլովով), ավելացնելով –ը կամ –ն վերջամասնիկը... Որոշյալություն արտահայտող վերջամասնիկը կոչվում է որոշիչ հոդ... Որոշյալ առման դեպքում **ը** և **ն** հոդերի փոխարեն կարող են գործածվել նաև **ս** և **դ** հոդերը՝ միարժամանակ արտահայտելով ստացականության, դիմորոշություն կամ ցուցականություն...»: Ավետիսյան Յու., Մարգարյան Ա., Ներսիսյան Ն., Թեյյան Լ., Տեր-Մինասյան Ա., Գևորգյան Շ., Մարգարյան Լ., Աղիլխանյան Ա., Հայոց լեզվի և խոսքի մշակույթ, Երևան, 2019:

կան պաշտոն: Միաժամանակ հարկ է նշել, որ ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի ածանց, երբ որոշյալ առումով է:

Օր. (Ben) pencereyi açmıyorum. – (Ես) չեմ բացում պատուհանը:

(Ben) bu kitabı okuyorum. – (Ես) այս գիրքը կարդում եմ:

Երբ առկա է անորոշ առում, ուղիղ խնդիրը հայցական հոլովի ածանց չի ստանում:

Օր. (Ben) bir kitap okuyorum. – (Ես) մի գիրք եմ կարդում»:¹⁴

Վերոհիշյալ լեզվի դասավանդման մեթոդական խնդրի «լուծումը» նույնակերպ է ներկայացվել նաև հետազայում Հայաստանում ստեղծված աղբյուրներենի բուհական դասագրքում ¹⁵:

¹⁴ Տե՛ս նաև համո. Սաֆարյան Ա., Մողումոնյան Ա., Լոքմազյան Ս., Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, յոթերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2021, էջ 38: Այս հնարավորինս պարզ մոտեցումը, ներկայացվել է նաև հայ թուրքագետ-լեզվաբանների՝ հիմնահարցին ուղղակի կամ անուղղակի անդրադարձներ պարունակող տարբեր հրապարակումներում և գիտական զեկուցումներում: Մասնավորապես տե՛ս Սաֆարյան Ա., Մեթոնյան Ռ., Հայ ուսանողներին թուրքերենի հայցական հոլովի ուսուցման առանձնահատկությունների մասին, Проблемы романо-германской филологии: Теория и методика преподавания иностранных языков. Ереван, 2006, с. 72–73. Ջափարյան Շ., Բայական անցողականության և անանցողականության կարգերը ժամանակակից թուրքերենում, Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան 2012, հ. 2-3, էջ 315–323: Նշենք, որ թուրքերենի բուհական դասագրքում հայցական և այլ հոլովների կիրառության օրինակները ներկայացված են նաև համապատասխան հարացույցների և աղյուսակների, ինչպես նաև վարժությունների «գործիքակազմով»: Տե՛ս Սաֆարյան Ա., Մողումոնյան Ա., Լոքմազյան Ս., նշվ. աշխ., էջ 57–58:

¹⁵ Տե՛ս Մովսիսյան Լ., Աղբյուրներենի դասագիրք, Երևան, 2012, էջ 52: Նշվում է, որ հայցական հոլովը (Təsirlilik hal) «սովորաբար անվանում են ուղիղ խնդրի հոլով, այսինքն՝ հայցական հոլովով դրված գոյականը կատարում է ուղիղ խնդրի շարահյուսական գործառույթ: Հայցական հոլովով դրված անունը միշտ ցույց է տալիս որոշակիություն, այսինքն՝ այս հոլովը կիրառվում է, երբ խոսք է գնում որոշակի, կոնկրետ գոյականի մասին: Սակայն եթե չկա որոշյալ առում, ապա հայցական հոլովի վերջածանց բառին չի ավելանում: Այլ կերպ ասած, ուղիղ խնդրի շարահյուսական պաշտոն կատարող բառը չի ստանում հայցական հոլովի վերջածանց: Այսպես, «Mən bir şəxer öyrənirəm» - «Ես մի բանաստեղծություն եմ սովորում» նախադասության մեջ պարզ չէ, թե ինչ բանաստեղծության մասին է խոսքը, իսկ եթե ասենք «Mən şəxeri öyrənirəm»-«Ես բանաստեղծություն եմ սովորում», ապա դա նշանակում է, որ հայտնի է, թե ինչ բանաստեղծության մասին է խոսքը»:

Հիշարժան է, որ ներկայումս ոչ միայն Ռուսաստանի Դաշնությունում, այլև ԱՊՀ մյուս երկրներում ռուսախոս լսարանին ադրբեջաներենի դասավանդման համար օգտագործվող՝ Մ. Վ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի Պետական համալսարանի Ասիայի և Աֆրիկայի երկրների ինստիտուտում պատրաստված դասագրքում (հեղինակներ՝ Լ. Բամայիլովա, Դ. Նասիլով) հայցական հոլովի մասին տեղեկատվությունը համեմատաբար հակիրճ ներկայացված է հետևյալ կերպ. պատասխանում է *kimi?*, *nəyi?*, *haranı?*, *nə?*, *hara?* հարցերին՝ մատնացույց է անելով առարկայի որոշակիությունը («определенность предмета»), և *nə?*, *hara?* հարցերին՝ մատնացույց անելով առարկայի անորոշությունը («неопределенность предмета»): Նույն դասագրքում կոնկրետ օրինակներով բացատրվում է, որ *Lalə kitabı oxuyur* նախադասությունը նշանակում է, որ *Լալան* կարդում է որոշակի, հայտնի գիրք, իսկ *Lalə kitab oxuyur* նախադասությունը նշանակում է, որ *Լալան* ընդհանրապես կարդում է: Այնուհետև նշվում է, որ առարկայի որոշակիությունն արտահայտելու համար հայցական հոլովն արտացոլվում է վերջածանցով, իսկ առարկայի անորոշության դեպքում վերջածանցը բացակայում է: Հավելենք, որ ադրբեջաներենում, ինչպես և թուրքերենում բաղաձայնով վերջացող գոյականներին ավելանում են հոլովական *ı*, *i*, *u*, *ü* (*Asıman kitabı oxuyur*- *Ասիմանը* կարդում է *գիրքը*, *Solmaz şeri öyrənir*- *Սոլմազը* սովորում է *բանաստեղծությունը*, *Oğlan buzov u otarır*-*Տղան* հորթի *ն* արածեցնում է, *Qız gülü dərir*- *Աղջիկը* պոկում է *ծաղիկը*), իսկ եթե գոյականը վերջանում է ձայնավորով, վերջածանցից առաջ դրվում է «ո»՝ «ձայնաբաժան» հնչյունը (*Atam usta nı çağırır*- *Հայրիկս* կանչում է *վարպետի* *ն*, *Mən quşu nu əzizləyirəm*-*Ես* շոյում եմ *թռչունի* *ն*, *Sən məni görürsən*-*Դու* տեսնում ես *ինձ*, *Bacım ütünü alır*-*Բւմ* քույրը վերցնում է *արդուկը*)¹⁶:

¹⁶ St' u Исмаилова Л., Насилов Д., Азербайджанский язык для стран СНГ. М., 2009, с. 70.

Հասկանալի է, որ թե՛ թուրքերենի, թե՛ ադրբեջաներենի դասավանդման գործընթացում շեշտվում են հետևյալ բացառությունները. su (ջուր) գոյականի հայցական հոլովածն էլ suyu, իսկ ne? (ո՞?) հարցական դերանվանը՝ neyi? (ո՞չի?)¹⁷:

2000-ական թվականներից ԵՊՀ-ում գործադրվել են զգալի ջանքեր՝ թուրքագիտության ամբիոնը թյուրքագիտության ամբիոնի վերակազմավորելու, բացի ավանդաբար դասավանդվող թուրքերենից և օսմաներենից նաև այլ թյուրքական լեզուների դասավանդումը կազմակերպելու, թյուրքալեզու երկրների ու ժողովուրդների մշակույթի ու պատմության հիմնահարցերի ուսումնասիրության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետությունների (հատկապես՝ Թուրքմենստանի և Ղազախստանի), ինչպես նաև Ռուսաստանի Դաշնության թյուրքալեզու սուբյեկտների (մասնավորապես՝ Թաթարստանի) հետ հումանիտար-մշակութային համագործակցության համակողմանի ամրապնդման ուղղությամբ¹⁸:

¹⁷ Տե՛ս նաև հինգ. Սովիտյան Լ., նշվ. աշխ., էջ 52, Исмаилова Л., Насилов Д., Указ. соч., с. 70.

¹⁸ Сафарян А., Адилбаев Ж., Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном. *Вестник Евразийского национального университета имени Л. Н. Гумилева* (Научный журнал), 2016, N 1, с. 113-118. Сафарян А., Әділбаев Ж., ТМД елдерінің түркітану орталықтары ынтымақтастығының келешегі туралы, *Түркі әлемі және халықаралық байланыстар: тарих, тұлға, келешек*, 26-27 мамыр 2017 жыл, б. 259-262. Адилбаев Ж., Сафарян А., Погосян Н., Незабываемые страницы истории изучения и популяризации творческого наследия великого узбекского поэта и гуманиста Алишера Навои в Армении и в Казахстане. *Творческое наследие Алишера Навои и современность. Сборник докладов международной научной конференции*, М., 2018, с. 8-11. Симомян А., Сафарян А., Об армяно-туркменских культурных связях и научно-образовательном сотрудничестве между Арменией и Туркменистаном. *Հայագիտության հարցեր*, թիվ 1, 2019, էջ 226–235: Симомян А., Сафарян А., О научно-образовательном сотрудничестве между Арменией и Казахстаном: реалии и перспективы. *Հայագիտության հարցեր*, թիվ 3, 2020, с. 3–11. Сафарян А., Из истории армяно-казахских культурных связей. «Простор» (литературно-художественный журнал, № 2, Казахстан, 2020, с. 162–173.

ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետում բացվել և հաջողությամբ գործում է Աբայի անվան Ղազախերենի, Ղասախստանի պատմության ու մշակույթի կենտրոնը, որի գործունեության մասին միջբուհական պայմանագիրը ներառում է նաև հայաստանցի ուսանողներին ղազախերենի դասավանդման կետ (դասավանդումը սկզբնապես իրականացվել է Աստանայի Լ. Ն. Գումիլյովի անվան Եվրասիական ազգային համալսարանի դասախոսների կողմից, իսկ ներկայումս ԵՊՀ-ում դասավանդում է հատուկ ծրագրով նախապատրաստված առաջատար ղազախագետ Շուշան Խաչատրյանը): Թուրքմեներենի և թուրքմենական գրականության դասընթացներ է վարում բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Ամալյա Պետրոսյանը: Հայ ուսանողներին ղազախերենի և թուրքմեներենի դասավանդման գործընթացում օգտագործվում են Ղազախստանում, Թուրքմենստանում և Ռուսաստանի Դաշնությունում հրատարակված դասագրքեր, ուսումնամեթոդական ու մեթոդական ձեռնարկներ, ինչպես նաև վերոհիշյալ մասնագետների կողմից կազմված և հատուկ փորձաքննություն անցած ծրագրեր: Թուրքմեներենի և ղազախերենի քերականությունը նույնպես դասավանդվում է հայերենի հետ զուգադրական քննության հենքի վրա և հայցական հոլովի «մատուցումը» կրկին կապվում է որոշյալ առման հետ:

Այսպիսով՝ ա) հայերենի և թուրքերենի զուգադրական քննության հենքի վրա և բացահայտելով կոնկրետ «կոռելյացիա», բ) շրջանցելով հայերենի ձևաբանության արդեն ավանդական՝ հինգ, վեց կամ յոթ հոլովների մասին գիտական բանավեճերը և քննարկումները, գ) փորձելով ուսանողներին առավել մատչելի մեթոդով փոխանցել թյուրքական լեզուներում (թուրքերենում, ադրբեջաներենում, ղազախերենում, թուրքմեներենում) գոյականի հոլովական համակարգի առանձնահատկությունների մասին

հնարավորինս հակիրճ գիտելիք (բնականաբար նաև խոսելու կամ թարգմանելու հմտություն)՝ առաջարկվում է հետևյալ բանաձևը. «ուղիղ խնդիրը ստանում է հայցական հոլովի վերջածանց, եթե հայերենի համապատասխան-գուգադիր ձևում գոյականը ստացել է -ը, -ն, -ս, -դ հոդերը»:

ON THE FEATURES OF TEACHING THE ACCUSATIVE CASE OF NOUNS IN TURKIC LANGUAGES (TURKISH, OTTOMAN TURKISH, AZERBAIJANIAN, KAZAKH, TURKMEN) TO ARMENIAN STUDENTS

Alexander Safaryan¹⁹, Ashot Soghomonyan²⁰, Siranuysh Galshoyan²¹

In the article, a) based on a comparative analysis of the realities of Armenian and Turkish languages and elucidating a specific «correlation», b) avoiding traditional disputes and discussions regarding the arguments of theories on five, six, or seven cases in Armenian language morphology, c) with the aim of conveying to students the peculiarities of the noun case system in Turkic languages (Turkish, Azerbaijani, Kazakh, Turkmen) and the transmission of succinctly formulated knowledge (naturally, including skills in spoken language and translation) through the most accessible method, the following formula is proposed: "The direct object in the accusative case is used when the corresponding - comparable form in Armenian language contains morphemes (article) of the definiteness category."

Keywords: *teaching, Armenian students, Turkish, Azerbaijani, accusative case.*

¹⁹ Alexander Safaryan is a Full Professor, Head of the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: alexander-safarian@ysu.am, ORCID: 0009-0006-2250-4877.

²⁰ Ashot Soghomonyan is an Associate Professor at the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: ashot.soghomonyan@ysu.am, ORCID 0009-0002-5208-5723.

²¹ Siranuysh Galshoyan is an Associate Professor at the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: siranuysh.galshoyan@ysu.am, ORCID: 0009-0003-9495-1471.

ОБ ОСОБЕННОСТЯХ ПРЕПОДАВАНИЯ ВИНТЕЛЬНОГО ПАДЕЖА ИМЕНИ СУЩЕСТВИТЕЛЬНОГО ТЮРКСКИХ (ТУРЕЦКОГО, ОСМАНСКО-ТУРЕЦКОГО, АЗЕРБАЙДЖАНСКОГО, КАЗАХСКОГО, ТУРКМЕНСКОГО) ЯЗЫКОВ АРМЯНСКИМ СТУДЕНТАМ

Александр Сафарян²², Ашот Согомонян²³, Сирануш Галшоян²⁴

В статье а) на основе сопоставительного анализа реалий армянского и турецкого языков и раскрывая конкретную «корреляцию», б) обойдя традиционные споры и обсуждения об аргументации теорий пяти, шести или семи падежей в морфологии армянского языка, в) с целью наиболее доступным методом передать студентам особенности системы падежей имени существительного в тюркских (турецком, азербайджанском, казахском, туркменском) языках и передачи по возможности кратко сформулированного знания (естественно, также навыков разговорной речи и перевода), предлагается следующая формула: «Прямое дополнение в винительном падеже употребляется, когда в соответствующей сопоставимой форме армянского языка содержатся морфемы (артикл) категории определенности».

Ключевые слова: преподавание, армянские студенты, турецкий язык, азербайджанский язык, винительный падеж.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:

2. Ասատրյան Մ., Հին և նոր բանավեճեր ժամանակակից հայերենի հոլովական համակարգի շուրջը, Բանբեր Երևանի համալսարանի, 1969, 2:

3. Ավետիսյան Յու., Սարգսյան Ա., Ներսիսյան Ն., Թելյան Լ., Տեր-Մինասյան Ա., Գևորգյան Շ., Սարգսյան Լ., Աղիլխանյան Ա., Հայոց լեզվի և խոսքի մշակույթ, Երևան, 2019:

²² Александр Сафарян - к.ист.н., профессор, заведующий кафедрой тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: alexander-safarian@ysu.am, ORCID 0009-0006-2250-4877.

²³ Ашот Согомонян - к.ист.н., доцент кафедры Тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: ashot.soghomonyan@ysu.am, ORCID 0009-0002-5208-5723.

²⁴ Сирануш Галшоян - к.ф.н., доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: siranuush.galshoyan@ysu.am, ORCID: 0009-0003-9495-1471.

4. Զաքարյան Շ., Բայական անցողականության և անանցողականության կարգերը ժամանակակից թուրքերենում, Լրաբեր հասարակական գիտությունների, հ. 2-3, ՀՀ ԳԱԱ Գիտության հրատ., Երևան, 2012, էջ 315–323:

5. Մովսիսյան Լ., Աղբբեջաներենի դասագիրք, Երևան, 2012:

6. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարազյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:

7. Սաֆարյան Ա., Գալշոյան Ս., «Հայ ուսանողներին թուրքերենի դասավանդման որոշ առանձնահատկությունների մասին», Արևելագիտության հարցեր, N13, Երևան, 2014, էջ 416–435:

8. Սաֆարյան Ալ., Սողոմոնյան Ա., Լոքմազյոզյան Ս., Թուրքերենի դասագիրք, Գիրք Ա, յոթերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2021:

9. Սաֆարյան Ալ., Մելքոնյան Ռ., Հայ ուսանողներին թուրքերենի հայցական հոլովի ուսուցման առանձնահատկությունների մասին, Проблемы романо-германской филологии: теория и методика преподавания иностранных языков. Ереван, 2006, с. 72–73.

10. Адилбаев Ж., Сафарян А., Погосян Н., Незабываемые страницы истории изучения и популяризации творческого наследия великого узбекского поэта и гуманиста Алишера Навои в Армении и в Казахстане. Творческое наследие Алишера Навои и современность. Сборник докладов международной научной конференции, М., 2018, с. 8–11.

11. Айляров М., Учебник турецкого языка (под редакцией академика В. А. Гордлевского), М., 1954.

12. Исмаилова Л., Насилов Д., Азербайджанский язык для стран СНГ, М., 2009.

13. Кононов А., Грамматика современного турецкого литературного языка. Изд. Академии Наук СССР, М.-Л., 1956, с. 78–97.

14. Сафарян А., Из истории армяно-казахских культурных связей. «Простор» (литературно-художественный журнал, Казахстан), No 2, 2020, с. 162–173.

15. Сафарян А., Әділбаев Ж., ТМД елдерінің түркітану орталықтары ынтымақтастығының келешегі туралы, Түркі әлемі және халықаралық байланыстар: тарих, тұлға, келешек, 26-27 мамыр 2017 жыл, б. 259–262.

16. Сафарян А., Адилбаев Ж., Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией Казахстаном, Вестник Евразийского национального университета имени Л. Н. Гумилева (Научный журнал), No 1, 2016, с. 113-118.

17. Севортян Э., Прямое дополнение в турецком языке. *Вестник Московского университета*, No 12, 1948, с. 41–65.

18. Симонян А., Сафарян А, О научно-образовательном сотрудничестве между Арменией и Казахстаном: реалии и перспективы. Հայազիտություն հարցեր, թիվ 3, Երևան, 2020, էջ 3–11.

19. Симонян А., Сафарян А., Об армяно-туркменских культурных связях и научно-образовательном сотрудничестве между Арменией и Туркменистаном. Հայազիտություն հարցեր, թիվ 1, Երևան, 2019, էջ 226–235.

ԶՈՐԱՎԱՐ ԱՆԴՐԱՆԻԿԸ ԹՈՒՐՔ ԵՎ ԱՂԲԵԶԱՆՑԻ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Ռուբեն Մելքոնյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.065

Հայերիս շրջանում լեզենդար գորավար Անդրանիկ Օզանյանի հանդեպ ժողովրդական սերն ու ակնածանքը հասնում են միջական, էպիկական սահմանների: Բացի պատմագիտական, քաղաքագիտական ուսումնասիրություններից, համաժողովրդական հերոսի ընկալում ունեցող Անդրանիկի վերաբերյալ Արևմտյան Հայաստանից գաղթածների, Հայոց ցեղասպանությունը վերապրածների և նրանց սերունդների շրջանում պահպանվել է անգամ վիպասք: Եվ ընդհանրապես Անդրանիկն իր կերպարով իրական կամ միջական հույս է ներշնչել հայության բազմաթիվ սերունդների անգամ այն ժամանակ, երբ թվում էր, թե հաղթանակի մասին մտածելն իսկ իրատեսական չէ:

Սակայն օսմանյան և թուրք տարբեր ռազմական, քաղաքական գործիչների հուշերի կամ նրանց հետ կապված պատմությունների հետ ծանոթացումը մեջ առջև բացում է լեզենդար գորավարի կերպարի մեկ այլ, այս անգամ՝ թուրքական ընկալումը: Այսինքն՝ այն, որ Անդրանիկ Օզանյանը եղել է թուրքական ռազմաքաղաքական վերնախավի ուշադրության կենտրոնում որպես վտանգավոր թշնամի դա սպասելի է, սակայն որ հետագայում էլ՝ տասնամյակներ անց, նա ընկալվել է որպես գաղափարական հակառակորդ, որը որպես խորհրդանիշ կարող է սպառնալիք լինել թուրքական ու ադրբեջանական հեռահար նպատակների համար, ուշագրավ է:

Բանալի բառեր՝ գաղափարական-քարոզչական պայքար, գորավար Անդրանիկ, հուշագրություն, թուրք-ադրբեջանական տանդեմ, կերպար:

¹ Ռուբեն Մելքոնյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դեկանն է, պ.գ.դ., պրոֆեսոր, էլ փոստ՝ rubenmelkonyan@ysu.am, ORCID 0000-0002-1937-901X.

Հայերիս շրջանում լեզենդար գորավար Անդրանիկ Օզանյանի հանդեպ ժողովրդական սերն ու ակնածանքը հասնում են միֆական, էպիկական սահմանների: Բացի պատմագիտական, քաղաքագիտական ուսումնասիրություններից, համաժողովրդական հերոսի ընկալում ունեցող Անդրանիկի վերաբերյալ Արևմտյան Հայաստանից գաղթածների, Հայոց ցեղասպանությունը վերապրածների և նրանց սերունդների շրջանում պահպանվել է անգամ վիպասք, որը 1960-1980-ական թվականներին գրառել ու մշակել է բարբառագետ-բանահավաք Սուրեն Սահակյանը²: Այսինքն՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին հայերի հավաքական ընկալման մեջ ի հայտ է եկել, կարելի է ասել, անպարտելի մի նոր Սասունցի Դավթի կերպար, որի շուրջ հյուսված երգերը, դյուցազներգերը իրենց մեջ թաքնված հաղթանակի հույս են պարունակել հասկապես դժնդակ ժամանակաշրջաններում:

Եվ ընդհանրապես Անդրանիկն իր կերպարով իրական կամ միֆական հույս է ներշնչել հայության բազմաթիվ սերունդների անգամ այն ժամանակ, երբ թվում էր, թե հաղթանակի մասին մտածելն իսկ իրատեսական չէ: Օրինակ՝ այդ մասին բավական դիպուկ է նկարագրում հայ ազգային գաղափարախոսության հիմնական մշակողներից մեկը՝ Հայկ Ասատրյանը. «...հրամանատար Անդրանիկն ապաւինած առասպելական իր քաջութեան եւ հմայքին՝ հաւատում էր տաճիկներին ջախջախել Կարինի ամրութիւնների առջեւ: Եւ իրօ՛ք, իրան յատուկ մի շարք խիզախ հակայարձակումներով, որոնց ընթացքին սուրը քաշած խոյանում էր զօրքի առջեւից, նա կարողացաւ կոտրել տաճիկների յարձակողական թափը»³: Սակայն արդեն ավելի ուշ՝ Հայաստանի առաջին Հանրա-

² Տե՛ս Ասք Անդրանիկ Ջորավարի մասին, բանահավաք և մշակող Ս. Սահակյան, Երևան, 2008:

³ Ասատրյան Հ., Հատընտիր, Երևան, 2004, էջ 328:

պետության ռազմական պարտության ժամանակաշրջանում անգամ Անդրանիկն ի զորու չէր վերականգնել պառակտիչ և կեղծ խաղաղասիրական քարոզներով պայքարելու ցանկությունը գրեթե կորցրած բանակի ու հասարակության մի որոշակի հատվածի ոգին: Կրկին Հայկ Ասատրյանի բնութագրումը տալիս է այդ ամենի ամբողջական պատկերը. «Այդ պայմաններում զուր պետք է անցնեին զորավար Անդրանիկի հերոսական ճիգերը. նրա դիւցազնական ոգին կորցրել էր նախկին վարակչականութիւնը»⁴:

Սակայն օսմանյան և թուրք տարբեր ռազմական, քաղաքական գործիչների հուշերի կամ նրանց հետ կապված պատմությունների հետ ծանոթացումը մեջ առջև բացում է լեգենդար զորավարի կերպարի մեկ այլ, այս անգամ՝ թուրքական ընկալումը: Այսինքն՝ այն, որ Անդրանիկ Օզանյանը եղել է թուրքական ռազմաքաղաքական վերնախավի ուշադրության կենտրոնում որպես վտանգավոր թշնամի դա սպասելի է, սակայն որ հետագայում էլ՝ տասնամյակներ անց, նա ընկալվել է որպես գաղափարական հակառակորդ, որը որպես խորհրդանիշ կարող է սպառնալիք լինել թուրքական ու ադրբեջանական հեռահար նպատակների համար, ուշագրավ է: Վստահաբար կարելի է ասել, որ զորավար Անդրանիկը թուրք ռազմաքաղաքական գործիչների հուշերում ամենաշատը հիշատակված հայ զինվորականներից է: Իրենց նամակագրությունների, հրահանգների, հուշերի, օրագրերի մեջ կամ զրույցներում Անդրանիկին այս կամ այն կերպ անդրադարձել են երիտթուրք պարագլուխ Էնվերը, գեներալ Քյազըմ Քարաբեքիրը, մարշալ Ֆեզի Չաքմաքը, Թուրքիայի հիմնադիր-նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքը և ուրիշներ:

⁴ Նույն տեղում, էջ 329:

Օրինակ՝ 1918 թ. հուլիսին իր հրամաններից մեկում, որը վերաբերում է Կովկասում օսմանյան զորքերի ծավալապաշտական գործողություններին, զորավար Անդրանիկին է անդրադառնում Օսմանյան կայսրության ռազմական նախարար Էնվեր փաշան՝ զգուշացնելով օսմանյան հրամանատարներին փակել Անդրանիկի և իր գլխավորած զորքի ճանապարհը հատկապես անդրկովկասյան որոշակի ճակատներում⁵:

Թուրք գեներալ և քաղաքական գործիչ Քյազըմ Քարաբեքիրը, որը գլխավորել է թուրքական զորքը 1920 թ. թուրք-հայկական պատերազմում, իր օրագրերում մանրամասն նկարագրում է թուրքերի ներխուժումը Հայաստան թե՛ 1918 և թե՛ 1920 թվականներին: Հայ քաղաքական, կուսակցական և ռազմական գործիչներին նա գրեթե չի առանձնացնում և տալիս է ընդհանրական անվանումներ՝ հայ կոմիտեականներ, հայկական հրոսակներ, դաշնակցականներ: Բացառություն է կազմում միայն զորավար Անդրանիկ Օզանյանը, որի անունը Քարաբեքիրը 1918 թ. իր օրագրերում հիշատակվում է երեք անգամ՝ 1918 թ. մարտի 14-ի, հունիսի 22-ի և օգոստոսի 21-ի գրառումներում: Առաջին անգամ զորավարի անունը հիշատակվում է Էրզրումի գրավման համատեքստում. «Էրզրումի բերդի գունդը 500 մարդ է, ռուս սպաների մեծ մասը այս գնդում են: [12 մարտ] Մորելը առավոտյան 5-ին հանձնվելու հրաման է տվել: Սակայն հեռախոսը կոտրվել էր: Ժամը 7-ին են տեղեկացել: Մորելը և Անդրանիկը ձիով փախել են»⁶: 1918 հունիսի 22-ի գրառման մեջ Քարաբեքիրը նշում է, որ Անդրանիկը հազար հեծյալով, երկու հազար հետևակով «Շահթահթի մոտ սահմանը հատելով՝ Վանի կամ

⁵ Симонян Г., Из истории «политического оправдания» полководца Андраника. Ереван, 2016, с. 70.

⁶ Karabekir K., Günlükler (1906-1948), 1-2. cilt, hazırlayan Y. Demirel, İstanbul, 2009, s. 476.

Ռուսիեի կողմ է գնում»⁷: Իսկ 1918 թ. օգոստոս 21-ին Քարաբեքիրը գրում է. «Զանգեզուրի նահիեից (Նախիջևանից երկու օր դեպի արևելք և նոր սահմանից էլ արևելք) եկել են 200 մուսուլման և նահիեի ղեկավարները: Հայերը և մուլկանները սկսել են վառել մուսուլմանների գյուղերը: Շնքաբ գյուղում, ուր չորս գյուղի բնակչություն էր պատսպարվել, ջարդ են կազմակերպել: 51 մարդ է փրկվել: Անդրանիկը 800 հետևակով, 400 ձիավորով, 4 հրանոթով, 2 գնդացիով Գերուսի (2000 տուն ունեցող ավան) հարավարևմուտքում Թաթաքում է: ...8000 զինյալ հայ կա: Ավելին, եթե Անդրանիկը կանոնավոր ուժ էլ ներառի, 2000-ով կկարողանա ավելացնել»⁸:

Թուրքական ռազմական հայտնի գործիչ, Թուրքիայի Հանրապետության Գլխավոր շտաբի երկարամյա պետ, մարշալ Ֆևհի Չաքմաքը իր «Առաջին համաշխարհային պատերազմում Արևելյան ճակատը» հուշագրության մեջ մեծ մասամբ կրկնում է թուրքական պաշտոնական թեզերի դրույթները և ներկայացնելով Առաջին աշխարհամարտի տարիներին այն ռազմաճակատները, որտեղ ինքը ակտիվ մասնակցություն է ունեցել՝ որոշ տվյալներ է փոխանցում նաև հայերի մասին: Նախ, նա գրում է, որ հայերը համագործակցում էին ռուսների հետ, սակայն վերջիններս, իբրև թե, հայերից չէին ստանում այն օգնությունը որն ակնակալում էին: Այնուհետև նա նշում է, թե, իբրև, հայերը իրականացնում էին այն շրջանների մուսուլման բնակչության կոտորածները, որոնք գտնվում էին ռուսական վերահսկողության ներքո և հետո թուրքական իշխանությունները հայերին ոչ թե արտաքսում կամ արքստում էին, այլ նրանք «մուսուլմանների հանդեպ իրականացված

⁷ Նույն տեղում, էջ 517:

⁸ Նույն տեղում, էջ 528:

բռնություններից վախենալով իրենք էին փախչում»⁹: Եվ ընդհանրապես այդ հուշագրության մեջ, որտեղ ներկայացված են տարբեր ճակատների և ճակատամարտերի քարտեզները, զորքերի տեղաբաշվածությունը և այլն, Չաքմաքը շարունակ խոսում և կիրառում է «հայկական խռովություն», «հայկական չեթեներ», «հայ և հույն ավազակներ» եզրույթները: Ուշագրավ է, որ թուրք մարշալի հուշերում հանդիպում են նաև հայ հայտնի զինվորականների անունների հիշատակում օրինակ՝ Նազարբեկովին: Մարշալ Չաքմաքը մի քանի անգամ հիշատակում է Անդրանիկ գորավարին և տալիս նրա հետ ռազմական առճակատման նկարագրություններ, իսկ զրքի տողատակում հրատարակչությունը ծանոթագրություն է տալիս, որտեղ ներկայացված է Անդրանիկի կենսագրությունը և նա բնութագրվում է որպես «հայ հրոսակ»՝ «չեթեջի»:

Ութ հատորից բաղկացած հուշեր է գրի առել Թուրքիայի Հանրապետության երրորդ նախագահ (1950-1960 թթ.), քեմալական ազգայնամոլական շարժման ակտիվ դերակատարներից Ջելալ Բայարը, որը իր հուշագրության 5-րդ հատորում հպանցիկ խոսում է Սասունում հայերի դիմադրության ու ապստամբությունների մասին և այդ համապատկերում հիշատակում է Ադրյուր Սերոբին, Անդրանիկին, Դրոյին և Նիկոլ Դումանին¹⁰:

Թուրքիայի առաջին նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի մտերիմ զինակից Քըլըչ Ալին իր հուշերում նույնպես հիշատակում է Անդրանիկին, երբ խոսում է 1919-1923 թթ. ծավալվող քեմալական շարժման տարբեր դրվագների մասին: Այսպես, խոսելով ամերիկյան զեներալ Հարբորդի հայկական նահանգներ իրակա-նացրած այցի մասին, Քըլըչ Ալին մասնավորապես գրում է. «Ռու-

⁹ Çakmak F., Birinci Dünya Savaşı'nda Doğu Cephesi, Ankara, 2005, s. 98.

¹⁰ Bayar C., Ben de yazdım, cilt 5, İstanbul, 1997, s. 52-53.

սական ուժերից առաջ Էրզրում մտած հայերին ղեկավարել է օսմանյան խորհրդարանում Էրզրումի ներկայացուցիչ Գարեգին Փասթրմաճյանը: Պատերազմի սկսելուց հետո Ռուսաստան փախած այս մարդը վերցրել էր Արմեն Գարո անունը և իր հավաքած ռուսաստանցի հնչակ-դաշնակ կոմիտեականներով Էրզրումում իրականացրել է անասելի բռնություններ: Գարեգին Փասթրմաճյանից հետո Էրզրում է եկել Անդրանիկը և բռնությունները այնպիսի ծավալների է հասցրել, որ ռուս զեներալ Ռուդչևսկին ստիպված է եղել նրան քաղաքից հեռացնել: Անդրանիկի բռնություններից տուժել են նաև այն հայերը, որոնք իրեն չէին միացել: Շրջակայքի լեռներում, ապահով վայրերում թաքնված այդ հայերը իրենց թաքստոցներից դուրս են եկել միայն այն ժամանակ, երբ թուրքական բանակը ետ է վերցրել քաղաքը»¹¹: Իհարկե, դժվար է հավատալ, որ թուրքական բանակը պետք է փրկեր Էրզրումցի հայերին, որոնք, իբրև թե, թաքնվել են Անդրանիկից, սակայն այդ ասված կեղծիքը ամերիկյան պատվիրակությանը և զեներալ Հարբորդին ցույց տալու և համոզելու համար թուրքերն իրականացրել են տարատեսակ գործողություններ, այդ թվում և՛ կազմակերպել են «Անդրանիկից փախած» հայերի «խոստովանություններ»:

Հայտնի է, որ օսմանյան բանակում ծառայել են նաև տարբեր ազգությունների բարձրաստիճան սպաներ և նրանցից մեկը՝ վենեսուելացի Ռաֆայել դե Նոգալեսը նույնպես հետագայում գրի առած հուշերում պատմում է Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին օսմանյան բանակում իր ծառայության մասին և նկարագրում Հայոց ցեղասպանությունը, ինչպես նաև համառոտ անդրադառնում կամ հիշատակում հայ առանձին գործիչների: Հայերի

¹¹ Atatürk'ün Sırdaşı Kılıç Ali'nin Anıları, (derleyen: Hulûsi Turgut), İstanbul, 15. Basım, 2016, s. 73.

մասին սովորաբար հավաքական գնահատականներ տալով՝ Նոգալեսը առանձնացնում է զորավար Անդրանիկին, նրան բնութագրելով՝ «դաժան մարդասպան և ֆիդայիների հանդուգն առաջնորդ», Արամ Մանուկյանին որպես «տաղանդավոր զինվորական», իսկ Նուբար փաշային որպես «հայ քաղաքական գործիչների շարքում միակ կարգին մարդ»¹²:

Սակայն զորավար Անդրանիկի հետ կապված ամենահետաքրքիր և, միննույն ժամանակ, բարձր արժանահավատություն ունեցող հուշը կամ անդրադարձը կապված է Թուրքիայի Հանրապետության հիմնադիր-նախագահ Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքի հետ և այդ ամենում կենտրոնական դեր ունի հայազգի հայտնի լեզվաբան Հակոբ Դիլաչար-Մարթայանը: Այսպես, 1968 թ. սեպտեմբերին ԽՍՀՄ մի շարք հանրապետություններից մասնագետների (պատմաբան-արևելագետ, գրականագետ, լրագրող, բժիշկ) խումբ է այցելում Թուրքիա՝ ամենայն հավանականությամբ մշակութային-ճանաչողական նպատակով և նրանց մեջ է լինում Խորհրդային Հայաստանը ներկայացնող պատմաբան Ծատուր Ադայանը: Ավելի ուշ Ծատուր Ադայանը հետաքրքիր մանրամասնություններով նկարագրում է իրենց հանդիպումը հայտնի լեզվաբան Հակոբ Դիլաչար-Մարթայանի հետ: Ուշագրավ է, որ այդ հանդիպման ժամանակ Դիլաչար-Մարթայանը պատմել է, թե ինքը ժամանակին ցանկություն է ունեցել Բուլղարիայից, որտեղ տեղափոխվել է Հայոց ցեղասպանությունից հետո, տեղափոխվել Խորհրդային Հայաստան դառնալով մեկը հազարավոր սփյուռքահայ հայրենադարձներից, սակայն դա չի ստացվել. «Իմ տեղը Հայաստանում պետք է լիներ, սակայն բախտը չժպտաց ինձ, դեպքերը այլ ընթացք ստացան: ՀՕԿ-ի ներկայացուցիչ Դանուշ Շահվերդյանը իմ լավ

¹² Де Ногалес Р., Четыре года под полумесяцем. М., 2006, с. 31.

բարեկամն էր, հայ ժողովրդի նվիրված զավակն ու երախտավորը: 1934–1936 թթ. նա հոգ էր տանում, որ ես Հայաստան մեկնեմ, և իմ գիտելիքները ի սպաս դնեմ մայր Հայաստանի բարօրությանը: Մակայն չվիճակվեց իրականացված տեսնել իմ երագանքը»¹³:

Այնուհետև Հակոբ Մարթայանը նախ պատմում է այն դիպվածը, որի շնորհիվ ծանոթացել է Մուսթաֆա Քեմալի հետ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զորակոչված լինելով օսմանյան բանակ՝ Մարթայանը պատահաբար հանդիպել է անգլիացի գերիների և իր անզլերեն իմացության շնորհիվ թարգմանել է նրանց խնդրանքն ուղղված թուրքական ռազմական իշխանություններին, ինչից հետո նրան կասկածելով լրտեսության և դավաճանության մեջ՝ թուրք զինվորները ձերբակալել և ներկայացրել են իրենց հրամանատարին, որպեսզի նա որոշի հայ զինվորի ճակատագիրը: Այդ իրավիճակում Մարթայանը որոշել է ավելի համարձակ պահել իրեն և քննադատել է թուրքական բռնապետությունը նկատելով, որ այդ մեթոդներով Թուրքիան չի կարող հավակնել դառնալ քաղաքակիրթ երկիր: Իր այդ խոսքերը լսող հրամանատարը հրամայել է նրա ձեռքերը ազատել շղթաներից և սկսել զրուցել հետը տարբեր խնդիրների վերաբերյալ, հետաքրքրվել համաշխարհային զարգացումներից, համակարգերից և այլն: Այնուհետև հրամայել է ազատ արձակել նրան և առաջարկել է Մարթայանին հաճախ հանդիպել ու զրուցել նմանատիպ թեմաների մասին: Այդ հրամանատարը եղել է Մուսթաֆա Քեմալը և այդպես է կայացել նրանց ծանոթությունը¹⁴, որի շնորհիվ Հակոբ Մարթայանը նաև ազատվել է ստույգ մահից:

¹³ Աղայան Օ., Հայերը Թուրքիայում, Երևան, 1994, էջ 54:

¹⁴ Նույն տեղում, էջ 55–56:

Ավելի ուշ՝ 1932 թ. արդեն Թուրքիայի Հանրապետության նախագահ Մուսթաֆա Քեմալը Բուլղարիայում հաստատված Հակոբ Մարթայանին հրավիրել է Անկարա՝ լեզվաբանների համագումարին և առաջարկել մնալ ու աշխատել Թուրքիայում, ստանձնելով լեզվական բարեփոխումներում որոշակի կարևոր դեր¹⁵: Այստեղ հարկ չենք համարում անդրադառնալ Հակոբ Մարթայանի ոչ միանշանակ կերպարին ու դերին թուրքական լեզվաբանական որոշ տեսությունների մշակման հարցում, որոնք բացահայտ հակազդիտական բնույթ ունեն, սակայն փաստ է այն, որ հաստատվելով Թուրքիայում՝ Հակոբ Մարթայանը դառնում է Մուսթաֆա Քեմալի մոտ մուտք ունեցող գիտնականներից մեկը և հնարավորություն ունենում նրա հետ հաճախակի անձամբ շփվել, որոնցից մեկի ժամանակ էլ հենց տեղի է ունենում սույն հոդվածում արծարծվող խնդրո առարկա թեմայի տեսանկյունից հետաքրքրություն ներկայացնող դեպքը: Մուսթաֆա Քեմալի մոտ մի խումբ տարբեր ազգությունների գիտնականների մասնակցությամբ քննարկումից հետո ընթրիքի սեղանի շուրջ Թուրքիայի նախագահը այդ գիտնականներին առաջարկել է, որ յուրաքանչյուրը մի երգ երգի իր մայրենի լեզվով: Ծատուր Ադայանը այսպես է վերապատմում այդ դեպքի մանրամասները. «Ամեն մեկը մի բան երգեց: Հատկապես գերմանացու ազգային երգը շատ դուր եկավ Մուսթաֆա Քեմալին: Հույն լեզվաբանը հայտարարում է, որ իր մայրենի լեզուն թուրքերենն է և երգում է մի թուրքերեն երգ: Հերթը հասնում է Մարթայանին: Նա կոկորդը մաքրելով սկսում է երգել.

Որպես արծիվ սավառնում ես լեռ ու սար,
Հայաստանի փառք ու պարծանք Անդրանիկ...»¹⁶:

¹⁵ Նույն տեղում, էջ 58:

¹⁶ Նույն տեղում, էջ 60:

Ենթադրվում է, որ եթե ոչ երգը, ապա միայն Անդրանիկ գորավարի անունը հայտնի է եղել հավաքվածներին ու բնականաբար առաջացել է լարվածություն: Ինքը՝ Հակոբ Մարթայանը հաստատելով այդ պատմությունը՝ Ծ. Աղայանին ասել է հետևյալը. «Չգիտեմ ինչու, ես հետևանքի մասին չէի մտածել: Գիտեի միայն, որ Մուստաֆա Քեմալը բարձր է գնահատում Անդրանիկի սխրանքները: Ես շարունակում էի երգել, բոլորն էլ կատաղած ինձ էին նայում, Մուստաֆա Քեմալը աչքերը գետնին հառած լսում էր: Երբ վերջացրի, մի պահ մեռելային լռություն տիրեց: Մուստաֆա Քեմալը զգաց ներկա գտնվող թուրքերի կատաղությունն ու հակակրանքը: Բոլորն էլ սպասում էին, որ Քեմալը իր կատաղության թույնը կթափի իմ գլխին: Քեմալը դանդաղ տեղից բարձրացավ, մոտեցավ ինձ և ապա ասաց. «Այդ երգը մեր թշնամուն գովերգող երգ է, բայց լավ երգ է, և դուք էլ այն շատ լավ երգեցիք: Անդրանիկը մեր կատաղի թշնամին էր, նրա սրից շատ թուրքեր են ընկել: Բայց ոչ-ոք չի կարող նրան խլել իր ժողովրդից, նա իր ժողովրդի հերոսն է, և միանգամայն բնական է, որ հայերը նրան սիրում ու մեծարում են: - Ապա դառնալով թուրքերին, ասաց. - Անդրանիկը մեծ հերոս էր, բայց պարտվեց, մենք հաղթեցինք, բայց կարող էր այնպես պատահել, որ մենք պարտվեինք, այն ժամանակ, երևի, դուք մոռանայիք մեզ և չհիշեիք: Հայերը ճիշտ են վարվում, որ մեծարում են և չեն մոռանում իրենց հերոսներին»¹⁷:

Թուրքիայի նախագահի ներկայությամբ գորավար Անդրանիկի անվան հետ կապված այս դիպվածը փոքր-ինչ այլ, ավելի զուսպ և ոչ մանրամասն ձևակերպումներով հանդիպել ենք հենց Հակոբ Մարթայանի 1954 թ. գրի առած հուշերում, որտեղ ընդգրկված են Թուրքիայի Հանրապետության հիմնադիր-նախագահի հետ շուրջ

¹⁷ Նույն տեղում:

7 տարվա՝ 1932–1938 թթ. նրա շփումները, ընդ որում՝ ոչ միայն պաշտոնական միջավայրում և որպես «Թուրքական լեզվաբանական ընկերության» ներկայացուցիչ, այլև հաճախ մտերիմ շրջապատում, ճաշի սեղանի շուրջ: Այդ հուշերը հրատարակվել են մամուլում, իսկ 2021 թ. այն ամփոփ տպագրվել է Ստամբուլում հայերեն և թուրքերեն տարբերակներով: Ենթադրաբար այդ նույն՝ Ծատուր Աղայանին պատմած դրվագը Մարթայանը հետևյալ կերպ է վերապատմել արդեն իր կողմից գրված հուշագրության մեջ. «Աթաթիւրքը սովոր էր, երբեմն, իր հիւրերը կարգաւ հրաւիրել, որպէսզի հետաքրքրական դրուագներ պատմեն, երգեն կամ արտասանեն: Երբ կարգը օտարազգիին եկաւ, Աթաթիւրքը անկէ խնդրեց, որպէսզի գերմաներէն երգ մը երգէ, ինչ որ փրօֆէսէօրը կատարեց խանդավառող ու շնորհալի շարժումներով մը: Անմիջապէս վերջ Աթաթիւրքը ինձմէ ուզեց հայերէն երգ մը, մասնաւորելով բնոյթը: Ես ալ կարծեմ կարողացայ գոհացնել իր բաղձանքը՝ յարգապարար մթնոլորտի մէջ:

Հայրենասիրական երգերը, որ ազգին ալ որ պատկանին, յարգանքի արժանի են, ըսաւ Աթաթիւրք: Յաջողիլը կամ ձախողիլը տարբեր հարց է»¹⁸:

Այստեղ նկատում ենք, որ նախ չի նշվում Անդրանիկի անունը, սակայն տվյալ դեպքի և՛ թվականը, և՛ որոշ մանրամասներ թույլ են տալիս պնդել, որ խոսքն, ամենայն հավանականությամբ, այդ նույն դրվագի մասին է, ուղղակի ի տարբերություն Ծատուր Աղայանին պատմածի՝ այս պարագայում Մարթայանը չի նշում ո՛չ երգի, և ո՛չ էլ երգի հերոսի մասին: Մակայն այն, որ Աթաթյուրքը խոսում է ազգային-հայրենասիրական երգի մասին և նշում «հաջողվելը կամ

¹⁸ Մարթան-Տիլաչար Յ., Աթաթիւրքէն յիշատակներ, Իսթանպուլ, 2021, էջ 47:

ձախողվելը այլ հարց է», հիմք է տալիս պնդելու, որ խոսքը նույն դեպքի մասին է:

Կարելի է խիստ կանխատեսելի համարել այն, որ գորավար Անդրանիկի կերպարը համանման բացասական ընկալում պետք է ունենար նաև ադրբեջանական միջավայրում. Անդրանիկի դեմ հողվածներ, էլույթներ, հայտարարություններ բավական մեծ քանակությամբ կային դեռևս մուսավաթական Ադրբեջանում 1918–1919 թվականներին: Այդ նույն տենդենցները շարունակվեցին նաև Խորհրդային Ադրբեջանում: Ակադեմիկոս Հրաչիկ Միմոնյանը նկատում է, որ ԽՍՀՄ 70 տարվա գոյության ընթացքում խորհրդային իշխանությունները չեն կարողացել լուծել հայ-ադրբեջանական հակասությունները, որոնք հատկապես սրվել են Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Այդ ժամանակ, ի թիվս այլ հարցերի՝ հայ-ադրբեջանական հակասությունների շրջանակներում հայտնվել է նաև գորավար Անդրանիկի կյանքի և գործունեության գնահատման հարցը. մի կողմի համար Անդրանիկը հերոս էր, մյուսի համար իրենց նախնիների թշնամին¹⁹: Այդ հարցը դարձել է սուր խնդիր ոչ միայն հայկական և ադրբեջանական հասարակությունների համար, այլև հայ և ադրբեջանցի պատմաբանների միջև սուր առճակատման պատճառ: Ադրբեջանական պատմագրությունը 1918–1919 թթ. գորավար Անդրանիկի գործունեությունը Անդրկովկասում համարում է հանցագործ, իսկ նրան բնութագրում որպես «բանդիտ», «հանցագործ», «ծայրահեղ ազգայնամուլ»²⁰:

Խորհրդային շրջանում Անդրանիկի կերպարը թշնամական շեշտադրումներով տեղ է գտել նաև ադրբեջանական գրականու-

¹⁹ Симомян Г., Указ. соч., с. 3.

²⁰ Նույն տեղում:

թյան մեջ: Օրինակ՝ 1965 թ. «Ադրբեջան» ամսագրում տպագրվել է ադրբեջանցի պոետ Ռասուլ Ռեզայի բանաստեղծությունը, որտեղ նա անդրադառնում է գորավարի Փարիզում գտնվող գերեզմանին տեղադրված արձանին: Բանաստեղծության մեջ պոետը Անդրանիկին ներկայացնում է որպես հազարավոր ադրբեջանցիների կոտորող և սկսում է հետևյալ կերպ. «Ով է այս հեծյալը ինքնագոհ»²¹:

Սակայն կարևոր է նկատել, որ մահից տասնամյակներ անց էլ գորավար Անդրանիկի կերպարի թշնամական ընկալումը շարունակել է անհանգստացնել նաև ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաներին, որոնք խնդիրը հետևողականորեն բարձրացրել են ԽՍՀՄ ղեկավարության ու տարբեր կառույցների առջև: Ադրբեջանի քաղաքական վերնախավի մոտ գորավար Անդրանիկի ընկալման խոստուն վկայություն կարելի է համարել 1980 թ. Խորհրդային Հայաստանի 60-ամյակի առիթով Երևան այցելած Խորհրդային Ադրբեջանի ղեկավար Հեյդար Ալիևի ասած մտքերը: Խորհրդային Հայաստանի կուսակցական և պետական գործիչ Կարլեն Դալլաքյանը, որը ուղեկցել է կնոջ հետ Հայաստան այցելած Հեյդար Ալիևին, իր հուշերում վերապատմել է Խորհրդային Ադրբեջանի ղեկավարի հարցն ուղղված իրեն. «Ինչո՞ւ եք դուք մեծարում Անդրանիկին: Նա էլ նույնը արեց ադրբեջանցիների նկատմամբ, ինչ-որ թուրքերը՝ հայերի»²²: Այստեղ հետաքրքիր է նաև Ալիևի հայտարարության երկրորդ մասը, որով նա փաստացի չի հերքում Հայոց ցեղասպանության փաստը, սակայն, իհարկե, հայերի ինքնապաշտպանությունը և ազատագրական շարժումը Անդրանիկի գլխավորությամբ ներկայացնելով խեղաթյուրված:

²¹ Նույն տեղում, էջ 48:

²² Դալլաքյան Կ., Հուշապատում (ղեմբեր, իրողություններ, մտորումներ), Երևան, 1998, էջ 227:

Խորհրդային Հայաստանի ղեկավար Կարեն Դեմիրճյանի օրագրային գրառումների մեջ արձանագրված են Խորհրդային Ադրբեյջանի կողմից զորավար Անդրանիկի հետ կապված տարաբնույթ հարցերի առաջ քաշումը ԽՍՀՄ ղեկավարության առջև և Հայաստանի իշխանությունների ջանքերը հակադարձել դրանց: Այսպես, 1980 թվականի հոկտեմբերի 22-ի օրագրային գրառման մեջ Դեմիրճյանը գրում է ԽՍՀՄ Պետական անվտանգության կոմիտեի նախագահ Յու. Անդրոպովի հետ իր հանդիպման մասին և որպես քննարկման թեմաներից մեկը նշում՝ «Անդրանիկ»: Դրանից երկու օր հետո՝ 24.10.1980 թ. ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի քարտուղար Մ. Զիմյանինի հետ հանդիպման վերաբերյալ գրառման մեջ նույնպես կարդում ենք՝ «Անդրանիկ Օզանյանի մասին»²³:

Ենթադրվում է, որ ԽՍՀՄ բարձրաստիճան պաշտոնյաները Դեմիրճյանի հետ զրուցել են զորավար Անդրանիկին նվիրված Հայաստանում հրատարակված գրքի/գրքերի վերաբերյալ և սրանում, իհարկե, ադրբեյջանցիների բարձրացրած աղմուկը իր կարևոր դերն ուներ: Օրինակ՝ 1983 թ. հունիսի 15-ի իր օրագրային գրառման մեջ Կարեն Դեմիրճյանը նշում է, որը Անդրանիկի հետ կապված հարցը քննարկվել է ԽՍՀՄ Կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեի պլենումում. «Պայմանավորվեցինք, որ վիճելի բնույթի հրապարակումները կրճատում ենք: Ես ասացի, որ Անդրանիկի մասին վիպակը մենք կհրատարակենք (դրական և պրոռուսական պահերի արտացոլումներով)»²⁴:

1987 թ. մարտի 21-ի օրագրային գրառման մեջ Դեմիրճյանը կրկին անդրադառնում է Անդրանիկի թեմային նշելով, որ Մոսկվայում եղել է ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի քարտուղար, Քաղբյու-

²³ Дни сквозь строчки: из рабочих дневников К. Демирчяна. Ереван, 2010, с. 133.

²⁴ Նույն տեղում, էջ 189:

րոյի անդամ Ա. Ն. Յակովլևի մոտ, որը ասել է. «...հարևանները չեն ընկալում նրան, համարում են դահիճ: Ես կտրուկ առարկեցի, ասացի, որ պետք չէ ինտերնացիոնալացնել ազգային հերոսներին: Նա ազգային հերոս է, նրան այդպիսին ստեղծել և ընդունում է ազգը և որևէ մեկին իրավունք տրված չէ «վետո» կիրառել նրա անվան վրա: Մի խոսքով, նա ասաց, որ տվյալ հարցը (ենթադրաբար Անդրանիկի մասին գրքի հրատարակումը՝ Ռ. Մ.) պետք է համաձայնեցնել Մ. Ս. Գորբաչովի հետ»²⁵: Կարելի է ենթադրել, որ զորավարի մասին գիրքը, որի հրատարակումը, փաստորեն, պետք էր համաձայնեցնել ԽՍՀՄ ղեկավար Գորբաչովի հետ և այդքան քննարկվել է ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունների ու Կարեն Դեմիրճյանի միջև, անվանի գրող Սերո Խանգադյանի «Անդրանիկ» վեպն է և այդ ամենի հրահրողը եղել է Ադրբեջանը, որը հարցը կարողացել է հասցնել Մոսկվա՝ իշխանության բարձրագույն օղակներին: Երկու օր հետո՝ 23.03.1987 թ. կրկին Անդրանիկի հարցը Մոսկվայում Դեմիրճյանի հետ քննարկել է ԽՍՀՄ Կոմկուսի Կենտկոմի քարտուղար, Քաղբյուրոյի անդամ Ե. Լիզայովը և նորից նշել, որ այդ հարցում կա պրոբլեմ հարևանների հետ, ինչին Դեմիրճյանը նմանատիպ պատասխան է տվել, որ պետք չէ ինտերնացիոնալացնել հարցը²⁶: Օրագրային այս գրառումից ավելի հստակ է դառնում, որ խնդիրը կապված է եղել Սերո Խանգադյանի «Անդրանիկ» վեպի հրատարակման հետ:

Ամփոփելով՝ կարելի է գալ հետևյալ եզրահանգման.

- Չորավար Անդրանիկը եղել է թուրք-ադրբեջանական ռազմաքաղաքական վերնախավի իրական ամենավտանգավոր թշնամիներից մեկը,

²⁵ Նույն տեղում, էջ 306-307:

²⁶ Նույն տեղում, էջ 308:

- Անդրանիկը, բացի իրական ռազմական թշնամի լինելուց, նաև գաղափարական, կերպարային թշնամի է թուրք-ադրբեջանական տանդեմի համար և դրա ապացույցներից է զորավարի մահից տասնամյակներ անց թե՛ Թուրքիայում, թե՛ Ադրբեջանում նրա կերպարի հանդեպ գերզգայուն մոտեցումը. այդ միտումը շարունակվում է մինչ օրս,
- Անդրանիկի կերպարը ասոցացվում և նույնականացվում է թշնամի հայի կերպարի հետ և դրա վկայություններից է մինչև այսօր էլ Թուրքիայի դպրոցներում (օրինակ՝ Էրզրումի նահանգի) տարատեսակ թատերական բեմադրությունների, քարոզչական-գաղափարական աշխատանքներում նրան որպես գլխավոր հակահերոս ներկայացնելը,
- Թուրք-ադրբեջանական քարոզչական, գաղափարախոսական համակարգը այսօր էլ պայքար է մղում հայ ազգային հերոսների՝ Անդրանիկի, Նժդեհի դեմ գիտակցելով, որ նրանց կերպարներն ու գործունեության մասին հիշողությունը կարող են ունենալ ոգևորիչ նշանակություն հայկական հասարակության համար, ուստի նրանց թիրախավորումը ոչ թե զուտ հակահայկական ատելության սովորական դրսևորում է, այլ պետականորեն մշակված ու իրենց համար շատ կարևոր քաղաքական գիծ,
- Հայ-թուրք/ադրբեջանական գաղափարական պայքարը շարունակվում է և դրա թիրախում մեր հավաքական ազգային ինքնության հիմնասյուններն են, որոնք ենթարկվում են մշակված գրոհի և այս համառոտ պատմական ակնարկը փորձ էր ցույց տալու, որ այսօրվա թուրք-ադրբեջանական գաղափարական, քարոզչական քաղաքականությունն ունի ինստիտուցիոնալ հիշողություն և շարունակականություն, ուստի այս վտանգի դեմ մեր պայքարն այլընտրանք չունի:

**COMMANDER ANDRANIK IN MEMOIRS OF TURKISH AND
AZERBAIJANI POLITICIANS AND MILITARY OFFICERS***Ruben Melkonyan²⁷*

Love and respect for the legendary commander Andranik Ozanyan among Armenians reaches mythical, epic limits. In addition to the historical and political research, even a legend about Andranik, who is perceived as a national hero, is preserved among the survivors of the Armenian Genocide from Western Armenia and their descendants. In general, Andranik's image instilled real or mythical hope in the souls of many generations of Armenians, even in the times when it seemed that thinking about victory was absolutely unrealistic.

However, familiarization with the memoirs of various Ottoman and Turkish military and political figures or stories related to them reveals a different, Turkish perception of the image of the legendary commander. It is quite predictable that Andranik Ozanyan was in the spotlight of the Turkish military-political elite as a dangerous adversary, but it is remarkable that even decades later, he was perceived as an ideological rival, as a symbol who could pose a threat to the long-term goals of Turkey and Azerbaijan.

Keywords: *ideological and propaganda struggle, Commander Andranik, memoirs, Turkish-Azerbaijani Tandem, image.*

**ПОЛКОВОДЕЦ АНДРАНИК В МЕМУАРАХ ТУРЕЦКИХ И
АЗЕРБАЙДЖАНСКИХ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКИХ ДЕЯТЕЛЕЙ***Рубен Мелконян²⁸*

Среди армян народная любовь и уважение к легендарному полководцу Андранику Озаяну достигает мифических, эпических пределов. Помимо историко-политических исследований, в среде переживших Геноцид переселенцев из Западной Армении и их потомков об Андранике как о народном герое сохранилось даже сказание. И вообще, Андраник своим образом вселял

²⁷ Ruben Melkonyan is a Dean of the Faculty of Oriental Studies at YSU, Full Professor, E-mail: rubenmelkonyan@ysu.am, ORCID: 0000-0002-1937-901X.

²⁸ Рубен Мелконян - д.ист.н., профессор, декан факультета востоковедения ЕГУ, эл. почта: rubenmelkonyan@ysu.am, ORCID: 0000-0002-1937-901X

реальную или мифическую надежду в души многих поколений армян, даже тогда, когда казалось, что нереально даже думать о победе.

Однако ознакомление с мемуарами различных османских и турецких военных и политических деятелей или историями, связанными с ними, открывает иное, на этот раз турецкое восприятие образа легендарного полководца. То, что Андраник Озаян находился в центре внимания турецкой военно-политической элиты как опасный противник, вполне предсказуемо, однако примечательно то, что даже десятилетия спустя он воспринимался как идеологический противник, как символ, который мог представлять угрозу долгосрочным целям Турции и Азербайджана.

Ключевые слова: *идейно-пропагандистская борьба, полководец Андраник, мемуары, турецко-азербайджанский тандем, образ.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Ծ., Հայերը Թուրքիայում, Երևան, 1994:
2. Ասատրյան Հ., Հատընտիր, Երևան, 2004:
3. Ասր Անդրանիկ Զորավարի մասին (բանահավաք և մշակող՝ Սուրեն Սահակյան), Երևան, 2008:
4. Դավլաթյան Վ., Հուշապատում (դեմքեր, իրողություններ, մտորումներ), Երևան, 1998:
5. Մարթաեան-Տիլաչար Յ., Աթաթիւրքէն յիշատակներ, Իսթանպուլ, 2021:
6. Де Ногалес Р., Четыре года под полумесяцем. М., 2006.
7. Дни сквозь строчки: из рабочих дневников Карена Демирчяна. Ереван, 2010.
8. Симонян Г., Из истории «политического оправдания» полководца Андраника. Ереван, 2016.
9. Atatürk'ün Sırdışı Kılıç Ali'nin Anıları, (derleyen: Hulûsi Turgut), İstanbul, 15. Basım, 2016.
10. Bayar C., Ben de yazdım, İstanbul, 1997, Cilt 5.
11. Çakmak F., Birinci Dünya Savaşı'nda Doğu Cephesi, Ankara, 2005.
12. Karabekir K., Günlükler (1906-1948), 1-2.Cilt, hazırlayan Y. Demirel, İstanbul, 2009.

**ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԵԴԻԱ ԴԱՇՏԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԿ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՇՐՋԱՆՈՒՄ¹**

Վարուժան Գեղամյան²

DOI 10.46991/jos.2024.25.1.084

Հողվածում համառոտ նկարագրվում է Արդարության և զարգացում կուսակցության օրոք Թուրքիայում մեդիա դաշտի իրադրությունը: Ներկայացվում են ժամանակակից մեդիա իրականության և տեղեկատվական դաշտի ձևավորման հիմնական պատճառները ու առկա առանձնահատկությունները, որոնք փոխկապակցված են Թուրքիայում առաջ եկած քաղաքական և սոցիալ-տնտեսական զարգացումների հետ: Հողվածի հիմնական թեզն այն է, որ չնայած վերջին տասնամյակում իշխանության կողմից գործադրված բազմաթիվ սահմանափակումներին, թուրքական ՁԼՄ-ները շարունակում են զարգանալ և կրում են բազմաթիվ կերպարային խումբներ, որոնցից շատերը պայմանավորված են թվային տեխնոլոգիական նորամուծություններով:

Բանալի բառեր՝ մեդիա, քաղաքականություն, ավտորիտարիզմ, թվային տեխնոլոգիաներ, քարոզչություն:

Վերջին տասնամյակում Թուրքիան հաճախ հիշատակվում է որպես ավտորիտար կառավարման համակարգ ունեցող երկիր, որտեղ խստորեն սահմանափակված է խոսքի ազատությունը և, հետևաբար նաև, խախտված են մեդիա ազատությունները: Ընդ

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ՝ 21AG -6A081 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:
² Վարուժան Գեղամյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ է, պատմական գիտությունների թեկնածու, էլ. փոստ՝ vgeghamyan@ysu.am, ORCID: 0000-0001-8090-359X:

որում, նման բնութագրումը հանդիպում է ոչ միայն քաղաքական և լրագրողական շրջանակներում, այլև հնչում է գիտնականների ու փորձագետների գնահատականներում³:

Նմանատիպ գնահատականների հիման վրա արդեն տարիներ շարունակ մարդու իրավունքների և ազատությունների վերաբերյալ միջազգային վարկանիշավորման տարատեսակ սանդղակներում (World Press Freedom Index, Freedom on the Net (Freedom House) և այլն) Թուրքիան դասակարգվում է որպես «ոչ ազատ երկիր»⁴, իսկ «լրագրողների համար բանտ» բնորոշումը վերածվել է Թուրքիայի վերաբերյալ միջազգային գերակա խոսույթի կարևոր բաղադրիչներից մեկին⁵: Որպես կանոն, մեդիա-դաշտի նմանատիպ իրավիճակը կապվում է գերազանցապես իշխող Արդարություն և զարգացում կուսակցության (ԱԶԿ) և վերջինիս առաջնորդ, երկրի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդոդանի ավտորիտար կառավարման և աճող բռնապետական հակումների հետ: Չնայած վերոնշյալ մեդիա սահմանափակումներին՝ վերջին տարիներին

³ Տե՛ս օրինակ՝ Uzunoğlu S., The Politics of Media in Turkey. Chronicle of a Stillborn Media System, The Oxford Handbook of Turkish Politics (ed. Tezcür G. M.), Oxford University Press, 2022, pp. 689–710.

⁴ Սույն հոդվածի հրապարակման պահի դրությամբ միջազգային իրավապաշտպան խոշորագույն կազմակերպությունների՝ «Freedom House»-ի և «Լրագրողներ առանց սահմանների»-ի կողմից պատրաստվող վարկանիշային սանդղակներում Թուրքիան զբաղեցնում է վերջին հորիզոնականները՝ մեդիա ազատությունների և ընդհանրապես մարդու իրավունքների սահմանափակումների տեսանկյունից: Տե՛ս՝ Türkiye, Reporters Without Borders, <https://rsf.org/en/country-t%C3%BCrkiye> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024), Turkey, Freedom House, <https://freedomhouse.org/country/turkey> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024): Գրեթե նույնն է պատկերը նմանատիպ այլ՝ ավելի փոքր վարկանիշավորման համակարգերում:

⁵ Տե՛ս օրինակ՝ Turkey: The world's largest prison for journalists, Amnesty International, 03.05.2019, <https://www.amnesty.org/en/latest/news/2019/05/turkey-the-worlds-largest-prison-for-journalists/> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024); Turkey: 'World's biggest prison' for media, Al Jazeera, 17.02.2013, <https://www.aljazeera.com/features/2013/2/17/turkey-worlds-biggest-prison-for-media> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

Թուրքիայում ՁԼՄ-ները և ընդհանրապես տեղեկատվական դաշտը շարունակում են բազմաթիվ փոփոխություններ ապրել: Այդ փոփոխությունները մաս են թե՛ գլոբալ կերպափոխումների և թե՛ արդյունք են տեղային առանձնահատկությունների:

Միաժամանակ թուրքական մեդիաները հանդիսանում են այդ երկրում հասարակական ու քաղաքական օրակարգը ձևավորող գլխավոր գործոնը և միջոցը, որոնց ազդեցությունը տարածվում է թե՛ ներքին գործընթացների և թե՛ Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա:

Նմանատիպ իրադրությունը առաջացնում է անհրաժեշտություն առավել հանգամանալից ուսումնասիրելու ժամանակակից Թուրքիայում ԱԶԿ կառավարման շրջանում ձևավորված մեդիադաշտի առանձնահատկությունները՝ խուսափելու համար ընդհանրական բնութագրումներից և հասկանալու համար թուրքական մեդիա-դաշտի զարգացման օրինաչափությունները:

Սույն հոդվածում նախ կանդրադառնանք ԱԶԿ-ի օրոք թուրքական մեդիայի զարգացման հակիրճ պատմությանը, ապա կուրվագծենք ժամանակակից մեդիա դաշտի հիմնական առանձնահատկությունները, որից հետո կներկայացնենք թուրքական մեդիաների ընդհանրական պատկերը:

ԱԶԿ կառավարման առաջին շրջանը և մեդիաները

Ռեջեփի Թայիփ Էրդողանի և իր գաղափարակից ընկերների կողմից հիմնադրված Արդարություն և զարգացում կուսակցությունը 2002 թ. խորհրդարանական ընտրություններում ստացավ բավարար ձայներ միանձնյա իշխանություն ձևավորելու համար, իսկ Էրդողանը դարձավ վարչապետ: Այդ օրվանից ի վեր իշխանությունը շարունակում է մնալ նշված քաղաքական ուժի ձեռքերում: Ավելի քան քսան տարիների կառավարման այս շրջանը պայմանակա-

նորեն կարելի է բաժանել երկու փուլի: Կառավարման առաջին փուլում (2002–2013 թթ.) ԱԶԿ-ն աչքի էր ընկնում սահմանափակ ազատական-ժողովրդավարական հռետորաբանությամբ ու քաղաքական նախաձեռնություններով, ինչի շնորհիվ թե՛ երկրի ներսում, թե՛ դրսում Էրդոդանը և իր կուսակիցները բնութագրվում էին որպես «ժողովրդավարական արժեքներ դավանող» քաղաքական ուժ: Սակայն 2010-ականների սկզբին և, հատկապես, 2013 թվականից հետո սրընթաց անցում կատարվեց դեպի ավտորիտար կառավարման համակարգ, որը հանգեցրեց Էրդոդանի միանձնյա իշխանության ամրապնդմանը, քաղաքական ինստիտուտների միջև առկա զսպումների ու հակակշիռների համակարգի գրեթե իսպառ չեզոքացմանը, ժողովրդավարական մրցակցային միջավայրի խիստ սահմանափակմանը, քաղաքական հակառակորդների և գաղափարական այլախոհության դրսևորումների դեմ ճնշումներին⁶: Նման քաղաքականությունը զրկեց ԱԶԿ-ին նախնական շրջանում ունեցած ժողովրդական լայն շերտերի աջակցությունից, ինչպես նաև առաջացրեց քաղաքական բևեռացում՝ թուրքական հասարակությունը բաժանելով երկու մեծ հատվածների («Էրդոդանականներ» և «հակաէրդոդանականներ»):

Էրդոդանական ավտորիտարիզմի շարունակական խորացումը բնականաբար ազդեցություն ունեցավ նաև թուրքական մեդիադաշտի վրա: Ավելին, մեդիաները վերածվեցին նման միջավայրի ձևավորմանը ծառայող հիմնական գործիքի: ԱԶԿ-ի կառավարման օրոք թուրքական մեդիա դաշտը, որը ժառանգել էր նախորդ տասնամյակների հիմնական առանձնահատկությունները, ստեղծված նոր քաղաքական ու տնտեսական պայմաններում կրեց մի շարք

⁶ Eissenstat H., Recep Tayip Erdoğan. From «illiberal democracy» to electoral authoritarianism (born 1953), in Dictators and Autocrats. Securing Power across Global Politics (ed. Larres K.), Routledge, 2022, pp. 367–383.

էական փոփոխություններ՝ հիմք դնելով նոր մեդիա իրականության ձևավորմանը:

1980-ականներից հետո թուրքական մեդիա դաշտում հայտնվել էին խոշոր բիզնես ընկերություններ, որոնք օգտվելով նեո-լիբերալ տնտեսական քաղաքականության ընձեռած հնարավորություններից, դարձել էին թուրքական ազդեցիկ թերթերի ու հեռուստաալիքների սեփականատերերը⁷: 1990-ականներ տնտեսական-քաղաքական ճգնաժամից հետո արդեն իսկ գոյություն ունեին մի քանի խոշոր մեդիա խմբեր, որոնք վերածվել էին տեղեկատվական տիրույթի գերակա խաղացողների (օր.՝ Doğan, Uzan, Bilgin, Çukorova և այլ խմբեր): ԱԶԿ-ի իշխանության գալուց հետո դրանցից ոմանք աջակցեցին կուսակցությանն ու վերջինիս առաջնորդին, սակայն իշխանության և նշված խմբերի միջև գործակցային կապերը բավական թույլ էին զարգացած: Գործելով դեռևս համեմատաբար ժողովրդավարական միջավայրում՝ թուրքական ԶԼՄ-ները անհրաժեշտության դեպքում կարողանում էին հանդես գալ իշխանությանը քննադատող դիրքերից ևս, իսկ ԱԶԿ վերստին իսկ չէր մտնում վերջիններիս հետ ուղիղ հակամարտության մեջ: Ճիշտ հակառակը՝ ԱԶԿ-ն կարիք ուներ շարունակելու ամբաստանել իր դիրքերը և ստանալ հանրության նոր խմբերի աջակցությունը, ինչպես նաև ԵՄ անդամակցության գործընթացի համապատկերին պահպանելու իր «ժողովրդավարական դեմքը»⁸:

Միաժամանակ ԱԶԿ-ն, կարևորելով մեդիայի առանցքային դերը հանրային կարծիքի ձևավորման և ուղղորդման, հետևաբար, նաև սեփական իշխանության պահպանման ու ընդլայնման գործում, աստիճանաբար սկսեց ուրվագծել մեդիա դաշտի սեփական

⁷ Demir V., Freedom of the Media in Turkey under the AKP Government, in Human Rights in Turkey. Assaults on Human Dignity (ed. Aydin H., Langley W.), Springer, 2021, pp. 51–88.

⁸ Uzunoglu S., նշվ. աշխ., էջ 694:

ճարտարապետությունը: Այս փուլում մեդիայի վրա իշխանության վերահսկողության մեխանիզմների ստեղծման գործընթացում էական գործոնի վերածվեց Թուրքիայի խնայողական ավանդների ապահովագրման հիմնադրամը (*Tasarruf Mevduatı Sigorta Fonu - TMSF*)⁹: Այս պետական հիմնադրամի միջոցով ԱԶԿ-ն հնարավորություն ստացավ առգրավել սննկացած ընկերություններին (կամ բանկերին) պատկանող ԶԼՄ-ները և փոխանցել դրանք այն գործարարներին, որոնք իշխանության հետ ունեին մտերիմ հարաբերություններ: Իշխանական ազդեցության մեծացմանը նպաստեց նաև նոր քաղաքական իրողությունը. միանձնյա կառավարության առկայության պայմաններում խոշոր գործարարները գրկվում էին 1990-ականներին առկա գործունեության բավական լայն դաշտից (երբ գործում էին տարբեր կուսակցություններից կազմված կոալիցիոն կառավարություններ), քանի որ պետական կապալներ ու այլ պատվերներ ստանալու համար անհրաժեշտ էր բանակցել մեկ ուժի հետ ի դեմս ԱԶԿ-ի: Այսպիսով՝ ԱԶԿ-ն արդեն իսկ ստացավ մեդիա դաշտի հանդեպ ազդեցության որոշակի գործիքներ:

ԱԶԿ իշխանությունը մեդիա քաղաքականության հաջորդ շրջափուլում սկսեց գործել ավելի նախաձեռնողական ոճով: Քաղաքական դաշտում սեփական դիրքերի ամրապնդման և քաղաքականության իրականացման համար առանցքային նշանակություն ունեցավ 2007 թ. խորհրդարանական ընտրություններում ԱԶԿ-ի ավելի վստահ հաղթանակը, 2010 թ. սահմանադրական բարեփոխումների հանրաքվեն և 2011 թ. խորհրդարանական ընտրություններում երրորդ հաղթանակը: Այս հաղթանակները հնարավոր չէին լինի առանց մեդիա դաշտի վրա ազդեցության մեծացման:

⁹ Yesil B., *Media in New Turkey. The Origins of an Authoritarian Neoliberal State*, University of Illinois Press, 2016, pp. 89–91.

Մի կողմից իշխանությունը սկսեց ակտիվորեն կիրառել հարկային ստուգումների ու տույժերի գործիքակազմը՝ որոշակի առումով ազդելու համար անկախ ՋԼՄ-ների կամ մեդիա խմբերի վրա (օր.՝ Doğan խմբի դեմ հարկային մեծածավալ տույժերի կիրառումը), իսկ մյուս կողմից խթանել իր կողմնակից խմբերի մեդիաների ստեղծումն ու ծավալումը:

Հենց այս շրջանում է առաջանում «մեդիա լողավազան» (*havuz medyasi*) արտահայտությունը, որով առավել հաճախ նկարագրվում էր մերձիշխանական մեդիաների ամբողջությունը¹⁰: Նշված ժամանակահատվածում մեդիա դաշտում մեծ ազդեցություն են ձեռք բերում *Albayrak* և *Kalyon* խմբերը, որոնց սեփականատերերը անձնական մտերիմ հարաբերություններ ունեին Էրդոդանի հետ: ՋԼՄ-ները աստիճանաբար անցնում են իշխանամերձ բիզնես ընկերություններին, որոնք այդպիսով ձեռք են բերում իշխանության հետ բանակցելու հավելյալ գործիք. գործարարները մեդիայի միջոցով իրենք իրենց ապահովագրում են՝ ստանալով իշխանության կողմից որոշակի հովանավորչություն իրենց հիմնական բիզնես գործունեության անխափան զարգացման համար¹¹: Այդ հովանավորչությունը ենթադրում է իրենց սատարող իշխա-

¹⁰ «Havuz medyasi» պիտակը օգտագործվում է գերազանցապես ընդդիմադիր կամ այլախոհական կողմորոշում ունեցողների կողմից նկարագրելու համար մերձիշխանական ՋԼՄ-ները, որոնք համատեղում են իրենց ռեսուրսները՝ իշխանահաճո տեղեկատվական քարոզչություն կազմակերպելու համար (պատկերավոր ասած՝ «մեկ լողավազան է, ուր լցվում են մերձիշխանական գործարարների ֆինանսները՝ մեդիաները գնելու և քարոզչություն իրականացնելու համար»): Այս համատեղ ու համակարգված տեղեկատվական աշխատանքը հաճախ դրսևորվում է նշված ՋԼՄ-ներում նույն վերնազրեքի ու թեմաների նույնական արժարժմամբ: Տե՛ս *Uzunoglu S.*, նշվ. աշխ., p. 696. Վերոնշյալ ՋԼՄ-ների համար կիրառվում է նաև «yandaş medya» (թարգմ.՝ կողմնակից մեդիա) արտահայտությունը:

¹¹ Տե՛ս մանրամասն՝ *Media Ownership Monitor Turkey*, <https://turkey.mom-rsf.org/en/findings/political-affiliations/> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024):

նական ուժի դրական լուսաբանում մեղիայում և վերջիններիս հանդեպ քննադատության նվազեցում կամ լռեցում¹²:

Նույն շրջանում ծաղկում ապրեցին նաև Ֆ. Գյուլենի համախոհներին ու հետևորդներին պատկանող ՁԼՄ-ները, ինչպես նաև զարգացան ավելի նեղ շրջանակներին (օր.՝ իսլամական տարբեր համայնքներին, քրդամետներին, ձախակողմյան քաղաքական կողմնորոշում ունեցող խմբերին և այլոց) ներկայացնող տարատեսակ մեղիաները: Պակաս կարևոր չէ նշել, որ 2000-ականների ավարտին և 2010-ականների սկզբին աստիճանաբար զարգացան թվային տիրույթում գործող մեղիաները, ինչը պայմանավորված էր գլոբալ տեխնոլոգիական առաջընթացով և Թուրքիայում համացանցային կապի ներթափանցման մակարդակի սրընթաց աճով: Այս ընթացքում ավանդական մեղիաների (տպագիր թերթ, ռադիո և հեռուստատեսություն) կողքին առաջացան էլեկտրոնային մեղիաների տարատեսակ ձևաչափեր:

Նկարագրված բոլոր գործընթացները փաստացի ազդարարում էին 1990-ականներին գոյություն ունեցած ավանդական մեղիավերնախավերի անհետացումը և նոր մեղիա-իրականության ձևավորումը՝ նոր դերակատարներով և ձևաչափերով:

Էրդողանական Թուրքիայի մեղիա դաշտը

2013 թ. Գեզի այգու ցույցերի ընթացքում, ինչպես նաև նույն թվականի դեկտեմբերին կոռուպցիոն սկանդալի բացահայտումը վերջնականապես փոխեցին ԱԶԿ իշխանության և անձամբ Էրդողանի մասին մինչ այդ պահպանվող «ժողովրդավար ուժի» կերպարը թե՛ Թուրքիայում, թե՛ միջազգային հանրության շրջանում:

¹² Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ. և ուրիշներ, Թուրքիայի պատմություն. Հարյուրամյա հանրապետության քաղաքական ուրվագծերը 1923-2023, Երևան, 2023, էջ 460:

Ձևավորվեց լիարժեք ավտորիտար իշխանություն, որը կենտրոնացած էր Էրդողանի անձի շուրջ և դավանում էր իսլամական ազգայնականության գաղափարախոսությունը¹³:

2013 թ. հիշատակված ճգնաժամերը պարզորոշ կերպով ցուցադրեցին, որ ԱԶԿ-ն իր շուրջ տասնամյա կառավարման ընթացքում կարողացել է ձեռք բերել էական ազդեցություն թուրքական խոշոր ԶԼՄ-ների վրա: Այս մասին էր վկայում այն հանգամանքը, որ թուրքական խոշոր գրեթե ոչ մի լրատվամիջոց բավականաչափ հանգամանալից չլուսաբանեց (իսկ երբեմն՝ ուղղակի անտեսեց) Գեզլի այգու բազմահազարանոց ցույցերը, որոնք տարածվել էին ողջ երկրով մեկ¹⁴: Իսկ Ֆ. Գյուլենի հետ առճակատումը առիթ հանդիսացավ, որպեսզի իշխող ուժը գործի դնի ողջ գործիքակազմը չեզոքացնելու համար իրենից անկախ գործող գյուլենական ազդեցիկ մեդիա միավորները: Տեղի ունեցան խմբագիրների ու լրագրողների ձերբակալություններ, ԶԼՄ-ների վրա հարկային մեծ տույժերի սահմանում, իշխանությունների կողմից ԶԼՄ-ների և լրագրողների թիրախավորումներ և այլն: Այս գործընթացի շրջանակներում փակվեցին ազդեցիկ Zaman և Taraf օրաթերթերը:

Մեդիաների հանդեպ ԱԶԿ-ի վարած քաղաքականության հաջորդ շրջափուլը մեկնարկվեց 2016 թ. հուլիսի 15-ին՝ ռազմական հեղաշրջման փորձի տապալումից հետո: Դրանից հետո հայտարարված «արտակարգ դրության» պայմաններում փակվեցին տե-

¹³ Eissenstat H., նշվ. աշխ.:

¹⁴ Իրավիճակի խոսուն նկարագրությունն էր գլխավոր լրատվական հեռուստակայաններից մեկի՝ CNN Türk-ի կողմից Գեզլի ցույցի ընթացքում տեղի ունեցած բախումների ժամանակ դրանք լուսաբանելու փոխարեն պինզվիների մասին վավերագրական ֆիլմի ցուցադրումը: Այս պատճառով պինզվիներ վերածվեց թե՛ ընդդիմադիր շարժման, և թե՛ գրաքննվող թուրքական մեդիայի խորհրդանիշներից մեկը: Տե՛ս մանրամասն՝ Yanardağoğlu, E., Citizenship, Media and Activism in Turkey during Gezi Park Protests. Interactions: Studies in Communication and Culture, 8(3), 2017, pp. 133-150:

ղական և համապետական նշանակության տասնյակ ՁԼՄ-ներ: Որոշ մեդիա կազմակերպությունների գույքն ու ունեցվածքը բռնագրավվեց *TMSF*-ի կողմից և փոխանցվեց մերձիշխանական մեդիա ընկերություններին, հետ կանչվեցին բազմաթիվ ՁԼՄ-ներին տրված արտոնագրերը, հազարավոր լրագրողներ և մեդիա ոլորտի գործիչներ, որոնք աչքի էին ընկնում իրենց ընդդիմադիր կամ այլախոհական հայացքներով, ազատվեցին աշխատանքից, իսկ շատերը ենթարկվելով հետապնդումների՝ հարկադրված արտագաղթեցին¹⁵: Որոշ հետազոտողների կարծիքով հեղաշրջման փորձը իշխանությունների համար լավ առիթ էր իրականացնել մեդիա-դաշտի մեծածավալ գտում՝ այդպիսով չեզոքացնելով իր համար անվերահսկելի ՁԼՄ-ները և լրագրողներին:

ԱԶԿ-ի օրոք մեդիա դաշտի ձևափոխման անկյունաքարային մեկ այլ երևույթ կարելի է համարել Doğan մեդիա խմբի հանդեպ լիարժեք վերահսկողության հաստատումը, ինչը տեղի ունեցավ 2018 թ.: Դեռևս 1980-ականներին ստեղծված «Դոդան հոլդինգը» ԱԶԿ իշխանության տարիներին փորձում էր պահպանել իր տեղը որպես խոշորագույն թուրքական մեդիաընկերություն՝ ապահովելով համեմատաբար անկախ ու չեզոք լրագրություն՝ հասարակության շարունակական բևեռացման պայմաններում: Ընկերության հիմնադիր և սեփականատեր Ա. Դոդանի հենց այս քաղաքականության պատճառով էլ իշխանությունները սկսեցին բազմաթիվ ճնշումներ գործադրել հոլդինգի և դրա սեփականատիրոջ վրա՝ ստիպելով դառնալ իշխանության հետաքրքրությունները սպասարկող ռեսուրս: Սկսված հարկային հետապնդումներից, հարձակումներից և այլ ճնշումներից հետո 2011 թվականին Այդըն Դոդա-

¹⁵ Ըստ Freedom House-ի տվյալների, տարատեսակ բռնաճնշումների ենթարկված մեդիա գործիչների թիվը գերազանցում է 10.000-ը: *St u Uzunoğlu S.*, նշվ. աշխ., էջ 700:

նր սկզբում որոշեց «Դեմիրօրեն» (Demirören) բիզնես ընտանիքին վաճառել թուրքական երկու ընդդիմադիր հայտնի պարբերական՝ *Milliyet*-ը և *Vatan*-ը: Վերջիններս նոր սեփականատերերի կարգադրությամբ շատ արագ դադարեցին որևէ քննադատության ենթարկել իշխանություններին և նրանց վարած քաղաքականությունը: 2016 թվականի մարտին փակվեց Դոդանին պատկանող ամենախիստ ընդդիմադիր «Ռադիքալ» (Radikal) պարբերականը: Սրանից երկու տարի անց Դոդանը, ըստ էության, չդիմանալով իշխանությունների մեծացող ճնշմանը, վաճառեց իր ողջ մեդիա ընկերությունը վերոհիշյալ «Դեմիրօրեն» խմբին¹⁶: Ընդունված է համարել, որ այս գործարքի արդյունքում իշխանությունը իր մերձավոր բիզնես ընկերությունների միջոցով վերահսկողություն ստացավ թուրքական ողջ մեդիա դաշտի ավելի քան 2/3-ի վրա՝ այդպիսով վերացնելով բազմակարծությունը զանգվածային մեդիա դաշտում¹⁷:

Այս շրջանում ԱԶԿ-ի վարած տեղեկատվական քաղաքականության մեկ այլ առանձնահատկություն է պետական գրաքննության մեխանիզմների գործադրումը, որը հատկապես ուժեղացավ 2016 թվականից հետո: Դատական մարմիններին զուգահեռ, ավանդական և նոր մեդիայի վրա գրաքննության լայն լիազորություններով են օժտված հատկապես Ռադիոյի և հեռուստատեսության բարձրագույն խորհուրդը (RTÜK) և Տեղեկատվական տեխնոլոգիաների և հաղորդակցության կազմակերպությունը (BTK), որոնք վերահսկում են եթերի ու բովանդակության համապատասխանությունն իշխանական քարոզչությանը: Այսպիսի պայմաններ

¹⁶ Գեղամյան Վ., «Հինգերորդ իշխանությունը», Turkaget.am, 2018: <https://turkaget.am/dogan/> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

¹⁷ Yanardağoğlu E., *The Transformation of the Media System in Turkey. Citizenship, Communication, and Convergence*, Palgrave Macmillan, 2021, p. 2.

րում, իշխանության կողմից գործադրված բռնաճնշումներից խուսափելու համար, մեղիա տիրույթի ներկայացուցիչները դիմում էին ինքնագրաքննության (self-censorship)¹⁸:

Նկարագրված պայմաններում այլախոհության հիմնական հարթակը դարձել է համացանցային տիրույթը, որտեղ վերջին տարիներին առաջացան նոր մեղիաների տիպին պատկանող տարբեր պարբերականներ, հեռուստաընկերություններ, սոցիալական ցանցերի և մեսինջերների հենքի վրա գործող հարթակներ և այլն: Թեև համացանցը պակաս վերահսկելի է իշխանությունների համար, սակայն իշխանական գրաքննությունն առկա է նաև առցանց: Ավելին, այս իմաստով Թուրքիան դասվում է թվային ավտորիտարիզմ (digital authoritarianism) բանեցնող երկրների շարքին¹⁹:

Թուրքական մեղիա դաշտի հիմնական առանձնահատկությունները

Վերոնշյալ գործընթացների արդյունքում ձևավորվել է թուրքական մեղիայի ժամանակակից պատկերը: Անհրաժեշտ է նշել, որ ներկայումս գործող մեղիա դաշտի հիմնական առանձնահատկությունները արդյունք են թե՛ մեղիա ոլորտի ներքին զարգացման, և թե՛ արտաքին գործոնների (առաջին հերթին՝ քաղաքական) ազդեցության:

Այսպիսով՝ կարող ենք ասել, որ թուրքական մեղիա դաշտը բավական մեծ է և բազմազան, սակայն միաժամանակ գործում է խիստ քաղաքականացված և բևեռացված պայմաններում: Թե՛ հանրապետության գոյության նախորդ տասնամյակներում, թե՛ այսօր Թուրքիայում ՁԼՄ-ները դիտարկվում են առաջին հերթին

¹⁸ Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ., նշվ. աշխ., էջ 460:

¹⁹ Aslan M., Yilmaz G., Diffusion of digital authoritarianism? Censorship, surveillance and beyond in Türkiye, *Third World Quarterly*, 1–19. <https://doi.org/10.1080/01436597.2024.2363895>

որպես քարոզչության միջոցներ²⁰, ինչը բացասաբար է անդրադառնում պրոֆեսիոնալ լրագրության զարգացման վրա: Ավելին, պետությունը մշտապես փորձում է կառավարել մեդիա ոլորտը՝ այդպիսով ազդելով հանրային տրամադրությունների վրա և ապահովելով իշխանության դիրքերի ամրությունը: ԱԶԿ-ի օրոք այս քաղաքականությունը խիստ տեսանելի է: Վերջին տարիներին տեղեկատվական դաշտի համակարգման գործում առանցքային դեր է խաղում հատկապես Թուրքիայի նախագահի աշխատակազմին կից գործող Հաղորդակցության վարչությունը (T. C. İletişim Başkanlığı), որը նաև զբաղվում է պետության և իշխանության վերաբերյալ անհրաժեշտ հանրային խոսույթների ձևավորմամբ և տարածմամբ²¹:

Ժամանակակից մեդիա-դաշտի մեկ այլ կարևոր առանձնահատկությունն է ՋԼՄ-ների կախվածությունը գործարար վերնախավերից: Թուրքական մեդիաների մեծամասնությունը գործում է հովանավորչական (clientelistic) հարաբերությունների պայմաններում, երբ մեդիայի սեփականատերերը և քաղաքական վերնախավերը կիսում են ընդհանուր տնտեսական շահեր այլ ոլորտներում²²:

Գործելով բնեռացված հասարակական-քաղաքական միջավայրում՝ ՋԼՄ-ների հանդեպ հանրային վստահությունը պայմանավորված է ընթերցողների քաղաքական հայացքներով: Խոշոր և

²⁰ Տեր-Մաթևոսյան Վ., Չանգվածային լրատվամիջոցները Թուրքիայում. քաղաքականություն, սահմանափակումներ և մարտահրավերներ, Արևելագիտության հարցեր, http://publications.yyu.am/wp-content/uploads/2015/12/6Vahram_TerMatevosyan.pdf (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

²¹ Insiders reveal how Erdogan tamed Turkey's newsrooms. Reuters, 31.08.2022, <https://www.reuters.com/world/middle-east/insiders-reveal-how-erdogan-tamed-turkeys-newsrooms-2022-08-31/> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

²² Տե՛ս՝ Yılmaz G., Europeanisation or De-Europeanisation? Media Freedom in Turkey (1999–2015). South European Society and Politics 21, 2016, N 1, pp. 147–161.

ազդեցիկ մեդիաները հանրային ընկալման մեջ ասոցացվում են ոչ թե օբյեկտիվ լրագրության, այլ որոշակի գաղափարախոսական հոսանքի կամ այդ հոսանքը ներկայացնող քաղաքական ուժի հետ, ինչը առաջ է բերում մի իրավիճակ, երբ մեդիայի հիմնական սպառողները ևս այդ հոսանքին հարողներն են²³: Այս երևույթը բնորոշվում է որպես մեդիա կուսակցություն զուգադրողականություն (press party paralellism)²⁴: Ընդհանուր առմամբ՝ թուրքական ՋԼՄ-ների հանդեպ հանրային վստահությունը շարունակում է մնալ ցածր²⁵:

Թեև հեռուստատեսությունը շարունակում է Թուրքիայի հասարակության համար հանդիսանալ տեղեկատվության առաջնային աղբյուրը, սակայն թվային մեդիաները արդեն իսկ մեծ տարածում ունեն և մրցակցում են հեռուստատեսության հետ առաջանցիկ դիրքերի համար²⁶: Միաժամանակ շարունակաբար նվազում է տպագիր ՋԼՄ-ների ազդեցությունը, որոնցից շատերը ստիպված են գործել նաև համացանցային տիրույթում կամ լիարժեք տեղափոխվել այնտեղ: Այստեղ էական է հաշվի առնել թե՛ համաշխարհային միտումը, որը պայմանավորված է տեխնոլոգիական զարգացման շնորհիվ թվային մեդիաների գերաբազ փոփոխմամբ ու հնարավորությունների մեծացմամբ, թե՛ այն հանգամանքը, որ համացանցային տիրույթը պակաս վերահսկելի է պետու-

²³ Şe' u Çarkoğlu A., Gözde Y., Press-Party Paralellism in Turkey: An Individual Level Interpretation. Turkish Studies 11, N 4, 2010, pp. 613-624.

²⁴ Այս եզրույթը կիրառվում է ցույց տալու համար քաղաքական և մեդիա համակարգերի միջև փոխկապակցվածությունը: Թուրքիայում այս երևույթի մասին ավելի մանրամասն տե՛ս Kaya R., Çakmur B., Politics and the Mass Media in Turkey, Turkish Studies 11, 2010, N 4, pp. 521-537.

²⁵ Turkey's Changing Media Landscape. Center for American Progress, June 2020, p. 3.

²⁶ Digital News Report 2024 – Turkey. Reuters Institute, 17.06.2024, <https://reutersinstitute.politics.ox.ac.uk/digital-news-report/2024/turkey> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

թյան և իշխանության համար, ինչը գրավիչ է դարձնում այն ինչպես բովանդակություն ստեղծողների (լրագրողների), այնպես էլ բովանդակություն սպառող հասարակական տարբեր խմբերի համար:

Տեղին է նշել նաև, որ վերջին տարիներին իշխանությունը մեծ ջանքեր է գործադրում տարբեր եղանակներով ազդելու նաև համացանցային տիրույթի վրա՝ կիրառելով ինչպես օրենսդրական գործիքակազմը (օր.՝ համացանցում գովազդի կարգավորման օրենքների ընդունումը, համացանցային բովանդակության մշտադիտարկումը իրավապահ մարմինների կողմից, էլեկտրոնային հարթակների պարբերական արգելափակումները), այնպես էլ քարոզչական այլ հնարքներ (օր.՝ կեղծ օգտահաշիվների (*AK trolls*) գանգվածային գործարկումը²⁷):

Մեղիա սահմանափակումները նպաստեցին, որպեսզի Թուրքիայի տեղեկատվական դաշտում էականորեն մեծանա արտասահմանյան ծագման մեղիաների դերը: Իշխանության տեսակետից տարբերվող լրատվություն են ապահովում մի շարք արտասահմանյան ՋԼՄ-ներ, որոնց մի մասը հանդիսանում է տարբեր պետական լրատվամիջոցների թուրքական ծառայություններ (օր.՝ բրիտանական BBC-ի, գերմանական DW-ի, ռուսական Sputnik-ի, ամերիկյան VoA-ի, չինական CRI-ի և այլ պետական լրատվամիջոցների համապատասխան ծառայությունները)²⁸: Բավական շատ

²⁷ Political Retweet Rings and Compromised Accounts: A Twitter Influence Operation Linked to the Youth Wing of Turkey's Ruling Party, Stanford Internet Observatory 2020, <https://fsi.stanford.edu/publication/june-2020-turkey-takedown> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

²⁸ Արտասահմանյան մեղիաների ազդեցության աճի մասին խոսում վկայություն է այն փաստը, որ 2019 թ. մերձիշխանական SETA հիմնադրամը հրապարակեց վերջիններիս վերաբերյալ մեծածավալ զեկույց՝ «Միջազգային մեղիա կազմակերպությունների ծավալումները Թուրքիայում» վերտառությամբ: Չեկույցը փաստացի թիրախավորում էր նշված մեղիաները՝ որակելով նրանց և վերջիններիս համար աշխատող թուրք լրագրողներին որպես ազդեցության գործակալներ: Չեկույցը տե՛ս Uluslararası Medya

են նաև այն ՁԼՄ-ները, որոնք գործում են արտասահմանյան ֆինանսավորում ունեցող հասարակական կազմակերպությունների հովանու ներքո կամ վերջիններիս օժանդակությամբ²⁹:

Մեդիա դաշտի ընդհանրական պատկերը

Ինչպես նշվեց, Թուրքիայի մեդիա դաշտը բավական հարուստ է և խայտաբղետ՝ սպասարկելով այդ երկրի ոչ միայն ավելի քան 85 մլն բնակիչներին, այլև շատ ավելի մեծ տիրույթ: Ըստ առկա տվյալների՝ Թուրքիայում գործում է ավելի քան 10 համապետական հեռուստարձևերություն, ավելի քան 170 համապետական թերթ, 10-ից ավել համապետական ռադիոկայան: Նոր մեդիաների մասով դժվար է ունենալ թվային հստակ պատկեր, սակայն այս իմաստով էական է արձանագրել, որ համացանցից օգտվում է Թուրքիայի բնակչության ճնշող մեծամասնությունը (ավելի քան 87 %-ը)³⁰, ինչն իր հերթին նշանակում է, որ թվային հարթակները բազմաթիվ են և ունեն մեծ լսարաններ:

Խոշորագույն մեդիա խումբը պատկանում է Էրդոդան Դեմիրորենի բիզնես հոլդինգին, որի կազմի մեջ են մտնում Hürriyet, Milliyet, Posta խոշորագույն օրաթերթերը, Kanal D ժամանցային և CNN Türk լրատվական ալիքները, DHA լրատվական գործակալությունը, անգլալեզու խոշորագույն թուրքական ՁԼՄ-ն՝ *Hürriyet Daily News*-ը, և այլն³¹: Հիշատակության են արժանի նաև *Doğuş*

Kuruluşlarının Türkiye Uzantıları, SETA Vakfı, <https://www.setav.org/dijital-medya/rapor-uluslararasi-medya-kuruluslarinin-turkiye-uzantilari> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

²⁹ Sté u Uzunoğlu S., նշվ. աշխ., էջ 700:

³⁰ Digital Report 2024 (Turkey), <https://datareportal.com/reports/digital-2024-turkey> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

³¹ Demirören Group, Medio Ownership Monitor Turkey, <https://turkey.mom-rsf.org/en/owners/companies/detail/company//demiroeren-group-1/> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

(NTV, *Star* հեռուստարձկերությունները, *Kral FM* ռադիոկայանը, *PuhuTV* թվային հարթակը և այլն), *Ciner* (*HaberTürk*, *Bloomberg HT* լրատվական ՁԼՄ-ները, *Show* հեռուստարձկերությունը և այլն), *TürkMedya* (*Akşam* և *Güneş* թերթերը), *Kalyon* (գործում է *Turkuvaz Medya Grubu*-ի անվան ներքո և իր մեջ ներառում է *A TV* և *A Haber* հեռուստարձկերությունները, *Sabah*, *Takvim* և *Yeni Asir* թերթերը, անգլալեզու *Daily Sabah* թերթը և այլն), *Albayrak* (*Yeni Şafak* թերթը, TVNET հեռուստարձկերությունը և այլն), *İhlas* (*Türkiye* թերթը, TGRT հեռուստարձկերությունը, *İHA* լրատվական գործակալությունը և այլն) ընկերությունները, որոնք բոլորն էլ դասվում են մերձիշխանական խմբերի շարքին³²:

Իշխանության համար քարոզչության կարևոր գործիքներ են նաև պետական լրատվամիջոցները: Այս շարքում առանձնանում է հատկապես *Anadolu Ajansı* լրատվական գործակալությունը և *TRT* պետական ռադիո-հեռուստատեսության խումբը: Վերջիններս մերձիշխանական ՁԼՄ-ների հետ գործում են ներդաշնակ՝ ապահովելով իշխանության համար անհրաժեշտ տեղեկատվական միջավայրը:

Ի տարբերություն իշխանական և մերձիշխանական մեդիատիրության՝ անկախ կամ ընդդիմադիր մեդիաները ավելի պակաս համակարգային են գործում: Բացակայում են խոշոր ընկերությունները, որոնք կտիրապետեն մեդիա խմբերի կամ մեծ ՁԼՄ-ների: Ինչպես նշվեց, այս թևում շատ են թվային տիրություն գործող և նոր մեդիաների ձևաչափերով ՁԼՄ-ները, որոնց լսարանը հատկապես երիտասարդներն են: Այստեղ անհրաժեշտ է առանձնացնել

³² Kirdemir B., Turkey's Digital News Landscape. Polarization, Social Media, And Emerging Trends, EDAM, May 2020, 18.06.2020, <https://edam.org.tr/en/cyber-governance-digital-democracy/turkey-s-digital-news-landscape-polarization-social-media-and-emerging-trends> (մուտքի ամսաթիվ՝ 24.06.2024).

ANKA լրատվական գործակալությունը, NOW TV (նախկինում՝ FOX TV), Halk TV և Sözcü TV հեռուստարևելությունները, Cumhuriyet, Sözcü և BirGün թերթերը, T24, Diken, Bianet, Duvar, OdaTV, Evrensel, Artıgerçek, Medyascope, Dokuz8haber և այլ էլեկտրոնային պարբերականները: Մեծ լսարան ունեն նաև բացառապես համացանցային տիրույթում գործող *Eksi Sözlük* բառարան-սոցանցը, *Teyit* փաստերի ստուգման հարթակը, *Onedio* ժամանցային-լրատվական հարթակը և այլն:

Եզրակացություն

Թուրքիայում մեդիա դաշտը գործում է խիստ քաղաքականացված միջավայրում և գտնվում է իշխանությունների բավական ուժեղ ազդեցության ներքո: Այդ պատճառով ԶԼՄ-ները իրենց աշխատանքը կատարում են խիստ սահմանափակումների, գրաքննության և ճնշումների պայմաններում: Սակայն նույնիսկ այդպիսի միջավայրում, շնորհիվ թվային տեխնոլոգիաների զարգացման, թուրքական մեդիաները շարունակում են զարգանալ և գործել նոր ձևաչափերում: Սա հատկապես վերաբերում է իշխանությանը ընդդիմացող կամ այլախոհական կողմնորոշում ունեցող մեդիաներին, որոնք համացանցային տիրույթում հնարավորություն ունեն համեմատաբար ավելի անկաշկանդ կերպով զբաղվելու պրոֆեսիոնալ լրագրությամբ:

PECULIARITIES OF TURKEY'S MEDIA LANDSCAPE DURING AKP PERIOD³³

*Varuzhan Geghamyan*³⁴

This study briefly examines Turkey's media landscape during the government of AK party. It shows the main reasons for current media-reality and essential peculiarities, which are intertwined with political and socio-economic developments of the era. This study argues that though the government is controlling the media and has created very strict conditions for professional journalism, Turkish media is still having some developments and transformations, which are also results of global technological innovations.

Keywords: *media, politics, authoritarianism, digital technologies, propaganda.*

ОСОБЕННОСТИ МЕДИАЛАНДШАФТА ТУРЦИИ В ПЕРИОД ПРАВЛЕНИЯ ПСР³⁵

*Варужан Гегамян*³⁶

В данном исследовании кратко рассматривается медиаландшафт Турции в период правления ПСР. В нем показаны основные причины нынешней медиареальности и информационного поля в целом, рассматриваются существенные особенности, которые переплетаются с политическими и социально-экономическими событиями эпохи. В исследовании утверждается, что хотя правительство контролирует СМИ и создало очень жесткие условия для профессиональной журналистики, турецкие медиа все же претерпевают некоторые изменения и трансформации, которые также являются результатом глобальных технологических инноваций.

³³ The work was supported by the Science Committee of RA, in the frames of the research project N 21AG-6A081.

³⁴ Varuzhan Geghamyan is an Associate Professor at the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: vgeghamyan@ysu.am, ORCID: 0000-0001-8090-359X

³⁵ Исследование выполнено при финансовой поддержке Комитета по науке РА в рамках научного проекта № 21AG -6A081.

³⁶ Варужан Гегамян – к.ист.н., доцент кафедры тюркологии факультета востоковедения Ереванского государственного университета, Эл. почта: vgeghamyan@ysu.am, ORCID: 0000-0001-8090-359X.

Ключевые слова: СМИ, политика, авторитаризм, цифровые технологии, пропаганда.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գեղամյան Վ., «Հինգերորդ իշխանությունը», Turkaget.am, 2018, <https://turkaget.am/dogan/> (24.06.2024):

2. Սաֆրաստյան Ռ., Մելքոնյան Ռ. և ուրիշներ, Թուրքիայի պատմություն. հարյուրամյա հանրապետության քաղաքական ուրվագծերը 1923-2023, ԵՊՀ, 2023:

3. Տեր-Մաթևոսյան Վ., Զանգվածային լրատվամիջոցները Թուրքիայում. քաղաքականություն, սահմանափակումներ և մարտահրավերներ, Արևելագիտության հարցեր: http://publications.yso.am/wp-content/uploads/2015/12/6Vahram_TerMatevosyan.pdf

4. Aslan M., Yilmaz G., Diffusion of digital authoritarianism? Censorship, surveillance and beyond in Türkiye. Third World Quarterly, 1–19. <https://doi.org/10.1080/01436597.2024.2363895>

5. Çarkoğlu A., Gözde Y., Press-Party Parallelism in Turkey: An Individual Level Interpretation. Turkish Studies 11, 2010, N 4, pp. 613–624.

6. Demir V., Freedom of the Media in Turkey under the AKP Government, in Human Rights in Turkey. Assaults on Human Dignity (ed. Aydin H., Langley W.), Springer, 2021, pp. 51–88.

7. Eissenstat H., Recep Tayip Erdoğan. From “illiberal democracy” to Electoral Authoritarianism (born 1953). In Dictators and Autocrats. Securing Power across Global Politics (ed. Larres K.), Routledge, 2022, pp. 367–383.

8. Kaya R., Çakmur B., Politics and the Mass Media in Turkey. Turkish Studies 11, 2010, N. 4, pp. 521–537.

9. Uzunoğlu S., The Politics of Media in Turkey. Chronicle of a Stillborn Media System. The Oxford Handbook of Turkish Politics (ed. Tezcür G. M.), Oxford University Press, 2022, pp. 689–710.

10. Yanardağoğlu E., Citizenship, Media and Activism in Turkey during Gezi Park Protests. Interactions: Studies in Communication and Culture, 8(3), 2017, pp. 133-150.

11. Yanardağoğlu E., The Transformation of the Media System in Turkey. Citizenship, Communication, and Convergence, Palgrave Macmillan, 2021.

12. Yesil B., Media in New Turkey. The Origins of an Authoritarian Neoliberal State, University of Illinois Press, 2016.

13. Yılmaz G., Europeanisation or De-Europeanisation? Media Freedom in Turkey (1999–2015). *South European Society and Politics* 21, 2016, N.1, pp. 147–161.
14. Digital News Report 2024 – Turkey, Reuters Institute, 17.06.2024, <https://reutersinstitute.politics.ox.ac.uk/digital-news-report/2024/turkey>
15. Digital Report 2024 (Turkey), <https://datareportal.com/reports/digital-2024-turkey>
16. Insiders Reveal how Erdogan Tamed Turkey’s Newsrooms. Reuters, 31.08.2022.
<https://www.reuters.com/world/middle-east/insiders-reveal-how-erdogan-tamed-turkeys-newsrooms-2022-08-31/>
17. Kirdemir B., Turkey’s Digital News Landscape. Polarization, Social Media, and Emerging Trends. EDAM, May 2020, 18.06.2020, <https://edam.org.tr/en/cyber-governance-digital-democracy/turkey-s-digital-news-landscape-polarization-social-media-and-emerging-trends>
18. Media Ownership Monitor Turkey.
<https://turkey.mom-rsf.org/en/findings/political-affiliations/>
19. Political Retweet Rings and Compromised Accounts: A Twitter Influence Operation Linked to the Youth Wing of Turkey’s Ruling Party, Stanford Internet Observatory 2020.
<https://fsi.stanford.edu/publication/june-2020-turkey-takedown>
20. Turkey, Freedom House. <https://freedomhouse.org/country/turkey>
21. Turkey’s Changing Media Landscape, Center for American Progress, June 2020, p. 3.
22. Turkey: The World’s Largest Prison for Journalists. Amnesty International, 03.05.2019.
<https://www.amnesty.org/en/latest/news/2019/05/turkey-the-worlds-largest-prison-for-journalists/>
23. Turkey: ‘World’s Biggest Prison’ for Media. Al Jazeera, 17.02.2013.
<https://www.aljazeera.com/features/2013/2/17/turkey-worlds-biggest-prison-for-media>.
24. Türkiye, Reporters Without Borders.
<https://rsf.org/en/country-t%C3%BCrkiye>
25. Uluslararası Medya Kuruluşlarının Türkiye Uzantıları. SETA Vakfı, <https://www.setav.org/dijital-medya/rapor-uluslararası-medya-kuruluşlarının-türkiye-uzantıları>

**ԻՍԼԱՄԱԿԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ
ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԹՈՒՐՔԱԿԱՆ
ԻՍԼԱՄԱԿԱՆ ՎԵՊԵՐՈՒՄ**

Անուշիկ Մարտիրոսյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.105

Թուրքիայի քաղաքական համակարգում իսլամական ինքնության դերի, կշռի, պատմական նկարագրի ու կրած փոփոխությունների մասին պատկերացում կազմելու համար իսլամական վեպերը յուրատեսակ բանալիներ են: Գրական այս երկերը նաև իսլամական շարժման գերիշխանության համար մղվող պայքարը, ձևավորվող իսլամական դասակարգերի վրա հիմնված քաղաքական հռետորաբանությունը, պրակտիկական հասկանալու հնարավորություն են ընձեռնում: Իսլամական այս վեպերի գերնպատակն իսլամի և արդիականացման անհամատեղելիության սահմանմանն ու հիմնավորման միջոցով այլընտրանք իսլամական մոդել, հավաքական «մենք»-ի վրա հիմնված իսլամական հասարակություն ստեղծելն էր: Ուստի՝ անհրաժեշտ էր նախ առերեսվել «ներանց» («այլերի») հետ, այնուհետև ուղղվել դեպի ինքնաճանաչողության, ինքնադրսևորման աղբյուրը՝ «Ոսկե դարը»: Սակայն իսլամական ինքնության՝ «Ոսկե դարի» մեկնաբանությամբ սահմանումը փոխվեց 1990-ական թվականներից, երբ իսլամական ինքնության միաձուլյ կառուցվածքը, արտաքին աշխարհից մեկուսացումը, ինչպես նաև իսլամիզմի տղամարդակենտրոն կառուցվածքը քննադատող տեքստեր գրվեցին:

Բանալի բառեր՝ Իսլամ, ինքնություն, «Ոսկե դար», արդիականացում, թուրքական գրականություն, Արևմուտք, անհամատեղելիություն, դարձ:

¹ Անուշիկ Մարտիրոսյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դոցենտ է, բանասիրական գիտությունների թեկնածու, էլ. փոստ՝ anushik.martirosyan@ysu.am, ORCID 0009-0009-7774-5223:

Թուրքական իսլամական գրականության պատմությունը սերտորեն միահյուսված է իսլամիզմի պատմության հետ և ճշգրտորեն արտացոլում է վերջինիս ձեռքբերումներն ու անհաջողությունները: Ուստի, երբ 1980-ական թթ. Թուրքիայի քաղաքական ու մշակութային կյանքում մարտնչող իսլամական խոսույթը գերակայեց², իսլամական գրականությունը նույնպես վերելք ապրեց՝ ձևավորվելով յուրատեսակ գրական ուղղություն: Սա ոչ այլ ինչ էր, քան արագ սոցիալական փոփոխություններին ու արդիականացմանն ուղղված հակագղեցություն³, որը իսլամական արժեհամակարգը, իսլամի աստվածաբանական-հավատաբանական խորքայնությամբ

² 1980-ական թթ. իսլամական խոսույթը վերածվեց իսլամիզմի արմատական գաղափարախոսության՝ արտահայտվելով ազգայնական, պահպանողական ու սպիրիտուալիստական խողովակաշարերով: Եթե մինչ այս ժամանակաշրջանն իսլամիզմը բնութագրվում էր «կրոնի քաղաքական, հասարակական և մշակութային դերի օտարմամբ, կրոնական հաստատությունների և արժեքների վերացմամբ, հասարակության կրոնական զգացմունքայնության չեզոքացմամբ, ապակրոնական Թուրքիայի կառուցմամբ, պետության ձեռքով հասարակության կերպափոխմամբ և պատմական-կրոնական արմատներից հեռացմամբ», ապա ձևավորվող նոր քաղաքական-հասարակական կարգում իսլամականը նորից «պետություն/քաղաքական ուժ»-ի շուրջ վերակիրարկվեց: Կարճ ասած՝ այս ժամանակաշրջանում իսլամիզմը բացեիքաց քեմալիզմի շուրջ ձևավորված արմատական աշխարհականության, աշխարհիկության ու պոզիտիվիզմի հիմքերի վրա քաղաքականությունների դեմ դիրքորոշում որդեգրեց: Այս համատեքստում իսլամիզմն առաջ էր շարժվում ոչ թե հասարակության կայունությունը պահպանելու, իսլամը որպես ավանդական, մշակութային ինքնության հիմք վերասահմանելու, այլ գերիշխող ուժային հարաբերություններին դեմ հանդես գալու նկրտումներով: Tanlı B, Gültekingil M, Modern Türkiye’de siyasi düşünceler: islamcılık, cilt 6, İstanbul, 2005, 19–21.

³ Արդիականացման հետ մեկտեղ հատկապես սոցիալական հարաբերությունների ոլորտում ավանդական դերերը, դիրքերն ու արժեքներն արագորեն փլուզվում են: Արդյունքում ի հայտ է գալիս ինքնության ճգնաժամ և սոցիալական կառուցվածքի հատվածավորում: Կրոնը, սովորաբար, այս տեսանկյունից արդիականացման դեմ ի հայտ եկած պայքարների օրինականությունն է ապահովում և հասարակական համախմբման գործառնություն իրականացնում, որի արդյունքում, ըստ սոցիոլոգ Հանս Մոլի, կրոնը սրբացնում է ինքնությունը: Mol H., The Sacralization of Identity, Current Research in Sociology, ed. Margaret Archer, Toronto, August 18–24, 1974, <https://www.degruyter.com/document/doi/10.1515/9783111681030-011/html> (մուտքի ամսաթիվ՝ 14.05.2024).

նր գաղափարախոսական ձևի մեջ էր տեղավորում: Իսլամական այս վեպերը կառուցված էին քաղաքակրթություն-արդիականացում երկվության վրա՝ ավանդույթ-արդիություն երկճյուղման համատեքստում: Գրական այս երկերի համընդհանուր նպատակառոդվածությունն այլընտրանքային իսլամական մոդելի ստեղծումն էր: Սա կարևոր հանգամանք է, քանի որ թույլ է տալիս հասկանալ 1980-ական թթ. թուրքական իսլամիզմի բնույթը, ինչպես նաև այս գրականությունը դիտարկել իբրև վերջինիս մշակութային քաղաքականության անքակտելի բաղադրիչ: Իսկ քաղաքականությունը հստակ էր՝ վերասահմանել ու վերաձևավորել իսլամական ինքնությունը⁴՝ մեկընդմիջտ կոտրելով այն կարծրատիպը, թե արդի դարաշրջանում իսլամական ինքնությունը ոչ այլ ինչ էր, քան «հետադիմություն», «թերգարգացում», «ցնցոտիություն» կամ «նախնադար»⁵:

Իսլամը դարձավ ազգային ինքնության սահմանման ու ճանաչման, ինչպես նաև ազգային ինքնագիտակցության ձևավորման և լինելիության զենք, իսկ իսլամական գրականությունը լծվեց իսլամական ինքնություն կերտելու գործին⁶: Այս համատեքստում

⁴ «Ինքնություն» բառը բազմիմաստ է և տարբեր փիլիսոփայական համատեքստերում կարող է տարբեր մեկնություններ ունենալ: Հիմնական ըմբռնումները երկուսն են՝ առաջինը կապված է «ուրիշից» տարբերվելու, հենց ինքը լինելու պարագայի հետ (Ego, Self, Selfness), երկրորդում՝ ինքնության կենտրոնացում-խտացումը շեշտվում է վիճակների նույնությունն արձանագրելու միջոցով (Identity): Ոսկանյան Ա., Ազգային ինքնության հիմնահարցը և մտավորականության կոչումը, Ինքնություն 1, 1995, էջ 11-12: Սույն հոդվածում «ինքնություն» եզրը կիրառվել է նշված երկու իմաստներով՝ հավասարապես և միաժամանակ:

⁵ Çayır K., Türkiye’de İslâmcılık ve İslami Edebiyat Toplu Hidayet Söyleminden Yeni Bireysel Müslümanlıklara. İstanbul, 2008, s. 61.

⁶ Թուրք սոցիոլոգ Ն. Գյոլենն նշում է, որ իսլամական վեպերի միջոցով կառուցվող իսլամական ինքնությունը «մոդեռնիստական քաղաքակրթության բնորոշման և պատմության կերտման գործընթացներից դուրս մղված» իսլամական սուրյեկտ կառուցելու ջանքերի խորհրդանիշն էր: Göle N., Authoritarian Secularism and Islamist Politics: The Case of Turkey. Civil Society in the Middle East, Vol. 2, 1996, p. 26.

թուրք գրականագետ Օ. Թյուրքեշը նշում է, որ թեև իսլամական հատվածն ամենաուշն էր գիտակցել, որ գրականությունը և գերագանցապես վեպն «ինքնություն կերտելու կարողություն» ուներ, սակայն այդ ուշացումի շփոթով մյուս բոլոր հատվածներից ավելի շատ է յուրացրել և այն դարձրել արդիականացման պայմաններում իրենց քաղաքական իրավունքներից զրկված համարող իսլամական հատվածների համար պայքարի դաշտ⁷: Կարևոր է ընդգծել, որ իսլամական վեպերում հստակ տարանջատված էին «իսլամական ինքնություն» ու «մուսուլմանական ինքնություն» եզրույթները: Եթե վերջինս ի ծնե, ավանդական ճանապարհներով (ընտանիք, կրթություն) «փոխանցված» և քաղաքական գիտելիքների փոքր (կամ լիակատար բացակայությամբ) պաշարով սուբյեկտի դիրք էր, ապա «իսլամական ինքնությունն» այն նոր դիրքն էր, որ ձեռք էր բերվում ավանդական հասկացությունների քննության ու իսլամի՝ որպես անձնական և հասարակական կենսակերպի մեջ կիրառելի կրոնի մեկնաբանման միջոցով⁸:

Վեպերում կարմիր թելի պես անցնում էր նաև այն միտքը, որ իսլամի և թուրք հասարակության միջև կապերի խզման պատճառը քեմալական արդիականացումը/արևմտականացումն էր: Ուստի՝ այս վեպերը նաև յուրատեսակ մարտահրավեր էին: Սա ծայրահեղական մոտեցում էր ինչպես ավանդականի քննադատության, այնպես էլ արմատապես տարբեր քաղաքակրթություն ստեղծելու ցանկության առումով: Այն ենթադրում էր կյանքի բոլոր ոլորտների իսլամացում և պատմական անցյալի վերաշարադրում⁹: Ընդ որում՝ պատմության այդ նոր մեկնաբանությունները

⁷ Türkeş Ö., Toplum ve Kimlik Kurma Kılavuzu Olarak Roman, Modern Türkiye’de Siyasi Düşünce: Dönemler ve Zihniyetler. Cilt 9, ed. Tanıl B., Gültekin M., İstanbul, 2009, s. 850.

⁸ Çayır K., նշվ. աշխ, էջ 77-78.

⁹ Göle N., Secularism and Islamism in Turkey: The Making of Elites and Counter-Elites, Middle East Journal, Vol. 51, N 1, 1997, p. 54.

գուտ պասիվ հիշելու գործառույթ չպետք է իրականացնեին, այլ դրանց միջոցով ստեղծված հիշողությունը սնելու էր իսլամական սուբյեկտի ենթագիտակցությունը. գերիշխող արևմտամետ կարգի պայմաններում «հասարակական-քաղաքական կյանքից օտարված, արտաքսված մուսուլմաններն իրենց անցյալին նայելիս հասկանալու էին, որ անարդարությունների զոհ են եղել, և ամեն անգամ, երբ կմտածեն, թե իրենք նորից նման իրավիճակում են, անցյալին են նայելու»¹⁰: Ուստի՝ «վերադարձ անցյալին-հիշողություն» համադրության միջոցով իսլամամետ հեղինակները նպատակ ունեին ընթերցողին դրդել վերաբժնորելու սեփական պատմությունը, այլ տեսանկյունից նայել արդիականացում կոչված երևույթին, քանի որ, ինչպես նշում է իսլամական վեպերի հեղինակ Շերիֆե Քաթըրջըրի «Մուսուլման կինն անուն ունի» վեպի հերոսը՝ «եթե հրաժարվեինք Արևմուտքին կրկնօրինակելու սովորույթից ու կարդայինք մեզ հարազատ իսլամական մտքի գիտակների աշխատությունները, վաղուց Արևմուտքին անցած կլինեինք: Մի քանի օրինակ բերեմ ձեր նախնիներից, որոնցից ամաչում եք, գուցե ինձ իրավացի համարեք: Իսլամական մտքի գիտակ Բիրունին Գալիլեոյից դեռևս 600 տարի առաջ է բացահայտել, որ մոլորակը պտտվում է, իսկ Նյուտոնից էլ 700 տարի առաջ է հաշվել աշխարհի մակերեսը: Լուսնային առաջին քարտեզը մուսուլման Ալի Քուշուն է գծել: Դասական հանրահաշվի հիմնադիրներից է Ալ-Խորեզմին¹¹... Առաջին քաղցկեղի վիրահատությունը, բորոտության բուժումը, ժանտախտի վարակիչ բնույթն առաջինն իսլամական մտքի գիտակներն են բացահայտել»¹²: Խոսքային ներագդման նմանօրի-

¹⁰ Açıkel F., «Kutsal mazlumluğun» psikopatolojisi. Toplum ve Bilim, 70, 1996, s. 167.

¹¹ Իսլամական աշխարհի հիշյալ և 10-ից ավել այլ անուններ 2013 թվականից ներառված են Թուրքիայի բնագիտական առարկաների դպրոցական ծրագրերում, որոնք պարբերաբար համալրվում են նոր անուններով:

¹² Katırcı Ş., Müslüman kadının adı var. İstanbul, 1989, s. 117.

նակ հնարքների կիրառմամբ իսլամական վեպերի հեղինակները, փաստորեն, «հիմնավորում էին» իսլամիզմի հիմնադրույթներից մեկը, համաձայն որի «Արևմուտքի համեմատ Թուրքիայի հետամնացության պատճառը ոչ թե իսլամն էր, այլ արևմտամետ այն պատկերացումը, որ արդիականացումը նույնական էր արևմտականացման հետ»¹³:

Հարկ է նշել, որ թուրքական գրականության մեջ, թեև գրեթե բոլոր քաղաքական, գաղափարական միտումներն այս կամ այն կերպ արտացոլվել են գրական կյանքում, իրենց ուրույն հանրույթը ձևավորելով, սակայն բեկումնային, տրոհիչ ու խորքային հակասություններ ի հայտ են եկել արևմտականացման/արդիականացման իրողության շուրջ: Մա զուտ գաղափարախոսական ընտրություն չէր, այլ արտացոլում էր նաև քաղաքակրթության, մշակույթի ընկալումը: Այս առումով վստահաբար կարելի է պնդել, որ թուրք գրեթե բոլոր արձակագիրներն ու բանաստեղծներն իրենց ստեղծագործական առանձնահատկությունների շրջանակներում արդիականացման, դրա առավելությունների և կամ հակառակը, դրանով պայմանավորված, օտարման, անարմատության, ճգնաժամի ու քաոսի, հին, ավանդական արժեքները կարևորելու անհրաժեշտության թեմատիկայով գրված երկեր ունեն: Ընդ որում՝ մի խումբ գրողների համար արևմտականացումը, որպես երկրի ներքին ճգնաժամը հաղթահարելու և արդիականացման պարտադիր անհրաժեշտություն է ընկալվել, քանի որ, ըստ իրենց, «ժամանակակից քաղաքակրթությունն ու ապագան Արևմուտքն ու արևմտյան արժեքներն էին»¹⁴: Մինչդեռ մյուս խմբի և, հատկապես, արդիականացման քննադատությամբ հանդես եկող իսլամամետ գրողների

¹³ Çayır K., Նշվ. աշխ., էջ 93:

¹⁴ Tosun N., Günümüz İslâmi Düşüncesinin Yazınsal Görünümleri, Türkiye’de İslâmcılık Düşüncesi ve Hareketi Sempozyum Tebliğleri, 2013, s. 622.

պնդմամբ՝ երկրի արվեստը պետք է հենվեր ոչ թե օտար ժողովուրդների փորձի, այլ սեփական երկրի, ժողովրդի պատմական առանձնահատկությունների վրա, նրա զգացմունքների ու ոգևորությունների թարգմանը պետք է լիներ: Այս գրողները շեշտում էին այն հանգամանքը, որ թուրք հասարակությանը ոչ հարիր, ներմուծված սկզբունքներն ու արմատներից հեռացումն (արևմտականացումը) անհատներին ու հասարակությանն անդեմացնում, զրկում էին ինքնությունից¹⁵: Ստեղծված իրավիճակից իբրև ելք էին առաջարկում տեղական գաղափարները՝ մասնավորապես իսլամիզմը: Ընդ որում՝ ընդգծվում էր, որ օսմանյան-թանգիմաթյան և սահմանադրական ու հանրապետական ժամանակաշրջանի իսլամիզմների տարբերակումն անընդունելի էր, քանի որ դրանցից յուրաքանչյուրը ժամանակակից Թուրքիայի իսլամիզմի կազմաբանական հիմքն էր¹⁶: Վերջինս այլևս մեկնաբանվում էր որպես հավատի համակարգ, որը կարգավորում էր ն՛ անձնական, ն՛ հասարակական կյանքը: Նշվում էր նաև, որ իսլամն ինքնին արդի միջավայրերին ու աշխարհներին հաղորդակից դառնալու հնարավորություն էր ընձեռնում: Վերջինս կիրարկվում էր մերօրյա իսլամի ու ավանդական իսլամական կենսաձևերի միջև տարբերությունների ցուցադրմամբ՝ ավանդականից դուրս գալու ճանապարհների և հոգևոր ու քաղաքական մակարդակներում արմատներին վերադարձի պարադոքսալ ձևով¹⁷: Ըստ այդմ՝ իսլամական վեպերի հեղինակների համար առաջնային խնդիր էր հստակեցնել, թե ինչ դիրքորոշում պիտի իսլամական հանրույթը որդեգրեր Արևմուտքի նկատմամբ, ինչպես նաև սահմանել Արևմուտքի դերն ու նշանա-

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Aytepe M., Doğuştan Günümüze İslamcılığın Türkiye Seyri: Bir Sınıflandırma Denemesi. Anemon 4/1, Haziran, 2016, s. 171.

¹⁷ Göle N., Modern Mahrem: Medeniyet ve Örtünme. İstanbul, 2016, s. 138.

կությունն իսլամական ինքնության կերտման գործընթացում: Այս նպատակով իսլամամետ գրողները համասեռ Արևմուտքի պատկեր էին մատուցում, որը երկու այլընտրանքային մոտեցմամբ էր դրսևորվում: Որոշ վեպերում, հատկապես քաղաքական պատումներում, հեղինակները դավադրության տեսության համատեքստում էին քննում Արևմուտքը՝ որպես մուսուլմանների հավերժ թշնամի, որը «...Թուրքիայի անկախության պատերազմից հետո մեր հայրենիքը յոթ մասի բաժանեց... իսկ այդ եվրոպացիները նրանց թռռներն են, ովքեր մուսուլմաններին մկլիթները լցնելով վառեցին: Բայց հիմա մեզ բարեկամ են ձևանում և մերոնց կողմից էլ բարեկամ են համարվում: Բայց ավաղ, բոլոր ժամանակներում՝ թե՛ Խաչակրաց արշավանքի, թե՛ մշակութային իմպերիալիզմի¹⁸ անվան տակ, անբարոյաբար, նորաձևության հիվանդությամբ հարձակվել են այս ազնվացեղ ազգի վրա»¹⁹: Որոշ վիպասաններ էլ, շեշտելով Արևմուտքի հոգևոր ընդգրկունությունը, համասեռ քրիստոնյա Արևմուտքի պատկեր էին ներկայացնում: Այս դեպքում ընդգծվում էր, որ իսլամամետ մտավորականությունն էր «սխալ ընկալել ու որդեգրել այն տեսակետը, թե Արևմուտքն աշխարհիկության և անաստվածության քաղաքակրթություն էր»: Այնինչ՝ Արևմուտքում ևս կրոնն ու քաղաքակրթությունը չէին հակասում իրար²⁰: Բայցևայնպես այս ստեղծագործություններում ևս Արևմուտքի

¹⁸ Մշակութային իմպերիալիզմի գաղափարն առաջ է եկել 1960-ականներին: Այն նշանակում է, որ ենթադրաբար ավելի քաղաքակիրթ հասարակության արժեքներն ու մշակույթը պարտադրվում են պակաս քաղաքակիրթ հասարակություններին՝ մի դեպքում նեոգաղութային հարաբերությունների, մյուս դեպքում՝ ժամանակակից գլոբալ հարաբերությունների պայմաններում: Հայտնի են նաև այլ անվանումներ. մեդիա իմպերիալիզմ, էլեկտրոնային գաղութատիրություն, կառուցվածքային իմպերիալիզմ, գաղափարաբանական իմպերիալիզմ և այլն: St u Tomlinson J., Cultural Imperialism: a critical introduction, London, 2002, pp. 2–3:

¹⁹ Katırcı Ş., նշվ. աշխ., էջ 120:

²⁰ Çayır K., նշվ. աշխ., էջ 73:

նկարագիրն ամբողջանում էր դավադրության համատեքստում, քանի որ «Եվրոպան իրենց (իմա՝ իսլամական աշխարհին) անաստվածության դեղատոմս է գրում, մինչդեռ ինքն իր եկեղեցիներն է պաշտպանում»²¹:

Այս իսլամական վեպերից յուրաքանչյուրը երկակի նշանակություն ուներ. մի կողմից իսլամական վեպերն իսլամական հատվածների համար հակառակորդին (Արևմուտքին) սահմանելու միջոց էին, մյուս կողմից կարևոր դեր էին խաղում ամուր հիմքերով «մենք» կոչով իսլամական հավաքական ինքնության գաղափարական սահմանները կառուցելու գործում²²: Այս տեսանկյունից, քաղաքական, գաղափարական ու մշակութային առումներով թշնամի հայտարարված Արևմուտքը յուրատեսակ հայելի դարձավ, որով թուրքերը հնարավորություն ստացան առերեսվել իրենք իրենց հետ: Իսլամական գրականությունն էլ իր հերթին հայելու գործառույթ կատարեց նաև Արևմուտքի համար²³:

«Ճշմարիտ ուղու» վեպ («Hidayet romanı») ընդհանրական անվանումը ստացած այս ստեղծագործությունները գրվում էին «զինվել թշնամու զենքով» կարգախոսով, և յուրացվում, զանգվածայնություն էին ձեռք բերում իսլամական թեզերն առաջ քաշելու, որպես ջիհադի միջոց ծառայեցվելու նկատառումով²⁴: Այս վեպերը ցույց էին տալիս այն ուղին (իսլամը), որ իդների իրականացում էր խոստանում, և կոչված էին ուղեկից լինել այդ ուղին անցնելիս²⁵: «Ճշմարիտ ուղու» գաղափարը հյուսվում էր ինքնանույնականաց-

²¹ Yıldız A., Boşluk, İstanbul. 2019, s. 163.

²² Chasteen A., Steward G., Shriver Th., Participant Narratives and Collective Identity in a Metaphysical Movement, *Sociological Spectrum* 22(1), 2002, p. 125.

²³ Lekesiz Ö., Siyasetten Edebiyata İslâmcılık. Türkiye’de İslâmcılık Düşüncesi ve Hareketi Sempozyum Tebliğleri, 2013, s. 635.

²⁴ Çayır K., նշվ. աշխ., էջ 31–33:

²⁵ Yavuz Y., Hidayet, Türkiye Diyanet Vakfı İslam Ansiklopedisi. 17, Ankara, 1998, s. 473.

ման և հակադիր «մենք» և «նրանք» («այլեր») (արևմտամետ, աշխարհիկ, ձախակողմյան, քրիստոնյա)²⁶ տարբերակման շուրջ: Իսլամական վեպերում «նրանք» բացասականացվում էին (այս հերոսները ցանկասեր էին, նյութապաշտ, անսկզբունքային, հոգևոր արժեքներից զուրկ, եսասեր, անպատասխանատու, նպատակագուրկ, ինքնատիրապետումը կորցրած, զայրույթի պոռթկումները չկառավարող), իսկ «մենք»-ի անդամ հանդիսացողները դրական լույսի ներքո էին պատկերվում (կարեկից էին, օգնության ձեռք մեկնող, մարդասեր, բարեմիտ, աստվածավախ ու բարեպաշտ): Իսլամական վեպերում «մենք»-ի անդամ այս իդեալականացված կերպարների առաքելությունը «բարոյական արժեքներից զուրկ» անձանց «դարձի հովիտ» տանելն էր²⁷: Այս «մենք» և «նրանք» մտահայեցողական հորինվածքի վրա հենվող դերային մոդելները վերցված էին իսլամի պատմական անցյալից: Մոջահեդ տղամարդիկ, տանը նստած բարոյականության մարմնացում կանայք, փնտրտուքի մեջ գտնվող ժամանակակից, դժբախտ, հետադիմությունն ապրող անհատները «ճշմարիտ ուղու» վեպերի նախատիպային կերպարներն էին: Այս «իդեալականացված» մուսուլման և «դեգեներացված» արևմտյան կերպարներն Արևելք-Արևմուտք բևեռների միջև դիալեկտիկ կապ հաստատելու միջոց էին: Բացի այդ՝ այս կերպարները վիպասանների համար յուրատեսակ հնար

²⁶ «Նրանք» («այլեր»-ի) մեջ իսլամական վեպերի հայտնի հեղինակ Շերիֆե Քաթրբըզըն, իսլամական շարժման 1980-ական թթ. հակասեմական ասպեկտը մատնանշելով, ներառում է նաև հրեաներին: Այս հանգամանքը, սակայն իսլամական բոլոր վեպերի վրա ընդհանրացնել հնարավոր չէ՝ թեև 1980-ական թթ. հակասեմականությունը մերձավորարևելյան իսլամական մտքի գիտակների աշխատությունների թարգմանությունների ու Պաղեստինի խնդրի հետ մեկտեղ ժամանակի իսլամիզմի օրակարգում էր: Çayır K., նշվ. աշխ., էջ 37:

²⁷ Karakoç Ş., İslamcılıktan muhafazakârlığa: roman türü üzerinden Türkiye’de islami kimliğin dönüşümü üzerine bir inceleme. İktisadi ve İdari Bilimler Fakültesi KAÜİİBFD, 14 (27), 2023, s. 391.

էին՝ արդի, աշխարհիկ և իսլամական պահպանողական հանրությունների մասին իրենց պատկերացումներն ու գնահատականները բարձրաձայնելու համար²⁸: Նշենք, որ նման շարադրանքը, որպես կանոն, զուրկ էր գեղագիտական նկրտումներից, կերպարները կա՛մ ուտոպիայի, կա՛մ դիստոպիայի (հակաուտոպիա) արդյունք էին: Մի կարևոր հանգամանք ևս՝ տեքստերի լեզուն հակազդական էր, կաղապարային ու կտրական, իսկ Արևելք-Արևմուտք քննումն ու քննադատությունը վերլուծական չէր, խորհելու տեղիք չէր տալիս, այլ կոպիտ, մակերեսային, դիդակտիկ էր: Այս վեպերում անտեսվում էին կյանքի, մարդու բազմաշերտությունը, համակողմանիությունը, դինամիկությունը, ինչպես նաև բարդ, ճկուն, կենդանի ասպեկտները: Փոխարենը կյանքն ու հասարակությունը միօրինակ էին, նախասիրությունները՝ բացառված:

Այս ստեղծագործությունների առանցքային ընդհանրական միտքն այն էր, որ իսլամական աշխարհն ու իսլամական ավանդականը չէին կարող հարաբերվել ու հաշտության եզրեր գտնել Արևմուտքի ու արևմտյան արդիության հետ: Ավելին՝ իսլամն անգամ անհամեմատելի էր «Արևմուտքի նեխած, շինծու կրոնի հետ»²⁹: Հետևաբար իսլամական գրողներն իրենց գեղարվեստական երևակայության ազատ նախաձեռնությամբ ընթերցողին փորձում էին ընդունելի դարձնել այն միտքը, որ արդիականացումը/արևմտականացումը բարոյական անկում էր, և ոչ թե բարձր քաղաքակրթության երաշխիք. քանզի արդիականացման/արևմտականացման արդյունքում ի հայտ էր եկել «...մի հասարակություն, որտեղ քաղաքակրթության անվան տակ գերակա է անքաղաքավարությունը,

²⁸ Ulutaş E., Ultra Politik Hidayetten Post Politik Aşka: İslami Edebi Metinlerdeki Epistemik Kopuş, İslâm Düşüncesinde Eleştiri Kültürü ve Tahammül Ahlâki, Milletlerarası Tartışmalı İlmî Toplantı, Cilt 1 (Nisan 2019), s. 476.

²⁹ Katırcı Ş., նշվ. աշխ., էջ 72:

իսկ գրականություն կոչվածի փոխարեն՝ անամոթությունը...»³⁰, ինչպես նաև «մի մտածելակերպ, որը պարզևատրում է հասարակաց տների կավատներին, քանի որ, իբրև թե, շատ հարկ են վճարում»³¹: Արդիականացման/արևմտականացման այս սխալ փորձառությունը և՛ համակարգային, և՛ մշակութային առումով հնարավոր էր հաղթահարել միայն իսլամական մշակութայնացմամբ կամ վերամշակութայնացմամբ, քանզի «Արևմուտքի դեմ... Բուդդիզմի, բրահմանիզմի, սինտոիզմի, կոնֆուցիականության ու տաոիզմի նման ասիական մեծ մշակույթները հետ են նահանջել... Հուդայականությունն ու քրիստոնեությունն արդիականացվել են ու նպաստում են ժամանակակից վերածնունդներին: Իսկ իսլամը... իր չաղավաղված, ճշմարիտ աղբյուրներով դեռևս միակ հզոր այլընտրանքն է»³²: Այս աղբյուրների ժամանակաշրջանն իսլամամետ գրողները համարում էին «Ոսկե դարը» (Asr-ı Saadet)³³ և դերային մոդելներ առաջարկում այս ժամանակաշրջանից: Հարկ է նշել, որ «Ոսկե դարի» շեշտադրմամբ իսլամիզմը սովորույթի վերածելու միտումը ոչ այլ ինչ էր, քան իրականության փոխարինում՝ սիմուլյակր, երբ գոյություն ունեցող իրականությունը կորչում էր նոր իրականությունում, իսկ ստեղծված, հորինված իրականությունը դառնում էր միակ իրականը³⁴: «Ոսկե դարը» նաև պատմական այն հանգրվանն էր, որի շուրջ էին համախմբվում բոլոր մուսուլմանները՝ անկախ բնակության վայրից, համընդհանուր ակունք էր, որից պետք է բխեին բոլոր մուսուլմանների գործողությունները, և հավաքական նպատակ էր, որին պետք է ուղղվեին բոլոր մուսուլմանների գոր-

³⁰ Yıldız A., նշվ. աշխ., էջ 286:

³¹ Katırcı, Ş., նշվ. աշխ., էջ 131:

³² Bulaç A., *Din ve Modernizm*, İstanbul, 2006, s. 23–24.

³³ Նաև «երջանկության ժամանակաշրջան» (Mutluluk Dönemi). իսլամական գրականության մեջ այսպես են կոչվում Մուհամմեդ մարգարեի կենդանության տարիները:

³⁴ Бодрийяр Ж., *Симулякры и симуляция*. М., 2003, с. 5.

ծողությունները³⁵: Նման մոտեցումը հիմնավորվում էր նրանով, որ իսլամական անցյալը ներկայի հարացույցն էր, իսկ իրադարձությունները կրկնվում էին՝ անկախ պատմականությունից³⁶: Բացի այդ՝ «Ոսկե դարը» իսլամական նոր միֆ էր, երազանք էր, որը մի կողմից պետք է ազատեր ավանդական իսլամի բեռից, մյուս կողմից՝ այլընտրանք դառնար արևմտյան արդիականացմանը³⁷: Սա «պայքարի ձև էր»³⁸, որի նպատակն էր ստեղծել հավաքական «մենք»-ի վրա հիմնված իդեալական հավաքական իսլամական հասարակություն (առանց դասակարգերի հասարակության հայեցակարգի նման)³⁹: Այս հավաքական հասարակությունը կառուցվում էր տարբեր ժամանակային ընկալումներ, իրադարձություններ, երկխոսային հարաբերություններ պարունակող պատումների միջոցով, որոնք սնում էին այն⁴⁰:

Իսլամական վեպերում ինքնության ձևավորման և շարունակականության տեսանկյունից հիմնաքարային երաշխիքներ էին ընտանիքը, կրթությունը և կրոնական խորհրդանիշները: Այսպես՝ ընտանիքը կրոնական իմացության ու աղոթքի կատարման ձևի մասին գիտելիքի բնական դպրոց էր, որի միջոցով կրոնական ինքնության ձևավորումը սկսվում էր դեռ վաղ տարիքում: Թեև ավանդական հասարակությունից մոդեռն հասարակության անցման և շարունակականության համար ընտանիքը ուժեղ գործոն էր, սա-

³⁵ Erkol Ç., Çalışkan U., 1960'lardan 28 Şubat'a Cemaati Romanlarla İcat etmek: Siyasal İslamın Popüler Tezahürleri, «Moment» dergisi, 3(1), 2016, s. 30.

³⁶ Al-Azmeh A., *Islams and Modernities*. London, p. 56.

³⁷ Göle N., նշվ. աշխ., էջ 138.

³⁸ Macit M., «Romantik İslam'dan İslami Romantizme»: İslamcı Popüler Kültürün Değişen Panoraması, *İlahiyat Tetkikleri Dergisi*, 51, Haziran 2019, s. 463.

³⁹ Göle N., նշվ. աշխ., էջ 138, 143:

⁴⁰ Somers M., Gibson G., *Reclaiming the Epistemological Other: Narrative and the Social Construction of Reality*, in *Social Theory and the Politics of Identity*, ed. Craig Calhoun, Cambridge: Blackwell, 1994, pp. 38–39.

կայն արդի պայմաններում միայն ընտանիքի միջոցով ու ազդեցությամբ ձևավորված իսլամական ինքնության պահպանումը բավական բարդ էր: Իբրև պատճառ՝ իսլամական վեպերում նշվում էր այն հանգամանքը, որ նորի գրավչությունը կա՛մ ամբողջությամբ ձևափոխում, հարստացնում էր իսլամական ինքնությունը, կա՛մ էլ լիովին վերացնում այն:

Սոցիալականացվող անհատի ինքնության վերաամրապնդումը, քննումն ու կերպափոխումն իսլամական վեպերում հատկապես կրթական միջավայրում և կրթության միջոցով էր տեղի ունենում: Ընդ որում՝ այս տեքստերում իսլամական կրթությունն ստանալու կարևորությունն ու գերադասելիությունը շեշտվում էր օտար և «իմամ-հաթիփ» կրոնական դպրոցների համեմատությամբ ու հակադրությամբ: Հատկապես նշվում էր, որ օտար քոլեջները, որոնք իսլամական պահպանողական հատվածն ընկալում էր «հայրենիքի կրծքում մխրճված միսիոներական դաշույն» բացասական որակմամբ, դեռևս օսմանյան ժամանակաշրջանից լավ կրթություն ստանալու նպատակով այստեղ ուսանածների ինքնության վրա խորը հետքեր էին թողնում, մինչդեռ ««իմամ-հաթիփ» կրոնական դպրոցները դաստիարակում էին «Մակարիտսի⁴¹ նման կրոնավորներ», որոնց մասին ամբողջ աշխարհն էր լսելու»⁴²:

«Ճշմարիտ ուղու» վեպերում երիտասարդ, քաղաքաբնակ և կիրթ իսլամականների, ինչպես նաև նոր դարձի եկածների՝ իսլամական ինքնության ու կենսաձևի արտահայտությունը խորհրդա-

⁴¹ Խոսքը Կիպրոսի պետական, քաղաքական և կրոնական գործիչ Մակարիտոս III-ի մասին է, որը 1950 թ. ժողովրդական քվեարկությամբ ընտրվել է արքեպիսկոպոս և էթնարխիս (ժողովրդի առաջնորդ) հունական համայնքի խորհրդի նախագահ: 1959 թ. ընտրվել է Կիպրոսի նախագահ: Մակարիտոս III-ը հանդես է եկել Կիպրոսի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության, ՄԱԿ-ի որոշումների համաձայն Կիպրոսի հարցի լուծման օգտին:

⁴² Bulut R., Türkiye’de islami kimliğin oluşumu ve değişimini edebi metinlerden okumak. Uluslararası Sosyal Araştırmalar Dergisi, 10 (48), 2017, s. 397.

նիշների միջոցով էր տեղի ունենում: Այս խորհրդանիշները «մշակութային կոդերի գործառույթ» էին իրականացնում և կրոնական ինքնությունը համակցում քաղաքական կողմնորոշման հետ⁴³: Սրանցից ամենակարևորը, թերևս, այն էր, որ նոր դարձի եկած երիտասարդները, նախևառաջ, հրաժարվում էին իրենց հին անուններից ու նոր, իսլամի խորհրդանիշ «Ոսկե դարի» ժամանակաշրջանը հիշեցնող անուններ նախընտրում: Հատկապես կանայք ընտրում էին այնպիսի անուններ (Հաթիջե, Ֆաթմա, Սյումեյյե, Այշե ևն), որոնք նաև «Ոսկե դարի» ժամանակաշրջանում աչքի ընկած կանանց անուններ էին, և այդ կանայք նաև իսլամական կենսակերպ վարելու մոդել էին դառնում իրենց համար: Այսինքն՝ կարելի է փաստել, որ 1980-ական թթ. իսլամական հաբիտուսն իսլամական շրջանակների բնորոշման համար օգտագործվող ավանդական աջ-պահպանողական-ազգայնական եռամիասնությունից բացի նաև նոր ընկալման, մտածողության և գործողության սխեմաների ձևով անհատական և համայնական պրակտիկա էր առաջարկում՝ երաշխավորելով դրանց նույնականությունը և կայունությունը ժամանակի մեջ: Այսպես՝ իբրև մուսուլման կանանց ուրույնություն էր սահմանվում գլխաշորը, որը թուրք սոցիոլոգ Ն. Գյուլեի բնորոշմամբ իսլամական ինքնությունն այլ աշխարհիկ ինքնություններից տարբերակող «ամենահզոր մետա-պոլիտիկ խորհրդանիշն էր», իսկ տղամարդկանց համար՝ մորուքը, որոնք նաև աշխարհիկ կյանքի սովորույթների այլընտրանքային խորհրդանիշներ էին⁴⁴:

⁴³ Bulut R., նշխ. աշխ., էջ 398:

⁴⁴ Ն. Գյուլեն հավելում է նաև, որ գլխաշորն ու մորուքը սեռերի տարբերակումների և նրանց միջև տարբերությունների խորհրդանիշներ են. ինչպես գլխաշորը քողարկված կանացիության խորհրդանիշն է, այնպես էլ մորուքն առնականության ցուցադրության խորհրդանիշը: Göle N., նշխ. աշխ., էջ 126:

Իսլամական վեպերում շեշտվում էր այն հանգամանքը, որ իսլամական ինքնությունն ու այս ինքնության տարբեր տարրերը բոլոր առումներով հավաքական ներդաշնակության մեջ էին: Այնինչ, իրականում, իսլամական ինքնության տարբերություններն անտեսվում էին՝ վեր դասելով հավաքական իդեալները⁴⁵: Հատկանշական է, որ 1990-ական թվականներից գրվեցին վեպեր, որոնց կին հերոսները դեմ էին արտահայտվում այս հավաքական իսլամական ինքնությանը՝ պնդելով, որ իրենց արտաքին տեսքի պատճառով ստորացվողները, դուրս մղվողներն ու անարգվողները հենց իրենք էին: Այսինքն՝ այդ «մենք» հասկացությունը չէր կարողանում կանխել կանանց օտարումը: Դեռ ավելին՝ այս հասկացությունը կանանց ուսերին էր դնում «մարտիկ, պարտիզան լինելու անհրաժեշտությունը, աշխարհը շտկելու, ամեն ինչ արմատապես փոխելու պատերազմի պատասխանատվությունը»⁴⁶: Վեպերի կին կերպարները պարտադրված այս դերի նկատմամբ իրենց ըմբոստությունն ու անհամաձայնությունն էին արտահայտում, ընդգծելով, որ «իրենք փոքր են, թույլ են, կին են: Ընդամենը՝ կին»⁴⁷: Իսկ երբ 1990-ական թթ. սկսած Թուրքիայում իսլամական շարժումը սկսեց փոխել նախորդ տասնամյակների սերտ, այլացման և օտարացման վրա հենված լեզուն և ավելի պյուրալիստական ու անհատականացված պատկեր ի ցույց դրեց, փոխվեցին նաև «ճշմարիտ ուղու» վեպերի բնույթը, շեշտադրումներն ու խնդիրները: Այս վեպերում արդեն քննադատվում էր մարտնչող իսլամական հոետորաբանությունը, ինչպես նաև փորձ էր արվում հատել «մենք» և «նրանք» բաժանման վրա հիմնված հավաքական ինքնության սահմանները: Դրանք հարցականի տակ էին դնում «ճշմարիտ ուղու»

⁴⁵ Çayır K., նշխ. աշխ., էջ 121:

⁴⁶ Efe M., Mızraksız İlmihal. İstanbul, 1993, s. 50.

⁴⁷ Նույն տեղում, էջ 51:

վեպերի առաջ քաշած իսլամական արժեքները և վերաձևակերպում նոր ժամանակների փոփոխվող հասարակական միջավայրում իսլամական ինքնությունը: Այս նոր իսլամական ինքնությունը թեև նույնպես գաղափարաքարոզչական բովանդակություն ուներ, բայց այն այլևս դեմ չէր արդի դարաշրջանին, հակառակը՝ արդի դարաշրջանը կամ քաղաքակրթություն հասկացությունը փորձում էր ծածկել իսլամական շղարշով կամ ժամանակակից կենսակերպի ու հավատքի միջև առկա հակասություններն ու բախումները մեկտեղել իր կառուցվածքի մեջ: Այս փոփոխությունը պայմանավորված էր թուրքական հասարակության մտածելակերպի ու ապրելակերպի նորմերով, որոնք ինքնության ձևավորման գոյաբանական հիմքերի շարքում առանձնահատուկ տեղ են զբաղեցնում: Այս նորմերի էքզիստենցիալ նշանակության հիմնավորումը ստեղծում էր տվյալ հասարակության արժեքային կողմնորոշման չափանիշները: Այդ արժեքները, ամենայն հավանականությամբ, գործում էին առավելապես համոզմունքի մակարդակում և դրսևորվում էին գաղափարախոսության և պրակտիկ կենսագործունեության տեսքով: Հետևաբար՝ մի սերնդի կրոնական ինքնությունը, որ չէր ցանկանում խախտել իր հոգևոր և մարմնական հարմարավետությունը, ինքնության մյուս տեսակների նկատմամբ գերիշխող չէր: Այս նոր ինքնությունը, ճանաչողությունն ու արժեքաբանությունը հիմնված չէին ջիհադական պայքար մղելու ու ազգային պատկանելությամբ այլընտրանքային մոդեռն ստեղծելու վրա: Իսլամական վեպերի նոր կերպարները բացահայտ քննադատում էին հասարակությանը զանգվածային դարձի բերելու մղումը և այլևս չէին ցանկանում իսլամիզմի պերճախոս պնդումների կողմը լինել, քանի որ ինչպես նշում է գրական հերոսներից մեկը՝ «մարտավարություններ, ռազմավարություններ, դեղատոմսեր հնարելուց արդեն կուշտ էինք... Այդ եղանամուշտակը հանել էինք

ուզում»⁴⁸: Այս հերոսներն անհատներ էին, որ հոգնել էին «ուրիշների հավատը փրկելուց» և ցանկանում էին պարզապես «շարքային մեկը» լինել⁴⁹: Ընդգծենք, որ շարքային դառնալու ցանկությունն ինչպես իսլամական երիտասարդների, այնպես էլ «Ազգային տեսակետի» շապիկը հանած երիտասարդ սերնդի քաղաքական գործիչների՝ անհատականացման ձգտումների դրսևորում էր, ինչը գրական հերոսներից մեկի շուրթերով այսպես է մեկնաբանվում. «Երբ մեռնեմ, Ալլահն ինձ չի հարցնի, թե «արդյո՞ք իսլամացրիր երկիրը», փոխարենը հարցնելու է՝ «ի՞նչ ես արել սեփական եսդ պահելու համար»: Ես կարծում եմ, որ պատասխանատու եմ միայն իմ սեփական եսի համար»⁵⁰: Հետաքրքրական է, որ վերջին ժամանակներս «կրոնի անհատականացման» միտումը ոչ միայն Թուրքիայի, այլև մի շարք այլ հասարակությունների գրական բազմաթիվ երկերում է նկատվում, ինչը, սակայն, միշտ չէ, որ կրոնի՝ ավելի լիբերալ մեկնաբանություն է ենթադրում:

Այսպիսով՝ յուրաքանչյուր գրականություն իր ուրույն քաղաքականությունն ունի, սակայն իսլամական գրականության քաղաքականությունը հենց քաղաքական իսլամով է պայմանավորված: Սակայն եթե «ճշմարիտ ուղու» վեպերը մինչև ԱԶԿ-ի իշխանության գալն ընդդիմադիր դիրքերից էին հանդես գալիս, ապա իսլամական արմատներով կուսակցության իշխանության գալն իսլամական վեպերի համար հակասական իրավիճակ առաջացրեց. մինչ փորձ էր արվում համակարգի դեմ համախմբել, զարգացնել «իսլամական ընդդիմություն», իբրև իշխանություն, իսլամական կուսակցության իրողությունն ի չիք դարձրեց այս վեպերի սնուցիչ «թշնամի աշխարհիկ իշխանություն» թեզը: Բացի այդ՝ հատկապես

⁴⁸ Նույն տեղում, էջ 167:

⁴⁹ Çayır K., նշվ. աշխ., էջ 170:

⁵⁰ Sever M., Türban ve Kariyer: evden işe, bizden bireye. İstanbul, 2006, s. 226.

իսլամական ընդդիմության ամենակարևոր դրոշակի՝ գլխաշորի խնդրի «լուծմամբ» այս վեպերի մոտ կեսը գրկվեց նաև գլխաշորի թեման շահարկելու հնարավորությունից»⁵¹: Չնայած այս իրողություններին՝ «Ճշմարիտ ուղու» վեպերը Թուրքիայում դեռևս տպագրության ամենամեծ սեզմենտն են կազմում, և մեծապես դրանցով է պայմանավորված Թուրքիայի հրատարակչությունների խոշորացումը (օրինակ՝ Timaş, Nesil): Իսլամական վեպերն ու դրանց հեղինակները, որոնց շարքերը համալրվում են նոր սերնդի գրողներով (օրինակ՝ Մերվե Օզջանը, ում ստեղծագործություններն այսօր բեսթսելլերներ են), շարունակում են հետաքրքրություն վայելել թուրքական հասարակության լայն շրջանակների կողմից: Այլ կերպ ասած՝ «Ճշմարիտ ուղու» վեպերն իրենց դարը դեռ չեն ապրել: Ընդհակառակը՝ պետությունն ակտիվ նախաձեռնություններով է հանդես գալիս իսլամական գրականությունը տարածելու համար: Մասնավորապես՝ Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը գլխավորապես «Վաքըֆ բանկ» (Vakıf Bank), «Ալբայրաք ընկերություն» (Albayrak Grubu) և «Թուրքուազ ընկերություն» (Turkuaz Grubu) կազմակերպություններին հանձնարարել է «ազգային և տեղական ուղեգծով, դրական» հրատարակչություններ հիմնել, որպեսզի «նոր սերունդը չկարդա «Վատ տղա» («Kötü Çocuk»), «Սրիկա» («Piç») և նման այլ գրքեր ու «վնասատու թարգմանություններ»»⁵²: Այսինքն՝ կրոնը շարունակում է մնալ ժամանակակից թուրքական գրականության օրակարգում: Եվ ավելին՝ նոր սերունդը պետության միջնորդությամբ և ուղղորդմամբ «դաս-

⁵¹ Uğur C., Hidayete eremeyen romanlar. Bir Gün, Nisan, 27, 2015, <https://www.birgun.net/haber/hidayete-eremeyen-romanlar-78076> (մուտքի ամսաթիվ՝ 15.04.2024).

⁵² Güldoğan A., Erdoğan İslami yayınevlerinden ne istedi, OdaTV, Ekim 30, 2017. <https://www.odatv.com/yazarlar/asiye-guldogan/erdogan-islami-yayinevlerinden-ne-istedi-126339> (մուտքի ամսաթիվ՝ 15.04.2024).

տիարակվելու է» ճիշտ արժեքներ քարոզող իսլամական գրականության միջոցով:

GENERAL CHARACTERISATION OF THE CONTENT STRUCTURE OF ISLAMIC IDENTITY IN TURKISH ISLAMIC FICTION

*Anushik Martirosyan*⁵³

Islamic novels provide a unique key to comprehend the role, significance, historical profile, and evolution of Islamic identity within Turkey's political system. These literary works also provide an opportunity to grasp the Islamic movement's struggle for dominance, political rhetoric, and practices based on the emerging Islamic classes. The primary objective of these Islamic novels was to establish an alternative Islamic model, an Islamic society based on a collective «we», by defining and justifying the incompatibility of Islam and modernization. Consequently, it was necessary to confront «them» («the other») first before turning to the source of self-knowledge and self-expression, the «Golden Age». However, the definition of Islamic identity as interpreted by the «Golden Age» has changed since the 1990s, when texts were written criticizing the monolithic structure of Islamic identity, isolation from the outside world, and the androcentric structure of Islamism.

Keywords: *Islam, identity, «Golden Age», modernization, Turkish literature, the West, incompatibility, conversion.*

⁵³ Anushik Martirosyan is an Associate Professor at the Department of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: anushik.martirosyan@ysu.am, ORCID 0009-0009-7774-5223.

ОБЩАЯ ХАРАКТЕРИСТИКА СОДЕРЖАТЕЛЬНОЙ СТРУКТУРЫ ИСЛАМСКОЙ ИДЕНТИЧНОСТИ В ТУРЕЦКИХ ИСЛАМСКИХ РОМАНАХ

Анушик Мартиросян⁵⁴

Исламские романы являются уникальным ключом к пониманию роли, веса, исторического профиля и изменений исламской идентичности в политической системе Турции. Эти литературные произведения также дают возможность понять борьбу за господство исламского движения, политическую риторику и практику, основанную на появляющихся исламских классах. Главной целью этих исламских романов было создание альтернативной исламской модели исламского общества, основанного на коллективном «мы», путем определения и оправдания несовместимости ислама и модернизации. Следовательно, надо было сначала противостоять «им» («другим»), а потом уже обращаться к источнику самопознания, самовыражения, «Золотому веку». Однако определение исламской идентичности в трактовке «Золотого века» изменилось с 1990-х годов, когда были написаны тексты, критикующие монолитную структуру исламской идентичности, изоляцию от внешнего мира, а также андроцентричную структуру исламизма.

Ключевые слова: *ислам, идентичность, «Золотой век», модернизация, турецкая литература, Запад, несовместимость, обращение.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ոսկանյան Ա., Ազգային ինքնության հիմնահարցը և մտավորականության կոչումը, Ինքնություն 1, 1995:
2. Бодрийяр Ж., Симулякры и симуляция. М., 2003.
3. Açıkel F., “Kutsal mazlumluğun” psikopatolojisi, Toplum ve Bilim 70, 1996, 153-198.
4. Al-Azmeh Aziz, *Islams and Modernities*. London, 1993.
5. Aytepe M., *Doğuşundan Günümüze İslamcılığın Türkiye Seyri: Bir Sınıflandırma Denemesi*, Anemon 4/1, Haziran, 2016.

⁵⁴ Анушик Мартиросян – к.ф.н., доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: anushik.martirosyan@ysu.am, ORCID 0009-0009-7774-5223.

6. Bulaç Ali, Din ve Modernizm. İstanbul: Yeni Akademi Yayınları, 2006.
7. Bulut R., “Türkiye’de islami kimliğin oluşumu ve değişimini edebi metinlerden okumak. Uluslararası Sosyal Araştırmalar Dergisi, Cilt: 10, Sayı: 48, 2017.
8. Çayır K., Türkiye’de İslâmcılık ve İslami Edebiyat Toplu Hidayet Söyleminden Yeni Bireysel Müslümanlıklara. İstanbul, 2008.
9. Chasteen A., Steward G., Shriver Th., Participant Narratives and Collective Identity in a Metaphysical Movement." Sociological Spectrum 22(1), 2002.
10. Efe M., Mızraksız İlmihal. İstanbul, 1993.
11. Erkol Ç., Çalışkan U., 1960’ lardan 28 Şubat’a Cemaati Romanlarla İcat etmek: Siyasal İslâmın Popüler Tezahürleri. “Moment” dergisi, 3(1), 2016.
12. Göle N., Authoritarian Secularism and Islamist Politics: The Case of Turkey. Civil Society in the Middle East, Vol. 2, 1996, 17–43.
13. Göle N., Modern Mahrem: Medeniyet ve Örtünme. İstanbul, 2016.
14. Göle N., Secularism and Islamism in Turkey: The Making of Elites and Counter-Elites. Middle East Journal, Vol. 51, N 1, 1997, 46–58.
15. Güldoğan A., Erdoğan İslami yayınevlerinden ne istedi, OdaTV, Ekim 30, 2017. <https://www.odatv.com/yazarlar/asiye-guldogan/erdogan-islami-yayinevlerinden-ne-istedi-126339> (մուտքի աւսարիվ՝ 15.04.2024).
16. Karakoç Ş., İslâmcılıktan muhafazakârlığa: roman türü üzerinden Türkiye’de islami kimliğin dönüşümü üzerine bir inceleme. İktisadi ve İdari Bilimler Fakültesi KAÜİİBFD, Cilt 14, Sayı 27, 2023, 377–413.
17. Katırcı Ş., Müslüman kadının adı var. İstanbul, 1989.
18. Lekesiz Ö., Siyasetten Edebiyata İslâmcılık. Türkiye’de İslâmcılık Düşüncesi ve Hareketi Sempozyum Tebliğleri, 2013, 633–638.
19. Macit M., “Romantik İslâm’dan İslami Romantizme”: İslamcı Popüler Kültürün Değişen Panoraması. İlahiyat Tetkikleri Dergisi, 51, Haziran, 2019, 457-478.
20. Mol H., The Sacralization of Identity. Current Research in Sociology, ed. Margaret Archer, Toronto, August 18-24, 1974.
21. <https://www.degruyter.com/document/doi/10.1515/9783111681030-011/html> (մուտքի աւսարիվ՝ 14.05.2024).
22. Sever M., Türban ve Kariyer: evden işe, bizden bireye, İstanbul, 2006.

23. Somers M., Gibson G., "Reclaiming the Epistemological 'Other': Narrative and the Social Construction of Reality," in *Social Theory and the Politics of Identity*, ed. Craig Calhoun, Cambridge: Blackwell, 1994, 37–99.
24. Tanlı B., Gültekingil M., *Modern Türkiye’de siyasi düşünce: islamcılık*. Cilt 6, İstanbul, 2005.
25. Tomlinson J., *Cultural Imperialism: a critical introduction*, London, 2002.
26. Tosun N., *Günümüz İslâmi Düşüncesinin Yazınsal Görünümleri*, Türkiye’de İslâmcılık Düşüncesi ve Hareketi Sempozyum Tebliğleri, 2013, 691–632.
27. Türkeş Ö., *Toplum ve Kimlik Kurma Kılavuzu Olarak Roman” in Modern Türkiye’de Siyasi Düşünce: Dönemler ve Zihniyetler*, Cilt 9, ed. Tanıl Bora, Murat Gültekingil, İstanbul, 2009, 844–870.
28. Uğur C., “Hidayete eremeyen” romanlar, *Bir Gün*, Nisan 27, 2015, <https://www.birgun.net/haber/hidayete-eremeyen-romanlar-78076> (մուտքի աւուարիւմը՝ 24.05.2023).
29. Ulutaş E., *Ultra Politik Hidayetten Post Politik Aşka: İslami Edebi Metinlerdeki Epistemik Kopuş, İslâm Düşüncesinde Eleştiri Kültürü ve Tahammül Ahlâki*, *Milletlerarası Tartışmalı İlmî Toplantı*, Cilt 1, Nisan 2019, 471–486.
30. Yavuz Y., *Hidayet*, Türkiye Diyanet Vakfı İslam Ansiklopedisi 17, Ankara, 1998.
31. Yıldız A., *Boşluk*, İstanbul, 2019.

**ԹՈՒՐԹ-ՀՈՒՆԱԿԱՆ «ԲԱՅ ԳԱՂՏՆԻՔ».
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ
Ջ. ԹԱՆԻ «ԿԱՐՈՏ» ՎԵՊՈՒՄ
Նաիրա Պողոսյան¹**

DOI 10.46991/jos.2024.25.1.128

20-րդ դարի վերջին 21-րդ դարի սկզբին թուրք գրականության մեջ տեղի ունեցող կարևորագույն փոփոխություններից էին՝ մի կողմից կին-գրողների աննախադեպ ակտիվությունը, մյուս կողմից էլ՝ բարձր գրականության և զանգվածային գրականության (վարդագույն վեպեր, դետեկտիվներ) միջև սահմանի յուրօրինակ լղոզումն ու բնեռայնացման նվազումը, յուրօրինակ միջին դասի գրականության ի հայտ գալը: Նմանատիպ վեպերում պոեմատային ստանդարտ զարգացումներին զուգահեռ բարձրաձայնվում են բավական անսպասելի թեմաներ, այդ թվում անդրադարձներ թուրքական պատմության մինչ օրս քիչ լուսաբանված էջերին, ինչպիսին է թուրք-հունական բնակչության փոխանակումը: Մույն հողվածում անդրադարձ է կատարվում ժամանակակից կին-գրող Ջանան Թանի «Կարոտ» վեպում բնակչության փոխանակման ներկայացման առանձնահատկություններին:

Բանալի բառեր՝ բնակչության փոխանակում, հույներ, թուրքեր, օտարություն, կարոտ, նոստալգիա:

Հույների և Հունաստանի հետ կապված մի շարք թեմաներ, որոնց շարքում առաջնայիններից է 1923 թ. հունվարի 30-ին Լոզանում ստորագրված համաձայնագրով նախատեսված բնակչության

¹ Նաիրա Պողոսյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ է, բանասիրական գիտությունների թեկնածու, էլ. փոստ՝ nairapoghosyan@ysu.am, ORCID՝ 0000-0003-3682-328X:

փոխանակումը², տարիներ շարունակ գրեթե չեն արծարծվել Թուրքիայում՝ ոչ մուսուլմանների և առհասարակ երկրում բնակվող բոլոր փոքրամասնությունների խնդիրների մեծ մասի նման դառնալով «բաց գաղտնիք»: Այդ համաձայնագրի շրջանակներում մոտ մեկուկես միլիոն հույն ստիպված եղավ հեռանալ Թուրքիայից և մոտ հինգ հարյուր հազար թուրք լքեց Հունաստանը՝ բացառություն արվեց միայն ստամբուլաբնակ հույների և Թրակիայի թուրքերի համար: Տեղափոխությունից խուսափած հույների և թուրքերի դրությունը բավական տարբեր էր: Հունական իշխանությունների որոշակիորեն զգուշավոր և ոչ շատ բարյացկամ վերաբերմունքին հակառակ Թրակիայի մուսուլմանները կարողացան գոյատևել որպես առանձին համայնք, մինչդեռ թուրքական քաղաքականության արդյունքում Պոլսո հունական համայնքը այժմ չի գերազանցում 2000 մարդը^{3 4}:

Բնակչության փոխանակումը մեծ սթրես էր հատկապես այն մարդկանց համար, որոնք, ապրելով Թուրքիայի կենտրոնական նահանգներում, մեծ հաշվով առաջին համաշխարհային պատերազմի հետ ուղղակի կապ չէին ունեցել: Ոչ միայն քաղաքական, այլև սոցիալ-մշակութային տեսանկյունից այս երևույթն իսկական աղետի էր նման: Արհեստների և առևտրի ոլորտում ավանդաբար մեծ ներկայացվածություն ունեցող հույների հեռանալուց հետո

² Այս մասին մանրամասն տե՛ս օրինակ Blanchard R. The Exchange of Populations between Greece and Turkey. *Geographical Review*, 15(3), 1925, pp. 449–456. <https://doi.org/10.2307/208566>; ինչպես նաև Arı K., Büyük Mübadele-Türkiye'ye Zorunlu Göç (1923–1925), Ankara, 2021:

³ Մանրամասն տե՛ս Zürcher E.-J., Greek and Turkish Refugees and Deportees 1912–1924, p. 6 <http://www.transanatolie.com/english/turkey/turks/Ottomans/ejz18.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 24.05.2023).

⁴ Stuckey L., Narrating the Greco-Turkish Population Exchange: Stories about Belonging and Otherness in the Nation, pp. 53–60.

<https://dukespace.lib.duke.edu/dspace/bitstream/handle/10161/1282/Thesis%20LAS%20with%20corrections.pdf?sequence=3&isAllowed=y> (մուտքի ամսաթիվ՝ 24.05.2023).

առաջացած տնտեսական բացը Հունաստանից եկած թուրքերը, որոնք հիմնականում հաստատվեցին գյուղական բնակավայրերում, բացարձակապես չկարողացան լրացնել⁵: Ավելին, ինչպես ընդունված չէր խոսել հույների արտաքսման հետ կապված իրողությունների մասին, այնպես էլ Հունաստանից Թուրքիա եկած վերաբնակիչների խնդիրները դուրս էին պետական հոգածությունից, չէր խրախուսվում ոչ միայն հունարեն խոսելը, այլ անգամ Հունաստանի հետ կապված անցյալի մասին հիշատակելը:

1980-ականներին թուրք-հունական հարաբերություններում նկատվող հարաբերական ջերմացման համատեքստում այս թեմայի շուրջ որոշակի ակտիվություն սկսեց, ինչին նպաստեց նաև Թուրքիայում ոչ մուսուլմաններին վերաբերող տարբերակների թուլացումը: Բնակչության փոխանակման երևույթի նկատմամբ հետազոտողների հետաքրքրության աճին նպաստեց նաև մոտավորապես նույն ժամանակահատվածում՝ 1980-ականների կեսերից, միգրացիաների և միգրանտների վերաբերյալ ուսումնասիրությունների ծավալումը աշխարհում, հատկապես որ բնակչության փոխանակումը կարող է համարվել միգրացիայի բացարձակապես ոչ ստանդարտ ձև: Արդյունքում թուրք-հունական բնակչության փոխանակման թեման 1990-ականներից հայտնվեց ոչ միայն հումանիտար գիտակարգերում աշխատող գիտնականների, այլև թուրք գրողների ուշադրության կենտրոնում: Բնակչության փոխանակման թեմայով գրված առաջին վեպն է համարվում Ֆերիդե Չիչեքոյլուի «Ջրի հակառակ կողմը»⁶ ստեղծագործությունը, որին հե-

⁵ Մանրամասն տես՝ Zurcher E.-J., Greek and Turkish Refugees and Deportees 1912–1924, p. 3–6. <http://www.transanatolie.com/english/turkey/turks/Ottomans/ejz18.pdf> (մուսոթիվ՝ 24.05.2023).

⁶ Çiçekoğlu F., Suyun öte yanı. İstanbul, 1992.

տևեցին Քեմալ Անադոլի «Մեծ բաժանում»⁷, Օզդեմ Օդուզի «Մեր հայրենիքի կարոտով մնացինք, զավակներս»⁸ և այլ վեպեր: Այս շարքին է պատկանում նաև ներկայումս թուրքական զանգվածային գրականության առաջատար թուրք կին-գրողներից Ջանան Թանի⁹ «Կարոտ» վեպը¹⁰, որի ուսումնասիրությանն է նվիրված սույն հոդվածը:

20-րդ դարի վերջին 21-րդ դարի սկզբին թուրք գրականության մեջ տեղի ունեցող կարևորագույն փոփոխություններից էին՝ մի կողմից կին-գրողների աննախադեպ ակտիվությունը, մյուս կողմից էլ՝ բարձր գրականության և զանգվածային գրականության ամենատարբեր ձևերի (վարդագույն վեպեր, դետեկտիվներ) միջև սահմանի յուրօրինակ լրոգումն ու բնեռայնացման նվազումը, յուրօրինակ միջին դասի գրականության ի հայտ գալը: Ավելին, զանգվածային գրականության մաս համարվող վեպերում սյուժետային ստանդարտ զարգացումներին զուգահեռ բարձրաձայնվում են բավական անսպասելի թեմաներ, այդ թվում նաև պատմական իրադարձությունների հետ կապված: Ընդ որում՝ այս նոր տեսակի պատմավեպերում հայտնի պատմական դեմքերի ու դեպքերի ժամանակագրական պատումի ֆոնին կարևորվում են հերոսների մտքերի, ապրումների վերլուծությունները, պատմական այս կամ այն դեպքի վերաբերյալ հեղինակային ինտերպրետացիան: Նոր պատմավեպերում թուրք հեղինակները մեծ ուշադրություն են

⁷ Anadol K., Büyük Ayrılık. İstanbul, 2003.

⁸ Oğuz Ö., Biz Vatanimıza Hasret Öldük Yavruarım. İstanbul, 2007.

⁹ Ջ. Թանը ծնվել է Անկարայում 1951 թ.: Ավարտել է Անկարայի համալսարանի դեղագործության ֆակուլտետը: 1996 թ. արժանացել է Ա. Նեսինին նվիրված երգիծանքի մրցույթի հաղթողի կոչմանը՝ դառնալով Թուրքիայի առաջին կին-երգիծաբանը: Նրա վեպերի մեծ մասը դարձել են թուրքական բեսթսելլերներ: Մանրամասն տե՛ս գրողի պաշտոնական կայքէջում <http://canantan.com/hakkimda/> (մուտքի ամսաթիվ՝ 24.05.2023).

¹⁰ Tanan C., Hasret. İstanbul, 2013.

դարձնում օսմանյան պատմական ժառանգության վերաբերմունքներ, սուֆիզմի շուրջ մտորումներին, Թուրքիայում բնակվող ազգային, կրոնական փոքրամասնությունների խնդիրների պատմական դիտակետին: Բարձր գրականության չափանիշներին, երբեմն, չհամապատասխանող այս վեպերը, սակայն իրենց հարյուր հազարները գերազանցող տպաքանակներով լավ գործիք են հասարակության լայն շրջանակի մտածելակերպի վրա ազդելու համար, ուստի հետաքրքիր են նաև գրականագետ-մշակութաբանների համար: Ամենաընթերցվող թուրք հեղինակների շարքում Օրհան Փամուքի և Էլիֆ Շաֆաքի պես հայտնի գրողներին միանում են Ջուլֆյու Լիվանեյին, Ահմեդ Ումիթը, Այշե Քուլինը, Իսքենդեր Փալան և այլոք: Այս գրողների շարքին է պատկանում նաև «Կարոտ» վեպի հեղինակը:

Թուրքական էլեկտրոնային մամուլի տարբեր էջերին տված հարցազրույցներում ներկայացնելով «Կարոտ» վեպի պատմությունը՝ Ջանան Թանը նշում է, որ Իզմիրի նախկին վալիի կնոջ՝ տիկին Օզջայի խնդրանքով է լծվել վերջինիս ընտանիքի պատմությունը գրելու գործին: Վեպը ստեղծելու համար հեղինակի խոսքերով ինքը շուրջ 8 տարի ուսումնասիրություններ է արել Թուրքիայում և Հունաստանում¹¹, խորհրդակցել պատմաբանների հետ, զրուցել վերապրողների սերունդների հետ¹²: Գրքի վրա աշխատելու ըն-

¹¹ Forbes'un en çok kazananlar listesinde üçüncü değil ikinciyim, <https://www.hurriyet.com.tr/forbes-un-en-cok-kazananlar-listesinde-ucuncu-degil-kinciyim-22771509> (մուտքի ամսաթիվ՝ 24.05.2023).

¹²Թուրքիայում տասնամյակեր շարունակ արգելված թեմաների շուրջ փաստագրական կամ պատմագիտական նյութերի անհասանելիության կամ քիչ հասանելիության պարագայում 1990-ականներին այս թեմաներին անդրադարձող թուրք գրողների համար առաջնային հենք են ծառայել վերապրողների հուշերն ու պատմությունները: Նույն երևույթին ակնատես ենք լինում ոչ միայն հույների, այլև հայերի պարագայում: Օրինակ՝ 1990-ականներից ի վեր թուրքական զանգածային գրականության մեջ նկատվում է ցեղապանությունը վերապրած հայ կանանց ճակատագրերը ներկայացնող

թացքում իր ստացած տեղեկություններին անդրադառնալիս Ջանան Թանը նշում է, որ մեր օրերում էլ թուրքական դպրոցական պատմության դասագրքերում բնակչության փոխանակման մասին ներկայացված տեղեկությունները քիչ են, անբավարար, երբեմն էլ չեն համապատասխանում իրականությանը, ուստի իրենք [գրողները - Ն. Պ.] ստիպված են լրացնել բացը և ուղղել այդ սխալները¹³:

«Կարոտը» սկսվում է երիտասարդ թուրք հերոսի՝ Թաջեթթինի նկարագրությամբ: Լավ կրթություն ստացած, ինելացի, բարեսէս երիտասարդն ունի երկու ընկեր՝ հույն Արիսը և հայ Արթինը: Հեղինակն ընդգծում է, որ թէն Արիսն ու Արթինը բավական ապահովված մարդիկ էին, սակայն Թաջեթթինի պես պետական պաշտոնյայի չէին: Առաջինը՝ ազարակատեր էր, երկրորդը՝ վաճառական¹⁴: Հետաքրքիր է նաև, որ գրքում հատուկ է ընդգծվում թուրք հերոսի ընկերներից ավելի գեղեցկադեմ լինելը (էջ 19):

Գլխավոր հերոսի և նրա երկու ընկերների ընտրությունը վերաբերում պատահական չէ, քանի որ գործողությունները զարգանում են Քեսթին¹⁵ կոչվող փոքրիկ քաղաքում, որտեղ ըստ հեղինակի դարերի ի վեր թուրքերը, հայերն ու հույները համերաշխ են ապրել: Վե-

հուշագրական վեպերի քանակի աճ: Այս մասին մանրամասն տե՛ս Մելքոնյան Ռ., Պոռոսյան Ն., Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (XX դ. երկրորդ կեսին-XXI դ. սկզբին), Երևան, 2016: Այլ կերպ ասած, թուրք գրողները փորձում են Ջ. Ֆրոյդի եզրութաբանությամբ «անցյալը վերականգնելու համար օգտագործել անցյալում թաղված հիշողությունն այնպես, ինչպես հնագետները օգտագործում են պեղումների ժամանակ հայտնաբերվող գտածոները»: St u Stuckey L., Narrating the Greco-Turkish Population Exchange: Stories about belonging and otherness in the nation, p. 14. <https://dukespace.lib.duke.edu/dspace/bitstream/handle/10161/1282/Thesis%20LAS%20with%20corrections.pdf?sequence=3&isAllowed=y> (մուտքի ամսաթիվ՝ 24.05.2023).

¹³ Canan Tan'dan bir hasretin öyküsü. <http://narcekirdekleri.blogspot.com/2013/08/canantandan-bir-hasretin-oykusu.html>

¹⁴ Tanan C., Hasret. s. 18 (Այսուհետ այս գրքից բերվող մեջբերումների էջերը կնշվեն տեքստի մեջ, փակագծերում).

¹⁵ Ներկայումս մտնում է Թուրքիայի Հանրապետության Քըրըքքալե վիլայեթի կազմի մեջ:

պի գլխավոր հերոսների անունից նա հիշատակում է ազգամիջյան հարաբերությունների ջերմությունն ու մտերմությունը: Այս իրողության ապացույցներն բերել էին այն, որ թե՛ քրիստոնյա, թե՛ մուսուլման երեխաները հավասար անհամբերությամբ էին սպասում Քուրբան բայրամին ու Չատկի տոնին, որովհետև երկու դեպքում էլ հյուրասիրությունը բոլորին էր հասնում(էջ 49): Ավելին, հեղինակը նշում է, որ քրիստոնյայի տուն եկած մուսուլմանի համար միշտ նամազ անելու համար առանձնացված սենյակ ու պարագաներ էին լինում (էջ 50):

Ազգամիջյան բարիդրացիական հարաբերություններին հակառակ՝ քաղաքում ապրող ժողովուրդների միջև չգրված, բայց ակնհայտ բաժանումներ էլ կային: Խանութներն ու զվարճանքի վայրերը ոչ մուսուլմաններին էին պատկանում, մինչդեռ թուրքերը պետական ծառայողներ ու զինվորականներ էին: Սակայն տարբեր համայնքների միջև առկա անհաղթահարելի անջրպետի ամենակարևոր ցուցիչը խառնամուսնությունների իսպառ բացակայությունն էր: Դարեր շարունակ պահպանված այս հավասարակշռությունը խախտվում է, երբ Թաջեթթինը սիրահարվում է հունական պանդոկի տիրուհու աղջկան՝ Պատրիսիային, և նույնիսկ որոշում նրա հետ ամուսնանալ: «Կյանքումդ տեսած կա՞ս ոչ մուսուլման կնոջ հետ ամուսնացած մուսուլման տղամարդ», - հարցնում է Թաջեթթինին նրա հույն ընկեր Արիսը՝ հորդորելով հրաժարվել այդ մտքից: Բայց Թաջեթթինը պատասխանում է, որ ինքն առաջինը կլինի (էջ 39): Ընկերոջ որոշման մասին խոսելիս Արիսն էլ ասում է. «Այո՛, Քուրբան բայրամին մեր տուն միս բերողը դու էիր, ես էլ մեր Չատկի թխվածքներն էի ձեր տուն բերում, բայց ուրիշի կրոնից մեկի հետ ամուսնանալն անհնար բան է» (էջ 40): Իսկ Թաջեթթինի քույրը Շազիեն նշում է. «Բոլորի [հայեր, հույներ - Ն. Պ.] հետ էլ բարեկամ ու հարևան ենք, բայց դա [ամուսնանալը - Ն. Պ.] արդեն չա-

փից դուրս շատ է» (էջ 38): Խիստ վճռականությանը հակառակ Թաջեթինը չի կարողանում համոզել ծնողներին և նույնիսկ Պատրիսիայից երեխա ունենալուց հետո էլ չի ամուսնանում նրա հետ: Հեղինակի մտահաղացմամբ նրանց որդին՝ Ալին, ծնվում է Սևրի պայմանագրի կնքման օրը, ինչը, հավանաբար, խորհրդանշում է, որ նա էլ չէր կարողանալու խաղաղություն հաստատել երկու ժողովուրդների և երկու ընտանիքների միջև: Թեև Թաջեթինը չի կարողանում ամուսնանալ Պատրիսիայի հետ, բայց չի հրաժարվում իր սիրուց, աջակցում է նրան ու նրա մորը՝ Օմորֆիային: Նորածնին այցի գնացած Թաջեթինը, տեսնելով, թե երեխային չար աչքից պաշտպանելու նպատակով Օմորֆիան ինչ «միջոցներ» է օգտագործում, ներքին մենախոսության մեջ դառնությամբ նշում է, որ դրանք քաղաքի քրիստոնյաների ու մուսուլմանների մոտ էլ են նույնը, և հույն կնոջից թոռ ունենալու գաղափարը կտրականապես մերժող իր մայրը ևս նորածնի մահճակալին դեղին ժապավեն կկապեր, իսկ նրա մոր մահճակալին՝ ալ կարմիր ատլաս (էջ 69), քառասունք կպահեր (էջ 76): Հերոսը զարմանում է, որ առօրյա կյանքում այդ աստիճան նման կենցաղով մարդկանց ստիպում է միմյանց չսիրել միայն տարբեր տեղերում աղոթելու հանգամանքը:

Երեխայի ծննդից հետո թեկուզ և առանց պաշտոնական ամուսնության միասին ապրող Թաջեթինի ու Պատրիսիայի երջանկությունը խաթարվում է բնակչության փոխանակման մասին որոշմամբ: Ջ. Թանը նշում է, որ առհասարակ Սևրի պայմանագրի կնքումից հետո նախկին խաղաղ կյանքի հիմքերը խարխուլվել էին: Օրինակ, նամազից հետո մի թուրք մի հույնի ասում է «ի՞նչ գործ ունես, ման ես գալիս այստեղ», ապա գոչում «բոլորդ դժոխքում վառվեք, մենք էլ ազատվենք» (էջ 50): Մեկ այլ թուրք էլ հույներին անվանում է «թուրքերին ուղարկված տրոյական ձի» և նշում է. «Դավաճաններն ուշ թե շուտ կպատժվեն» (էջ 52):

Մուսուլմանների և քրիստոնյաների միջև լարվածությունը աճում էր, ինչի ապացույցն է դառնում Թաջեթթինի ընկեր Արթինի և նրա ընտանիքի Ստամբուլ մեկնելու որոշումը. «Գնանք, քանի դեռ մեզ չեք վռնդել», հրաժեշտին ասում է Արթինը (էջ 86): Կարևոր է նաև շեշտել, որ 1919-1920 թթ. մասին պատմող Ջ. Թանը որևէ կերպ չի անդրադառնում մինչ այդ տեղի ունեցած հայերի տեղահանությանը, կոտորածներին՝ բավարարվելով միայն պատերազմի ժամանակ ստեղծված բանվորական-զինվորական դասակների մասին հիշատակմամբ: Ըստ վեպի սյուժեի՝ պատերազմական գործողությունների կիզակետից շատ հեռու Քեսքինի կյանքում Առաջին համաշխարհային պատերազմը լուրջ փոփոխությունների չէր հանգեցրել: Հայերի հեռանալուց որոշ ժամանակ անց գալիս է հույների պարտադիր մեկնման հրամանը (էջ 87): Թաջեթթինի հետ մնալու և հարազատ քաղաքից չմեկնելու համար Պատրիսիան նույնիսկ համաձայնում է իսլամ ընդունել, սակայն երիտասարդը կրկին չի կարողանում ծնողներին համոզել (էջ 92): Արդյունքում Պատրիսիան մոր և որդու հետ ուղևորվում է Հունաստան, իսկ Թաջեթթինին նրանից հիշատակ մնում է միայն մի լուսանկար:

Ջ. Թանը մանրամասն ներկայացնում է Քեսքինից Հունաստան տանող շուրջ հազար կիլոմետրանոց ճանապարհի գրկանքները, սովը, հիվանդությունները: Նա նաև հատուկ անդրադառնում է այն հանգամանքին, որ նորեկները Հունաստանում «թուրք» էին ընկալվում, վրանային քաղաքներում կարանտինի նվաստացուցիչ օրեր անցկացնում: Այս համատեքստում Ջ. Թանը անտեսանելի զուգահեռներ է տանում օտար երկրից եկվորների նկատմամբ թուրքերի և հույների վերաբերմունքների միջև՝ ցույց տալով, որ թուրքերը Հունաստանից ժամանողների հանդեպ առավել մարդկային մոտեցում են ցուցաբերել, քան հույները՝ Թուրքիայից եկող իրենց ազգակիցների նկատմամբ: Թեև ի սկզբանե համաձայնագրով նախա-

տեսված էր, որ ներգաղթյալները Թուրքիայում թողնված ունեցվածքին համարժեք ունեցվածք են ստանալու Հունաստանում, սակայն Օմորֆիան ու Պատրիսիան ստիպված են կիսել իրենց ապագա տունը մի թուրքական ընտանիքի հետ, քանի որ նրանց տեղափոխման հրամանը դեռ չի եկել և այս մարդիկ գնալու տեղ չունեն։ Թե թուրքերի, թե հույների կողմից օտար ընկալվող այս մարդիկ ընկերանում են ու օգնում իրար։ Ավելին, հատկանշական է, որ Պատրիսիային ընդունող ընտանիքում էլ զարգանում է ազգությամբ հույն տղայի հետ տան տիրոջ աղջկա սիրո պատմությունը, որը սակայն կրկին անավարտ է մնում։ Փաստորեն, հեղինակը չի տեսնում նման հարաբերությունների զարգացման որևէ հնարավորություն։ Ջ. Թանը գրում է. «Մուսուլմանին ու քրիստոնյային, թուրքին ու հույնին այն էլ պատերազմի քամիներից հետո դեռ ջրերը չհանգստացած մի տանիքի տակ ապրեցնելը ճակատագրի սեթևեթանք պետք է համարել» (էջ 160):

Վերադառնալով Քեսքին՝ Ջ. Թանը նշում է, որ հույների գնալուց հետո ուրախությունն ու զվարթությունն էլ գնացին քաղաքից։ Նրանց փոխարենը եկած գաղթականները տարբերվում էին ամեն ինչով, նույնիսկ նրանց լեզուն էր տեղացիների համար հաճախ անհասկանալի։ Առավել սարսափելի էր Թաջեթթինի համար տեսնել, թե ինչպես են այս օտար ու խորթ մարդիկ ապրում իր հույն ընկերների ու ծանոթների նախկին տներում։ Թե՛ հունաբնակ թուրքերի, թե՛ թուրքաբնակ հույների համար բարդ այս իրավիճակը լավ են նկարագրում վեպի հերոսներից մեկի այս խոսքերը. «Ստիպված թողնում ենք մեր հայրենիքն, ուր ծնվել մեծացել ենք, հազար ու մի ուրախությամբ ու տխրությամբ ապրել են, գնում ենք գաղթում ենք անհայտ աշխարհ։ Եվ այդ նոր տեղին հայրենիք ենք ասում, արմատախիլ արված ծառն այլ վայրում արմատ տալը հե՞շտ է» (էջ 133): Ջ. Թանին իսկապես հաջողվում է ցույց տալ պետական մակար-

դակով ընդունված և մեծ, աշխարհաքաղաքական շահերից բխող այս որոշման ողբերգականությունը երկու կողմերում ապրող հասարակ մարդկանց համար:

Վերադառնալով գրքի սյուժետային զարգացմանը՝ ասենք, որ Պատրիսիան այդպես էլ չի ամուսնանում, իսկ Թաջեթթինը ամուսնանում է Բեհիբե անունով թրքուհու հետ և երեխաներ ունենում: Նրանց ապրումները հեղինակն ամփոփում է հետևյալ մտքով. «Եթե ասեին կարոտ թե մահ, անշուշտ մահը կընտրեի, առանց այք թարթելու, բայց հարցնող չեղավ» (էջ 333):

Այս պատմությունը յուրօրինակ հանգուցալուծում է ստանում մոտ երկու տասնամյակ անց, արդեն Երկրորդ համաշխարհայինի տարիներին, երբ Թաջեթթինի ու Պատրիսիայի որդին՝ Ալին, ում Հունաստանում Անդոնի անունով էին կնքել, վիրավորման պատճառով հայտնվում է հիվանդանոցում, որտեղ պատահականորեն հանդիպում է հոր հույն ընկերոջը՝ Արիսին (էջ 310–313): Ալին արտաքինից նմանեցնելով Թաջեթթինին՝ Արիսը պատմում է նրան ճշմարտությունը: Հոգեբանական ապրումները հաղթահարելով՝ Ալի-Անդոնին գնում է Թուրքիա ու գտնում հորը: Որպես հույն մեծացած տղան շարունակաբար մտածում է ինքնության ընտրության հնարավորության մասին ու փորձում պատկերացնել, ինչ կլինեի, եթե ինքը մնար թուրքական միջավայրում, շփվեր հոր ու նրա բարեկամների հետ: Այս հարցերը սակայն մնում են օդում կախված:

Այսպիսով՝ Ջանան Թանը թուրք և հույն ընտանիքների ապրումների համատեքստում իր վեպում արտացոլում է մեծապետական քաղաքական շահերի բախման հետևանքով մոտ 1.5 միլիոն մարդու խեղված ճակատագրերը: Բնակչության փոխանակման արդյունքում մարդիկ գրկվում են իրենց տներից ու ունեցվածքից, չարքաշ ճանապարհի ընթացքում շատերը մահանում են, նոր բնա-

կավայրում ադապտացվելը երկար ու բարդ ուղի է պահանջում, իսկ ոմանք էլ Պատրիսիայի պես այս նոր կյանքի հետ երբեք չեն համակերպվում:

TURKISH-GREEK «SECRET REVEALED»: REFLECTIONS OF POPULATION EXCHANGE IN J. TAN'S NOVEL «HASRET» (LONGING)

*Naira Poghosyan*¹⁶

The most important changes in Turkish literature of the late twentieth and early twenty-first centuries were, on the one hand, the unprecedented activity of women writers and, on the other hand, the surprising blurring of the boundaries between high and mass literature and the emergence of a kind of “middle-class” literature. Such novels, parallel to the standard plot development, sometimes raise quite unexpected themes, including references to hitherto unreported pages of Turkish history, such as the Turkish-Greek population exchange. This article presents the peculiarities of the representation of the Greek-Turkish population exchange in the novel «Longing» by the contemporary woman writer Canan Tan.

Keywords: *population exchange, Greeks, Turks, foreignness, longing, nostalgia.*

ТУРЕЦКО-ГРЕЧЕСКИЙ «РАСКРЫТЫЙ СЕКРЕТ»: ОТРАЖЕНИЕ ОБМЕНА НАСЕЛЕНИЕМ В РОМАНЕ ДЖ. ТАНА «ТОСКА»

*Наира Погосян*¹⁷

Важнейшими изменениями в турецкой литературе конца XX–начала XXI века стали, с одной стороны, беспрецедентная активность женщин-писательниц, а с другой – удивительное стирание границ между высокой и массовой литературами, появление своеобразной литературы «среднего класса». В подобных романах параллельно стандартному развитию сюжета

¹⁶ Naira Poghosyan is an Associate Professor of the Department of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: nairapoghosyan@ysu.am, ORCID 0000-0003-3682-328X.

¹⁷ Наира Погосян – доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: nairapoghosyan@ysu.am, ORCID 0000-0003-3682-328X.

порой поднимаются весьма неожиданные темы, в том числе отсылки к не освещенным до сих пор страницам турецкой истории, например к обмену турецко-греческим населением. В данной статье представлены особенности представления об обмене греческим и турецким населением в романе современной писательницы Джанан Тан «Тоска».

Ключевые слова: обмен населением, греки, турки, чужеродность, тоска, ностальгия.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Zurcher E-J, Greek and Turkish refugees and deportees 1912–1924. p. 6. <http://www.transanatolie.com/english/turkey/turks/Ottomans/ejz18.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 24.05.2023).
2. Stuckey L., Narrating the Greco-Turkish Population Exchange: Stories about belonging and otherness in the nation, pp. 53–60. <https://dukespace.lib.duke.edu/dspace/bitstream/handle/10161/1282/Thesis%20LA%20with%20corrections.pdf?sequence=3&isAllowed=y> (մուտքի ամսաթիվ՝ 24.05.2023).
3. <http://canantan.com/hakkimda/>
4. Tanan C., Hasret. İstanbul, 2013.
5. Forbes'un en çok kazananlar listesinde üçüncü değil ikinciyim. <https://www.hurriyet.com.tr/forbes-un-en-cok-kazananlar-listesinde-ucuncu-degil-ikinciyim-22771509>
6. Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն., Հայկական թեմատիկան ժամանակակից թուրք գրականության մեջ (XX դ. երկրորդ կեսին–XXI դ. սկզբին), Երևան, 2016:
7. Canan Tan'dan bir hasretin öyküsü. <http://narcekirdekleri.blogspot.com/2013/08/canan-tandan-bir-hasretin-oykusu.html>, <https://doi.org/10.2307/208566>;
8. Arı K., Büyük Mübadele-Türkiye'ye Zorunlu Göç (1923-1925). Ankara, 2021.
9. Çiçekoğlu F., Suyun öte yanı. İstanbul, 1992.
10. Anadol K., Büyük Ayrılık. İstanbul, 2003.
11. Oğuz Ö., Biz Vatanimıza Hasret Öldük Yavruarım. İstanbul, 2007.

**ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ
ԱՂԲԵՋԱՆԵՐԵՆԻ ՕՐԻՆԱԿՈՎ
Լիլիթ Մովսիսյան¹**

DOI 10.46991/jos.2024.25.1.141

Մասնագիտական հաղորդակցման շրջանակներում «թարգմանություն» հասկացությունը բնութագրում են որպես միջլեզվային և միջմշակութային միջնորդության, բանավոր և գրավոր ձևաչափով շփման տեսակ, որի ընթացքում տեքստի բովանդակությունը ներկայացվում է մեկ այլ լեզվով, իսկ թարգմանության համապատասխանության, ճշգրտության աստիճանը մեծ մասամբ կախված է թարգմանչի առջև դրված խնդրից: Թարգմանության ժամանակ տեղի է ունենում ոչ միայն շփում երկու լեզվի միջև, այլև երկու մշակույթի միջև²: Այս տեսանկյունից իր բնույթով յուրահատուկ է հայերենի և ադրբեջաներենի շփումը՝ հաշվի առնելով տվյալ լեզուներով խոսող ժողովուրդների, մեղմ ասած, ոչ բարեկամական հարաբերությունները: Այդ համատեքստում կարևոր է փաստել, որ երկու լեզուների միջև առկա տարբերությունները թարգմանչից պահանջում են առավել մեծ պրոֆեսիոնալիզմ՝ որակյալ, բարձր մակարդակի թարգմանական աշխատանք կատարելու համար: Մույն աշխատանքի նպատակն է ցույց տալ այն մեթոդները, միջոցները, որոնց շնորհիվ թարգմանիչն ավելի դյուրությամբ կկատարի իր առջև դրված խնդիրը և կհաղթահարի աշխատանքի ընթացքում առաջացած դժվարությունները: Թարգմանության մեջ էական դեր ունի նաև լեզվամտածողությունը, և երկու լեզուների լեզվամտածողության նրբություններին տիրապետելը ևս մեծապես կարևորվում է թարգմանություն կատարելու գործում: Չնայած

¹ Լիլիթ Մովսիսյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թուրքագիտության ամբիոնի դոցենտ է, բանասիրական գիտությունների թեկնածու, էլ փոստ՝ lilitnane@gmail.com, ORCID 0009-0000-6748-6074:

² Илюшкина М., Теория перевода: основные понятия и проблемы (учеб. пособие). Изд-во Урал. ун-та, 2015, с. 86.

վերոնշյալ տարբերություններին, այնուամենայնիվ, ամենատարբեր ոլորտներում, այդ թվում՝ տեղեկատվական հաճախ մասնագետները կատարում են համապատասխան թարգմանություններ և՛ աղբրեջաներենից հայերեն, և՛ հակառակը՝ ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր ձևաչափերով: Փաստելով, որ սույն աշխատանքը երկու լեզուների միջև թարգմանական ոլորտում կատարվող զուգադրական քննության առաջին փորձն է, անդրադարձը նմանատիպ թարգմանական աշխատանքների ընթացքում ի հայտ եկող խնդիրներին կնպաստի մասնագետներին իրենց աշխատանքն ավելի որակով և արդյունավետ կազմակերպելու գործում: Աշխատանքում վեր են հանվել այն հիմնական ընդհանուր գծերը, օրինաչափությունները, որոնք կնպաստեն թարգմանչական գործն ավելի բովանդակալից, գրագետ և թարգմանության համար ընդունելի համարվող արդի չափանիշներին համապատասխան կերպով կատարելուն:

Բանալի բառեր՝ թարգմանություն, հայերեն, աղբրեջաներեն, միջմշակութային շփում, բառապաշար, քերականություն, բառարան, շարադասություն, մեղիա գրագիտություն:

Հասարակական որոշ գիտաճյուղեր խորությամբ և բազմակողմանիորեն ուսումնասիրում են թարգմանության հետ կապված տեսական և գործնական խնդիրները: Ներկայումս նկատվում է միտում՝ անցում կատարելու լեզվի ուսումնասիրման վերացական համակարգից դեպի լեզվի ֆունկցիոնալություն, ինչը պայմանավորված է խոսքային գործունեության խնդիրների հանդեպ հետաքրքրության մեծացմամբ: Այս ամենն իր արտահայտությունն է գտել լեզվաբանության առանձին ճյուղ դարձած «տեքստի լեզվաբանության» մեջ, ինչն էլ սերտորեն կապված է թարգմանության տեսության հետ: Կարելի է նույնիսկ պնդել, որ թարգմանության լեզվաբանական տեսությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ տեքստի զուգադրական լեզվաբանություն³:

³ Бархударов Л., Язык и перевод (вопросы общей и частной теории перевода). М., 1975, с. 16.

Ժամանակակից աշխարհում լեզուն, երբեմն, ուսումնասիրվում է նաև մշակույթի հետ փոխազդեցության տեսանկյունից, և թարգմանությունը դիտարկվում է որպես միջնորդ միջմշակութային շփման և փոխընկալման գործընթացում: «Մշակույթների փոխազդեցություն» հասկացությունն ինքնին ենթադրում է ընդհանուր և մասնավոր տարրերի, համընկնումների և տարբերությունների առկայություն⁴, ինչն էլ թույլ է տալիս տարբերակել մի լեզվամշակութային հանրությունը մյուսից: Բազմաթիվ բարդ խնդիրների շարքում, որոնք ժամանակակից լեզվաբանության համար ուսումնասիրության առանձին առարկա են, կարևոր տեղ է զբաղեցնում նաև միջլեզվային, խոսքային գործունեության լեզվական ուսումնասիրությունը, ինչը, երբեմն, անվանում են նաև «թարգմանական գործունեություն»⁵: Թարգմանությունները նշանակալի դեր են ունեցել մի շարք գրական լեզուների և գրականության ձևավորման և զարգացման, ինչպես նաև հասարակության մշակութային ինքնության ձևավորման գործում:

«Թարգմանություն» հասկացությունը չի արտահայտվում միայն դրա զանազան բնութագիրների և տեսակների մեջ: Թարգմանությունը՝ որպես գործունեություն, իրենից ներկայացնում է տեքստի վերարտադրություն⁶ և ունի մի քանի տարբերակ: Սակայն թարգմանության տեսակների մեջ առաջին հերթին առանձնացվում են գրավոր ու բանավոր թարգմանությունները:

Բանավոր թարգմանությունն իր հերթին լինում է.

⁴ Умерова М., Особенности перевода документов и текстов официального характера. Актуальные проблемы гуманитарных и естественных наук, N 12, 2011, сс. 132–137.

⁵ Комиссаров В., Теория перевода (лингвистические аспекты). М., 1990, с. 253.

⁶ Шимановская Л., Современные теории перевода и их использование в работе с англоязычной научной статьей биотехнологического профиля. Вестник Казанского технологического университета, 2012, с. 253–259.

• միակողմանի և երկկողմանի հաջորդական թարգմանություն, այսինքն՝ ըստ հստակ բաժանված պարբերությունների և արտահայտությունների՝

- համաժամանակյա՝ սինխրոն, թարգմանություն
- թղթային թարգմանություն
- հաղորդակցային թարգմանություն⁷:

Բանավոր թարգմանության ժամանակ կարևորվում է թարգմանչի արագ արձագանքելու և անհրաժեշտ համարժեք բառերը գտնելու ունակությունը: Հաճախ թարգմանչին օգնում են նաև արտաքին գործոնները՝ միմիկան, ժեստերը և այլն:

Գրավոր թարգմանությունը լինում է.

- ավտոմատացված թարգմանություն (համակարգչային)
- ադապտացված թարգմանություն (սովորաբար թարգմանությունը հարմարեցվում է լսողի կամ կարդացողի կոմպետենտությանը, այլ կերպ ասած՝ պարզեցված թարգմանություն)
 - ոճական թարգմանություն՝ գեղարվեստական մշակում
 - հեղինակային թարգմանություն և համահեղինակային (թարգմանիչը ներմուծում է սեփական փոփոխությունները, կարող է փոխել սյուժեն, հերոսների կազմը և այլն)
- ընտրովի թարգմանություն, երբ թարգմանվում է միայն այն հատվածը, որը պահանջում է պատվիրատուն
- ամփոփ թարգմանություն (այսինքն՝ կազմում են տեքստի համառոտ բովանդակությունը):

Գրավոր թարգմանությունը մասնագիտական թարգմանության ամենատարածված տեսակն է, որի ժամանակ տեքստի ընկալումը կատարվում է տեսողական ճանապարհով, իսկ ձևակերպու-

⁷ Виды перевода. Классификация. <https://studfile.net/preview/7672084/page:6/> (մուտքի ամսաթիվ՝ 15.02.2023).

մը՝ գրավոր: Թարգմանիչը աշխատելով գրավոր տեքստի հետ՝ կարող է համեմատաբար ավելի երկար ժամանակ տրամադրել աշխատանքին և միաժամանակ կատարել ուղղումներ և շտկումներ: Աշխատելու ընթացքում օգտվում է նաև բառարաններից, զանազան տեղեկատուներից, արհեստական բանականության հնարավորություններից և, իհարկե, վերջում կատարում է խմբագրական, սրբագրական աշխատանք: Վերջինիս նպատակը բնօրինակ տեքստի հետ հնարավորինս նույնականացումն է՝ ի տարբերություն բանավոր թարգմանության:

Արևմտյան լեզվաբանները թարգմանության տեսակները որոշելիս ուշադրություն են դարձրել թարգմանվող տեքստերի տեսակներին, մասնավորապես ֆրանսիացի լեզվաբան Ժորժ Մունենը փաստել է, որ բավականին բարդ է տեքստերը հստակ բաժանել տեսակների և խմբերի⁸, այնուամենայնիվ տարանջատելու փորձ է կատարել՝ կրոնական բովանդակություն ունեցող թարգմանություն, գեղարվեստական թարգմանություն, մանկական գրականության թարգմանություն, բեմական ներկայացումների թարգմանություն, ֆիլմերի թարգմանություն, տեխնիկական թարգմանություն:

Ռուս գիտնական Վ. Ն. Կոմիսարովն առանձնացնում է թարգմանության տեսակների երկու հիմնական դասակարգում. ըստ թարգմանվող տեքստերի բնույթի և թարգմանության ընթացքում թարգմանչի գործողությունների բնույթի: Առաջին դասակարգումը կապված է սկզբնաղբյուր նյութի ժանրային-ոճական առանձնահատկությունների հետ, իսկ երկրորդը՝ խոսքային գործողությունների լեզվահոգեբանական առանձնահատկությունների⁹:

Ժանրային-ոճական դասակարգումն իր մեջ ներառում է.

⁸ Мунен Ж., Вопросы теории перевода в зарубежной лингвистике. М., 1978, с. 37.

⁹ Комиссаров В., Указ. соч., 94.

ա) գեղարվեստական-գրական թարգմանությունը, որի վերլուծությունը ցույց է տալիս, որ դրան բնորոշ չէ բառացի թարգմանությունը: Գեղարվեստական թարգմանության նպատակն է ընթերցողի վրա թողնել գեղարվեստական-գեղագիտական ազդեցություն:

բ) տեղեկատվական-մասնագիտական թարգմանությունը, որի հիմնական գործառույթն է տեղեկություն փոխանցելը: Դրանք գիտական, գործնական, քաղաքական, կենցաղային բնույթի նյութեր են, ինչպես նաև պատմական բնույթի տեքստեր, ակնարկներ, նոթեր և այլն:

Լեզվահոգեբանական դասակարգումը ենթադրում է գրավոր և բանավոր ընդհանուր թարգմանություն: Այստեղ որպես թերություն նշվում է թարգմանության ենթատեսակների, հստակ հիմնավորումների և չափանիշների ներկայացման բացակայությունը:

Վերոնշյալ դասակարգումներից բացի, կան դասակարգման մի շարք այլ ընդունված տարբերակներ, որոնք, ըստ էության, ընդգրկում են թարգմանության վերոնշյալ տեսակները: Ժամանակակից տեխնիկայի ու տեխնոլոգիական միջոցների զարգացման պայմաններում փոխվել են նաև թարգմանիչների աշխատանքի բնույթը, մեթոդները, թարգմանական միջոցներն ու պահանջները, թեմաները, ոճը և այլն:

Ադրբեջաներենի հայախոս թարգմանիչների պարագայում կան որոշակի առանձնահատկություններ: Հայերենն ու ադրբեջաներենն անցել են տարբեր պատմական ընթացք և զարգացման փուլեր, և ներկայումս տարբերվում են իրենց կառուցվածքով, տիպաբանությամբ, զարգացման միտումներով ու առանձնահատկություններով և այլն: Չնայած երկու լեզուները պատկանում են տարբեր լեզվաընտանիքների, ունեն մի շարք ընդհանրություններ քերականության որոշ բաժիններում, բառապաշարի որոշ շերտերում (հատկապես խոսակցական լեզվում, բարբառներում), լեզվամտա-

ծողության մեջ և այլն: Հայերենից ադրբեջաներեն և հակառակ թարգմանություններով զբաղվող լեզվաբանները, թարգմանիչներն իրենց առջև դրված խնդիրը կատարելիս գործի են դնում իրենց և՛ լեզվական, և՛ թարգմանական տեսական, ինչպես նաև գործնական գիտելիքները արհեստավարժ աշխատանք կատարելու համար: Ըստ Վ. Կոմիսարովի՝ հաջողված թարգմանություն հնարավոր է այն դեպքում, երբ թարգմանիչը խորապես և բազմակողմանիորեն տիրապետում է բնագրի լեզվին, ինչպես նաև դրանում իր արտացոլումը գտած տվյալ ժողովրդի պատմությանն ու մշակույթին¹⁰:

Հողվածի վրա աշխատելիս մեծապես կարևորվել է թարգմանության տեսության ուսումնասիրությունը, որը ձևավորվել է սկսած 20-րդ դարի կեսերից: Տեսության հեղինակներից են հայտնի լեզվաբաններ Ա. Ֆյոդորովը, Լ. Բարխուդարովը, Յ. Ռեցկերը և այլք: Մասնավորապես համաձայն Ֆյոդորովի տեսության¹¹, ցանկացած թարգմանություն պետք է սկսվի տեքստի լեզվաբանական վերլուծությունից և ավարտվի դրա գրականագիտական կամ գիտական խմբագրությամբ: Թարգմանության հատուկ տեսությունը դիտարկում է երկու լեզվի միջև առկա համապատասխանությունները, համարժեքությունները, ինչպես նաև դրանց ընտրության չափանիշները:

Խորհրդային լեզվաբան Լ. Բարխուդարովի դիտարկմամբ, թարգմանության տեսությունն արտացոլում է նկարագրվող երևույթի ոչ թե բոլոր, այլ առավել էական գծերը, այն պետք է դիտարկվի ոչ թե լեզուների միջև առկա ցանկացած հարաբերություն, այլ զուտ օրինաչափ, տիպիկ համարվող և պարբերաբար կրկնվող

¹⁰ Նույն տեղում, էջ 8:

¹¹ Феодоров А., Основы общей теории перевода (лингвистические проблемы). Для институтов и факультетов иностранных языков. М., 2002, с. 113.

հարաբերությունները¹²: Վերոնշյալ դիտարկումները կարելի է վերազգրել նաև սույն հոդվածի քննության առարկա լեզուներով թարգմանության տեսությանը, որը որպես առանձին թեմա ուսումնասիրության չի ենթարկվել: Հայերենի և ադրբեջաներենի զուգադրական քննություն, որպես այդպիսին, գրեթե չի կատարվել, առավել ևս երկու լեզվով թարգմանություն կատարելուն առնչվող տեսական ու գործնական հարցերը երբևէ գիտականորեն խորապես չեն ուսումնասիրվել:

Սույն հետազոտության հիմնական նպատակներից է ցույց տալ այն խնդիրներն ու դժվարությունները, որոնց առնչվում են հայախոս մասնագետները ադրբեջաներենից հայերեն և հայերենից ադրբեջաներեն գրավոր կամ բանավոր թարգմանություն կատարելիս: Միաժամանակ հնարավորության սահմաններում առաջարկվում են որոշ ուղիներ, միջոցներ, որոնց շնորհիվ թարգմանիչներն ավելի դյուրին կերպով կհաղթահարեն թարգմանության ընթացքում առաջացած լեզվական-քերականական, շարադասական, բառապաշարային, լեզվահոգեբանական խնդիրները: Հետևաբար լիահույս ենք, որ աշխատանքը կունենա գործնական, կիրառական նշանակություն վերոնշյալ լեզուներով աշխատող թարգմանիչների համար:

Անդրադառնանք այն հարցին, թե հայերեն-ադրբեջաներեն և հակառակ թարգմանություններով զբաղվող թարգմանիչները հիմնականում որ բնագավառներում են գործունեություն ծավալում, ինչ բովանդակությամբ և թեմատիկայով են թարգմանություններ կատարում, և ինչ ի նկատի ունենք «ոլորտի մասնագետ» ասելով: Հաշվի առնելով Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերություն-

¹² Бархударов Л., Язык и перевод (вопросы общей и частной теории перевода). М., 1975, с. 4.

ների առանձնահատուկ բնույթը, առկա հակամարտությունը, բազմաթիվ խորքային և պատմական խնդիրները, փաստենք, որ ադրբեջաներենին տիրապետող և գործող մասնագետները սակավաթիվ են համեմատած այլ օտար լեզուների մասնագետների հետ, և նրանց աշխատանքն ունի ավելի յուրահատուկ բնույթ: Չմանրանալով հատուկ և ռազմավարական նշանակություն ունեցող ոլորտներում գործունեություն ծավալող ադրբեջանագետ-թարգմանիչների աշխատանքի բնույթի մեջ՝ փաստենք, որ ադրբեջաներենին տիրապետող թարգմանիչներն աշխատում են հետևյալ հիմնական բանագավառներում՝ ուժային կառույցներ, գիտահետազոտական կենտրոններ, մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, կրթական հաստատություններ և այլն: Սույն հոդվածը նախապատրաստելիս իրականացվել են քննարկումներ, հարցազրույցներ համապատասխան ոլորտների մասնագետների հետ, ուստի աշխատանքը հիմնված է գործնական փորձի վրա:

Այժմ դիտարկենք այն խնդրահարույց հարցերը, որոնց առնչվում են ադրբեջաներեն թարգմանություններով զբաղվող հայախոս թարգմանիչ-լեզվաբանները:

Հնչյունական համակարգում հանդիպող խնդիրներից առանձնացնենք որոշակի եզրույթների, հատուկ անունների, փոխառյալ բառերի ճշգրիտ տառադարձման և հնչադարձման շուրջ տարակարծությունները¹³, գրավոր և բանավոր խոսքում անհամապատասխանությունների շտկումը և այլն:

¹³ Օրինակ՝ ադրբեջաներենում առկա զ ձայնավորը պարունակող անունների հայերեն տարբերակում նախընտրելի է գրել հայերենի «ա» ձայնավորը, մինչդեռ որոշ թարգմանիչներ նախապատվությունը տալիս են «է» ձայնավորին. օրինակ՝ Փհոմոձ-Ահմադ/Էհմեդ, Փև-Ալի/Էլի, Մոհոմոձ-Մամեդ/Մեմեդ և այլն: Մինչդեռ ադրբեջաներեն տեքստերում, մասնավորապես էլեկտրոնային աղբյուրներում այլ պատկեր ենք տեսնում: Այսպես, որոշ հայկական հատուկ անունների թարգմանության ժամանակ այդ անունների արտասանությունը համապատասխանեցնում են իրենց լեզվի արտասա-

Անդրադառնանք շարահյուսական որոշ կադապարների կառուցման առանձնահատկություններին: Ինչպես հայտնի է, բարդ նախադասությունը կազմող բաղադրիչները միմյանց հետ փոխադարձ կապի մեջ են լինում, և այդ կապը լինում է տարբեր աստիճանի:¹⁴ Եվ իրականում բարդ նախադասության յուրաքանչյուր բաղադրիչ համադրելի է պարզ նախադասությունների հետ, սակայն տվյալ կապակցությունից դուրս չունի այն նշանակությունը, ինչը ձեռք է բերում բարդ նախադասության կազմում:¹⁵ Այսպես, ադրբեջաներեն նախադասություններում ի տարբերություն, օրինակ, ցեղակից լեզու համարվող թուրքերենի, ընդունելի է համարվում նախադասությունների ստորադասական տիպը՝ զանազան շաղկապների գործածումը: Սակայն հարկ է նշել, որ վերջին շրջանում, մասնավորապես մամուլի լեզվում նկատվում է միտում՝ հնարավորինս զերծ մնալ շաղկապների գործածումից՝ նախապատվությունը տալով մակբայական դերբայներով կառուցվող խոսքին: Այսպես օրինակ՝ ադրբեջաներենից հայերեն տեքստ թարգմանելիս թարգմանիչը փորձում է մեկ ստորոգյալով արտահայտված ադրբեջաներեն տեքստը հայերենով մատուցել բարդ ստորադասական նախադասության միջոցով՝ մեկից ավելի ստորոգյալներով: Սույն պատկերի հակառակ գործընթացը նկատվում է արդեն հայերենից ադրբեջաներեն թարգմանություն կատարելիս: Դիտարկենք հե-

նական կանոններին, հաճախ նաև աղավաղում են՝ միաժամանակ նպատակ ունենալով ցույց տալու այդ անվան, ազգանվան կամ տեղանվան «ադրբեջանական ծագում» ունենալը՝ Քոչարյան-Köçəryan, Երևան-İrəvan, Ջանգեզուր-Zəngəzur և այլն, սակայն, այդքանով չսահմանափակվելով, հաճախ գրում են տվյալ հատուկ անվան համապատասխան, այսպես կոչված, «ադրբեջանական» տարբերակը՝ Վարդենիս- Basarkeçər, Ծաղկաձոր-Dəvəciçək, Սևան- Göycə և այլն:

¹⁴ Abdullaev Ə., Seyidov Y., Həsənov A., Müasir Azərbaycan dili, sintaxis. Dördüncü hissə. B., Şərq-Qərb, 2007, s. 270.

¹⁵ Грамматика азербайджанского языка (фонетика, морфология и синтаксис). Под ред. М. Ширалиева, Э. Севортяна, Баку, 1971, с. 273.

սույալ ադրբեջաներեն նախադասությունը և դրա հայերեն թարգմանությունը:

“Müvafiq hüququ olan şəxsin geriyə qayıtmaq qərarını ancaq ləyaqətli və təhlükəsiz şəkildə evinə dönməyin mümkündür olmasını, o cümlədən, qayıdış prosesi zamanı və qayıtdıqdan sonra həyatını qura bilməsi üçün müvafiq zəmanət və yetərli həcmdə resurs ayrılacağını, tarixi vətəninə fərdi və kollektiv hüquqlarının təmin ediləcəyini yəqin etdikdən sonra verə biləcəyi nəzərə alınmalıdır.”¹⁶

«Պետք է հաշվի առնել, որ համապատասխան իրավունք ունեցող անձի վերադառնալու որոշումը պետք է կայացվի միայն այն բանից հետո, երբ հնարավոր լինի տուն վերադառնալ արժանապատիվ և ապահով կերպով, ինչպես նաև երբ համապատասխան երաշխիքներ և բավարար ռեսուրսներ հատկացվեն վերադարձի ընթացքում և վերադառնալուց հետո, որպեսզի նա կարողանա կառուցել իր կյանքը, երբ համոզվի, որ իր պատմական հայրենիքում կապահովվեն իր անհատական և հավաքական իրավունքները»:

Այստեղ ադրբեջաներեն տարբերակում առկա է մեկ ստորոգյալ՝ *նəzərə alınmalıdır*, և խոսքը կառուցված է բայանունների, մակբայական դերբայների օգնությամբ, մինչդեռ հայերեն թարգմանելիս միտքը չաղավաղելու համար, նախադասությունը պետք է համադասական տիպից վերածել ստորադասականի՝ առանձին պարզ նախադասություններով ու առանձին ստորոգյալներով:

Գրագետ և պատշաճ թարգմանություն կատարելիս խիստ ցանկալի է պահպանել սույալ լեզվում ընդունելի համարվող շարահասական կանոնները, քանզի, ինչպես գիտենք, շարահասու-

¹⁶ İndiki Ermənistan ərazisindən qovulmuş azərbaycanlıların təhlükəsiz və ləyaqətli şəkildə, sülh yolu ilə geriyə qayıtmasının təmin edilməsi barədə konsepsiya – Qayıdış konsepsiyası. <https://zengezur.com/index.php/kh-b-rl-r/358-zh-rbi-az-rbaydzana-zhay-d-s-konsepsiyas-t-sdizh-edilib-m-tn> (մուտքի ամսաթիվ՝ 04.02.2023).

թյունը յուրաքանչյուր լեզվի ներքին օրինաչափություններից բխող բառական միավորների դասավորության ընդունված կարգն է նախադասություններում և բառակապակցություններում, այն որպես շարահյուսական արտահայտման միջոց, իր դերով նպաստում է նախադասության մտքի և բառակապակցության իմաստի ձևավորմանը: Ինչպես բնութագրում է հայ մեծանուն լեզվաբան Մ. Աբեղյանը, շարադասությունը բառերի կանոնավոր դասավորությունն է, որի օգնությամբ նախադասություններ են կազմվում¹⁷: Այն կարևոր դեր է կատարում բառակապակցություն և նախադասություն կազմելիս, խոսքի մասերի և նախադասության անդամների ընդգծման և ոճաբանության մեջ¹⁸:

Ադրբեջաներենի շարադասության համաձայն՝ պատմողական բնույթի պարզ նախադասության մեջ ենթական և ստորոցյալն ունեն հետևյալ հերթականությունը՝ անկախ այն բանից, թե ստորոցյալն արտահայտված է բայով, թե անուն խոսքի մասով, ենթական դրվում է նախադասության սկզբում, իսկ ստորոցյալը՝ վերջում, իսկ տրամաբանական շեշտը սովորաբար ընկնում է ստորոցյալի վրա: Մույն շարադասությունը, սակայն, ենթակա է փոփոխման և հաճախ կարելի է հանդիպել շրջուն շարադասությամբ կազմված նախադասություններ՝ մասնավորապես խոսակցական լեզվում, գրական-գեղարվեստական լեզվի ոճում և այլն: Ադրբեջաներենից հայերեն և հակառակ թարգմանությունների ժամանակ թարգմանիչը, հնարավորինս հետևելով շարադասական կանոններին, դասավորում է բառերն ըստ անհրաժեշտ հերթականության՝ չձեղվելով խոսքի բովանդակությունից: Երբեմն ադրբեջաներենից հայերեն թարգմանություն կատարելիս թարգմանիչը պահպանում է

¹⁷ Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 699:

¹⁸ Грамматика азербайджанского языка (фонетика, морфология и синтаксис). Под ред. М. Ширалиева, Э. Севортяна, Баку, 1971, с. 327.

ադրբեջաներենի շարադասությունը, որի արդյունքում հայերեն նախադասության անդամների ոչ ճշգրիտ դասավորվածությունը թույլ է տալիս ընթերցողին ենթադրելու, որ գործ ունենք օտար լեզվից թարգմանված տեքստի հետ:

*«Amerikanın Səsinin müxbiri Veronika Balderas İqlesias onların ABŞ-a gətirilməsində atılan diplomatik addımlar, siyasətin və yeni mühafizə strategiyalarının onların gələcəyinə necə təsir edə biləcəyindən danışıq».*¹⁹

«Ամերիկայի ձայնի թղթակից Վերոնիկա Բալդերաս Իգլեսիասը խոսում է այն մասին, թե նրանց՝ ԱՄՆ բերելու գործում ինչ դիվանագիտական քայլեր են արվել, թե ինչպես կարող են քաղաքականությունը և պահպանողական ռազմավարությունը ազդել նրանց ապագայի վրա»:

Ինչպես երևում է, ադրբեջաներենի պարզ ընդարձակ նախադասությունը հայերեն թարգմանելիս վերածվել է բարդ ստորադասական նախադասության, արդյունքում, բնականաբար, չի պահպանվել նաև ադրբեջաներենի շարադասությունը:

Հայտնի փաստ է, որ թարգմանության մեջ կարևորվում է որակյալ բառարաններից օգտվելու գործոնը, իսկ արհեստական բանականությունն ավելի լայն հնարավորություններ է բացում թարգմանիչների առջև: ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանում ադրբեջաներեն-հայերեն և հայերեն-ադրբեջաներեն բառարաններ չեն հրատարակվել, մինչդեռ խորհրդային տարիներին լույս են տեսել և՛ ադրբեջաներեն-հայերեն և՛ հայերեն-ադրբեջաներեն բառարաններ²⁰: Վերոնիկայալ ժամանակաշրջանում պետական մակար-

¹⁹ <https://www.amerikaninsesi.org/a/us-china-pandas-/7264968.html> (մուտքի ամսաթիվ՝ 04.02.2023):

²⁰ Բաղդամյան Ռ., Ադրբեջաներեն-հայերեն բառարան, Երևան, 1987, Բաղդամյան Ռ., Խալիլով Ի, Հայ-ադրբեջաներեն բառարան, Երևան, 1977:

դակով էին կարգավորվում գիտությանն ու կրթությանը առնչվող հարցերը. մասնավորապես մեծապես կարևորվում էր միութենական հանրապետությունների համապատասխան լեզուներով դասագրքերի, բառարանների, գրուցարանների տպագրությունը: Վերոհիշյալ աղբբեջաներեն-հայերեն և հայերեն աղբբեջաներեն բառարանները ժամանակի ընթացքում կորցրել են իրենց արդիականությունը նախ այն հիմնավորմամբ, որ աղբբեջաներենի բառապաշարում Աղբբեջանի անկախացումից հետո նկատելի փոփոխություններ են տեղի ունեցել, և ներկայումս Աղբբեջանում բառարանագրությունը զարգացում է ապրում, և մեծ ռեսուրսներ են ներդրվում ոլորտի առաջխաղացման համար²¹: Արդյունքում խորհրդային տարիներին գործածական համարվող բազմաթիվ աղբբեջաներեն բառեր (խոսքը հիմնականում ռուսերենից փոխառված բառերի մասին է) աստիճանաբար դուրս են եկել գործածությունից՝ փոխարինվելով նոր փոխառություններով կամ նախկինում հնաբանություն համարվող արաբապարսկական, թյուրքական ծագում ունեցող բառերով: Ի հավելումն նշենք, որ վերոնշյալ բառարանները տպագրված են կյուրեղատառ այբուբենով, որն այսօր Աղբբեջանում չի գործածվում: Սրա արդյունքում թարգմանիչները հիմնականում օգտվում են աղբբեջաներեն-ռուսերեն և ռուսերեն-աղբբեջաներեն, աղբբեջաներեն-անգլերեն և անգլերեն-աղբբեջաներեն և այլ բառարաններից, հիմնականում դրանց էլեկտրոնային տարբերակներից, ինչը երբեմն ավելի է բարդացնում թարգմանիչ աշխատանքը, քանի որ թարգմանության ընթացքում երրորդ լեզվի առկայությունը կարող է ի հայտ բերել որոշակի դժվարություններ: Հայաստանում վերջին տարիներին աղբբեջանագիտության զար-

²¹ Hüseyinova L., Azərbaycan dilində lüğətlərin təsnifi və lüğətçiliyin inkişaf tarixi. s. 341, <https://cyberleninka.ru/article/n/az-rbaycan-dilind-l-tl-rin-t-snifi-v-l-t-iliyin-inki-af-tarixi/viewer> (մուտքի ամսաթիվ՝ 04.02.2023).

գացման արդյունքում որոշակի աշխատանքներ են տարվել, բայց դրանով հանդերձ փաստենք, որ խիստ անհրաժեշտություն կա ժամանակակից, հազեցած, համընդգրկուն ադրբեջաներեն-հայերեն և հայերեն-ադրբեջաներեն բառարանի ստեղծման:

Թարգմանչական աշխատանք կատարելիս՝ մասնավորապես նեղ մասնագիտական բնույթի տեքստեր թարգմանելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել մասնագիտական եզրույթների, ինչպես նաև հնաբանությունների և նորաբանությունների տեղին և ճշգրիտ գործածությանը: Թարգմանչից պահանջվում են խորը գիտելիքներ, որպեսզի թարգմանության արդյունքում տերմինների և համապատասխան մասնագիտական արտահայտությունների ոչ պատշաճ գործածության արդյունքում չաղավաղվի խոսքի կամ տեքստի բովանդակությունը: Այս խնդիրն ավելի տեսանելի է դառնում այն պատճառով, որ ժամանակակից ադրբեջաներենը հարստանում է շնորհիվ նոր, փոխառյալ տերմինների, որոնց մի մասը, որպես նորաբանություն, առայժմ չունի լայն գործածություն, մինչդեռ դրանց կողքին շարունակում են կիրառվել մի շարք հնաբանություն համարվող բառեր, որոնք աստիճանաբար դուրս են գալիս գործուն բառապաշարից: Հատկապես իրավաբանական, բժշկական, տեխնոլոգիական ոլորտներին առնչվող տեքստերի թարգմանություններ կատարելիս ի հայտ են գալիս որոշակի դժվարություններ:

Ներկա փուլում, երբ համաշխարհային մակարդակով մարդկանց միջև շփումը և հաղորդակցությունը փոխել է իր բնույթը և ծավալը, գրեթե անսահմանափակ հնարավորություններ են ստեղծվել մարդկության համար միմյանց հետ հաղորդակցվելու՝ առանցքային դերակատարումը վերապահելով լեզվին: Չնայած այդ հնարավորություններին, հաճախ շփումը որևէ կոնկրետ լեզվով իր մեջ պարունակում է բազմաթիվ խոչընդոտներ: Դիցուք,

հայերը և աղբբեջանցիները, լինելով հարևան ժողովուրդներ, չունեն բարիդրացիական հարաբերություններ, ազատ շփում և հաղորդակցություն միմյանց հետ՝ կապված բազմաթիվ խորքային խնդիրների հետ: Աղբբեջանը շարունակում է իր ազդեցիվ քաղաքականությունը, հակահայկական բացահայտ քարոզչությունը պետական մակարդակով, ինչն իր դրսևորումն է գտնում բոլոր ոլորտներում: Արդյունքում աղբբեջաներեն թարգմանություններով զբաղվող հայախոս մասնագետների շրջանում նկատվում է մի առանձնահատկություն ևս. խոսքը վերաբերում է շատ խոցելի և նուրբ համարվող մի թեմայի՝ ռազմական բնույթի տեքստերի և նյութերի թարգմանությանը: Այս իրավիճակն ավելի արդիական դարձավ հատկապես 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո, երբ թարգմանիչներն ամենօրյա ռեժիմով կատարում էին աղբբեջանական մամուլի, սոցիալական հարթակների, պաշտոնական և ոչ պաշտոնական տեղեկատվական աղբբուրների մշտադիտարկում: Թերևս, ամենասարսափելին հայ գերիներին և զինծառայողներին վերաբերող նյութերի թարգմանությունն էր, ինչը պահանջում էր որոշակի սառնասրտություն և հավասարակշռություն; Այս տեսանկյունից աղբբեջաներենին տիրապետող թարգմանիչները միաժամանակ պիտի հաղթահարեին որոշակի հոգեբանական բարդույթներ, խոչընդոտներ, այլապես դրանք կխանգարեին թարգմանական գործը բարձր մակարդակով կատարելուն: Որպես նախորդի տրամաբանական շարունակություն շատ կարևոր է նաև թարգմանիչների՝ մեղիա գրագիտության կանոններին հստակ հետևելու անհրաժեշտությունը, քանզի այսօր տեղեկատվական դաշտը լցված է բազմաթիվ անհայտ ծագում ունեցող, չստուգված, ոչ արժանահավատ տեղեկություններով: Հարթակների, գործիքների ու միջոցների բազմազանության մեջ ինֆորմացիան մանիպուլացվում է, ինչն ազդում է մարդու զգացմունքների, պատկերացում-

ների, որոշումների վրա, մոլորեցնում ու շփոթեցնում է²²: Արդյունքում թարգմանիչը զուտ թարգմանչական աշխատանք կատարելուց բացի, միաժամանակ կատարում է նյութերի ֆիլտրման աշխատանք՝ ճշգրիտ տեղեկատվությունը կեղծ տեղեկատվությունից գատելու, տարբերակելու նպատակով: Պատկերն ավելի խտացված է Ադրբեջանի պարագայում, քանզի համացանցը լցված է բազմաթիվ ստահող տեղեկություններով, ընդհուպ հենց հայալեզու կայքերով²³, էջերով են տարածում կեղծ, հակահայկական բնույթի տեղեկատվություն:

Ադրբեջաներենով գրավոր և բանավոր խոսքը թարգմանելու ընթացքում նկատվում են էական տարբերություններ: Ինչպես գիտենք, գրավոր թարգմանության համար թարգմանիչն ունենում է բավարար ժամանակ իր աշխատանքը կատարելու, անհրաժեշտության դեպքում բառարանից օգտվելու, խմբագրելու, շտկումներ կատարելու համար: Մինչդեռ բանավոր թարգմանության, հատկապես համաժամանակյա թարգմանության ժամանակ թարգմանչի գործը բավականին բարդանում է՝ հաշվի առնելով և՛ ժամանակի մեջ տեղավորվելու անհրաժեշտությունը, և՛ խոսքը հանպատրաստից ճշգրիտ թարգմանելու, համարժեք բառերն ու արտահայտությունները հնարավորինս արագ և հստակ գտնելու կարևորությունը: Կարևոր է ընդգծել, որ բանավոր ադրբեջաներեն խոսքն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք փոքր-ինչ բարդացնում են թարգմանչի աշխատանքը: Անդրադառնանք դրանցից մի քանիսին. ադրբեջաներենը համարվում է բարբառներով հարուստ լեզու, և հաճախ որևէ կոնկրետ բարբառով խոսող մարդու խոսքը թարգմանելիս հանդիպում են բառեր և արտահայտություններ, որոնք գոր-

²² Մեղիա իգիտություն: Ուսումնական ձեռնարկ դասավանդողների համար, Երևան: Մեղիա նախաձեռնությունների կենտրոն, Երևան, 2022, էջ 6:

²³ <https://armenia.az/>, <https://caliber.az/> (մուտքի ամսաթիվ՝ 04.02.2023):

ծածական չեն գրական համարվող լեզվում կամ եթե անգամ գործածական են, ապա էական տարբերություն է զգացվում արտասանության մեջ: Կախված այն հանգամանքից, թե խոսողը ինչ ոճի խոսքով է հանդես գալիս՝ պաշտոնական, գեղարվեստական, խոսակցական, գուցե նաև ժարգոնային, թարգմանչի առաջ խնդիր է դրվում հաղթահարել նաև այդ ոճերում առկա խոսքային դժվարությունները: Հատկապես խոսակցական լեզվով խոսող մարդիկ սովորաբար խոսում են արագ, կրճատված վերջածանցներով և հաճախ դժվար է լինում հստակ սահմանել նախորդ և հաջորդ բառերի սահմանագիծը: Արդյունքում թարգմանչից պահանջվում է ունենալ հարուստ բառապաշար, փորձ տվյալ լեզվով հաղորդակցվելու և խոսակցական լեզվին բնորոշ լեզվական, արտասանական առանձնահատկությունները վեր հանելու և փոխանցելու համար: Հայախոս թարգմանչի համար խնդիրը կրկնակի բարդ է, քանզի վերջինս չունի հնարավորություն ձեռք բերելու աղբյուրներենով շփվելու պրակտիկ փորձ գուտ միայն համապատասխան միջավայրում գտնվելու անհնարինության պատճառով: Այս տեսանկյունից հայախոս թարգմանիչներին կարելի առանձնացնել հետևյալ կերպ՝ մինչև ԽՍՀՄ փլուզումը Աղբյուրենում ապրած և գործունեություն ծավալած անձինք և անկախ Հայաստանում ծնված անձինք, որոնք չեն ապրել աղբյուրենախոս միջավայրում, չեն ունեցել անմիջական շփում լեզվակիրների հետ: Առաջին դեպքում գործ ունենք լեզվակիր թարգմանիչների հետ, երկրորդ դեպքում՝ լեզվին տիրապետող, բայց ոչ լեզվակիր թարգմանիչների հետ:

Համառոտ անդրադարձ կատարենք նաև թարգմանության մեջ ոչ նվազ կարևոր դեր ունեցող կետադրական նշանների ճշգրիտ կիրառման առանձնահատկություններին. այսպես հայոց լեզուն ունի կետադրական նշանների կուռ համակարգ, ինչը չենք կարող ասել աղբյուրենների մասին: Աղբյուրենների գրավոր խոսքում

կետադրական նշանների՝ հետևողական, գիտական հենքի վրա կիրառման պատմությունը սկսվել է 20-րդ դարի 20-ական թվականներից, ինչը կապվում է լատինական տառագրությանն անցնելու, ադրբեջանական լեզվաբանության զարգացման և այլ գործոնների հետ²⁴: Առհասարակ կետադրության բնագավառում կարևոր է ազգային ավանդույթների պահպանումը, եթե դրանք ունեն առավելություն այլ լեզուների կետադրության համեմատ: Տարբեր լեզուներում գործող կետադրության ընդհանրությունների հետ միասին շատ լեզուներ ունեն յուրահատկություններ, սա վերաբերում է նաև հայերենին²⁵:

Այսպիսով՝ ամփոփելով վեր հանված խնդիրներն ու հանդիպող դժվարությունները, դրանք հաղթահարելու ուղիները կարող ենք փաստել.

- Հայերենը և ադրբեջաներենը, պատկանելով տարբեր լեզվաընտանիքների, ունեն որոշակի ընդհանրություններ և նմանություններ լեզվի տարբեր բաժիններում, ինչը թարգմանչի համար ավելի լայն հնարավորություններ է ստեղծում պատշաճ կատարելու թարգմանական աշխատանքը:

- Որպես արդիական խնդիր է մնում երկլեզու արդի բառարանների բացակայությունը, որին փոխարինելու են գալիս երրորդ՝ այլ լեզվով գրված միջնորդավորված բառարանները:

- Բառերի ճշգրիտ արտասանության և դրանք գրավոր խոսքում համապատասխան տառադարձությամբ արտահայտելու նպատակով թարգմանիչներն օգտվում են արդեն ձևավորված կանոններից և օրինաչափություններից:

²⁴ Hüseyinoğlu S., Dilimiz milli sərvətimiz. Bakı, 2018, s. 58.

²⁵ Աբրահամյան Ս. Գ., Հայերենի կետադրություն. ուսումնական ձեռնարկ, Երևան, 1999, էջ 63:

• Հոդվածում շոշափված (հեղ.՝ ռազմական) թեմատիկայի շրջանակներում թարգմանություն կատարելիս ի հայտ եկող հոգեբանական բարդությունները հաղթահարելու նպատակով կիրառվում են կոնկրետ մեթոդներ և մոտեցումներ, որոնք օգնում են, որպեսզի թարգմանիչը հաղթահարի դրանք, և այդ բարդությունները չազդեն թարգմանության որակի կամ օբյեկտիվության վրա:

• Նկատվում է ակնհայտ տարբերություն գրավոր և բանավոր թարգմանությունների միջև՝ սկսած հնչյունական, արտասանական նրբություններից մինչև շարահյուսության հետ կապված խնդիրները:

Հաշվի առնելով ադրբեջաներենի յուրահատկությունը, դրանով խոսող ժողովրդի հետ ունեցած բազում խորքային խնդիրները՝ առաջարկում ենք իրականացնել թարգմանիչների կատարած աշխատանքի որակի և արդյունքների մասնագիտական մշտադիտարկում, որի արդյունքների ներկայացումը, կարծում ենք, կբարելավի, թարգմանության որակը, ուշադրություն կդարձվի մեղիա գրագիտության կանոնների պահպանմանը, կկարևորվի արհեստավարժ թարգմանիչների աշխատանքը:

MAIN CHARACTERISTICS OF TRANSLATION WORK ON THE EXAMPLE OF ARMENIAN AND AZERBAIJANI LANGUAGES

*Lilit Movsisyan*²⁶

In the framework of professional communication, the concept of translation was characterized as interlingual and intercultural mediation, a type of communication in oral and written format, during which the content of the text is presented in another language, and the degree of relevance and accuracy of the translation largely depends on the problem faced by the translator. During

²⁶ Lilit Movsisyan is an Associate Professor at the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: lilitnane@gmail.com, ORCID 0009-0000-6748-6074.

translation, there is not only contact between two languages, but also between two cultures. From this point of view, the interaction between Armenian and Azerbaijani is unique in its nature, taking into account the unfriendly relations between the peoples who speak these languages, to put it mildly. In that context, it is important to state that the differences between the two languages require greater professionalism from the translator to perform high-quality, high-level translation work. The purpose of this work is to show the methods and means, thanks to which the translator will more easily fulfill the task before him and overcome the problems and difficulties that arise during the work. Linguistics also plays an important role in translation, and mastering the nuances of linguistics in both languages is also very important in translation. Despite the above-mentioned differences, nevertheless, in various fields, particularly in the information field, specialists often perform appropriate translations from Azerbaijani to Armenian and from Armenian to Azerbaijani, both in written and oral formats. Considering that this work is the first attempt of a comparative study between two languages in the field of translation, a neutral reference to the problems that appear during similar translation works will help specialists in organizing their work more efficiently and qualitatively. The work highlighted the main common features and patterns that will help to perform the translation work faster, more competently and in accordance with the accepted standards.

Keywords: translation, Armenian, Azerbaijani, intercultural communication, vocabulary, grammar, dictionary, word order, media literacy.

ОСНОВНЫЕ ХАРАКТЕРИСТИКИ ПЕРЕВОДЧЕСКОЙ РАБОТЫ НА ПРИМЕРЕ АРМЯНСКОГО И АЗЕРБАЙДЖАНСКОГО ЯЗЫКОВ

Лилит Мовсисян²⁷

В рамках профессионального общения понятие перевода характеризуется как межъязыковое и межкультурное посредничество, вид общения в устной и письменной форме, в ходе которого содержание текста представляется на другом языке, а степень актуальности и точности перевода во многом зависит от проблем, с которыми сталкивается переводчик. Во время перевода происходит контакт не только между двумя

²⁷ Лилит Мовсисян – доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, кандидат филологических наук, эл. почта: lilitnane@gmail.com, ORCID 0009-0000-6748-6074.

языками, но и между двумя культурами. С этой точки зрения взаимодействие армян и азербайджанцев носит уникальный характер, учитывая, мягко говоря, недружественные отношения между народами, говорящими на этих языках. В этом контексте важно констатировать, что различия между двумя языками требуют от переводчика большого профессионализма для выполнения качественной переводческой работы на высоком уровне. Цель данной работы – показать методы и средства, благодаря которым переводчик сможет легче выполнить поставленную перед ним задачу и преодолеть проблемы и трудности, возникающие в ходе работы. Языкознание также играет важную роль в переводе, и овладение нюансами лингвистики обоих языков также очень важно при переводе. Несмотря на вышеперечисленные различия, тем не менее в различных областях, особенно в информационной сфере, специалисты часто выполняют соответствующие переводы с азербайджанского на армянский и наоборот как в письменном, так и в устном формате. Учитывая, что данная работа является первой попыткой сравнительного исследования двух языков в области перевода, обращение к проблемам, возникающим при проведении аналогичных переводческих работ, поможет специалистам более эффективно и качественно организовать свою работу. В работе выделены основные общие черты и закономерности, которые помогут выполнить переводческую работу быстрее, компетентнее и в соответствии с принятыми стандартами.

Ключевые слова: перевод, армянский, азербайджанский, межкультурное общение, лексика, грамматика, словарь, порядок слов, медиаграмотность.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965:
2. Արքահանյան Ս. Գ., Հայերենի կետադրություն. ուսումնական ձեռնարկ: Երևան, 1999:
3. Մեղիա իգիտություն, ուսումնական ձեռնարկ դասավանդողների համար, Մեղիա նախաձեռնությունների կենտրոն, Երևան 2022:
4. Бархударов Л. С., Язык и перевод (вопросы общей и частной теории перевода). М., 1975.

5. Илюшкина, М. Ю., Теория перевода: основные понятия и проблемы (учеб. пособие). Изд-во Урал. ун-та, 2015.
http://lib.yu.am/disciplines_bk/ef64bea20d2eb6d0a2b29d948d43ad8d.pdf
(մուտքի ամսաթիվ՝ 15.06.2023).
6. Комиссаров В. Н., Теория перевода (лингвистические аспекты). М., 1990.
7. Мунен Ж., Вопросы теории перевода в зарубежной лингвистике. М., 1978.
8. Умерова М. В., Особенности перевода документов и текстов официального характера. Актуальные проблемы гуманитарных и естественных наук. № 12, 2011.
9. Феодоров А. В., Основы общей теории перевода (лингвистические проблемы). М.-СПб, 2002.
10. Шимановская Л.А., Современные теории перевода и их использование в работе с англоязычной научной статьей биотехнологического профиля. Вестник Казанского технологического университета, 2012.
11. Ширалиев М.Ш., Севортян Э.В., Грамматика азербайджанского языка (фонетика, морфология и синтаксис). Баку, 1971.
12. Ə.Abdullaev, Y.Seyidov, A.Həsənov, Müasir Azərbaycan dili, sintaxis. Dördüncü hissə. B., Şərq-Qərb, 2007.
13. Hüseynoğlu S., Dilimiz milli sərvətimiz. Bakı, 2018.
14. Hüseynova L., Azərbaycan dilində lüğətlərin təsnifi və lüğətçiliyin inkişaf tarixi, <https://cyberleninka.ru/article/n/az-rbaycan-dilind-l-tl-rin-t-snifi-v-l-t-iliyin-inki-af-tarixi/viewer> (մուտքի ամսաթիվ՝ 15.06.2023).

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ «ՊԱՏՄԱԿԱՆԱՑՎԱԾ»
ԿԵՐՊԱՐԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ. ՍՈՒԼԹԱՆ ԱԲՂՈՒԼ ՀԱՄԻԴ II -
ՆԱԽԱԳԱՀ ՌԵՋԵՓ ԹԱՅՅԻՓ ԷՐԴՈՂԱՆ ԶՈՒԳԱԶԵՆՈՆԵՐ*
Տաթևիկ Հակոբյան¹**

DOI 10.46991/jos.2024.25.1.164

Թուրքական պետական քարոզչամեքենայի և նրան ծառայող պատմաբանների կողմից սուլթան Աբդուլ Համիդ II-ի կերպարի հերոսացումն ու առասպելացումը չի սահմանափակվում պատմագիտական գրքերով, հոդվածներով, մասնագիտական շրջանակներում տեղի ունեցող քննարկումներով, այլ XXI դարի իրողություններին համընթաց լայնորեն շրջանառվում է սոցիալական ցանցերում, մեդիա հարթակներում, որտեղ պատմական զարգացումների իսկությունը, պատմագիտության համար քննարկների մեթոդաբանության կիրառումը կամ գիտականության պատշաճ մակարդակի ապահովումը հաճախ ստորադասվում են գրավիչ վերնագրերին ու պոպուլյիստական հայտարարություններին: Սուլթան Աբդուլ Համիդ II-ի հետևողական հերոսացման կարևորագույն ասպեկտներից է նրա և ներկայիս նախագահ Ռ. Թ. Էրդոդանի կերպարների համադրումը որպես նորամուծությունների կողմնակից, բայց միևնույն ժամանակ «պահպանողական, հայրենասեր, կրոնասեր առաջնորդ»: Այս երկու հերոսները հակադրվում են Մուսթաֆա Քեմալ Աթաթյուրքին և նրա գաղափարախոսությանը՝ իրենց մեջ կրելով նոր Թուրքիայի տեսլականի ամենավառ արտահայտումները:

Բանալի բառեր՝ Աբդուլ Համիդ Երկրորդ, նախագահ, Ռեջեփ Թայյիփ Էրդոդան, հերոսականացում, քարոզչություն:

* Հետազոտությունն իրականացվել է ՀՀ գիտության կոմիտեի ֆինանսական աջակցությամբ (Թեմայի ծածկագիր՝ 22YR –6B00):

¹ Տաթևիկ Հակոբյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասիստենտ է, պատմական գիտությունների թեկնածու, էլ. փոստ՝ tatevik.hakobyan@ysu.am, ORCID 0009-0000-2531-3562.

«Google» որոնման հարթակում «Ռեջեփի Թայյիփի Էրդողան» և «Աբդուլ Համիդ II» բանալի բառերով պարզ որոնման արդյունքները միայն բավարար են պատկերացնելու համար, որ ժամանակակից Թուրքիայում անցյալից ներկա «ներմուծված» կենտրոնական և ամենաարդիական քաղաքական կերպարը սուլթան Աբդուլ Համիդ II-ն է, որի գաղափարական կողմնորոշումները գործող նախագահի համար դառնում են ներքին և արտաքին քաղաքական որոշումներն արդարացնող հիմք, օսմանյան և ժամանակակից Թուրքիաների միջև շարունակականության ցուցիչ: Այդ շարունակականությունը կարելի է տառացիորեն տեսնել Աբդուլ Համիդի դեմքի ուրվագծից դեպի Էրդողանի դիմանկար ստվերային անցումներով տարատեսակ պաստառներում, որոնք կարելի է համարել պետական քարոզչամեթոդային հաջողված քայլ:

Ուշագրավ է, որ թուրքական հասարակության աչքերում նախագահ Էրդողանի և սուլթան Աբդուլ Համիդի նույնացմանը նպաստում են ինչպես նրանց համակիրները, այնպես էլ հակառակորդները: Պատմաբան, սյունակագիր Շյուքրյու Ալթընը «Կիսալուսնի երկու պահապանը» գրքի նախաբանում գրում է. «Երկու հայրենասեր, իսլամի երկու մարտիկ, երկու հզոր առաջնորդ... Արևմուտքի թիրախ դարձած սուլթան Աբդուլ Համիդ II և նախագահ Ռեջեփի Թայյիփի Էրդողան... Նրանց ժամանակները շատ նման են, թշնամիներն էլ՝ նույնը: Երկու առաջնորդներն էլ նույն փորձություններով են անցնում: Հարյուր տարի առաջ Աբդուլ Համիդին բռնակալ էին ասում, այժմ էլ Էրդողանին են բռնապետ հորջորջում: Երկուսին էլ մեղադրում են, որ հայ են, որ եզդի են»²: Թուրքական ընդդիմադիր «Լավ» կուսակցության նախագահ Մերալ Աքշեները

² Altın Ş., Hilal'in İki Muhafızı II. Abdulhamid - R. Tayyip Erdoğan. İstanbul, 2018, s. 14.

Գեզի այգու դեպքերը³ համեմատել էր 1908 թ. հեղաշրջման հետ՝ նշելով, որ եթե այն ժամանակ բողոքներն ուղղված էին Աբդուլ Համիդի դեմ, ապա այժմ բողոքների հասցեատերը էր դոլանն է՝:

Աբդուլ Համիդի և նախագահ Ռեջեփ Թայյիփ Էրդոլանի կերպարների զուգահեռումը ոչ թե մեկ-երկու դրվագ պարունակող երևույթ է, այլ քարոզչական տարբեր մակարդակներում իրականացվող համակարգված քաղաքականություն: Էրդոլանի և այլ գործիչների ելույթներից մինչ մասսայական հանդիսատեսի համար նկարահանվող բազմասերիանոց ֆիլմերն ուղղակի կամ անուղղակի կերպով կրում են այս միտումը: Անձամբ նախագահը ևս աջակցում է այս գործընթացին: Սուլթանական անցյալին տուրք տալով՝ նա իր ելույթներում օգտագործում է ժամանակակից թուրքերենում ակտիվ գործածություն չունեցող մեծ թվով օսմաներեն բառեր: Բացի այդ, հաճախ մասնակցելով սուլթան Աբդուլ Համիդի հետ կապված միջոցառումներին, քննարկումներին, ցանկացած պատեհ առիթով նախագահին ընդգծում է Աբդուլ Համիդի կառավարման կարևորությունը Թուրքիայի համար: Այսպես, 2018 թ. սուլթան Աբդուլ Համիդ II-ի մահվան հարյուրամյակին նվիրված գիտաժողովում Էրդոլանը հայտարարեց. «Աբդուլ Համիդը վերջին տիեզերական զահակալն էր, սակայն ոմանք ամեն կերպ փորձում են մեր երկրի պատմությունը սկսել 1923 թվականից, ջանում են մեզ հեռացնել մեր արմատներից, մեր հնավանդ արժեքներից»⁵:

³ Ստամբուլի Թաքսիմ հրապարակում գտնվող Գեզի քաղաքային զբոսայգում 2013 թ. տեղի են ունեցել բախումներ ցուցարարների և ոստիկանների միջև: Բախման պատճառը Ստամբուլի քաղաքային իշխանությունների որոշումն էր. հատել ծառերը և դրա փոխարեն կառուցել առևտրի կենտրոն:

⁴ Meral Akşener'den 'Erdoğan bugünün Abdülhamid'i' çıkışı.

https://www.youtube.com/watch?v=3B45NA6xNhQ&ab_channel=Yeni%C5%99Eafak (մուտքի ամսաթիվ 15.01.2023).

⁵ Cumhurbaşkanı Erdoğan: Abdülhamid dünyanın son evrensel imparatoru, Sabah (10.02.2018). <https://www.sabah.com.tr/gundem/2018/02/11/cumhurbaskani-erdogan-abdulhamid-han-dunyanin-son-evrensel-imparatorudur> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

2018 թ. Սիրիայի տարածքում իրականացված «Ձիթենու ճյուղ» ռազմական գործողության մասին խոսելիս նախագահը, կարծես հղում անելով Աբդուլ Համիդին, որը հրաժարվել էր Պաղեստինը վաճառել հրեաներին, ասել է. «Ես չեմ վաճառի հայրենիքի թեկուզ մի թիզ հող, որովհետև այդ հայրենիքը պատկանում է ոչ թե ինձ, այլ ժողովրդին: Այդ հողը ձեռք է բերել մեր ազգը արյան գնով»⁶:

Մեկ այլ առիթով նա համեմատականներ է տարել օսմանյան շրջանի և ներկայի միջև՝ ասելով. «Թուրքիայի Հանրապետությունն ընդամենը շարունակությունն է Օսմանյան կայսրության: Իհարկե, սահմանները փոխվել են, կառավարման համակարգը փոխվել է, բայց էությունը, ոգին նույնն է: Արևմուտքն իր գործը շարունակում է ցայսօր, միայն ժամանակներն են փոխվել և դերակատարները»⁷:

Երկրի ղեկավար շրջանակները նախագահ Էրդոդանի գլխավորությամբ սերիալների միջոցով ևս հաճախ յուրահաստուկ մեսիջներ են հղում հեռուստադիտողներին՝ փորձելով մի շարք հարցերի շուրջ նրանց մոտ ձևավորել իշխանություններին՝ ձեռնտու պատկերացումներ: Պատմական հեռուստասերիալներն ամրապնդում են հասարակության ազգայնական դիրքորոշումը, հիշեցնում կայսերական անցյալի մասին: Աբդուլ Համիդը՝ որպես օսմանյան վերջին հզոր սուլթան, այս շարքում առանձին տեղ ու դեր ունի, քանի որ հենց նրա կերպարն է առավել մոտ Ռ. Թ. Էրդոդանին, և նրա մոտեցումներն են առավել համապատասխանում ներկայիս նախագահի պատկերացումներին:

⁶ Cumhurbaşkanı Erdoğan, Sultan Abdülhamid'in Sözleriyle Zeytin Dalı Harekatı'nı Değerlendirdi, Milliyet (10.02.2018).

<https://www.milliyet.com.tr/cumhurbaskani-erdogan-sultan-abdulhamid-istanbul-yerelhaber-2588454/> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

⁷ TRT 1, TRT Haber ortak yayını (14.04.2017).

https://www.youtube.com/watch?v=IImhl7Gh1fc&feature=youtu.be&fbclid=IwAR2GQhclpS8OVHdMh19QYZ_zarwnuxdDUUnZV22oUKr0OdeFMVFD3yUDr_vw (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

Ինչպես նշում է Ստամբուլում հրատարակվող երկլեզու (հայերեն-թուրքերեն) «Ակոս» շաբաթաթերթի պոլսակագիր Է. Ջ. Դադլըզլուն, «Գահակալը՝ Աբդուլ Համիդ» հեռուստասերիալում Աբդուլ Համիդը կարծես սուլթան չէ, մեր օրերից անցյալ գնացած քաղաքական գործիչ է, որն իշխանությունը ստանում է ոչ թե ընտանիքից կամ գահից, այլ ժողովրդական սիրուց, որի արմատներն անհասկանալի են, ու տպավորություն է ստեղծվում, որ սուլթանը վերածնվում է Էրդողանի կերպարում⁸: Աբդուլ Համիդ-Էրդողան նմանության ոչ տեսանելի դետալներից է, օրինակ, ֆիլմի առաջին մասում սուլթանի նկատմամբ մահափորձը և նրա փրկվելը մի հասարակ քաղաքացու օգնությամբ: Այս դրվագը մասնագետները նմանեցնում են 2016 թ. հուլիսի 15-ին Էրդողանի վարչակարգի դեմ չհաջողված ռազմական հեղաշրջմանն ու դրա ընթացքում նախագահի կոչով հասարակ քաղաքացիների փողոց դուրս գալուն: Էրդողան-Աբդուլ Համիդ զուգահեռի շրջանակներում է նաև ֆիլմում ներկայացվում Եվրոպան Ասիային կապող «Մարմարա» ստորջրյա թունելի կառուցման նախաձեռնումը սուլթանի կողմից⁹: Նա ասում է. «Եթե ունենք երազանք, ապա այն մի օր իրականություն կդառնա, քանի որ մենք ապրում և աշխատում ենք հանուն մեր պետության»¹⁰: Տոդատակում պարզ է, որ Աբդուլ Համիդի այդ երազանքն իրականացվել է Էրդողանի ջանքերով, քանի որ Ստամբուլի մետրոյի Մարմարա գիծը շահագործման է հանձնվել հենց նրա իշխանության օրոք (2013 թ.):

⁸ Dağlıoğlu E. C., Necip Fazıl'dan Payitaht'a: Hangi Abdülhamid? Toplumsal Tarih, Sayı 306, İstanbul, Haziran 2019, s. 49.

⁹ Afyoncu E., Abdülhamid'in hayali ikinci kez gerçekleşti, (25.12.2016). <https://www.sabah.com.tr/yazarlar/erhan-afyoncu/2016/12/25/abdulhamidin-hayali-ikinci-kez-gerceklesti> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

¹⁰ Payitaht Abdülhamid, Size bir müjdem var Paşalar! Tünel-i Bahri! <https://www.youtube.com/watch?v=jF9TluUx9uM> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

Ժամանակակից թուրք պատմաբանները ևս այս գործընթացի մասնակիցն են կամ թերևս ավելի ճիշտ կլինի ասել կյանքի կոչողը: Այն դիտարկումը, որ Օսմանյան կայսրությունը չէր կործանվի, էթե Աբդուլ Համիդն իշխանության գլուխ մնար, պրոեկտվում է նաև Էրդողանի անձի վրա: Այս գաղափարը, հատկապես, ակտիվ դրվեց շրջանառության մեջ 2016 թ. հուլիսի 15-ի հեղաշրջման անհաջող փորձից հետո: Իշխանամետ թևի քարոզիչները այս հեղաշրջման և երիտթուրքական հեղաշրջման միջև առանց հապաղելու գուգահեռներ տարան: Մ. Արմաղանը նույնիսկ իր խմբագրությամբ լույս տեսնող «Derin Tarih» ամսագրի մեկ ամբողջական հատուկ համար նվիրեց այս թեմային:

Հատուկ համարի աչքի զարնող առանձնահատկություններից է, օրինակ, գլխավոր խմբագրի ողջույնի խոսքի թուրքերեն և օսմաներեն տարբերակների համաժամանակյա տեղադրումը: Մ. Արմաղանն այստեղ մեջբերում է Էրդողանի՝ «աշխարհն ավելին է, քան հինգ պետություն, և ինչու չփորձել վերականգնել Օսմանյան կայսրության փլուզումից հետո կոտրված հայելին»¹¹ արտահայտությունը՝ որոշակի մեսիջ հղելով մեծ պետություններին և, իհարկե, ակնարկելով ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի մշտական անդամ 5 պետություններին (ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Ռուսաստան ու Չինաստան): Ի դեպ, այս խնդիրն Էրդողանին այնքան է մտահոգում, որ վերջինս 2021 թ. հանդես է եկել առանձին գրքով, որտեղ խոսում է աշխարհում տիրող անարդարության, փախստականների ճգնաժամի, միջազգային ահաբեկչության, հակաիսլամականության մասին և ՄԱԿ-ի օրինակով փորձում է ցույց տալ աշխարհում առկա խտրականությունն ու երկակի ստանդարտները: Էրդողանը գրում է, որ «կշարունակենք ասել աշխարհը հինգից

¹¹ Armağan M., Umutların Yelkeni Tarih, Derin Tarih, Sayı 66, İstanbul, 2016, s. 6.

մեծ է, քանի դեռ չի հաստատվել մի համակարգ, որտեղ ճիշտն է ուժեղ, ոչ թե ուժեղն է ճիշտ»¹²: Իր հեղինակած «Աբդուլ Համիդ և Էրդոհան. երկու առաջնորդ, ում հանդիպեցրել է պատմությունը» հոդվածում Արմադանը նշում է, որ «նոր սերունդը չի մոռացել ո՛չ Աբդուլ Համիդի դեմ իրականացված հեղաշրջումն ու գահընկեցությունը, ո՛չ էլ տարիներ առաջ մահապատժի ենթարկված Ադնան Մենդերեսին, և այսօր արդեն պատրաստ չէ զոհաբերել նաև Էրդոհանին»¹³: Նա գրում է, որ հուլիսի 15-ի գիշերը [հեղաշրջման փորձի ժամանակ] անձամբ է լսել, թե ինչպես է մորուքավոր մի երիտասարդ գոռում. «Հասե՛ք, սուլթան Աբդուլ Համիդին գահընկեց են անում»: Արմադանը նշում է, որ այդ օրը փողոց դուրս եկած մարդիկ ցույց տվեցին, որ տարիներ շարունակ պատմական շեշտադրումները ճիշտ են արվել¹⁴: Այս ամենի վրա հենվելով՝ հեղինակը բխեցնում է հետևյալ բանաձևը. «Էրդոհանին սիրողները Աբդուլ Համիդին սիրողներն են, Աբդուլ Համիդի թշնամիները Էրդոհանի թշնամիներն են»¹⁵: Նա նաև հավելում է, որ ինչպես Միություն և առաջադիմություն կուսակցության հիմնադիրներից բժիշկ Աբդուլլահ Ջնդեթն իր ընկերոջը՝ Ֆահրիին, գրած նամակում Աբդուլ Համիդին սիրողներին անվանում էր «տգետ ժողովուրդ», այնպես էլ մեր օրերում Էրդոհանի համար աղոթող, սրտացավ մարդկանց «այսպես կոչված գիտնականները» [բնորոշումը հեղինակինն է - Տ. Հ.] «տգետ» են համարում¹⁶:

Արմադանը որոշակի խորհրդանշական նմանություններ է գտնում Աբդուլ Համիդի և Էրդոհանի դեմ իրականացվող գործողու-

¹² Erdoğan R. T., *Daha Adil Bir Dünya Mümkün*. İstanbul, 2021, s. 62.

¹³ Armağan M., *Abdülhamid ve Erdoğan: Tarihin Buluşturduğu İki Lider*, Derin Tarih, Sayı 54, İstanbul, 2016, s. 39–40.

¹⁴ Նույն տեղում, էջ 39:

¹⁵ Նույն տեղում, էջ 40:

¹⁶ Նույն տեղում, էջ 41:

թյունների միջև: Նա նշում է, որ տարօրինակ զուգադիպությամբ թե՛ 1909 թ. Աբդուլ Համիդի գահընկեցությունը, թե՛ 2007 թ. Գլխավոր շտաբի պետ Յաշար Բյույուքանըթի կողմից հուշագրի ստորագրումն ապրիլ ամսին են տեղի ունեցել, իսկ 2008 թ. հունիսի 8-ի սաբոտաժի ամսաթիվն էլ համընկնում է Մանասթըրում սուլթան Աբդուլ Համիդի ամենահավատարիմ Սյուշիր Շեմսի փաշայի դեմ Աթըֆ Քամչըլի արձակած կրակոցների 100-ամյակի հետ¹⁷: Ավելին, հուլիսի 15-ն էլ համընկնում է 1099 թ. Խաչակիրների կողմից Երուսաղեմի գրավման օրվա հետ¹⁸: «Եփրատի վահան» գործողությունը օգոստոսի 24-ին սկսելը ևս յուրահատուկ խորհուրդ ունի՝ Մերջիդաբըքում սուլթան Սելիմ I Ահեդի հաղթանակի օրվա հետ է համընկնում¹⁹: Պատմաբանը եզրափակում է, որ այսքան պատահականությունից մարդ կարող է կորցնել իրականության զգացումը²⁰:

Նույն ամսագրում մեկ այլ պատմաբան Շյուքրյու Հանիօղլուն որոշակի նմանություններ է գտնում 2016 թ. հուլիսի 15-ի և 1895 թ. Բաբ-ը Ալիի ցույցի միջև²¹: 2016 թ. հուլիսի 15-ը պատմաբան Ս. Քոջաբաշը համարում է էրդոհանին Աբդուլ Համիդի պես աքսորելու փորձ, որը ժողովուրդը թույլ չտվեց²²: Սուլեյման Քոջաբաշը զուգահեռներ է անցկացնում նաև սուլթան Աբդուլ Համիդի և էրդոհանի դեմ իրականացված իշխանությունից զրկելու փորձերի միջև, ինչպես նաև խոսում երկու դեկավարների նմանությունների մասին: Քոջաբաշը համարում է, որ նրանք երկուսն էլ ճակատագրի բերու-

¹⁷ Նույն տեղում, էջ 45:

¹⁸ Armağan M., Abdülhamid'in Kurtlarla Dansı 3. İstanbul, 2018, s. 69.

¹⁹ Armağan M., Umutların Yelkeni Tarih, s. 6.

²⁰ Armağan M., Abdülhamid ve Erdoğan: Tarihin Buluşturduğu İki Lider. s. 45.

²¹ Hanioglu Ş., II Abdülhamid Döneminde Bürokratlar ve Darbe. Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 54, s. 49.

²² Kocabaş S., Abdülhamid ve Erdoğan'a Yönelik Tasfiye Planlarındaki 5 Benzerlik. Derin Tarih, Sayı 54, İstanbul, 2016, s. 59.

մով են եկել իշխանության: Ավելին, թե՛ Աբդուլ Համիդին սահմանադրությունից հրաժարվելու, և թե՛ Էրդողանին պահպանողական մոդեռնիզմի գաղափարներն առաջ քաշելու համար որոշ շրջանակներ մեղադրում են, սակայն նրանք երկուսն էլ իրենց երկրի առջև ծառայած ներքին ու արտաքին քաղաքական վտանգների հաղթահարման մասին են մտածել²³: Այս վտանգներին դիմակայման կարևորագույն կետն է իսլամի նկատմամբ վերաբերմունքը: Մ. Արմաղանի կարծիքով նախագահ Էրդողանն ու սուլթան Աբդուլ Համիդը շատ նման են կրոնապաշտության և իսլամի համաշխարհային դերն արժևորելու տեսանկյունից: Մասնավորապես, ըստ հեղինակի, այդ մասին է վկայում այն փաստը, որ Էրդողանը ամեն պատեհ առիթով բարձրաձայնում է ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում իսլամական պետության ընդգրկված չլինելու փաստը²⁴: Արմաղանն իր հերթին գրում է, որ ինչպես Աբդուլ Համիդն ակտիվացրեց իսլամը որպես արտաքին քաղաքականության գործիք, այնպես էլ Էրդողանն է իսլամական գույներ վերադարձնում Թուրքիային²⁵:

Աբդուլ Համիդի և Էրդողանի միջև զուգահեռներ տարվում են գրեթե բոլոր ոլորտներում. օրինակ առողջապահության հարցին է անդրադառնում Բժշկական համալսարանի (Sağlık Bilimleri Üniversitesi) ռեկտոր, ԱԶԿ-ական քաղաքական գործիչ Ջևդեթ Էրդյուլը՝ նշելով, որ այս ոլորտում [Թուրքիայի պատմության ընթացքում –Տ. Հ.] երկու մարդ է լուրջ քայլեր արել՝ Ռ. Թ. Էրդողանն ու սուլթան Աբդուլ Համիդ II-ը: Ըստ հեղինակի՝ նրանց տեսլականներն այնքան մոտ են, որ թվում է, թե տասնամյակներ անց Էրդողանը պարզապես շարունակում է Աբդուլ Համիդի կիսատ թողած

²³ Նույն տեղում, էջ 57:

²⁴ Նույն տեղում, էջ 58:

²⁵ Armağan M., Abdülhamid ve Erdoğan: Tarihî Buluşturduğu İki Lider. s. 47.

գործը, մասնավորապես՝ հասարակության անապահով խավերի համար հիվանդանոցների բացումը և բժշկության ոլորտի համաշխարհային նորամուծությունների ներդրումը երկրում²⁶: Ձ. Էրդյուլը նախագահ Էրդոհանի և սուլթան Աբդուլ Համիդի մոտեցումներում միայն մեկ էական տարբերություն է տեսնում. Էրդոհանն ի տարբերություն Աբդուլ Համիդի անձամբ է այցելում հիվանդանոցներ և հետևում բարեփոխումների ընթացքին: Ըստ հեղինակի, թե՛ Աբդուլ Համիդ II-ի, թե՛ Էրդոհանի կարգախոսն է. «հասարակ մարդուն ապրեցրու, որ երկիրն ապրի»²⁷:

2008 թ. Էրդոհանի առաջարկած Կովկասյան պակտը Մ. Արմաղանը նմանեցնում է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Բալկանյան պակտ ստեղծելու համիդյան նախաձեռնության հետ՝ շեշտելով, որ նման մի նախաձեռնություն նաև Աթաթյուրքն է ունեցել 1933 թ.²⁸:

Մ. Արմաղանը երկու առաջնորդների միջև նմանությունների շարքում առանձնացնում է նաև այն, որ ինչպես ներկայումս ծնվող երեխաներին հաճախ են Թայյիփի անվանակոչում, այն ժամանակ էլ աղջիկների համար՝ Համիդե, տղաների համար Համիդ անունն էր տարածված²⁹:

Էրդոհան-Աբդուլ Համիդ նմանության հիմքերը Մ. Արմաղանը իր «Աբդուլ Համիդի պարը գայլերի հետ» գրքի վերջին՝ երրորդ հատորում կապում է 1950-ականներին քաղաքական օրակարգ մտած իսլամական մոդեռնիզացիայի կոնցեպտի հետ: Այս ճանապարհին խորհրդանշական համարելով 1970 թ. հունվարի 26-ին եվրոպա-

²⁶ Erdöl C., Sağlıkta Büyük Adamların Büyük Adımları. Derin Tarih, Sayı 54, İstanbul, 2016, s. 63–64.

²⁷ Նույն տեղում, էջ 67:

²⁸ Armağan M., Abdülhamid'in Kurtlarla Dansı 3, s. 148–153.

²⁹ Armağan M., Abdülhamid'in Kurtlarla Dansı 1, s. 70.

կան տարածքներում օսմանյան ամենամեծ կորուստներն արձանագրած Կառլոֆյան համաձայնագրի կնքման օրը³⁰ Նեզմեթթին Էրբաքանի՝ «Ազգային կարգ» կուսակցության հիմնադրումը՝ Արմաղանը շեշտում է, որ Ն. Էրբաքանը կուսակցության իրական հիմնադիրների թվում նշել է նաև սուլթան Աբդուլ Համիդի անունը³¹: Արմաղանը նշում է, որ Էրբաքանի այդ ելույթով իր մահից հիսուններկու տարի անց Աբդուլ Համիդը, կարծես, վերադարձավ քաղաքականություն: Նույն ծիրում է նա դիտարկում նաև 2018 թ. փետրվարի 10-ին սուլթան Աբդուլ Համիդի մահվան հարյուրերորդ տարելիցի կապակցությամբ կազմակերպված գիտաժողովում նախագահ Էրդոդանի ելույթը³², որտեղ վերջինս ցիտելով Ն. Ֆ. Քրսաքյուրեքին սուլթանին կոչել էր «օսմանյան ամենամեծ սուլթաններից մեկը, ում հասկանալը կնշանակի հասկանալ ամեն ինչ»³³:

Վերահաստատելով պատմաբանների մտքերը՝ 2018 թ. մարտին Էրդոդանի որդին՝ Բիլալ Էրդոդանը, անդրադառնալով հոր դեմ հնչող մեղադրանքներին, հայտարարել է. «Աբդուլ Համիդին հաղթեցին, թույլ չենք տա, որ Էրդոդանին էլ հաղթեն»³⁴:

Այսպիսով՝ 21-րդ դարի սկզբից և, հատկապես, մեր օրերում թուրքական պատմագրության Աբդուլ Համիդ II-ի քաղաքական կերպարի նկատմամբ հետևողական ուշադրության պատճառնե-

³⁰ Armağan M., Abdülhamid'in Kurtlarla Dansı 3, s. 55.

³¹ Armağan M., Erbakan Sultan Abdülhamid'i Partisinin Kurucusu İlan Etmisti, Derin Tarih, 02.2019. <https://www.derintarih.com/kapak-dosyasi/erbakan-sultan-abdulhamidi-partisinin-kurucusu-ilan-etmisti/> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024): Տե՛ս նաև Armağan M., Abdülhamid'in Kurtlarla Dansı 3, s. 57.

³² Armağan M., Abdülhamid'in Kurtlarla Dansı 3, s. 58.

³³ Recep Tayyip Erdoğan Abdulhamid'i Anlamak Programı Konuşması/10 Şubat 2018 https://www.youtube.com/watch?v=g23Xazq_Wo8 (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024)

³⁴ Erdoğan B., Abdülhamit Hanı yediler, Tayyip Erdoğan'ı yedirmeyeceğiz (04.03.2018) <https://gazetemanifesto.com/2018/bilal-erdogan-abdulhamit-hani-yediler-tayyip-erdogani-yedirmeyecegiz-159153/> (մուտքի ամսաթիվ՝ 05.04.2024).

րից սուլթանի և ժամանակակից Թուրքիայի նախագահ Ռ. Թ. Էրդողանի կերպարների միջև զուգահեռների անցկացման միտումն է որպես երկու «շինարար», «հայրենասեր», «կրոնասեր» առաջնորդների: Ընդ որում՝ այս գործին լծելով ԱԶԿ-ի շահերը սպասարկող պատմաբանների՝ Ռ. Թ. Էրդողանը կարողացել է որոշակիորեն կոտրել Աթաթյուրքի անձի պաշտամունքը, հասարակական ընկալման մեջ կարևորել իսլամի դերը և ներկայացնել Օսմանոյլուների դինաստիան առավել շահեկան լույսի ներքո:

**CREATING A "HISTORICIZED" IMAGE OF THE HEAD OF STATE:
JUXTAPOSITION OF THE IMAGES OF SULTAN ABDUL HAMID II
AND PRESIDENT RECEP TAYYIP ERDOGAN**

*Tatevik Hakobyan*³⁵

The glorification and heroization of the image of Sultan Abdul Hamid II by the Turkish state propaganda machine and the historians serving it is not limited to historical books, articles, discussions in professional circles, but in accordance with the realities of the 21st century, is widely distributed in social networks, media platforms, where the authenticity of historical events, the use of appropriate methodology or ensuring the proper level of scientificity are often subordinated to catchy headlines and populist statements. One of the most important aspects of the consistent glorification of Sultan Abdul-Hamid II is the parallelizing of his image with the current president, R. T. Erdoğan as an advocate of innovation but at the same time a "patriotic, religious leader". Carrying the most vivid expressions of the vision of the new Turkey, these two characters confront Kemalist ideology and personally the image of Mustafa Kemal Atatürk.

Keywords: *Abdul Hamid II, President, Recep Tayyip Erdoğan, Glorification, Propaganda.*

³⁵ Tatevik Hakobyan is an Assistant Professor at the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: tatevik.hakobyan@ysu.am, ORCID 0009-0000-2531-3562.

**СОЗДАВАЯ «ИСТОРИЗИРОВАННЫЙ» ОБРАЗ ГЛАВЫ
ГОСУДАРСТВА: СОПОСТАВЛЕНИЕ ОБРАЗОВ СУЛТАНА АБДУЛ
ХАМИДА II И ПРЕЗИДЕНТА РЕДЖЕПА ТАЙИПА ЭРДОГАНА**

Татевик Акопян³⁶

Прославление и героизация образа султана Абдул-Хамида II со стороны турецкой государственной пропагандистской машины и обслуживающих ее историков не ограничивается историческими книгами, статьями, дискуссиями в профессиональных кругах, а в соответствии с реалиями XXI века широко распространяется в социальных сетях, медиа-платформах, где подлинность исторических событий, применение соответствующей методологии или обеспечение должного уровня научности зачастую подчинены броским заголовкам и популистским заявлениям. Одним из важнейших аспектов последовательной героизации образа султана Абдул Хамида II является его отождествление с нынешним президентом Турции Р. Т. Эрдоганом в качестве сторонника инноваций, но в то же время «истинного патриота» и «приверженного религии» лидера. Являясь квинтэссенцией видения новой Турции, эти два образа противопоставляются идеям кемализма и лично образу Мустафы Кемаля Ататюрка.

***Ключевые слова:** Абдул Хамид II, президент, Реджеп Тайип Эрдоган, героизация, пропаганда.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Altın Ş., Hilal'in İki Muhafızı II. Abdulhamid - R. Tayyip Erdoğan. İstanbul, 2018.
2. Armağan M., Abdülhamid'in Kurtlarla Dansı 3, İstanbul, 2018.
3. Erdoğan R. T., Daha Adil Bir Dünya Mümkün, İstanbul, 2021.
4. Armağan M., Umutların Yelkeni Tarih, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 66, s. 6.
5. Armağan M., Abdülhamid ve Erdoğan: Tarihin Buluşturduğu İki Lider, Derin Tarih. İstanbul, 2016, Sayı 54, s. 39–47.

³⁶ Татевик Акопян – к.ист.н., ассистент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: tatevik.hakobyan@ysu.am, ORCID 0009-0000-2531-3562.

6. Dağlıoğlu E. C., Necip Fazıl'dan Payıtaht'a: Hangi Abdülhamid?, Toplumsal Tarih, İstanbul, Haziran 2019, Sayı 306, s. 44–50.
7. Erdöl C., Sağlıkta Büyük Adamların Büyük Adımları, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 54, s. 63–64.
8. Hanioglu Ş., II Abdülhamid Döneminde Bürokratlar ve Darbe, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 54, s. 48–55.
9. Kocabaş S., Abdülhamid ve Erdoğan'a Yönelik Tasfiye Planlarındaki 5 Benzerlik, Derin Tarih, İstanbul, 2016, Sayı 54, s. 56–59.
10. Afyoncu E., Abdülhamid'in hayali ikinci kez gerçekleşti (25.12.2016). <https://www.sabah.com.tr/yazarlar/erhan-afyoncu/2016/12/25/abdulhamidin-hayali-ikinci-kez-gerceklesti> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).
11. Armağan M., Erbakan Sultan Abdülhamid'i Partisinin Kurucusu İlan Etmisti, Derin Tarih, 02.2019. <https://www.derintarih.com/kapak-dosyasi/erbakan-sultan-abdulhamidi-partisinin-kurucusu-ilan-etmisti/> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).
12. Cumhurbaşkanı Erdoğan: Abdülhamid dünyanın son evrensel imparatoru. Sabah, 10.02.2018. <https://www.sabah.com.tr/gundem/2018/02/11/cumhurbaskani-erdogan-abdulhamid-han-dunyanin-son-evrensel-imparatorudur> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).
13. Cumhurbaşkanı Erdoğan, Sultan Abdülhamid'in Sözleriyle Zeytin Dalı Harekatı'nı Değerlendirdi. Milliyet, 10.02.2018. <http://www.milliyet.com.tr/cumhurbaskani-erdogan-sultan-abdulhamid-istanbul-yerelhaber-2588454/> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).
14. Erdoğan B., Abdülhamit Hanı yediler, Tayyip Erdoğan'ı yedirmeyeceğiz (04.03.2018). <https://gazetemanifesto.com/2018/bilal-erdogan-abdulhamit-hani-yediler-tayyip-erdogani-yedirmeyecegiz-159153/> (մուտքի ամսաթիվ՝ 05.04.2024).
15. Meral Akşener'den 'Erdoğan bugünün Abdulhamid'i' çıkışı. https://www.youtube.com/watch?v=3B45NA6xNhQ&ab_channel=Yeni%C5%9Eafak (մուտքի ամսաթիվ 15.01.2023).
16. Payitaht Abdülhamid, Size bir müjdem var Paşalar! Tünel-i Bahri! <https://www.youtube.com/watch?v=jF9TluUx9uM> (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

17. Recep Tayyip Erdoğan Abdulhamid'i Anlamak Programı Konuşması/10 Şubat 2018 https://www.youtube.com/watch?v=g23Xazq_Wo8 (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

18. TRT 1, TRT Haber ortak yayını (14.04.2017).
https://www.youtube.com/watch?v=IImhl7Gh1fc&feature=youtu.be&fbclid=IwAR2GQhc1pS8OVHdMh19QYZ_zarwnuxdDUmZV22oUKr0OdEFMVFD3yUDr_vw (մուտքի ամսաթիվ՝ 20.04.2024).

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ
ԿԱՅՄԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 19-ԲԴ ԴԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՅԵՐԻ
ՎԻՃԱԿԸ**

Միեր Աբրահամյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.179

Օսմանյան կայսրության թուլացմանը զուգընթաց աճում էին ազգային խնդիրները երկրի ներսում: Այս խնդիրների լուծման համար օսմանյան ղեկավարները դիմեցին տարատեսակ միջոցների՝ կանխելու քաղաքական բուռն պրոցեսները կապված հպատակ ժողովուրդների՝ այդ թվում հայերի հետ: Բարենորոգումների այս գործընթացը ուղղված էր բարելավելու քրիստոնյաների վիճակը, սակայն դրանք լուրջ փաստաթղթեր էին և սին էլոյթներ: Օսմանյան ղեկավարները և բարենորոգիչները մի քայլ անգամ չէին կատարում թեթևացնելու քրիստոնյաների կյանքը և հենց այս ժամանակաշրջանում էլ ներդրվեց իսլամացման, ուժացման և ոչնչացման ազգային ծրագիրը:

***Բանալի բառեր՝** Օսմանյան կայսրություն, ազգային խնդիրներ, իսլամացում, ուժացում, բարեփոխումներ, հայեր:*

Օսմանյան կայսրությունում տարատեսակ ոլորտներում առկա խնդիրները ստիպեցին, որպեսզի իշխանությունները քայլեր ձեռնարկեն բարեփոխումների ուղղությամբ: Արդեն 18-րդ դարի վերջին բարեփոխումների շուրջ քննարկումներն ավելի առարկայական դարձան, երբ 1791 թ. Ռումելիի քաղիասկեր Թաթարջըք Աբդուլլահ էֆենդին ժամանակի սուլթան Սելիմ III-ի հրամանով կազմում է բարեփոխումների ծրագիր²: Այս ամբողջ գործընթացում

¹ Միեր Աբրահամյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ է, պատմական գիտությունների թեկնածու, էլ. փոստ՝ mher.abrahamyan@ysu.am, ORCID՝ 0009-0009-1970-8184:

² Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Երևան, 2009, էջ 44-45:

կարևոր տեղ են զբաղեցնում հպատակ ոչ մուսուլման ազգերի իրավունքների, կարգավիճակի հարցերը: Միննույն ժամանակ, կարևոր է նկատել, որ հենց այդ ժամանակաշրջանում որակական նոր մակարդակ թևակոխեցին օսմանյան բռնապետական լծից ազատվելու համար հպատակ ժողովուրդների մղած ազգային-ազատագրական պայքարները: Իհարկե, այս շարժումներն, ի վերջո, հանգեցնելու էին Օսմանյան կայսրության տիրույթների ձևափոխումների, և ինչպես նկատում է ակադեմիկոս Ռ.Սաֆրաստյանը. «Օսմանյան պետության ղեկավարների համար առաջնային նշանակությունն ձեռք բերեց երկրի տարածքային ամբողջականության պահպանումը, ինչը նրանցից պահանջեց նոր միջոցների որոնում քրիստոնյա ժողովուրդների ազատագրական շարժումները չեզոքացնելու համար»³: Այսինքն՝ օսմանյան պետության խնդիրը ոչ թե իրական բարեփոխումներով քրիստոնյաների վիճակի բարելավումն էր, այլ բարեփոխումներ անցկացնելու իմիտացիայի շղարշի ներքո քրիստոնյաների ազգային-ազատագրական պայքարների մարումը: Հենց նշված ժամանակաշրջանում տեղի էին ունենում մակերեսային փոփոխություններ, որոնք իրականում ձևական բնույթ էին կրում: Օրինակ, հայտնի օսմանյան պետական գործիչ, մեծ վեզիր Մուսթաֆա փաշա Բայրաքթարի օրոք ընդունվեց հրամանագիր, որով արգելվում էր կիրառել քրիստոնյաներին վիրավորող «գյավուր» (անհավատ) տերմինը, սակայն, ինչպես նկատում է Ռ. Սաֆրաստյանը. «այդ օրենքը որևէ գործնական նշանակություն չունեցավ և «գյավուր» բառի օգտագործումը շարունակվեց մինչև կայսրության կործանումը»⁴:

Ինչևէ, մի քանի տասնամյակ տևած գործընթացի արդյունքում՝ 1839 թ. սուլթան Աբդուլ Մեջիդ I-ի հրովարտակով, որը հայտնի է

³ Նույն տեղում, էջ 44:

⁴ Նույն տեղում, էջ 46:

«Գյուլիհանեի հաթթը շերիֆ» անվանումով, հոչակվեց Օսմանյան կայսրության բոլոր բնակիչների կյանքի, ինչքի, իրավունքների երաշխիքը: Այսպիսով՝ Օսմանյան կայսրության պատմության մեջ սկսվում է մի ժամանակաշրջան, որը հայտնի է Թանզիմաթյան (բարեփոխական) անվամբ: Սակայն պատմությունը ցույց տվեց, որ քրիստոնյաների վիճակի՝ «Գյուլիհանեի հաթթը շերիֆ»-ով նախատեսված փոփոխությունները կյանքի չկոչվեցին: Ինչպես նկատում է Դ. Երեմենը, Թանզիմաթյան բարեփոխումների մեծ մասը մնաց որպես «բարի ցանկություն»⁵: Իրականում մուսուլմանների և քրիստոնյաների իրավահավասարության հոչակված սկզբունքների հանդեպ քրիստոնյա ժողովուրդները հավատ չէին տաձում, իսկ մուսուլման հասարակությունը թշնամաբար էր տրամադրված այդ բարեփոխումներին, որոնք իրենց հավասարեցնում էին «ցյավուրների» հետ: Սակայն այս ամենի զավեշտն այն էր, որ իրենց իսկ հայտարարած բարեփոխումների նկատմամբ անկեղծ չէին հենց իրենք՝ օսմանյան բարձրագույն իշխանությունները: «Թանզիմաթի հայր» հոչակված վեզիր Մուսթաֆա Ռեշիդ փաշան ֆրանսիական մի պաշտոնյայի հետ զրույցում անկեղծանալով՝ ասել էր, որ իր նպատակն է ոչ թե հավասարեցնել մուսուլմանների և քրիստոնյաների իրավունքները, այլ ընդամենը մեղմացնել եղած անհավասարությունը⁶:

Հայտարարված բարեփոխումներից հետո ընկած ժամանակահատվածում Օսմանյան կայսրության ոչ մուսուլման ժողովուրդների վիճակի մեջ որևէ էական փոփոխություն չարձանագրվեց: Եվ պատահական չպետք է համարել, որ 1856 թ. սուլթանը հրապարակեց կայսրությունում բարեփոխումների անցկացման երկրորդ

⁵ Երեմեն Դ., Թուրքերի ծագումը (ծագումը և էթնիկական պատմության հիմնական էտապները), Երևան, 1975, էջ 232:

⁶ Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 49-50:

հրովարտակը՝ «Հաթթ-ը հյումայուն»-ը, որը հիմնականում կրկնում էր այն դրույթները, որոնք արտահայտված էին «Գյուլիհանեի Հաթթ-ը շերիֆում»: Այս կրկնությունը բարեփոխումների առաջին շրջանի տապալման ևս մեկ ապացույց էր: Երկրորդ հրովարտակից հետո սկսված, այսպես կոչված, թանգիմաթյան երկրորդ փուլը նույնպես էական փոփոխություններ չմտցրեց ոչ մուսուլմանների դրության մեջ:

Հարկ է շեշտել նաև, որ այս շրջանի կարևոր պետական գործիչներ (վեզիրներ) Ալի և Ֆուադ փաշաներն էլ ավելի առաջնային դարձրին և զարգացրին Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդների «միախառնման և միաձուլման» քաղաքականությունը⁷: Սակայն «միախառնումն ու միաձուլումը», ըստ էության, նշանակում էր ձուլում «օսմանյան ազգի» մեջ: Ռ. Սաֆրաստյանը աղբյուրագիտական լայն հենքի վրա բացահայտել է թուրք «բարեփոխիչների» այս քաղաքականության իրական էությունը՝ մասնավորապես գրելով. «Գնահատելով Ալի փաշայի և Ֆուադ փաշայի լայնորեն պրոպագանդվող «միաձուլումը»՝ գալիս ենք եզրակացության, որ այն ոչ այլ ինչ էր, եթե ոչ քրիստոնյա ժողովուրդների «խաղաղ» ապագայնացման և ուժացման փորձ և դրանով իսկ Օսմանյան կայսրությունում ազգային հարցի լուծում»⁸:

19-րդ դարի երկրորդ կեսի Օսմանյան կայսրության քաղաքական կյանքում տեղի ունեցող զարգացումների մեջ առանձնահատուկ տեղ ունի 1865 թ. «Նոր օսմաններ» կոչվող գաղտնի խմբակի ստեղծումը: Թանգիմաթյան բարեփոխումներին դեմ տրամադրված գործիչներն այս խմբակով հիմք դրեցին Օսմանյան կայսրությունում սահմանադրական շարժմանը⁹: «Նոր օսմանները» որդեգրել

⁷ Նույն տեղում, էջ 54:

⁸ Նույն տեղում, էջ 59:

⁹ Նույն տեղում, էջ 73:

Էին հստակ հակաքրիստոնեական դիրքորոշում, և Թանգիմաթյան բարեփոխումների հիմնական քննադատություն էլ հենց խարսխված էր իսլամական մոլեռանդության վրա: Նրանց համար անընդունելի էր մուսուլմանների և «գյավուրների» թեկուզ և միայն թղթի վրա հռչակված հավասարությունը: Քաղաքական գործընթացները, ի վերջո, հանգեցրին 1876 թվականին Օսմանյան կայսրության առաջին սահմանադրության ընդունմանը: Ակնհայտ էր, որ «սահմանադրականները» ևս խիստ բացասաբար էին տրամադրված ոչ մուսուլման ժողովուրդների նկատմամբ. «սահմանադրական շարժման» ակնազարդ դեմքերից և փաստացի ղեկավարներից մեկը՝ «ազատական» հայացքներով հայտնի քաղաքական գործիչ Միդհատ փաշան, մարմնավորում էր թուրքական բռնատիրության բոլոր ավանդույթները: Հիրավի արժեքավոր է Ռ. Սաֆրաստյանի այն դիտարկումը, որ հենց Միդհատ փաշան ցեղասպանության ծրագիրը դարձրեց Օսմանյան կայսրության պետական քաղաքականության անկյունաքար¹⁰:

Ինչպես նշում է բելգիացի մի իրավաբան. «Միդհատյան սահմանադրությունը հստակ ցույց է տալիս, որ դրա իրական նպատակն էր հետաձգել այն ժամանակը, երբ Եվրոպան Բարձր դոնից կպահանջի ավելին, քան գեղեցիկ խոսքեր և օրենքներ: Այլ կերպ ասած փորձում էին թույլ չտալ, որպեսզի Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնվող քրիստոնյաների ազգային հետաքրքրությունները ընկնեին եվրոպական պաշտպանության տակ»¹¹:

Ինչպես ցույց տվեց պատմությունը, ո՛չ Թանգիմաթյան բարեփոխումների երկու փուլերը, ո՛չ սահմանադրական շարժումն ու

¹⁰ Նույն տեղում, էջ 156:

¹¹ Дадрян В., История армянского геноцида. Ереван, 2007 с. 37.

դրա հռչակումը փոփոխություն չմտցրին քրիստոնյաների և, մասնավորապես, հայերի դրության մեջ: Վերլուծելով թանգիմաթի շրջանը և տեղի ունեցած իրադարձությունները՝ Ռ.Սաֆրաստյանը գալիս է այն ուշագրավ եզրահանգմանը, որ հենց այդ ժամանակը հիմք ծառայեց կայսրությունում նախացեղասպանական իրավիճակի ստեղծման համար¹²:

Այս բարեփոխումների փաթեթները, փաստացի փորձ էր Եվրոպայի կողմից ճանաչել Օսմանյան կայսրությունը որպես կենդանի օգանիզմ, սակայն սա անխուսափելիորեն անօգուտ գործ էր, քանի որ Օսմանյան կայսրությունը շարունակեց մնալ աստվածապետական պետություն, ինչ արդյունքում էլ ավելի ուժեղացրեց ճնշումները իր տիրապետության տակ գտնվող քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ և վերծվեց ազգային խնդիրներով «եռացող կաթսայի»¹³:

Հետաքրքիր է դիտարկել հայերի բռնի իսլամացման ուղղությամբ արվող քայլերը նշված ժամանակահատվածում, երբ Օսմանյան կայսրության և՛ ներքին, և՛ արտաքին քաղաքականության մեջ տեղի էին ունենում էական շրջադարձեր: Փաստերը ցույց են տալիս, որ 19-րդ դարում ևս օսմանյան իշխանությունները շարունակում էին իրականացնել ոչ մուսուլմանների նկատմամբ որդեգրած քաղաքականության հիմնական դրույթները, այն է՝ հարկային և ֆինանսական հալածանքի միջոցով նրանց դրդել «կամովին» իսլամացման¹⁴, իսկ առավելապես կրոնափոխ անել մահվան սպառնալիքով:

Նույնիսկ բարեփոխումների նախաձեռնողների և իրականացնողների համարում ունեցող գործիչները ոչ մուսուլման ժողո-

¹² Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 72:

¹³ Дадрян В., նշվ. աշխ., էջ 27:

¹⁴ Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984, էջ 58:

վուրդների նկատմամբ իրենց քաղաքականությամբ և մտածելակերպով չէին տարբերվում իրենց նախորդներից: Ռ. Սաֆրաստյանը շեշտում է, որ 19-րդ դարի կեսերի օսմանյան քաղաքական կյանքի ամենահայտնի գործիչներ, «բարեփոխականներ» Ալի և Ֆուադ փաշաները *«ամեն հարմար պահի դիմում էին նաև ատելի «անհավատներից» ազատվելու թուրքական իշխանավորների հին փորձված միջոցին՝ բռնի իսլամացմանը»*¹⁵: Իսկ սահմանադրական շարժման «կնքահայր» Միդհատ փաշայի իրական դիրքորոշումը ոչ մուսուլման ազգերի նկատմամբ ցայտուն կերպով արտահայտվում է ֆրանսիացի Բենուա Բրունսվիկի հետ նրա անձնական զրույցում, որի ժամանակ, խոսելով օսմանյան նախորդ իշխանությունների մասին, Միդհատ փաշան քննադատել է նրանց այն պատճառով, որ նրանք սխալվել են՝ *«չստիպելով մեր հպատակներին... ընդունել իսլամ: Այդ պետք է սկսել»*¹⁶:

Եվ բնական է, որ նման մտածելակերպ ունեցող ղեկավարների պարագայում «բարենորոգումներին» զուգահեռ շարունակվել է քրիստոնյաների բռնի իսլամացման քաղաքականությունը: Փաստերը ցույց են տալիս, որ այդ շրջանում ևս հայերի նկատմամբ ուժացման քաղաքականությունը հենված էր առավելապես բռնի կրոնափոխության վրա: Այս առիթով պատմաբան Հայկ Ղազարյանը գրում է. *«Հայերի ուժացման քաղաքականությունը մտավ նոր փուլի մեջ, որի իրականացումը հանձնարարվեց իսլամ շեյխերին, քուրդ աղաներին, տեղական կառավարիչներին»*¹⁷: Նույն հեղինակի աշխատությունում մեջբերված է Կոստանդնուպոլսի հայոց ազգային ժողովի մի բողոքագիր, որում ասված է. *«Կանայք և անչա-*

¹⁵ Սաֆրաստյան Ռ., նշվ. աշխ., էջ 60:

¹⁶ Նույն տեղում, էջ 156:

¹⁷ Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Երևան, 1967, էջ 353:

փահաս մանկունք բռնի մահմեդականության դարձնելու ջանքերն՝ որ մոլեռանդից ձեռք կըլլան, շատ անգամ կատաւարության անդամոց կողմէ կողմնակցութիւն կը գտնեն և այս բաւական աղէտ մը եղած է ժողովրդեան»¹⁸:

Սակայն, ի տարբերություն նախորդ շրջանների, 19-րդ դարում հայերի բռնի իսլամացման քաղաքականությունը բախվում էր որոշակի դժվարությունների, որոնցից պատմաբան Արման Կիրակոսյանն առանձնացնում է ոչ մուսուլման ժողովուրդների ազգային ինքնագիտակցության զարթոնքն ու արևմտյան տերությունների ճնշումները¹⁹: Աբդուլ Համիդ 2-րդը արևմտյան պետությունների ճնշման և ընդհանրապես Հայկական հարցի ծավալման դեմ որդեգրեց մի քաղաքականություն, որում առանցքային դեր հատկացվեց հակահայկականությանը, կրոնական մոլեռանդության բորբոքմանը, կոտորածին և բռնի իսլամացմանը²⁰: Կարծիքներ կան, որ հենց արևմտյան տերությունների ճնշումը ստիպեց, որպեսզի սուլթան Աբդուլ Համիդը փորձի ստեղծել այլընտրանք ի դեմս մուսուլմանական աշխարհի՝ լայն տեղ տալով պանիսլամիզմին: Այս եզրահանգման հեղինակ, ականավոր պետական գործիչ և գիտնական Ջոն Կիրակոսյանը ներկայացնում է այդ դրույթից բխող սուլթանի հաջորդ տրամաբանական քայլը. «Սուլթանն ու իսլամի նրա հավատարիմ սպասավորները ճիգ ու ջանք չէին խնայում Արևմտյան Հայաստանում մահմեդական կրոնի դիրքերն ամրապնդելու ուղղությամբ: Դրա առաջին պայմանը հայության բռնի հավատափոխությունն էր»²¹: Որդեգրելով պանիսլամիզմի գաղափարա-

¹⁸ Նույն տեղում, էջ 353:

¹⁹ Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 2007, էջ 4:

²⁰ Նույն տեղում, էջ 9:

²¹ Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, Երևան, 1982, հ. 1, էջ 19:

խոսությունը՝ Աբդուլ Համիդն էլ ավելի ուժեղացրեց իսլամական մոլեռանդությունը և կարծում էր, որ «*իր գահի անսասանությունը հնարավոր էր ապահովել միայն կայսրության իսլամացումով*»²²: Ֆրանսիացի պատմաբան Ժակ դը Մորգանը կարծիք է հայտնում, որ միայն 1870–1890 թթ. ընթացքում արդեն բռնի իսլամացվել էին շուրջ 100 հազար հայեր²³: Իսկ 1892 թ. «Դրոշակը» ահազանգում է. «*Բռնի կրոնափոխությունը օրեցօր շատանում է...*»²⁴:

19-րդ դարում Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող քաղաքական գործընթացներն առիթ էին դառնում նաև այլ բնույթի զարգացումների, որոնց շարքում որոշակի տեղ ունեն նաև հայերի բռնի կրոնափոխության և դրան հարակից այլ հարցեր: Այսպես, Օսմանյան կայսրության թուլացումը թույլ էր տալիս այլ պետություններին առավել հաճախ միջամտել այդ պետության ներքին գործերին: Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների իրավունքների շարունակական ոտնահարումն ու բռնի կրոնափոխվածների իրողությունը դարձան խաղաթուղթ մեծ տերությունների ձեռքում: Այսուհանդերձ, հատկանշական է, որ արտաքին միջամտության արդյունքում արձանագրված որոշակի փոփոխությունները բռնի իսլամացված հայերի շրջանում նոր զարգացումների ազդակ դարձան: Օրինակ, Ղրիմի պատերազմից հետո՝ 1856թ., Օսմանյան կայսրությունում արգելվեց իսլամից հրաժարվելու և այլ կրոն ընդունելու համար սահմանված մահապատիժը²⁵: Սրանից հետո նախկինում իսլամ ընդունած օսմանյան հպատակ-

²² Պողոսյան Ս., Գոյասման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ և մեկնաբանություններ), Երևան, 1988, էջ 16:

²³ Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980, էջ 408:

²⁴ Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2008, էջ 70:

²⁵ Гордлевский В., К истории тайных христиан в Малой Азии (из поездки в Трапезунд). Избранные сочинения, М., 1962, том III, с. 332.

ները և, մասնավորապես, հայերը սկսեցին վերընդունել քրիստոնեություն, որը լուրջ մտահոգության առիթ դարձավ իշխանությունների համար: Փաստերը ցույց են տալիս, որ բռնի կրոնափոխ հայերի շրջանում քրիստոնեության վերադառնալու գործընթացը, հատկապես, նկատելի է եղել 1840-1850-ական թվականներին, այսինքն՝ Թանզիմաթյան բարեփոխումների հռչակման ժամանակաշրջանում²⁶: Այս տարիներին տարբեր գավառների ղեկավարություններին հանձնարարվել է անգամ պատրաստել այն հայերի ցուցակը, որոնք ցանկանում էին վերադառնալ քրիստոնեության: Արմատներին վերադարձի գործընթացում զգալի տեղաշարժեր նկատվեցին նաև օսմանյան առաջին սահմանադրության ընդունման ժամանակաշրջանում: Ինչպես նշում է Ն. Հովակիմյանը. «Մահմանադրության շրջանին հայ ու յոյն մահմետականներու լեզուի կապանքները քանդուած էին եւ ժամանակի խնդիր էր անոնց դարձը դէպի իրենց ազգն ու եկեղեցին»²⁷: Ազգագրագետ Սեյլանը ևս կարծիք է հայտնել, որ եթե օսմանյան իշխանություններն Արևմտյան Հայաստանում իրական բարեփոխումներ իրականացնէին, ապա մեծ թվով կրոնափոխված հայեր կվերադառնային քրիստոնեության²⁸:

Տարբեր տարիներին արձանագրված փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ բռնի կրոնափոխված հայերն ամեն հարմար առիթի դեպքում ձգտում էին վերադառնալ իրենց ակունքներին. դա կարող էր տեղի ունենալ իսլամացվելուց անգամ տասնամյակներ անց: Օրինակ՝ 1887 թվականին նման մի ուշագրավ տեղեկու-

²⁶ Simonian H., Hemshin from Islamicization to the End of the Nineteenth Century. The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey. London-New York, 2007, p. 75.

²⁷ Յովակիմեան Յ., Պատմութիւն Հայկական Պոնտոսի, Պէյրուք, 1967, էջ 70:

²⁸ Սեյլան, Տաճկահայաստանի ազգաբնակչությունները, Մուրճ, թիվ 7, Թիֆլիս, 1895, էջ 952-953:

թյուն է փոխանցում «Մշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունին: Այսպես, խոսելով ռուս-թուրքական 1877–1878 թթ. պատերազմից հետո Ռուսաստանի կայսրությանն անցած մի շարք տարածքների և այնտեղի բնակչության մասին՝ Արծրունին նշում է. «Երբ որ շատ տարի սրանից առաջ մենք այն միտքը յայտնեցինք, թէ Ռուսաստանից նուաճուած Կարսի եւ մասամբ Բաթումի նահանգում բազմաթիւ են հայ-մահմետականներ, որոնք բռնի կերպով ընդունեցին իսլամը թիրքաց տիրապետութեան տակ,- մեզ ոչ ոք չէր ուզում հաւատալ: Եւ այն ժամանակ մենք մատնացոյց անելով այդ երեւոյթի վրա, հրաւիրում էինք մեր հոգեւորականութիւնը հոգալ այդ մահմետականացած հայերի մասին, այն րօպէից, երբ Կարսի եւ Բաթումի նահանգը անցել էին քրիստոնէայ պետութեան, Ռուսաստանի տիրապետութեան տակ: Այժմ, մեր ստացած տեղեկութիւններին համեմատ, Օլթիի շրջանի մի քանի գիւղերում, օրինակ՝ Օրթլու գիւղում, մի քանի մահմետական հայ ընտանիքներ սկսեցին վերադառնալ դէպի լուսաւորչական կրօնը: Վաթսուն-եօթանասուն տարի առաջ իսլամ ընդունած հայերը, տեսնելով, որ բուն թուրքերը հետզհետէ գաղթում են Կարսի նահանգից դէպի Թիրքիա, եւ զգալով, թէ իրանք այժմ ապրում են այլ եւս ոչ թէ մահմետական տիրապետութեան տակ, այլ քրիստոնէայ պետութեան հովանիի տակ, սկսում են նորից վերադառնալ դէպի իրանց պապերի կրօնը»²⁹:

Բռնի կրոնափոխված հայերի շրջանում քրիստոնէության և հայկական ինքնության վերադարձի ձգտումը արտահայտվել է նաև հետագայում, ընդհուպ մինչև մեր օրերը:

²⁹ Արծրունի Գ., Մահմետական հայեր, Մշակ, Թիֆլիս, 05.02.1887:

POLITICAL PROCESSES IN THE OTTOMAN EMPIRE IN THE 19TH CENTURY AND THE CONDITION OF ARMENIANS

Mher Abrahamyan³⁰

During the period of weakening of the Ottoman Empire, national problems within the country grew. To solve these problems, the Ottoman leaders resorted to various measures to prevent active political processes related to the submitted nations, including the Armenians. This process of reformation was aimed at improving the condition of Christians, but they were only documents and empty speeches. The Ottoman leaders and reformers did not take a single step to ease the plight of the Christians, and it was during this period that the national program of Islamization, assimilation and extermination was put in place.

Keywords: *Ottoman Empire, national problems, islamization, assimilation, reforms, Armenians.*

ПОЛИТИЧЕСКИЕ ПРОЦЕССЫ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ В XIX ВЕКЕ И ПОЛОЖЕНИЕ АРМЯН

Мгер Абраамян³¹

В период ослабления Османской империи росли национальные проблемы внутри страны. Для решения этих проблем османские лидеры прибегали к различным мерам по предотвращению активных политических процессов, связанных с подчиненными народами, в том числе с армянами. Этот процесс реформации был направлен на улучшение положения христиан, но это были лишь документы и пустые речи. Османские лидеры и реформаторы не предприняли ни одного шага для облегчения тяжелого положения христиан, и именно в этот период была реализована национальная программа исламизации, ассимиляции и истребления.

Ключевые слова: *Османская империя, национальные проблемы, исламизация, реформы, армяне.*

³⁰ Mher Abrahamyan is an Associate Professor at the Chair of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: mher.abrahamyan@ysu.am, ORCID 0009-0009-1970-8184.

³¹ Мгер Абраамян – к.ист.н., доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: mher.abrahamyan@ysu.am, ORCID`0009-0009-1970-8184.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920 թթ.), Երևան, 2009:
2. Երեմեն Դ., Թուրքերի ծագումը (ծագումը և էթնիկական պատմության հիմնական էտապները), Երևան, 1975:
3. Ինճիկյան Հ., Օսմանյան կայսրության անկումը, Երևան, 1984:
4. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800–1870 թթ., Երևան, 1967:
5. Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 2007:
6. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, հ. 1, Երևան, 1982:
7. Պողոսյան Ս., Գոյատևման պայքարի քառուղիներում (փաստեր, վկայություններ և մեկնաբանություններ), Երևան, 1988:
8. Կիրակոսյան Ջ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դարի 80-ական թթ.), Երևան, 1980:
9. Պողոսյան Ս., Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2008:
 10. Дадрян В. Н., История Армянского геноцида. Ереван, 2007.
 11. Гордлевский В., К истории тайных христиан в Малой Азии (из поездки в Трпезунд). Избранные сочинения. М., 1962, том III.
 12. Simonian H., Hemshin from Islamicization to the end of the Nineteenth Century, The Hemshin: History, Society and Identity in the Highlands of Northeast Turkey. London-New York, 2007.
 13. Յովակիմեան Յ., Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէյրուֆ, 1967:
 14. Սէլլան, Տաճկահայաստանի ազգաբնակչութիւնները, Մուրճ, թիվ 7, Թիֆլիս, 1895:
 15. Արծրունի Գ., Մահմետական հայեր, Մշակ, 05.02, Թիֆլիս, 1887:

**ԹՈՒՐԳ-ԻՍԼԱՄԱԿԱՆ ՄԻՆԹԵԶԸ. ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՐԿԱԾԱԽՆԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆԶԵՎ ԱԶԳԱՅԻՆ
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (1960-ԱԿԱՆՆԵՐԻՑ ՄԻՆԶԵՎ
1983 Թ.)**

Գոռ Հովհաննիսյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.192

20-րդ դարի երկրորդ կեսին Թուրքիայի քաղաքական դաշտում առաջ եկավ թուրք-իսլամական սինթեզի գաղափարը, որը թուրքական ազգայնականության և իսլամական արժեքների միաձուլումն էր: Ի սկզբանե կիրառվելով 1960-ականների երկրորդ կեսին Ալփարսլան Թյուրքեզի առաջնորդած Ազգայնական շարժում կուսակցության կողմից, սինթեզը նպատակ ուներ ձևավորել միասնություն քաղաքական և հասարակական բնեռացումների պայմաններում: 1980 թ. ռազմական հեղաշրջումը առանցքային նշանակություն ունեցավ սինթեզի վերաձևավորման համատեքստում, քանի որ զինվորական իշխանությունը սկսեց գործուն քայլեր կատարել թուրք-իսլամական սինթեզի որդեգրման և հասարակական հավասարակշռության ու ձախակողմյան ուժերի դեմ պայքարի մեջ դրա օգտագործման ուղղությամբ: Հողվածում փորձել ենք ուսումնասիրել սինթեզի զարգացումը Ազգայնական շարժում կուսակցությունից մինչև զինվորական իշխանության կողմից դրա ֆորմալ որդեգրումը՝ ուշադրություն դարձնելով գործընթացի անկյունաքարային հատվածներին, իրադարձությունների սոցիալ-քաղաքական կոնտեքստին և Թուրքիայի հասարակության վրա դրա ազդեցությանը:

¹ Գոռ Հովհաննիսյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի ասպիրանտ է, էլ փոստ՝ gor.hovhannisyan@ysu.am, ORCID 0009-0005-6230-9446.

Բանալի քառեր՝ իսլամ, ազգայնականություն, Ազգայնական շարժում կուսակցություն, Ալփասլան թյուրքեշ, թուրք-իսլամական սինթեզ, Քենան Էվրեն:

1960 թ. ռազմական հեղաշրջումից հետո Թուրքիայում իշխանությունն իր ձեռքում կենտրոնացրած Ազգային միասնության կոմիտեի ներսում առկա էին երկրի ապագայի վերաբերյալ որոշակի տարակարծություններ: Սպաների մի մասը՝ Ազգային միասնության կոմիտեի ղեկավար Ջեմալ Գյուրսելի գլխավորությամբ, հակված էր շուտափույթ ընտրությունների անցկացման ու երկրի ղեկը քաղաքական ուժերին հանձնելու գաղափարին: Սակայն կար սպաների առավել արմատական խումբ, որ հակված էր ավելի երկար պահել իշխանությունը երկրում առկա խնդիրներին վերջնական լուծում տալու նպատակով: Երկրորդ խմբից հատկապես ակտիվ էր գնդապետ Ալփասլան թյուրքեշը, որը Գյուրսելի խորհրդականն էր: Հենց թյուրքեշն էր 1960 թ. հեղաշրջման ժամանակ ռադիոյով կարդացել զինվորականների հայտարարությունը²: Կոմիտեի ներսում ծավալված պայքարին զուգահեռ թյուրքեշը նաև սկսել էր քաղաքական գործունեություն՝ փորձելով հիմնել կուսակցություն ավելի պահպանողական հայացքներով աչքի ընկնող քաղաքական գործիչների հետ³: Ի վերջո 14 զինվորականից բաղկացած արմատական խումբը, որը հայտնի է տասնչորսներ (14'ler) անունով, պարտվեց կոմիտեի ներսում ծավալված պայքարում. 1960 թ. նոյեմբերին ամբողջ խումբը ուղարկվեց երկրից դուրս՝ դիվանագիտական տարբեր առաքելությունների⁴, կամ, այսպես կոչված, «պատվավոր աքսորի»: Թյուրքեշը ուղարկվեց

² Esin N., Devrim ve Demokrasi-Bir 27 Mayıs'ının Anıları. İstanbul, 2005, s. 162–172.

³ Ahmad F., The Turkish Experiment in Democracy, 1950–1975. Hurst, London, 1977, p. 375.

⁴ Esin N., նշվ. աշխ., էջ 224:

Հնդկաստան, որտեղից ևս չդադարեց հետաքրքրվել երկրի ներքաղաքական գործընթացներով: Այս համատեքստում հատկապես հայտնի է 1961 թ. սեպտեմբերի 7-ին Թյուրքեշի գրած նամակը Ջեմալ Գյուրսեյին, որտեղ Թյուրքեշը կոչ է անում չեղարկել նախկին վարչապետ Ադնան Մենդերեսի և կառավարության մյուս անդամների մահապատժի որոշումը⁵: Աքսորի ամբողջ ընթացքում Թյուրքեշը «Ազգայնամուլ թուրք երիտասարդներին» վերնագրով հոդվածներ էր հրատարակում «Ազգային Ճանապարհ» (Milli Yol) կոչվող թերթում, որի հիմնադիրն իր ծայրահեղ ազգայնամուլական հայացքներով հայտնի Իսմեթ Ռասիմ Թյումրյուրքն էր⁶: Թյուրքեշը Թուրքիա վերադարձավ 1963 թ. փետրվարին: Ստամբուլում նրան դիմավորեց մոտ 500 հոգանոց խումբ, որի շարքում էին նաև Հանրապետական գյուղացիական ազգ կուսակցությունից (ՀԳԱԿ) պատգամավորներ Իսմայիլ Հաքքը Յըլանլիօղլուն և Համի Թեզքանը⁷:

1963 թ. մարտի 31-ին Թյուրքեշը, «տասնչորս»-ներից ևս չորս հոգու հետ միասին անդամագրվեց ՀԳԱԿ-ին⁸: Աստիճանաբար վերահսկողություն հաստատելով կուսակցության տարբեր օրգանների վրա՝ 1965 թ. օգոստոսի 1-ին կայացած համագումարի ընթացքում Թյուրքեշը դարձավ կուսակցության ղեկավարը՝ հեռացնելով նախկին ղեկավարությանը⁹: Նա նպատակ ուներ ձևափոխել ՀԳԱԿ-ն և դարձնել այն աջակողմյան հիմնական ուժը Թուրքիա-

⁵ Türkeş A., Türkiye'nin Meseleleri, İstanbul, 1996, s. 32.

⁶ Yalçın, A. K., Alparslan Türkeş'in Sürgündeki Siyasi Faaliyetleri (1960–1963). İğdir Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, ss. 1–21, 2021, s. 9.

⁷ Նույն տեղում, էջ 11:

⁸ Erken, A., Ideological Construction of the Politics of Nationalism in Turkey: The Milliyetçi Hareket Partisi (MHP), 1965–1980, Nationalism and Ethnic Politics. 20:2, 200–220, 2014, p. 203.

⁹ Poulton H., The Top Hat, the Grey Wolf, and the Crescent: Turkish Nationalism and the Turkish Republic. NYU Press, 1997, p. 139.

յում՝ իր շուրջ հավաքելով 1960 թ. իշխանությունից հեռացված, իր կրոնամետ հայացքներով հայտնի Ժողովրդավարական կուսակցության ընտրազանգվածին: Սակայն 1965 թ. խորհրդարանական ընտրություններին ՀԳԱԿ-ի ձախողումը, Արդարություն կուսակցության վստահ հաղթանակն ու միանձնյա իշխանություն ստանձնելը խափանեցին Թյուրքեշի ծրագրերը: ՀԳԱԿ-ը մտավ խոշոր փոփոխությունների շրջան:

1967 թ. ՀԳԱԿ կոնգրեսի ժամանակ որպես կուսակցության նոր գաղափարախոսական դոկտրին ներկայացվեց Թյուրքեշի կողմից հեղինակած «Ինը լույսերը» (Dokuz Işık)¹⁰: «Ինը լույսերը» ինը սկզբունք էին, որոնց պետք է հետևեին թուրքերը. դրանք էին՝ բարոյականություն, ազգայնամոլություն, գաղափարականություն, հասարակականություն, գիտականություն, ազատականություն, գյուղացիականություն, ժողովրդականություն և արդյունաբերականություն¹¹: Սկզբունքների նկարագրությունները լի էին ազգայնամոլական մեկնաբանություններով և թուրք ազգի՝ այլ ժողովուրդների հանդեպ գերակայության գաղափարի արծարծմամբ: Սակայն Թյուրքեշի առաջարկած գաղափարախոսությունն այդպես էլ չկարողացավ ամրապնդվել որպես դոկտրին, և շուտով կորցրեց իր արդիականությունը կուսակցական ու ընդհանուր ներքաղաքական նոր զարգացումների ազդեցության ներքո:

Մինչև 1967 թ. ՀԳԱԿ-ն օգտագործում էր ազգայնամոլական հռետորաբանություն և որպես թիրախային ընտրազանգված դիտարկում էր ազգայնամոլներին: Կուսակցության որոշ անդամներ նույնիսկ իրենց հայտարարում էին քեմալական ազգայնականության իրական կրողներ և հետևորդներ: Նույն ոգով էին գործում

¹⁰ Erken A., նշվ. աշխ., էջ 203:

¹¹ «Ինը լույսերի» մասին ավելի մանրամասն տեղեկության համար տե՛ս Tırkeş A., Dokuz Işık, Sulhi Garan Matbaası Koll. Şti., İstanbul, 1967.

նան կուսակցության ուսանողական կառույցները՝ գաղափարական օջախները (Ülkü Ocakları)¹²: Կուսակցության անդամները Թյուրքեշին դիմում էին Başbuğ (բառացի՝ առաջնորդ) անունով: 1965 թ. խորհրդարանական և 1967 թ. սենատի ընտրություններում ՀԳԱԿ անհաջողությունները ստիպեցին Թյուրքեշին որոշակի փոփոխություններ մտցնել կուսակցության գաղափարախոսության մեջ: Թյուրքեշը սկսեց օգտագործել իսլամական հոետորաբանությունը՝ համադրելով այն պանթուրքիզմի հետ: Նոր գծի մասին առաջին անգամ անուղղակի հայտարարվեց 1967 թ. ՀԳԱԿ համագումարի ժամանակ, որտեղ Թյուրքեշը իր խոսքում ներկաներին դիմեց որպես «մուսուլման-թուրք ժողովուրդ» և բոլորին կոչ արեց «կանգնել ճշտի և Աստծո ճանապարհին»¹³: Համագումարի ժամանակ Թյուրքեշի մուտքը դահլիճ ուղեկցվեց «Աստված մեծագույնն է» (Allahu Akbar) վանկարկումներով, որից հետո Թյուրքեշը և մնացած ներկաները, ձեռքերը բարձրացնելով, արաբերեն աղոթք կարդացին¹⁴: Իր խոսքում Թյուրքեշը նաև կոչ արեց «հետևել գրքին (նկատի ունենալով Ղուրանը – Գ. Հ.), որին թուրքերը հետևել են մինչ օրս»¹⁵: ՀԳԱԿ-ն աշխարհիկ ազգայնամուլական կուսակցությունից սկսեց անցում կատարել իսլամական ազգայնամուլական կուսակցության մոդելի՝ թուրքական քաղաքականություն մեջ փաստացի առաջին անգամ ռեալիզացնելով «իսլամի ու ազգայնականության սինթեզը»: Այս երևույթը, հասկապես, ակնհայտ դարձավ, երբ 1968 թ. ապրիլին կուսակցության խորհրդարանական խմբակցությանը միացավ ԱԿ-ից հեռացված պատգամավոր, իսլա-

¹² Erken A., նշվ. աշխ., էջ 204:

¹³ Aytürk İ., Nationalism and Islam in Cold War Turkey, 1944–69. Middle Eastern Studies, 50:5, pp. 693–719, 2014, p. 210.

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Erken A., նշվ. աշխ., էջ 204:

մական ծայրահեղական հայացքներով աչքի ընկնող Օսման Յուքսեկ Սերդենգեչթին, որը հենց ԹԱՄԺ-ի ամբիոնից կոչ արեց բոլոր «ազգայնամոլներին և սրբազանականներին» հետևել իրենց¹⁶:

Գաղափարախոսական նման կտրուկ փոփոխությունը դժգոհություն առաջացրեց ՀԳԱԿ որոշակի հատվածներում՝ հատկապես նախկին զինվորականների շրջանում: «Աթաթյուրքի ուղուց շեղվելու» պատճառով կուսակցությունը լքեցին «տասնչորսների» խմբի անդամներ Նուման Էսինը, Շեֆիք Սոյույուջեն և Սյունիր Քյոշեօղլուն: Նրանց միացավ նաև կուսակցության քարտուղար Մուստաֆա Քափլանը¹⁷: Կուսակցության կարևոր անդամների հեռանալը էականորեն բարդացրեց Թյուրքեշի դրությունը հատկապես 1969 թ. խորհրդարանական ընտրությունների նախօրեին:

1969 թ. փետրվարին կայանալիք ՀԳԱԿ համագումարում քննարկվելու էր 2 հիմնական հարց՝ կուսակցության նոր անվանման և նոր տարբերանշանի ընտրությունը: Կուսակցությունը վերանվանվելու էր Ազգայնական շարժում կուսակցություն, այս հարցում կառույցի ներսում կար համընդհանուր կոնսենսուս: Իսկ տարբերանշանի հարցում կուսակցությունը բաժանվել էր երկու թևի: Թյուրքեշի ղեկավարած առաջին թևը՝ կիսալուսնականներ անունով (hilalci), ցանկանում էր որպես կուսակցության նոր տարբերանշան տեսնել երեք կիսալուսնից կազմված նշան, որը խորհրդանշում էր իսլամական-օսմանյան անցյալը: Իսկ երկրորդ թևը՝ գայլականները (kurtcu)՝ թուրք գրող, իր ֆաշիստական և պանթյուրքիստական հայացքներով հայտնի Հուսեյին Նիհալ Աթսըզը, պահանջում էր կուսակցության տարբերանշան դարձնել պանթյուրքիզմի խորհրդանիշներից մեկը հանդիսացող գորշ գայլը

¹⁶ Öznür H., Ülkücü Hareket. Vol. 1, İstanbul, 1999, s. 154–155.

¹⁷ Նույն տեղում, էջ 143–153:

(Bozkurt¹⁸)¹⁹: Համագումարի ժամանակ Թյուրքեշի ելույթի հիմքում ընկած էր կրոնի և ազգի անբաժանելիության գաղափարը. «Մենք հրաժարվում ենք ազգայնականությունից, որը մերժում է իսլամը, և հրաժարվում ենք իսլամից, որը մերժում է ազգը... Նրանք, ովքեր ասում են, որ կրոնն ու ազգայնականությունն առանձին մարմիններ են, հիմար են, և նրանք, ովքեր հարցնում են, «դու թո՞ւրք ես, թե՞ մուսուլման», մեր շարքում տեղ չեն կարող ունենալ»²⁰: Ի վերջո, օրեր տևած և ֆիզիկական բռնությունների դեպքերով ուղեկցված վեճերի արդյունքում որպես կուսակցության նոր տարբերանշան ընտրվեց երեք կիսալուսնի սիմվոլը, իսկ գորշ գայլը դարձավ կուսակցության երիտասարդական կազմակերպության տարբերանշանը²¹: Փաստացի ազգայնամուլական և իսլամական խորհուրդ ունեցող երկու տարբերանշանի համատեղ ընդունումը ԱՇԿ-ի նոր գաղափարախոսության ևս մեկ կարևոր ցուցիչ էր:

1969 թ. ընտրությունները ևս բավականին անհաջող անցան ԱՇԿ-ի համար: Կուսակցությունը հավաքեց ձայների 3%-ը, ինչը, ի տարբերություն նախորդ՝ 1965 ընտրությունների ավելի դրական արդյունք էր²²: Ստացած քվեների արդյունքում խորհրդարան անցավ միայն կուսակցության ղեկավար Ալիարսլան Թյուրքեշը, ինչը գործնականում զրկեց կուսակցությանը հանրային ճանաչումն ամրապնդելու և քաղաքական խոշոր գործընթացներում ներգրավվելու հնարավորությունից: Որոշ հետազոտողներ 1969 թ. ԱՇԿ-ի անհաջողությունը բացատրում են այն հանգամանքով, որ կուսակցու-

¹⁸ Թյուրքեշի պանթյուրքիստական գաղափարախոսության համակիրներն իրենց կոչում են «bozkurtlar» (գորշ գայլեր):

¹⁹ Aytürk İ., նշվ. աշխ., էջ 711:

²⁰ Erken A., նշվ. աշխ., էջ 208:

²¹ Turgut H., Şahinlerin Dansı. Türkiye'in Anıları, İstanbul, 1995, s. 399–400.

²² 1965 թ. ՀԳԱԿ-ն հավաքել էր ձայների 2,2%-ը, սե՛ւ Milletvekili Genel Seçimleri 1923–2011, Türkiye İstatistik Kurumu, 2012, s. 43.

թյան առաջնորդ Թյուրքեշը իր թիրախային ընտրազանգվածի՝ աջ պահպանողականների շրջանում հակասական կերպար էր՝ պայմանավորված 1960 թ. հեղաշրջմանն իր ուղղակի մասնակցությամբ²³: Կարելի է եզրակացնել, որ կուսակցության խոշոր փոփոխությունները, այնուամենայնիվ, բավարար չէրան 1969 թ. ընտրություններում հաջողություն գրանցելու և խոշոր քաղաքական ուժ դառնալու համար:

1970-ականներին ԱՇԿ-ն վերջնականապես դիրքավորվեց որպես պանթյուրքիստական, ծայրահեղ աջակողմյան ուժ՝ կարողանալով ոչ միայն ավելացնել իր քվեները, այլև դառնալ կռալիցիոն կառավարության անդամ: Հաշվի առնելով 1970-ականների Թուրքիայում առկա բացահայտ իսլամամետ քաղաքական ուժի՝ Ազգային փրկության կուսակցության առկայությունն ու վերջինիս գրանցած հաջողությունները՝ ԱՇԿ-ն չկարողացավ վերջնականապես ամրապնդել կրոնի և ազգայնամոլության համադրման իր գիծը՝ ժամանակի ընթացքում «նախապատվությունը» տալով ազգայնամոլությանը: Թուրք-իսլամական սինթեզի կիրառման առաջին փորձը փաստացի հաջողությամբ չպսակվեց, սակայն ճանապարհ բացեց գաղափարախոսության արդիականացման և հետագա զարգացման համար:

1970-ականներին Թուրքիան թևակոխեց քաղաքական անկայունության շրջան, որն ընդհանուր քաղաքական ճգնաժամից գատ ուղեկցվում էր նաև աջակողմյան և ձախակողմյան ուժերի միջև չդադարող արյունալի բախումներով ու ահաբեկչություններով: Ստեղծված իրավիճակն ավելի էին բարդացնում տնտեսական լուրջ խնդիրները, հասարակական ընդհանուր լարված վիճակն ու ծայրահեղ քաղաքական բևեռացումը: Առկա խնդիրները լուծելու և

²³ Erken A., նշվ. աշխ., էջ 209:

ներքաղաքական քառուր վերացնելու պատճառաբանությամբ զինված ուժերը 1980 թ. սեպտեմբերի 12-ին իրականացրին ռազմական հեղաշրջում՝ ամբողջությամբ իրենց ձեռքում կենտրոնացնելով երկրի կառավարումը: Իշխանությունը ստանձնելով՝ զինվորական իշխանությունը սկսեց մեծաթիվ փոփոխություններ իրականացնել երկրում՝ փորձելով վերացնել այն բոլոր պատճառները, որոնք, ըստ իրենց, հանգեցրել էին ներքաղաքական ճգնաժամի:

Իշխանության եկած զինվորականները երկրի առաջ ծառայած քաղաքական ամենալուրջ ինդիվիդուներից մեկը համարում էին ձախակողմյան շարժումների և ընդհանուր ձախ ծայրահեղականության շեշտակի աճը: Քաղաքական իսլամը սկսեց դիտարկվել ձախ շարժումների դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոց: Քեմալիզմի «պահպանը» հանդիսացող զինված ուժերը փաստացի ընդունեցին և որդեգրեցին իսլամը որպես քաղաքականության մեջ կիրառվող լեգիտիմ գործիք:

Օգտագործելով իսլամը որպես հակակշիռ ձախ գաղափարախոսությանը՝ զինվորականությունը փորձում էր զուգակցել այն ազգայնականության հետ: Էվրենը հայտարարում էր, որ բարձր է գնահատում իսլամի «ռաջիտնալ բնույթը», և որ կա «լուսավոր» իսլամ, որը խրախուսում է արդիականացումը, բաց է փոփոխության ու աշխարհիկության համար և կարող է ծառայել որպես հինք քրդական անջատողականության ու մարքսիստական սպառնալիքների դեմ թուրքական պետությունը միավորելու համար²⁴: Իսլամի և ազգայնականության զուգակցման քաղաքականության կիրառման նպատակները պայմանականորեն կարող ենք բաժանել հետևյալ կերպ.

²⁴ Hemmati K., Turkey Post 1980 Coup D'etat: The Rise, the Fall, and the Emergence of Political Islam. *Illumine: Journal of the Centre for Studies in Religion and Society* 12(1). Victoria, British Columbia, Canada, 58-73. 2014, p. 61.

1. Ազգային միասնության ձգտում. հասարակության մեջ քաղաքական ծայրահեղ բևեռացումը վերացնելու նպատակով զինվորական իշխանությունը փորձեց առաջ քաշել գաղափար, որը հիմք կհանդիսանար ազգային միասնության համար: Իսլամական գաղափարների և թուրքական ազգայնամոլության գուգակցմամբ՝ Թուրք-իսլամական սինթեզը նպատակ ուներ ստեղծել ընդհանուր գաղափարախոսական դաշտ, որը կմիավորեր և՛ ազգայնամոլներին, և՛ իսլամամետ հայացքներ ունեցողներին:

2. Հասարակության շրջանում պահպանողականության խրախուսում. թուրք-իսլամական սինթեզի միջոցով պահպանողական արժեքների խրախուսումը կնպաստեր հասարակության հավասարակշռմանն ու կհակակշռեր ծայրահեղական գաղափարախոսություններին:

3. Պայքար ձախակողմյան գաղափարախոսությունների դեմ. Զինվորական իշխանության գլխավոր մտահոգություններից էր ձախակողմյան և կոմունիստական գաղափարախոսության ազդեցության աճը երկրում: Սառը պատերազմի պայմաններում ձախակողմյան գաղափարախոսության աճը լի էր անկանխատեսելի զարգացումների ռիսկով: Թուրք-իսլամական սինթեզը դիտվում էր որպես հարմար «գործիք» ձախակողմյան գաղափարախոսության և դրա հետևորդների դեմ պայքարի համար:

Քենան Էվրենը, հեղաշրջումից օրեր անց իր ելույթներից մեկում խոսելով Աթաթյուրքի բարեփոխումների և աշխարհիկության կարևորության մասին՝ անդրադարձավ նաև իսլամին՝ բնութագրելով Թուրքիայի քաղաքացիների համար նրա միավորող ու առաջադեմ դերը: Էվրենն իր ելույթներում տարբեր առիթներով ուղիղ մեջբերումներ էր անում Ղուրանից և Մուհամմեդ մարգարեի գրույցներից (հադիս): Նա նաև հայտարարում էր, որ «մեր կրոնում

(*խլամում* – Գ. Հ.) չկա որևէ աղանդ: Բոլորս հավատում ենք Ալլահին, ունենք մեկ մարգարե և կարդում ենք նույն Դուրանը»²⁵:

Զինվորական ղեկավարության կրոնական քաղաքականության մեջ մեծ դեր էին խաղում որոշ գաղափարական ակումբներ, որոնք ոչ միայն խորհրդատվական դեր էին տանում, այլև ուղղակիորեն մշակում էին այդ քաղաքականության կարևոր հատվածներ: Այդ ակումբներից ամենահայտնին և Aydinlarամենաազդեցիկը աջակողմյան գաղափարախոսության կրող մտավորականներից կազմված «Մտավորականների օջախ» (Aydinlar Ocağı) անունով խումբն էր: Խումբը հիմնադրվել էր 1970 թ. մայիսի 14-ին մտավորականներ և դասախոսներ Նիհաթ Սամի Բանարլըի, Իբրահիմ Քաֆեսուղլուի, Մուհարրեմ Էնգինի, Մուլեյման Յալչընի և նրանց գաղափարակիցների կողմից: «Մտավորականների օջախը» ձևավորվել էր մեկ այլ խմբի՝ «Մտավորականների ակումբի» (Aydinlar Küllübü) հիմքի վրա, որի անդամների շարքում էին նաև Նեջմեթթին և Քեմալեթթին Էրբաքան եղբայրները, Նեջիփ Ֆազըլ Քըսաքյուրեքը, Նիհաթ Աթսըզը և այլք²⁶: «Մտավորականների օջախը» կարևոր դեր խաղաց 1980 թ. հետհեղաշրջումային շրջանում քաղաքական նոր իրողությունների ձևավորման մեջ:

Զինվորական ղեկավարությունը որդեգրեց կրոնական կրթական քաղաքականության նոր մոդել: Նախկինում, եթե բանակը ամեն կերպ փորձում էր կանխել քեմալիզմի աշխարհիկության սկզբունքից որևէ շեղում, ապա այժմ հենց զինվորականությունն էր նման գործողությունների նախաձեռնողն ու իրականացնողը: Զինվորականությունը քայլեր ձեռնարկեց դպրոցներում առկա կա-

²⁵ Türkiye Cumhuriyeti Devlet Başkanı Orgeneral Kenan Evrenin Söylev Ve Demeçleri, Ankara, 1982, s. 162.

²⁶ Pallard C., Shaping Turkish Conservatism: Aydınlar Ocağı and the Turkish-Islamic Synthesis. EURAS Journal of Social Scienses, V. 2, I. 1, pp. 97–132. April 2022, p. 101–106.

մընտրական կրոնական դասերը պարտադիր դարձնելու ուղղությամբ՝ պատճառաբանելով այդ քայլի անհրաժեշտությունը ձախակողմյան գաղափարախոսությունների ազդեցության աճով և երիտասարդության մեջ համընդհանուր բարոյական անկմամբ: Այս քայլով զինվորականները նաև նպատակ ունեին հակազդելու տարբեր կրոնական եղբայրությունների և աղանդների կողմից, հատկապես երկրի գյուղաբնակ շրջաններում, կազմակերպվող կրոնական դասերին: Կրոնական դասերը պարտադիր դարձնելու գործում ակտիվորեն ներգրավված էր նաև «Մտավորականների օջախը»:

Կրոնական կրթության նոր քաղաքականության մշակման մեջ զգալի դեր խաղաց Անկարայի համալսարանի աստվածաբանության ֆակուլտետի դեկան Հուսեյին Աթայի և նույն ֆակուլտետի դասախոս Բեյզա Բիլգինի կողմից 1980 թ. նոյեմբերին ԱԱԽ-ին ներկայացված զեկույցը, որտեղ հիմնավորվում էր դպրոցներում կրոնական պարտադիր դասերի անցկացման անհրաժեշտությունը: Զեկույցում նշվում էր, որ առանց կրոնի հնարավոր չէր դաստիարակել պետությանը հավատարիմ քաղաքացիներ: Աթայը զեկույցում նաև պնդում էր, որ աշխարհիկության և պարտադիր կրոնական դասերի միջև որևէ հակասություն չկա և չի կարող լինել: Վերջինս շուտով ներկայացրեց նաև երկրորդ զեկույցը, որտեղ ավելի հիմնավոր կերպով էր շարադրված կրոնական պարտադիր կրթության մոդելի անհրաժեշտությունը: Ի վերջո, 1981 թ. մայիսին կրթության նախարարությունը պաշտոնապես ընդունեց, որ պետական դպրոցներում կրոնական պարտադիր կրթության և աշխարհիկության մեջ հակասություն չկա²⁷:

²⁷ Eligür B., The Turkish-Islamic Synthesis and the Islamist Social Movement. In: The Mobilization of Political Islam in Turkey. Cambridge University Press, 85–135, 2010, p. 103.

Կրոնական պարտադիր կրթության մոդելին անցմանն ուղղված քայլերից նաև կարևոր էր 1981 թ. մայիսի 9-ին և 10-ին «Մտավորականների օջախի» կողմից Անկարայում կազմակերպված «Ազգային կրթություն և կրոնական կրթություն» անունով սեմինարը, որին մասնակցում էին նաև փոխվարչապետ Թուրգութ Օզալը և կրոնական գործերի վարչության ղեկավար Թայյար Ալթըքուլաչը: Սեմինարի ընթացքում խոսվում էր կրոնական կրթության կարևորության և Թուրքիայում դրա տարածման մասին՝ մանկապարտեզներում, տարրական, միջնակարգ և ավագ դպրոցներում, ինչպես նաև բանակում²⁸:

Քենան Էվրենի հրամանով ստեղծվեց կրոնական կրթության խրոհրդատվական հանձնաժողով, որը ղեկավարում էր Գլխավոր շտաբի կրթության բաժնի ղեկավար գեներալ Օսման Ֆեյզօղլուն: Հանձնաժողովը 1981 թ. մայիսին կայացած նիստում ի վերջո ընդունեց Կրթության նախարարության ներկայացրած գեկույցը, որի հիմքը կազմում էր Աթայի և Բիլգինի գեկույցը²⁹: Ջեկույցում նշվում էր, որ կրոնական կրթությունն անցել է պետական վերահսկողության տակ չգտվող «անպատասխանատու տարրերի» ձեռքը, որի արդյունքում «ի հայտ են եկել բացասական քաղաքական երևույթները (աղանդները)»: Առաջարկվում էր սահմանել պարտադիր կրոնական դասեր. տարրական դպրոցում՝ «Ես մուսուլման թուրք երեխա եմ» անունով առարկայի միջոցով, միջնակարգում՝ «թուրքերն ու մուսուլմանները» և «մարգարեի սերը» առարկաներով, իսկ ավագ դպրոցում՝ «թուրք-իսլամական մշակույթն ու քաղաքակրթությունը» առարկայով³⁰: Ջեկույցի մեջ որպես «կրոնական և բարոյական կրթության հիմնական նպատակներ» ամրագրվում էր.

²⁸ Ayhan H., Türkiye’de Din Eğitimi (1920–1998). İstanbul, 1999, s. 256.

²⁹ Eligür B., նշվ. աշխ., էջ 105:

³⁰ Poulton H., նշվ. աշխ., էջ 181–182:

«Տարրական և միջնակարգ կրթության շրջանակներում ստանալ բավարար գիտելիք իսլամական կրոնի և բարոյականության մասին՝ համապատասխան Աթաթյուրքի աշխարհիկ և այլ սկզբունքներին ու թուրքական ազգային-կրթական ծրագրի հիմնական նպատակներին. այս կերպ, հասարակությունը կունենա բարոյական ճիշտ արժեքներ, որոնք կերաշխավորեն նրանց մեջ մարդու, կրոնի, բարոյականության, Աթաթյուրքի գաղափարների, ազգային միության և միասնության հանդեպ սերը»³¹:

Պարտադիր կրոնական կրթության մասին դրույթը վերջնականապես ամրագրվեց 1982 թ. ընդունված նոր սահմանադրությամբ: Սահմանադրության 24-րդ կետի «կրոնի ու խղճի ազատություն» հատվածում նշվում էր. «Կրոնի և էթիկայի կրթությունն ու դասավանդումը իրականացվում է պետական վերահսկողության ներքո: Կրոնական մշակույթի դասավանդումն ու բարոյական կրթությունը պարտադիր են տարրական և միջնակարգ դպրոցների կրթական ծրագրերում: Կրոնական այլ կրթությունն իրականացվում է անհատի անձնական կամքով, իսկ անչափահասների դեպքում՝ նրանց օրինական խնամակալների ցանկությամբ»³²: Սահմանադրության կրոնական պարտադիր կրթության դրույթի պաշտոնական բացատրությունը հետևյալն էր. «կրոնական և բարոյական կրթությունը դրվել են պետական վերահսկողության տակ դրանց չարաշահումը կանխելու նպատակով: Կրթությունը պարտադիր է տարրական և միջնակարգ դպրոցում: Բնականաբար, պարտադիր կրոնական կրթությունը չի տարածվում ոչ մուսուլման աշակերտների վրա»³³:

³¹ Նույն տեղում, էջ 182:

³² Türkiye Cumhuriyeti Anayasası. Ankara, 1982, s. 16.

³³ Ekşioğlu K., Gereğçeli Anayasa, Yasa Yayınları. İstanbul 1982, s. 41.

Զինվորական ղեկավարությունը նաև փոփոխություններ մտցրեց ազգային կրթության հիմնական օրենքում՝ թույլ տալով իմամ-հաթիփ դպրոցների շրջանավարտներին ընդունվել ոչ միայն կրոնական ֆակուլտետներ, ինչպես առաջ էր, այլ ցանկացած ֆակուլտետ³⁴:

Կրոնական կրթության ոլորտում փոփոխությունների արդյունքում զինվորականությունը ավարտին հասցրեց կրոնական պարտադիր կրթության ներդրման գործընթացը, որը սկսվել էր դեռևս 1950-ականներին ՄԿ իշխանության օրոք: 1980-1983 թթ. զինվորականությունը փաստացի վարում էր «ուղղահայաց՝ վերևից ներքև իսլամականացման» քաղաքականություն: Զինվորականները զուգահեռաբար փորձում էին միաձուլել իսլամական սիմվոլները ազգայնական խորհրդանիշների հետ՝ հասարակության համար դրանք ավելի ընկալելի և գրավիչ դարձնելու համար: Այս քայլը նաև նպատակ ուներ թույլ չտալ Իրանից, Պակիստանից և արաբական երկրներից իսլամական գաղափարախոսական հոսանքների տարածումը Թուրքիայի իսլամամետ ուժերի և տարբերի շրջանում: Այս համատեքստում զինվորականության կողմից որպես կիրառելի քաղաքականություն ընդունվեց «թուրք-իսլամական սինթեզի» գաղափարախոսությունը, որի ակունքներում կանգնած էր «Մտավորականների օջախը»: «Թուրք-իսլամական սինթեզը» հեղինակել էր «Մտավորականների օջախի» ղեկավար Իբրահիմ Քաֆեսուղլուն դեռևս 1972 թ: Ըստ Քաֆեսուղլուի՝ դեռ իսլամ ընդունելուց առաջ թյուրքական ցեղերի սոցիալական կառուցվածքում երկու հիմնական ինստիտուտներն էին ընտանիքն ու բանակը: Փոքր Ասիա գաղթի պահին արդեն թյուրքներն ունեին որոշակի հավատքի համակարգ, բարոյականության և առաքինության վրա

³⁴ Eligür B., նշվ. աշխ., էջ 108:

հիմնված մշակույթ և ավանդույթներ, որոնք համատեղելի էին իսլամի հետ: Քաֆեսողլուն նշում էր, որ թուրքական մշակույթը հիմնված էր երկու աղբյուրի վրա՝ թյուրքականություն և իսլամ³⁵:

«Մտավորականների օջախը» մերժում էր թյուրքական ժողովուրդների նախափսլամական պատմությունն ու մշակույթը: Կենտրոնանալով իսլամն ընդունելուն հաջորդած պատմության վրա՝ նրանք թուրքական քաղաքակրթությունն ու մշակույթը նկարագրում էին որպես «մուսուլման և թուրք լինելու խառնուրդ»: «Օջախի» անդամ Սուլեյման Յալչընը թուրքերին նկարագրում էր որպես «մուսուլմաններ, որոնք թուրքերեն են խոսում»³⁶:

Այս առումով հատկանշական է, որ «թուրք-իսլամական սինթեզի» գաղափարախոսության որդեգրման առաջին փորձը կատարած ուժը՝ ԱՇԿ-ն, նույնպես կապեր է ունեցել «Մտավորականների ակումբի» հետ: Այդ շրջանում Թյուրքեշը և տասնչորսները (14'ler) մտերիմ հարաբերություններ են ունեցել «Մտավորականների ակումբի» մի շարք անդամների հետ³⁷: 1980 թ. հեղաշրջումից հետո, երբ «թուրք-իսլամական սինթեզը» օրակարգ եկավ որպես պետական քաղաքականություն, ԱՇԿ-ականները հայտարարում էին, որ «իրենք բանտերում են, սակայն իրենց գաղափարախոսությունը իշխանություն է»³⁸:

«Թուրք-իսլամական սինթեզը» հռչակվեց որպես պետական մշակութային քաղաքականություն 1982 թ. հոկտեմբերի 18-ին պետական նախագծման կազմակերպության կողմից «Ազգային մշակույթի զեկույցի» ներկայացմամբ: Հատկանշական է, որ զեկույցը հիմնականում պատրաստվել էր «Մշակութային օջախի» անդամ-

³⁵ Kafesoğlu İ., Türk İslam Sentezi, Ötüken Neşriyat. İstanbul, 1996, s. 35.

³⁶ Bora T., Can K., նշվ. աշխ., էջ 153–154:

³⁷ Eligür B., նշվ. աշխ., էջ 97:

³⁸ Taşkın Y., Milliyetçi Muhafazakar Entelijansiya, İletişim Yayınları. İstanbul, 2007, s. 248.

ների կողմից³⁹: Ջեկույցում նշվում էր, որ «քեմալիստական կրթական համակարգը, փորձելով նմանակել արևմտյանին, անտեսել է թուրքական ազգային մշակույթի հիմքում ընկած արժեքները, որոնք հանդիսանում են պետականաշինության, ռազմական հաջողությունների, արվեստի և գրականության մեջ թուրք-իսլամական քաղաքակրթության գրանցած խոշոր հաջողությունների շարժիչ ուժը: Կրթության վրա արևմտյան ազդեցության արդյունքում, պոզիտիվիզմն ընդունվել է որպես նոր սերունդներ մեծացնելու գործում կիրառելի մեթոդ, ինչն էլ հանգեցրել է կյանքի վերաբերյալ նյութապաշտական ընկալման»⁴⁰:

Ջեկույցում նաև նշվում էր, որ «հենց հանրապետական Թուրքիայի կրթական համակարգն է վերացրել հեղինակությունների հանդեպ հարգանքն ու բարոյական կարգապահությունը, որոնք միշտ հանդիսացել են ազգային մշակույթի կարևոր տարրեր և ընտանիքների, ավանդույթների, մշակույթի և կրոնի միջոցով փոխանցվել են նոր սերունդներին: Հանրապետական կրթական համակարգն է ցանել 1960 և 1970-ականների անարխիստական միտումները՝ առաջ բերելով երիտասարդություն, որը հեռացել է ազգային մշակույթից, տեղյակ չէ սեփական պատմությունից, ապստամբում է հեղինակությունների դեմ, չունի արմատներ, շփոթված է և անհույս»⁴¹:

Ջեկույցում որպես նպատակ էր սահմանվում «սուննի իսլամի միջոցով վերացնել Թուրքիայում անարխիան»: Իսլամը հռչակվում է որպես «գործիք, որը կունենա պատմական դեր անհատին պետությանը միացնելու մեջ»: Պետությունից ակնկալվում էր

³⁹ Eligür B., նշվ. աշխ., էջ 105:

⁴⁰ T.C. Başbakanlık Devlet Planlama Teşkilâtı (DPT), Milli Kültür: Özel İhtisas Komisyon Raporu. Devlet Planlama Teşkilâtı, Ankara, 1983, s. 536.

⁴¹ Նույն տեղում, էջ 542-543:

«վերստին օրակարգ բերել» սուննի իսլամը՝ վերոնշյալ միությանը հասնելու համար⁴²:

«Թուրք-իսլամական սինթեզի» ներդրման և իրականացման մեջ կարևոր դեր սահմանվեց Կրոնական գործերի վարչության համար: 1982 թ. սահմանադրությամբ ամրագրվում էր, որ կրոնական գործերի վարչությունը պետք է «իր նպաստն ունենա ազգային միասնությանն ու ինտեգրացիային»⁴³: 1980-ականների ընթացքում վարչությանը տրամադրվող միջոցները շեշտակիորեն աճեցին, զուգահեռ ավելացան նաև վարչության ազդեցությունն ու գործառույթները:

Զինվորական ղեկավարության օրոք նաև դրվեցին իսլամական երկրների հետ ավելի սերտ տնտեսական հարաբերությունների հիմքերը, որոնք շարունակվեցին 1980-ականների ամբողջ ընթացքում: Արաբական նավթային երկրների հետ հարաբերությունների զարգացման հարցում հատկապես ակտիվ էր փոխվարչապետ Թուրգութ Օզալը: Նա դեռ մինչև 1980 թ. հեղաշրջումը աշխատում էր վարչապետ Դեմիրելի աշխատակազմում, իր ձևակերպմամբ «Դեմիրելի աջ ձեռքն էր», 1977 թ. խորհրդարանական ընտրություններին էլ առաջադրվել էր ԱՓԿ-ի կողմից, սակայն չէր կարողացել անցնել խորհրդարան: Ավելի վաղ վերջինս սովորել էր ԱՄՆ-ում, նաև մի քանի տարի աշխատել էր Համաշխարհային բանկում: Օզալի եղբայրը՝ Քորքութ Օզալը, ԱՓԿ պատգամավոր էր: Ե՛վ Թուրգութ, և՛ Քորքութ Օզալները՝ Նաքշիբենդի կրոնական եղբայրության անդամ էին: 1980 թ. հեղաշրջումից հետո, Օզալը զինվորականների առաջարկով նշանակվեց փոխվարչապետ, որը պատասխանատու էր տնտեսական բլոկի համար⁴⁴:

⁴² Նույն տեղում, էջ 544:

⁴³ Karakas C., *Islam and Laicism between the Interests of State. Politics and Society*, Peace Research Institute Frankfurt, 2007, p. 18.

⁴⁴ Eligür B., նշվ. աշխ., էջ 112–113:

Զինվորականությունը ներդրումներ ստանալու նպատակով կապեր հաստատեց սաուդյան արքայազն Սուհամմեդ ալ-Ֆայզալի, Քուվեյթի ֆինանսական տան, ինչպես նաև Սաուդյան Արաբիայից գործարար Շեյխ Սալիհ Աբդալլահ Քամիլի հետ⁴⁵: Սաուդյան կապիտալը սկսեց մուտք գործել Թուրքիա՝ խաղալով կարևոր դեր քաղաքական իսլամի հերթական մոբիլիզացիայի հարցում: Ինչպես նշում է թուրք քաղաքագետ Բիրոլ Յեշիլադան, «Թուրքիա սաուդյան կապիտալի հոսքը միտված չէր միայն տնտեսական զարգացման: Այն իր հետ բերեց կարևոր քաղաքական և հասարակական նպատակներ, որոնք ունակ էին մարտահրավեր նետել Թուրքիայի աշխարհիկ կարգին»⁴⁶: 1982 թ. Իսլամական զարգացման բանկի՝ Ստամբուլում կայացած խորհրդաժողովի ընթացքում Քենան Էվրենը հայտարարեց, որ «Թուրքիան իսլամական համայնքի անբաժանելի մաս է»⁴⁷: Անդրադառնալով Թուրքիայի և իսլամական երկրների միջև հարաբերություններին՝ Էվրենը դրանք բացատրում էր հետևյալ կերպ. «մերձավորարևելյան և իսլամական երկրների հետ մեր հարաբերությունների բարելավումը ստացել է հատուկ քաղաքական և տնտեսական բովանդակություն: Մենք այս պահին փորձում ենք նոր մակարդակի հասցնել մեր հարաբերությունները մերձավորարևելյան և իսլամական երկրների հետ՝ զարգացնելով և ամրապնդելով մեր արդեն իսկ գոյություն ունեցող պատմական, մշակութային և հոգևոր կապերը»⁴⁸:

⁴⁵ Moore C. H., Islamic Banks and Competitive Politics in the Arab World and Turkey. Middle East Journal 44, No 2, 1990, p. 247.

⁴⁶ Yeşilada B. A., Islamic Fundamentalism in Turkey and the Saudi Connection. Universities Field Staff International, 1989, p. 21.

⁴⁷ Hale W., Generals and Politicians in Turkey: 1983–1990. The Turkish Yearbook of International Relations (25), pp. 1–20, 1995, p. 14.

⁴⁸ Türkiye Cumhuriyeti Devlet Başkanı Orgeneral Kenan Evrenin Söylev Ve Demeçleri. s. 411.

Վերլուծելով 1980 թ. ռազմական հեղաշրջման արդյունքում իշխանությունը վերցրած զինվորականների քայլերը՝ կարող ենք փաստել, որ դրանք արմատապես տարբերվում էին նախորդ երկու ռազմական միջամտություններին (1960 և 1971) հաջորդած քայլերից: Ձինված ուժերում տեղի ունեցած սերնդափոխությունը, Թուրքիայի քաղաքական դաշտում արդեն ավելի քան 30 տարի առկա գաղափարախոսական պայքարն ու դրա արդյունքում ստեղծված նոր իրողությունները ստիպեցին զինվորականներին գործել այդ իրողություններին համահունչ: Ձինվորականների քաղաքականության արդյունքում վերջնականապես լեգիտիմացվեց քաղաքական իսլամը, կոտորվեցին դրա շուրջ դեռևս առկա վերջին տարուները, քաղաքական իսլամի շարժումը նոր թափ ստացավ և վերջնականապես դիրքավորվեց որպես այլևս դոմինանտ գաղափարախոսություն Թուրքիայի քաղաքական դաշտում, ինչի դրսևորումները, հատկապես, զգալի եղան 1983 թվականից հետո: 1980 թ. ռազմական հեղաշրջումը վերջնականապես տապալեց դասական քեմալիզմը՝ այն դարձնելով ժամանակավրեպ և ներկա իրողություններին չհամապատասխանող: Ինչպես նշում է ամերիկաբնակ թուրք քաղաքագետ Սոներ Չաղափթայը, հենց Քենան Էվրենը խփեց քեմալիզմի դագաղի վերջին մեխը⁴⁹: Թուրք հոգևոր և հասարակական գործիչ Ֆեթուլլահ Գյուլենը, անդրադառնալով Քենան Էվրենի քայլերին, վերջինիս մասին ասել էր հետևյալը. «Քանի որ Էվրենը կրոնական կրթությունը պարտադիր դարձրեց, նա կարող է գնալ դրախտ, նույնիսկ եթե բացի դրանից որևէ լավ արարք չի կատարել»⁵⁰: Փոփոխված իրողություններն էլ իրենց հերթին մղեցին քե-

⁴⁹ Cagaptay S., *The New Sultan: Erdogan and the Crisis of Modern Turkey*. Bloomsbury Academic, 2020, p. 57.

⁵⁰ Zorunlu din dersi Evren'in sevabı, Mehmet Gündem'in Fettulah Gülen ile mülakatı, *Milliyet*, 17.01.2005, s. 14.

մալիզմի ծիրում գործող ուժերին վերաբժնորելու իրենց գաղափարախոսական հենքը և մոդերնիզացնելու այն՝ հաշվի առնելով խառնի «նոր կանոնները»:

Թուրք-իսլամական սինթեզի գաղափարախոսությունը, դիրքավորվելով որպես լուրջ գաղափարախոսական ուժ Թուրքիայի պատմության 20-րդ դարի երկրորդ կեսին, զուգակցեց ազգայնականությունը կրոնական արժեքների հետ՝ որպես արձագանք երկրում առկա քաղաքական և հասարակական մարտահրավերներին: Սկսած ԱՇԿ-ի կողմից առաջ մղվելուց մինչև 1980 թ. ռազմական հեղաշրջումից հետո իշխանություն եկած զինվորականների կողմից որդեգրում, սինթեզը նպատակ ուներ ստեղծել միասնական ազգային ինքնություն քաղաքական անկայունության և գաղափարախոսական հակամարտության պայմաններում: Սինթեզի՝ կրթական բարեփոխումների և քաղաքական դիսկուրսի միջոցով ինստիտուցիոնալիզացումը զգալի ազդեցություն ունեցավ թուրք հասարակության վրա՝ փոփոխելով քաղաքական լանդշաֆտը: Այս էվոլյուցիայի ըմբռնումը արժեքավոր պատկերացումներ է տալիս ժամանակակից Թուրքիայի ինքնության և քաղաքական հետազոծի ձևավորման գործում ազգայնականության և կրոնի փոխազդեցության վերաբերյալ:

THE TURKISH-ISLAMIC SYNTHESIS: FROM POLITICAL ADVENTURISM TO NATIONAL STRATEGY (1960'S TO 1983)

*Gor Hovhannisyán*⁵¹

In the second half of the 20th century, the idea of Turkish-Islamic synthesis emerged in the political field of Turkey, which was the fusion of Turkish nationalism and Islamic values. Originally practiced in the second half of the

⁵¹ Gor Hovhannisyán is a PhD student at the Department of Turcic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: gor.hovhannisyán@ysu.am ORCID: 0009-0005-6230-9446.

1960s by the Nationalist Action Party led by Alparslan Türkeş, the synthesis aimed to create unity in the face of political and social polarization. In 1980 the military coup was pivotal in the context of the reshaping of the synthesis, as the military government began to take active steps to adopt the Turkish-Islamic synthesis and use it in the fight against leftist forces and to maintain social balance. In the article, we tried to study the development of the synthesis from the NAP to its formal adoption by the military government, paying attention to the cornerstones of the process, the socio-political context of the events and its impact on Turkish society.

Keywords: Islam, nationalism, Nationalist Movement Party, Alparslan Türkeş, Turkish-Islamic synthesis, Kenan Evren.

ТУРЕЦКО-ИСЛАМСКИЙ СИНТЕЗ: ОТ ПОЛИТИЧЕСКОЙ АВАНТЮРЫ ДО НАЦИОНАЛЬНОЙ СТРАТЕГИИ (С 1960-Х ПО 1983 ГГ.)

Гор Оганесян⁵²

Во второй половине XX века в политическом поле Турции возникла идея турецко-исламского синтеза, который представлял собой сплав турецкого национализма и исламских ценностей. Синтез, первоначально применявшийся во второй половине 1960-х годов Партией националистического движения (ПНД) во главе с Алпарсланом Тюркешем, был направлен на создание единства перед лицом политической и социальной поляризации. В 1980 году Военный переворот имел решающее значение в контексте перестройки синтеза, поскольку военное правительство начало предпринимать активные шаги по принятию турецко-исламского синтеза и использованию его в борьбе с левыми силами и сохранению социального равновесия. В статье мы попытались изучить развитие синтеза от ПНД до его официального принятия военным правительством, уделив внимание краеугольным камням процесса, социально-политическому контексту событий и его влиянию на турецкое общество.

⁵² Гор Оганесян – аспирант кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл почта: gor.hovhannisyanyan@ysu.am ORCID: 0009-0005-6230-9446.

Ключевые слова: ислам, национализм, Партия националистического движения, Алпарслан Туркеш, турецко-исламский синтез, Кенан Эврен.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ahmad F., The Turkish Experiment in Democracy, 1950-1975, Hurst, London, 1977.
2. Aytürk İ., Nationalism and Islam in Cold War Turkey, 1944–69, Middle Eastern Studies, 50:5, pp. 693–719, 2014.
3. Çağaptay S., The New Sultan: Erdogan and the Crisis of Modern Turkey, Bloomsbury Academic, 2020.
4. Eligür B., The Turkish-Islamic Synthesis and the Islamist Social Movement. In: The Mobilization of Political Islam in Turkey. Cambridge University Press, 85–135, 2010.
5. Erken A., Ideological Construction of the Politics of Nationalism in Turkey: The Milliyetçi Hareket Partisi (MHP), 1965–1980. Nationalism and Ethnic Politics, 20:2, 200–220, 2014.
6. Hale W., Generals and Politicians in Turkey: 1983–1990. The Turkish Yearbook of International Relations (25), pp. 1–20, 1995.
7. Hemmati K., Turkey Post 1980 Coup D’etat: The Rise, the Fall, and the Emergence of Political Islam. Illumine: Journal of the Centre for Studies in Religion and Society 12 (1). Victoria, British Columbia, Canada, 58–73, 2014.
8. Karakas C., Islam and Laicism between the Interests of State, Politics, and Society. Peace Research Institute Frankfurt, 2007.
9. Moore C.H., Islamic Banks and Competitive Politics in the Arab World and Turkey. Middle East Journal 44, N 2, 1990.
10. Pallard C., Shaping Turkish Conservatism: Aydınlar Ocağı and the Turkish-Islamic Synthesis, EURAS Journal of Social Sciences, V. 2, I. 1, pp. 97–132, April 2022.
11. Poulton H., The Top Hat, the Grey Wolf, and the Crescent: Turkish Nationalism and the Turkish Republic, NYU Press, 1997.
12. Yeşilada B.A., Islamic Fundamentalism in Turkey and the Saudi Connection. Universities Field Staff International, 1989.
13. Ayhan H., Türkiye’de Din Eğitimi (1920–1998), İstanbul, 1999.
14. Esin N., Devrim ve Demokrasi-Bir 27 Mayısçının Anıları, İstanbul, 2005.
15. Ekşioğlu K., Gerekçeli Anayasa, Yasa Yayınları. İstanbul, 1982.

16. Kafesoğlu İ., Türk İslam Sentezi, Ötüken Neşriyat. İstanbul, 1996.
17. Öznür H., Ülkücü Hareket, Volume 1, İstanbul, 1999.
18. Taşkın Y., Milliyetçi Muhafazakar Entelijansıya, İletişim Yayınları, İstanbul, 2007.
19. Turgut H., Şahinlerin Dansı. Türkeş'in Anıları, İstanbul, 1995
20. Türkeş A., Dokuz Işık, Sulhi Garan Matbaası Koll. Şti., İstanbul, 1967.
21. Türkeş A., Türkiye'nin Meseleleri, İstanbul, 1996.
22. Yalçın A. K., Alparslan Türkeş'in Sürgündeki Siyasi Faaliyetleri (1960-1963). Iğdır Üniversitesi Sosyal Bilimler Dergisi, 2021, ss. 1–21.
23. Milletvekili Genel Seçimleri 1923–2011, Türkiye İstatistik Kurumu, 2012.
24. Başbakanlık T. C., Devlet Planlama Teşkilâtı (DPT), Milli Kültür: Özel İhtisas Komisyon Raporu, Devlet Planlama Teşkilâtı, Ankara, 1983.
25. Türkiye Cumhuriyeti Anayasası, Ankara, 1982.
26. Türkiye Cumhuriyeti Devlet Başkanı Orgeneral Kenan Evrenin Söylev Ve Demeçleri, Ankara, 1982.
27. Zorunlu din dersi Evren'in sevabı. Mehmet Gündem'in Fettulah Gülen ile mülakatı, Milliyet, 17.01.2005.

**ՀԱՆՐԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՓԱՓՈՒԿ ՈՒԺԻ
ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅ-ԹՈՒՐԹԱԿԱՆ
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայկ Դարբինյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.216

Նույնիսկ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունն ունեցել են դիվանագիտական շփման մի քանի փորձեր: Երկու երկրների միջև բազմաբնույթ ձևաչափով պաշտոնական և ինստիտուցիոնալ շփումներին զուգահեռ, կիրառվել է նաև հանրային դիվանագիտության և «փափուկ» ուժի գործիքակազմը: Ընդ որում՝ այդ գործընթանն օգտագործվել են ինչպես թուրքական, այնպես էլ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացով շահագրգիռ տարբեր դերակատարների կողմից: Բացի Հայաստանի Հանրապետության հետ շփումների շրջանակից, թուրքական կողմն օգտագործել է հանրային դիվանագիտությունն ու «փափուկ» ուժը հայկական սփյուռքի հետ հարաբերություններում՝ փորձելով մեղմել տարբեր երկրներում բնակվող հայերի վերաբերմունքը Թուրքիայի և թուրքերի հանդեպ:

Բանալի բառեր՝ Հայաստան, Թուրքիա, հանրային դիվանագիտություն, «փափուկ» ուժ, սփյուռք:

Թեև Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանի և Թուրքիայի միջև չհաստատվեցին դիվանագիտական հարաբերություններ, բայց ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում երկու երկրներն էլ ստիպված էին առնվազն հաշտվել միմյանց գո-

¹ Հայկ Դարբինյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի ասպիրանտ է, էլ. փոստ՝ haykdarbinyan93@gmail.com, ORCID 0009-0000-2316-0080:

յության փաստի հետ և հաշվի առնել այն: Աշխարհաքաղաքական ու տարածաշրջանային տարբեր զարգացումները, երկու երկրներին անմիջականորեն առնչվող քաղաքական, անվտանգային, սոցիալական, բնապահպանական, մշակութային և բազմաթիվ այլ բնույթի իրողությունների, խնդիրների ու մարտահրավերների ի հայտ գալն ու դրանք հաղթահարելու անհրաժեշտությունը ստեղծել են իրավիճակներ, որոնք նույնիսկ հարաբերությունների բացակայության պայմաններում անխուսափելի են դարձրել կողմերի միջև շփումները:

Հայաստանի Երրորդ Հանրապետության անկախությունից ի վեր, տարբեր ժամանակներում, հայկական և թուրքական կողմերը ունեցել են հաղորդակցության և շփումների տարատեսակ ձևաչափեր: Ընդ որում՝ հատկանշական է, որ բազմաբնույթ հարցերի շուրջ շփումները եղել են նաև պաշտոնական, ընդհուպ՝ ամենաբարձր մակարդակով: Դիվանագիտական հարաբերությունների բացակայությունն, անշուշտ, բարդացնում էր միմյանց հետ հաղորդակցվելու հնարավորությունն ու արդյունավետությունը, բայց, միևնույն ժամանակ, ստեղծում էր նաև որոշակի հնարավորություններ: Հատկանշական է, որ Հայաստանի և Թուրքիայի միջև միջպետական հարաբերությունների բացակայությունը նպաստել է կողմերի շփումներում հանրային դիվանագիտության և «փափուկ» ուժի գործիքակազմի կիրառությանը:

Կարևոր է արձանագրել, որ դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում Հայաստանի և Թուրքիայի միջև հանրային դիվանագիտության և «փափուկ» ուժի գործիքակազմը կիրառվել է, երբեմն, թուրքական, երբեմն էլ երկու երկրների միջև հարաբերությունների կարգավորմամբ շահագրգռված երրորդ կողմի նախաձեռնությամբ: Բացատրությունն այն է, որ դիվանագիտական հարաբերությունների բացակայության

պայմաններում անհրաժեշտ են հաղորդակցության այլընտրանքային կամ ոչ պաշտոնական ուղիներ, իսկ հանրային դիվանագիտության գործիքակազմը հնարավորություն է ընձեռում պետության կամ որևէ այլ միավորի, նվազագույնի հասցնելով ուղիղ շփումները², լուծել որոշակի խնդիրներ:

Արցախյան առաջին պատերազմի ընթացքում և, հատկապես, դրա ավարտից հետո ուրվագծվեցին հայ-թուրքական շփումներ կազմակերպելու առանձին փորձեր: Հաշվի առնելով, որ երկու երկրները ժառանգել էին երկու ժողովուրդների խորքային հակասություններն ու տարաձայնությունները, և դրանց գումարվել էին նաև Արցախյան առաջին պատերազմի հետևանքով առաջացած նոր մարտահրավերները, հայ-թուրքական շփումների կազմակերպումը ավելի հեշտ էր ապահովել տարբեր պատճառներով երկու երկրների հարաբերությունների կարգավորմամբ շահագրգռված երրորդ կողմերի միջնորդությամբ կամ նախաձեռնությամբ: Այդուամենայնիվ, եղել են նաև չմիջնորդավորված և ուղիղ նախաձեռնություններ, որոնք իրականացվել են կա՛մ պաշտոնական խորովակներով, կա՛մ կյանքի են կոչվել երկու երկրների հասարակա-

² Ուղիղ շփումների փոխարեն, հաճախ երրորդ կողմի կամ ոչ կառավարական կազմակերպության միջնորդությամբ, կարող են գործի դրվել հասարակությունների թիրախային խմբերի միջև համատեղ միջոցառումների, կրթական և մշակութային ծրագրերի կազմակերպումն ու անցկացումը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Gorenc N., Public Diplomacy as an Instrument of Us Foreign and Security Policy, Teorija in Praksa, no. 56(3), 2019, p. 912. Հանրային դիվանագիտության գործիքակազմից հատկապես կարևոր է տեղեկատվության և պրոպագանդայի ազդեցությունը, որը կարող է արդյունավետություն ապահովել ոչ միայն դիվանագիտական հարաբերությունների բացակայության, այլև միմյանց հանդեպ ընդգծված բացասական վերաբերմունք ունեցող երկրների ու հասարակությունների պարագայում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Szostek J., What Happens to Public Diplomacy During Information War? Critical Reflections on the Conceptual Framing of International Communication, International Journal of Communication, N 14, 2020, pp. 2728–2748.

կան կազմակերպությունների ու առանձին անհատների ջանքերով:

Դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում հայ-թուրքական ինստիտուցիոնալ շփման առաջին օրինակներից էր 1997թ. ստեղծված «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհուրդը», որը ոչ կառավարական՝ մասնավոր ոլորտի նախաձեռնության արգասիք էր: Թեև Հայաստանի և Թուրքիայի միջև չկային ուղիղ առևտրական հարաբերություններ, բայց «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհրդի» կազմում ներառվեցին գործարարներ, որոնք ուղիղ, առանց միջնորդների, քննարկում էին երկու երկրների միջև տնտեսական հարաբերություններին առնչվող մի շարք հարցեր, հանդես էին գալիս նախաձեռնություններով: Հետագայում «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհրդի» նախաձեռնությամբ կազմակերպվեցին նաև մի շարք մշակութային միջոցառումներ:

Գնահատելով «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհրդի» գործունեությունը՝ կարելի է արձանագրել, որ այն համապատասխանում է միջազգային հարաբերությունների ոլորտի հեղինակավոր գիտնական, Օտտավայի համալսարանի պրոֆեսոր Պետեր Ջոնսի՝ «Երկրորդ ուղու դիվանագիտության»³ վերաբերյալ ձևակերպմանը. «Թեև «Երկրորդ ուղին» պատված է բազմաթիվ ա-

³ «Երկրորդ ուղու դիվանագիտություն» եզրն առաջին անգամ օգտագործվել է 1981 թ. հոգեբան Ուիլյամ Դեյդոտնի և ԱՄՆ պետքարտուղարության նախկին աշխատակից Ջոզեֆ Մոնտվիլի հոդվածում: Ըստ հեղինակների՝ «Երկրորդ ուղու դիվանագիտությունը» հակադրվում է դիվանագիտության ավանդական դրսևորումներին և իրականացվում է «ոչ պաշտոնական, ոչ կառուցվածքային շփումների միջոցով», տե՛ս Davidson W. D., Montville J. V., Foreign Policy According to Freud, Foreign Policy, N 45, 1981–1982, p. 155. «Երկրորդ ուղու դիվանագիտության» պատմության ու դրսևորումների մասին տե՛ս նաև Homans Ch., Track II Diplomacy: A Short History, Foreign Policy, <https://foreignpolicy.com/2011/06/20/track-ii-diplomacy-a-short-history/> (մուտքի ամսաթիվ՝ 19.09.2023).

ռեդեֆինիցիան, իրականում այն պարզ մեթոդ է ոչ պաշտոնական մակարդակում որևէ հակամարտության տարբեր կողմերում եղած ազդեցիկ մարդկանց մեկ վայրում հավաքելու համար, որպեսզի նրանք խոսեն խնդիրների մասին և միասին առաջարկեն գաղափարներ, թե ինչպես կարելի է ավելի լավ կառավարել հակամարտությունը կամ լուծել այն»⁴: Հատկանշական է, որ «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհրդի» ջանքերով իրականացված «Երկրորդ ուղու դիվանագիտության» այս դրսևորումը նպաստեց նաև հայ-թուրքական պաշտոնական շփումներին. 1999թ. Թուրքիայում տեղի ունեցած երկրաշարժի հետևանքները վերացնելու նպատակով Հայաստանը մարդասիրական օգնություն տրամադրեց Թուրքիային: Այս գործընթացում էական ներգրավվածություն է ունեցել «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհուրդը»⁵: Ընդ որում, հետագայում ևս, Թուրքիայում տեղի ունեցած աղետների առիթով Հայաստանի կառավարությունը մի քանի անգամ մարդասիրական օգնություն է ուղարկել Թուրքիա⁶:

«Երկրորդ ուղու դիվանագիտության» ևս մեկ օրինակ էր «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» կազմավորումը, որը, սակայն, միջնորդավորված նախաձեռնություն էր և կյանքի կոչվեց

⁴ Jones P., The Future of Track Two Diplomacy, Global Brief, <https://globalbrief.ca/2015/10/the-future-of-track-two-diplomacy/> (մուտքի ամսաթիվ՝ 19.09.2023).

⁵ Հայ-թուրքական շփումներում «Հայ-թուրքական բիզնեսի զարգացման խորհրդի» ունեցած դերակատարությունը մանրամասն անդրադարձել է խորհրդի հիմնադիր Նոյան Սոյաքը: Տե՛ս 30 տարի է՝ Հայաստանը միայնության մեջ է. Նոյան Սոյաք, Ալիք մեդիա, <https://www.aliqmedia.am/2022/06/29/70560/> (մուտքի ամսաթիվ՝ 19.09.2023):

⁶ Այս շարքում ամենախոշորը կարելի է համարել 2023 թ. փետրվարին Թուրքիայում տեղի ունեցած ավերիչ երկրաշարժից հետո Հայաստանի տրամադրած մարդասիրական օգնությունը, որի երկու խմբաքանակները հատել են հայ-թուրքական ցամաքային սահմանի Մարգարա-Ալիջան սահմանային անցակետը և ուղևորվել աղետի գոտի: Դրան զուգահեռ Հայաստանը նաև 27 հոգանոց որոնողափրկարարական խումբ է ուղարկել երկրաշարժից ամենից շատը տուժած թուրքական քաղաքներից մեկը՝ Ադըլաման:

ամերիկացիների ջանքերով: Հանձնաժողովի մեջ ընդգրկվեցին հայ և թուրք նախկին պետական պաշտոնյաներ, դիվանագետներ ու քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ: Ընդ որում՝ եթե «փափուկ ուժն» ու հանրային դիվանագիտությունն ավելի հեշտ կիրառելի և արդյունավետ են քաղաքական հարցերին հնարավորինս քիչ առնչվող բնագավառներում, ապա «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովի» գործունեությունը ծավալվեց հայ-թուրքական հարաբերությունների ամենակնճռոտ հարցի՝ Հայոց ցեղասպանության շուրջ: Թեև հանձնաժողովի աշխատանքները չնպաստեցին երկու երկրների միջև պաշտոնական մակարդակում որևէ կոնկրետ արդյունքի արձանագրմանը⁷, բայց իր գործունեության ամփոփիչ փուլում հանձնաժողովը դիմեց «Անցումային արդարադատության միջազգային կենտրոնին»՝ խնդրելով ուսումնասիրել, թե արդյոք 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիան կիրառելի է 1915 թ. դեպքերի համար, որի արդյունքում հրապարակվեց «Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի» համապատասխան զեկույցը, որի եզրակացության մեջ նշվեց. «...այդ իրադարձությունների (նկատի է առնվում Հայոց ցեղասպանությունը - Ն. Դ.) կազմակերպիչներից առնվազն որոշները, գիտեին, որ իրենց գործողությունների հետևանքը լինելու է արևելյան Անատոլիայի հայերի ամբողջական կամ մասնակի ոչնչացումը կամ հետևողականորեն

⁷ Թուրքական գիտական շրջանակներում շրջանառվում է տեսակետ, թե «Հայ-թուրքական հաշտեցման հանձնաժողովը» կարող էր շատ ավելի շոշափելի արդյունքներ արձանագրել, եթե դրա աշխատանքների վրա ազդեցություն չունենար հայկական սփյուռքը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Mandacı N, Reconciliation under the Shadow of Diaspora Politics: Some Lessons from the Turkish-Armenian Reconciliation Commission (TARC). Dokuz Eylül Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, N 16(2), 2014, pp. 235–257.

գործել են՝ ունենալով այդպիսի նպատակ, հետևաբար, այդ նպատակը պարունակել է գեղասպանական մտադրություն»⁸:

2002 թ. Թուրքիայում ԱԶԿ-ի իշխանության գալն ազդեցություն ունեցավ նաև Թուրքիայում նոր որակի քաղաքացիական հասարակության կազմավորման վրա՝ որոշակիորեն ազատականացնելով այդ շրջանակներում ընդգրկված և տարբեր խնդիրներով զբաղվող անձանց գործունեությունը⁹: Ստեղծվեցին մի շարք ոչ կառավարական կազմակերպություններ, տարբեր բնագավառներում գործունեություն ծավալող ՀԿ-ներ: Այս զարգացումները նպաստեցին նաև ոչ պաշտոնական մակարդակով հայ-թուրքական շփումների հաճախակիացմանը¹⁰:

Այդուհանդերձ, դիվանագիտական հարաբերությունների բացակայության պայմաններում եղել են նաև նախաձեռնություններ, որոնք շրջանառության մեջ են դրվել պետական մարմինների կողմից: Օրինակ, 2007 թ. Թուրքիայի Հանրապետության մշակույթի նախարարությունը նախաձեռնեց Վանի Աղթամար կղզու Սուրբ Խաչ եկեղեցու վերանորոգում ու բացման խորհրդանշական արարողություն: Թուրքական կողմն այդ գործընթացներին մասնակցե-

⁸ The Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events which Occurred during the Early Twentieth Century. The International Center for Transitional Justice, 2002, p. 17.

<https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf> (մուտքի ամսաթիվ՝ 19.09.2023).

⁹ Թուրքիայում ԱԶԿ իշխանության հաստատման սկզբնական շրջանը նպաստավոր էր քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպությունների գործունեության համար, որը դրսևորեց նաև ինստիտուցիոնալիզացման որոշակի միտումներ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Şahin O., Akboğa S., Türkiye’de Devlet-Sivil Toplum Kuruluşları İlişkisi ve Sivil Toplum Kuruluşlarına Katılım, Uluslararası Siyaset Bilimi ve Kentsel Araştırmalar Dergisi, N 7(2), 2019, ss. 405–427:

¹⁰ Ոչ պաշտոնական մակարդակով հայ-թուրքական շփումների, ինչպես նաև «Երկրորդ ուղու դիվանագիտության» տարբեր օրինակների մասին առավել մանրամասն տե՛ս Ter-Matevosyan V., Track Two Diplomacy between Armenia and Turkey: Achievements and Limitations, Caucasus Analytical Digest, N 86, 2016, pp. 3–6:

լու հրավեր հղեց նաև հայկական կողմին: Պատասխանելով այդ նախաձեռնությանը՝ հայկական կողմը որոշեց, ՀՀ մշակույթի նախարարի տեղակալի գլխավորությամբ, Թուրքիա գործուղել պատվիրակություն, որի կազմում ընդգրկվել էին պատմաբաններ, մշակութային համայնքի ներկայացուցիչներ¹¹:

Ինչպես բնական աղետների հետևանքները հաղթահարելու գործում Հայաստանի ցուցաբերած օգնության, այնպես էլ Թուրքիայի ներկայիս տարածքում մնացած հայկական մշակութային ժառանգության վերականգնման նախաձեռնությունների պարագայում, դրանք ավելի մեծ ազդեցություն են ունենում ոչ թե համապատասխանաբար Թուրքիայի և Հայաստանի կառավարությունների, այլ այդ երկրների տարբեր հասարակական շրջանակների և խավերի վրա: Ավելին, նմանատիպ նախաձեռնություններն արագորեն շրջանառվում են երկու երկրների ՁԼՄ-ներում, երբեմն դառնում նաև հասարակական-քաղաքական քննարկումների առարկա: Հետևաբար և՛ բնական աղետները հաղթահարելու գործում Հայաստանի ցուցաբերած աջակցությունը, և՛ մշակութային կոթողները վերականգնելու նախաձեռնությունը կարելի է համարել նաև երկու երկրների միջև ուղիղ կիրառված «փափուկ» ուժի դրսևորումներ:

Հայ-թուրքական հարաբերություններում «փափուկ» ուժի և հանրային դիվանագիտության գործիքակազմն օգտագործելու՝ Թուրքիայի դրդապատճառներից մեկը հայկական սփյուռքի առկայության հանգամանքն է: Հայաստանի երրորդ հանրապետության հիմնադրումից ի վեր, ըստ թուրքական կողմի՝ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գլխավոր խոչընդոտնե-

¹¹ Ministry Spokesperson Comments on the Reopening of Akhtamar Church, MFA of Armenia, <https://www.mfa.am/en/press-releases/2007/03/28/akhtamar/120> (մուտքի ամսաթիվ՝ 19.09.2023).

րից մեկը եղել է Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը¹²: Ընդ որում՝ թուրքական քաղաքական միտքը Հայոց Ցեղասպանության ճանաչման գործի հիմնական շահառու, երբեմն, համարում է ոչ թե Հայաստանի Հանրապետությանը, այլ հայկական սփյուռքին և նրա կառույցներին, որը, թուրքական կողմի պատկերացմամբ, գործընթացի նախաձեռնողը, առաջ մղողն ու հետամուտ լինողն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, երբեմն, ուղղորդում է այն, ունենում ավելի մեծ կամ համեմատաբար սահմանափակ ներգրավվածություն դրանում: Պատահական չէ, որ 2023 թ. Հայոց ցեղասպանության փաստի ժխտմանը նվիրված գլխավոր միջոցառումը, որը կազմակերպվել է թուրքական պետության հովանավորությամբ, տեղի է ունեցել Թուրքիայից դուրս՝ ԱՄՆ-ում: Ապրիլի 21-ին Թուրքիայի նախագահի աշխատակազմի հանրային կապերի վարչությունը Նյու Յորքում գործող «Թուրքական տանը»¹³ կազմակերպել է պանելային քննարկում, որը կրել է

¹² Այս մասին առավել մանրամասն տե՛ս Kesgin S., Türkiye-Ermenistan İlişkilerinin Realist Dış Politika Bağlamında İncelenmesi, İktisadi ve İdari Bilimler Dergisi, Yıl, 3(6), 2017, ss. 185–188: Հատկանշական է, որ թուրքական քաղաքական միտքը մշտապես կարծել է նաև, որ հայկական սփյուռքն ու Հայոց ցեղասպանության ճանաչման խնդիրը ոչ միայն ազդեցություն ունենա հայ-թուրքական հարաբերությունների, այլև Թուրքիայի ողջ արտաքին քաղաքականության վրա: Թուրքական այս ընկալումների մասին առավել հանգամանորեն տե՛ս u Laçiner S., Ermeni Sorunu, Diaspora ve Turk Dis Politikasi, Ankara, Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu, 2008, s. 654:

¹³ «Թուրքական տունը» համարվում է Թուրքիայի դիվանագիտական ծառայությանը սպասարկող ամենանշանավոր կառույցներից մեկը: Շինության տարածքը և դրա վրա կառուցված նախկին շենքը Թուրքիայի Հանրապետությունը ձեռք է բերել դեռևս 1977 թ.՝ վճարելով 3 միլիոն ԱՄՆ դոլար: 2013 թ. նախկին կառույցը քանդվել է, նոր շենքի շինարարությունը սկսվել է 2017 թ.: 2021 թ. սեպտեմբերի 20-ին տեղի է ունեցել «Թուրքական տան» բացման արարողությունը, որին մասնակցել է ԹՀ նախագահ Ռ. Թ. Էրդողանը: 36 հարկանի այդ շինությունում այժմ տեղակայված են ՄԱԿ-ում Թուրքիայի և, այսպես կոչված, «Հյուսիսային Կիպրոսի Թյուրքական Հանրապետության» մշտական ներկայացուցչությունները, Նյու Յորքում Թուրքիայի գլխավոր հյուպատոսությունը, Նյու Յորքում ԹՀ Կենտրոնական բանկի ներկայացուցչությունը, Աթաթյուրքի անվան դպրոցը և այլ կառույցներ ու կազմակերպություններ, որոնք առնչություն ունեն ԹՀ հետ:

«Ճշմարտության կոչ. 1915-ի դեպքերի պատմական իրողությունը» խորագիրը: Քննարկումը վարել է Անկարայի Հաջը Բայրամ Վելի համալսարանի պրոֆեսոր Շուայ Նիհան Աչըքալընը: Քննարկմանը մասնակցել են ՄԱԿ-ում Թուրքիայի Հանրապետության մշտական ներկայացուցիչ Սեդաթ Օնալը, ԹՀ նախագահի աշխատակազմի հանրային կապերի վարչության ղեկավարի տեղակալ Չադաթայ Օզդեմիրը: Բանախոսություններով հանդես են եկել ԹՀ նախագահականին առընթեր անվտանգության և արտաքին քաղաքականության խորհրդի անդամներ, պրոֆեսորներ Նուրջին Աթեշօղլու Գյունեյը, Չադրը Էրհանը, Եվրասիական ուսումնասիրությունների կենտրոնի ներկայացուցիչ Էդվարդ Էրիքսոնը, ինչպես նաև անկախ լրագրող Ռաուլ Լոուերի Կոնտրեբասը:

Պանելային քննարկումը սկսվել է տեսանյութով, որտեղ, ըստ ԹՀ նախագահի աշխատակազմի հանրային կապերի վարչության պաշտոնական հաղորդագրության, ներկայացվել է «Օսմանյան կայսրությունում ապրող հայ համայնքը, որը դարեր շարունակ խաղաղ ապրել է Օսմանյան կայսրությունում, ինչպես նաև անջատողական շարժումներն ու 1915 թ. իրադարձությունները»¹⁴:

Ելնելով այս ընկալումներից՝ թուրքական պետությունը, որը մշտապես ընդգծված բացասական դիրքորոշում է ունեցել հայկական ավանդական սփյուռքի և նրա ձևավորած համայնքների նկատմամբ, պայքարելով հայկական սփյուռքի դեմ բոլոր հնարավոր միջոցներով¹⁵, փորձում է նաև մեղմել կամ դրական դարձնել

¹⁴ Directorate of Communications Holds Panel on «The Events of 1915» in New York. Directorate of Cummmunications,

<https://www.iletisim.gov.tr/english/haberler/detay/directorate-of-communications-holds-panel-on-the-events-of-1915-in-new-york> (մուտքի ամսաթիվ՝ 19.02.23).

¹⁵ Բացի թուրքական պետությունից, վերջին տարիներին հայկական սփյուռքի կառույցների դեմ ակտիվորեն պայքարում են նաև թուրքական սփյուռքն ու դրա հետ փոխկապակցված մի շարք կազմակերպություններ, որոնց գործունեությունն աստի-

տարբեր երկրներում բնակվող հայերի վերաբերմունքը Թուրքիայի Հանրապետության և թուրքերի հանդեպ: Հայկական սփյուռքի հնարավորինս լայն զանգվածների հետ հարաբերվելիս «փափուկ» ուժը կարելի է համարել Թուրքիայի քաղաքականության գործիքներից մեկը: Այդուհանդերձ, արտաքին քաղաքականությունը իրացնողները, երբեմն, կարող են ոչ միայն շեղվել սահմանված նպատակներից, այլև իրենց վարքով հակասել դրանց: Ուրուզվայ այցի ընթացքում Թուրքիայի նախկին ԱԳ նախարար Մևուլթ Չավուշօղլուն ձեռքի շարժումով տեղի հայկական համայնքի ներկայացուցիչներին ցույց տվեց «Գորշ գայլերի» տարբերանշանը, որը կարելի է համարել նշվածն առավել դիպուկ բնութագրող օրինակներից մեկը¹⁶:

Սույն ուսումնասիրության շրջանակում օգտագործված մասնագիտական գրականության ցանկը կարելի է պայմանականորեն բաժանել թեմատիկ երկու ուղղության: Առաջինը վերաբերում է հանրային դիվանագիտության և «փափուկ» ուժի վերաբերյալ առկա տեսություններին, միջազգային հարաբերություններում դրա կիրառության օրինակներին ու գործիքակազմի այն տեսակներին, որոնք հաճախ օգտագործում են միջազգային դերակատարները «փափուկ» ուժի և հանրային դիվանագիտության միջոցով արտաքին քաղաքական իրենց նպատակներն սպասարկելու համար: Աշխատանքում ներառված մասնագիտական գրականության մյուս

ճանաբար կրում է ինստիտուցիոնալիզացված բնույթ: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Պոդոսյան Ն., Կարապոդոսյան Ս., Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 146:

¹⁶ Çavuşoğlu'nun Bozkurt İşaretinin Yankıları Sürüyor, VOA Türkçe, accessed September 19, 2023, 25.04.202, https://www.voaturkce.com/a/cavusoglu-nun-bozkurt-isaretinin-yankilari-suruyor/6544136.html?fbclid=IwAR3vSp1GZOnw2tMwyZjwteZJ_j7UHOaJZFOPhwT46HS1nQdVze7r08Q7dzI.

խմբի քննության առարկան Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորման տարբեր փորձերն ու կոնկրետ օրինակներն են: Նկատի ունենալով, որ Հայաստանի և Թուրքիայի միջև առկա հակասությունները, դրանց ծագումնաբանությունը, խորքային պատճառները, դրանք հաղթահարելու գործիքակազմը, ինչպես նաև տարբեր դրսևորումներ ունեցած կարգավորման փորձերի հիմնական գործընթացները չեն առաջացել և չեն սահմանափակվում միայն երկու պետական միավորների պաշտոնական տիրույթում՝ սույն աշխատանքի և դրանում ներառված մասնագիտական գրականության որոշ աղբյուրներում առկա են հայ-թուրքական հարաբերությունների ամենատարբեր բաղադրիչներին առնչվող անդրադարձներ: Այս համատեքստում կարելու է արձանագրել, որ այս աշխատանքում տեղ գտած որոշ ուսումնասիրությունների առանցքային թեմաներից է հայկական և թուրքական սփյուռքի, երկու երկրների քաղաքացիական հասարակությունների ու «Երկրորդ ուղու» դիվանագիտության գործոնն ու դրանց ազդեցությունը Հայաստանի և Թուրքիայի շփումների ու երկու երկրների հարաբերությունների կարգավորման փորձերի վրա: Օգտագործված մասնագիտական գրականության ընտրության հարցում նախապատվություն է տրվել ժամանակային առումով համեմատաբար նոր լույս տեսած աշխատանքներին, որոնց ընդհանուր տրամաբանությունը հնարավորինս մոտարկված է միջազգային հարաբերությունների արդի միտումներին և հայ-թուրքական հարաբերությունների վերաբերյալ ընկալումներին:

MANIFESTATIONS OF PUBLIC DIPLOMACY AND SOFT POWER IN ARMENIAN-TURKISH RELATIONS

Hayk Darbinyan¹⁷

Even in the absence of diplomatic relations, the Republic of Armenia and the Republic of Turkey had several attempts at diplomatic contact. Along with official and institutionalized contacts between the two countries in multidisciplinary format, the toolkit of Public Diplomacy and Soft Power was applied as well. Moreover, these tools were used by various actors interested in the process of normalization of Armenian-Turkish relations.

Apart from the scope of contacts with the Republic of Armenia, the Turkish side used Public Diplomacy and Soft Power in relations towards the Armenian diaspora, trying to soften the attitude of the Armenians living in different countries towards Turkey and the Turkish nation.*

Keywords: Armenia, Türkiye, Public diplomacy, Soft Power, Diaspora.

ПРОЯВЛЕНИЯ ПУБЛИЧНОЙ ДИПЛОМАТИИ И «МЯГКОЙ» СИЛЫ В АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЯХ

Айк Дарбинян¹⁸

Даже в условиях отсутствия дипломатических отношений, Республика Армения и Турецкая Республика предприняли несколько попыток дипломатического контакта. Наряду с официальными и институциональными контактами между двумя странами также использовался инструментарий публичной дипломатии и «мягкой» силы. Более того, эти инструментарии использовались различными субъектами, заинтересованными в процессе нормализации армяно-турецких отношений. Помимо контактов с Республикой Армения, турецкая сторона использовала публичную дипломатию и «мягкую» силу в отношениях с армянской диаспорой, пытаясь смягчить отношение армян, проживающих в разных странах, к Турции и туркам.

¹⁷ is a PhD student at the Department of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: haykdarbinyan93@gmail.com, ORCID 0009-0000-2316-0080.

¹⁸ Айк Дарбинян – аспирант кафедры тюркологии факультета востоковедения ЕзГУ, эл. почта: haykdarbinyan93@gmail.com, ORCID 0009-0000-2316-0080.

Ключевые слова: Армения, Турция, публичная дипломатия, «мягкая» сила, диаспора.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Gorenc N., Public Diplomacy as an Instrument of Us Foreign and Security Policy, *Teorija in Praksa*, no. 56(3), 2019, pp. 911–929.
2. Szostek J., What Happens to Public Diplomacy During Information War? Critical Reflections on the Conceptual Framing of International Communication”, *International Journal of Communication*, no. 14, 2020, pp. 2728–2748.
3. Davidson W. D., Montville J. V., Foreign Policy According to Freud, *Foreign Policy*, no. 45, 1981-1982, pp. 145–157.
4. Homans Ch., Track II Diplomacy: A Short History, *Foreign Policy*, <https://foreignpolicy.com/2011/06/20/track-ii-diplomacy-a-short-history/> (accessed 19.09.2023).
5. Jones P., The Future of Track Two Diplomacy, *Global Brief*, <https://globalbrief.ca/2015/10/the-future-of-track-two-diplomacy/> (accessed 19.09.2023).
6. The Applicability of the United Nations Convention on the Prevention and Punishment of the Crime of Genocide to Events which Occurred during the Early Twentieth Century”, *The International Center for Transitional Justice*, 2002, <https://www.ictj.org/sites/default/files/ICTJ-Turkey-Armenian-Reconciliation-2002-English.pdf> (accessed 19.09.2023).
7. Mandacı N., Reconciliation under the Shadow of Diaspora Politics: Some Lessons from the Turkish-Armenian Reconciliation Commission (TARC). *Dokuz Eylül Üniversitesi Sosyal Bilimler Enstitüsü Dergisi*, N 16(2), 2014, pp. 235–257.
8. Ter-Matevosyan V., Track Two Diplomacy between Armenia and Turkey: Achievements and Limitations”. *Caucasus Analytical Digest*, N 86, 2016, pp. 3-6.
9. Ministry Spokesperson Comments on the Reopening of Akhtamar Church, MFA of Armenia, <https://www.mfa.am/en/press-releases/2007/03/28/-akhtamar/120> (accessed 19.09.2023).
10. Directorate of Communications holds panel on «The Events of 1915» in New York, Directorate of Communications, <https://www.iletisim.gov.tr/english/haberler/detay/directorate-of-communications-holds-panel-on-the-events-of-1915-in-new-york> (accessed 19.09.2023):

11. Պողոսյան Ն., Կարապողոսյան Ս., Թուրքիայի Հանրապետության և թուրքական սփյուռքի համագործակցության հակահայկական ուղղվածությունը, Երևան, 2016:

12. «30 տարի է՝ Հայաստանը միայնության մեջ է. Նոյան Սոյաք», Ալիք մեդիա, <https://www.aliqmedia.am/2022/06/29/70560/> (accessed 19.09.2023):

13. Laçiner S., Ermeni Sorunu, Diaspora ve Turk Dis Politikasi, Ankara, Uluslararası Stratejik Araştırmalar Kurumu, 2008.

14. Şahin O., Akboğa S., Türkiye'de Devlet-Sivil Toplum Kuruluşları İlişkisi ve Sivil Toplum Kuruluşlarına Katılım. Uluslararası Siyaset Bilimi ve Kentsel Araştırmalar Dergisi, N 7(2), 2019, pp. 405-427.

15. Kesgin S., Türkiye-Ermenistan İlişkilerinin Realist Dış Politika Bağlamında İncelenmesi. İktisadi ve İdari Bilimler Dergisi, Yıl, 3(6), 2017, pp. 185-188.

16. Çavuşoğlu'nun Bozkurt İşaretinin Yankıları Sürüyor, VOA Türkçe, https://www.voaturkce.com/a/cavusoglu-nun-bozkurt-isaretinin-yankilari-suruyor/6544136.html?fbclid=IwAR3vSp1GZOnw2tMwyZjwteZJ_j7UHOaJZFOPhwT46HS1nQdVze7r08Q7dzI (accessed 19.09 2023).

ԿՈՍՈՎՈՅԻ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԹՈՒՐԲԻԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1990-1999 ԹԹ.)

Վոլոդյա Մկրտչյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.231

Բալկաններն այն տարածաշրջաններից է, որտեղ հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում թուրքական արտաքին քաղաքականությունը ակտիվ է եղել: Հետաքրքրական և ուշադրության է արժանի Կոսովոյի ճգնաժամի ժամանակ Անկարայի վարած քաղաքականությունը, ինչն էլ հանդիսանալու է այս աշխատանքի առանցքային թեման: Այս հոդվածը նպատակ ունի վերլուծել Կոսովոյում Թուրքիայի քաղաքականությունը 1990-ականների սկզբից մինչև ՆԱՏՕ-ի միջամտությունը և Կոսովոյի պատերազմի ավարտը:

Ուսումնասիրության առաջին մասում հակիրճ կներկայացվի Կոսովոյի հարցը, այնուհետև կուսումնասիրվի Կոսովոյի հետ Թուրքիայի հարաբերությունների ընթացքը վերոնշյալ ժամանակաշրջանում և կբացահայտվի Թուրքիայի վերաբերմունքը Կոսովոյում բռնկված հակամարտությանը:

Բանալի բառեր¹ Թուրքիա, Կոսովո, Բալկաններ, արտաքին քաղաքականություն, նեոսուանիզմ, Սուլեյման Դեմիրել, Բամայիլ Ջեմ, ՆԱՏՕ-ի միջամտություն:

Կոսովոյի ճգնաժամը

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո Մերբիան, Խորվաթիան, Բոսնիան, Սլովենիան, Չեռնոգորիան և Մակեդոնիան միավորվելով ստեղծեցին Հարավսլավիայի Սոցիալիստական

¹ Վոլոդյա Մկրտչյանը Երևանի պետական համալսարանի արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի մագիստրանտ է, էլ. փոստ՝ mkvolodya21@gmail.com, ORCID 0009-0001-8716-2883:

Դաշնային Հանրապետությունը (ՀՄԴՀ), որը ներառում էր նաև Կոսովոն²: Նորաստեղծ երկրի նախագահ Իոսիպ Բրոզ Տիտոն 1974 թվականի Սահմանադրությամբ³ Կոսովոյին և Վոյվոդինային շնորհեց լայն ինքնավարություն, և այս իրավիճակը շարունակվեց մինչև 90-ական թվականները, երբ 1997 թվականին Հարավսլավիայի Դաշնային Հանրապետության նախագահ Սլոբոդան Միլոշևիչը գրկեց Կոսովոյին ինքնավարությունից⁴՝ հանձնելով այն սերբական վարչակազմին, ինչն էլ քաղաքացիական պատերազմի պատճառ դարձավ:

Կոսովոյի դեմոկրատական լիզայի առաջնորդ Իբրահիմ Ռուգովայի գլխավորությամբ Կոսովոն 1991 թվականին ձևավորեց իր խորհրդարանը և անցկացրեց անկախության հանրաքվե, որտեղ անկախության օգտին քվեարկեցին մասնակիցների 99%-ը⁵, սակայն Սերբիայի վարչակազմն այս հանրաքվեն հայտարարեց անօրինական և շարունակեց ուժեղացնել ճնշումը Կոսովոյի վրա: Լարվածությունը հանգեցրեց պատերազմի, որի մասին հայտարարեց անձամբ նախագահ Միլոշևիչը 1998 թվականի փետրվարի 28-ին:

² Ներկայումս, համաձայն Սերբիայի Հանրապետության Սահմանադրության՝ Կոսովոյի տարածքը Սերբիայի Հանրապետության մաս է և մտնում է նրա կազմի մեջ որպես Կոսովոյի և Մետոհիայի ինքնավար մարզ, սակայն, դե ֆակտո, Կոսովոն չի գտնվում Սերբիայի կառավարության վերահսկման ներքո:

³ Constitution of the Socialist Federal Republic of Yugoslavia, part one, Constitution of the Socialist Federal Republic of Yugoslavia 21 Feb 1974 (worldstatesmen.org) (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23).

⁴ Nelsson R., How Milosevic stripped Kosovo's autonomy, The Guardian, archive, 1989, How Milosevic stripped Kosovo's autonomy - archive, 1989|Kosovo|The Guardian (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23).

⁵ Minorities at Risk Project, “Chronology for Kosovo Albanians in Yugoslavia”, Refworld, 2004, Refworld|Chronology for Kosovo Albanians in Yugoslavia (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23).

Կոսովոյի խնդրի լուծման համար ԱՄՆ-ն Ֆրանսիայում Միլոշևիչի և բազմաթիվ երկրների դիվանագետների մասնակցությամբ հրավիրեց բանակցություններ⁶: Այս հանդիպման ժամանակ պահանջեցին, որ հարավսլավական բանակը դուրս գա Կոսովոյից, սակայն Միլոշևիչը կտրականապես մերժեց դա: Հակառակ Միլոշևիչի խիստ դիրքորոշմանը՝ ՆԱՏՕ-ն միաձայն որոշեց ռազմական միջամտություն իրականացնել Կոսովոյում: 1999 թվականի մարտի 24-ին ՆԱՏՕ-ի օդային ուժերը ամերիկյան, անգլիական, գերմանական, ֆրանսիական և նիդեռլանդական ինքնաթիռների գլխավորությամբ ռազմական միջամտություն իրականացրին Կոսովոյում և սկսեցին ռմբակոծել Հարավսլավիան⁷: Ի վերջո, 1999թ. հունիսի 5-ին Միլոշևիչը ՆԱՏՕ-ին տեղեկացրեց, որ ընդունում է խաղաղության պայմանները, և հունիսի 10-ին ՆԱՏՕ-ի և Միլոշևիչի համաձայնությամբ Կոսովոյի պատերազմը պաշտոնապես ավարտվեց: Այնուհետև, ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդն ընդունեց 1244 բանաձևը⁸, որով Կոսովոյում տեղակայվեցին ՄԱԿ-ի ժամանակավոր կառավարման առաքելությունը (UNMIK) և ՆԱՏՕ-ի ղեկավարությամբ միջազգային ուժերը (KFOR)⁹, որոնց ձեռքում կառավարումը մնաց մոտավորապես ինը տարի՝ 1999-ից 2008 թվականներին:

⁶ Black I., Serbians to attend French peace talks, The Guardian, February 5, 1999, Serbians to attend French peace talks | World news | The Guardian (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23).

⁷ Ավելին տե՛ս u Kosovo Air Campaign (March-June 1999), NATO Topics, last modified May 17, 2022, NATO - Topic: Kosovo Air Campaign (March-June 1999) (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23).

⁸ Резолюция 1244, принятая Советом Безопасности на его 4011-м заседании”, Организация Объединенных Наций, 10 июня 1999 года, Резолюция 1244 (1999) (archive.org) (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23).

⁹ KFOR-ին մասնակցում են ՆԱՏՕ-ի անդամ 24 երկիր և ՆԱՏՕ-ի ոչ անդամ 8 երկիր: Ավելին տե՛ս u Kosovo Force, Homepage, KFOR (nato.int) (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23).

Թուրքիայի վերաբերմունքը Կոսովոյում բռնկված հակամարտությանը

1990-ական թվականների սկզբին, երբ Կոսովոյի ճգնաժամը դեռ ազդեցիկ բնույթ չէր ստացել, Կոսովոյի նախագահ Ռուզովան որոշակի աշխատանքներ է տարել միջազգային ասպարեզում Կոսովոյի հարցը ճանաչելու և համաշխարհային հասարակական կարծիքի ուշադրությունը գրավելու ուղղությամբ: Քանի որ Ռուզովայի վարչակազմը նախընտրում էր Կոսովոյի հարցը լուծել ոչ բռնի, խաղաղ մեթոդով, նա միջազգային հանրությանը սերբական ճնշումների և բռնությունների մասին տեղեկացնելու համար նախընտրեց այցեր կատարել արտասահման: Այս ծրագրերի թվում պետք է նշել նաև Ռուզովայի այցը Թուրքիա:

Կոսովոյի նախագահ Ռուզովան իր առաջին պաշտոնական այցը Թուրքիա կատարեց 1992 թվականի փետրվարի 12-ին: Կոսովոյի պատվիրակությանը դիմավորել է Թուրքիայի Հանրապետության նախագահը: Պատվիրակությունը նախ այցելել է Ստամբուլ և հանդիպել Թուրքիայում բնակվող ալբանացի գործարարների հետ, այնուհետև տեղափոխվել Անկարա, որտեղ պատվիրակությանը ընդունել է ժամանակի նախագահ Թուրգութ Օզալը¹⁰: Կարծում ենք, որ, ըստ էության, այս հանդիպումով Ռուզովան առաջին քայլն է արել, որպեսզի միջազգային հանրությանը տեղեկացնի Կոսովոյի խնդրի մասին:

Թեև Թուրքիան հյուրընկալում էր Կոսովոյի նախագահին, սակայն իր դիվանագիտական ուղուց ելնելով, նա ձեռնպահ մնաց բացահայտ Կոսովոյի անկախությունից խոսելուց: Մինևույն ժամանակ կարող ենք պնդել նաև, որ Օզալի կողմից Ռուզովայի ընդունելությունը վկայում էր Թուրքիայի և Կոսովոյի մտերմության մասին:

¹⁰ Demirtaş-Coşkun B., Kosova'nın Bağımsızlığı ve Türk Dış Politikası (1990–2008). Uluslararası İlişkiler 7, N 27, 2010, s. 78.

Կոսովոյի խնդրով Թուրքիայի հետաքրքրության ամենաակնառու ապացույցը Ստամբուլում Կոսովոյի գրասենյակի հիմնումն է: 1992 թվականից գործող Կոսովոյի գրասենյակի պաշտոնական բացումը տեղի է ունեցել 1996 թվականի դեկտեմբերի 20-ին Գրանդ Հալիչ (թուրք.՝ Grand Haliç) հյուրանոցում: Գրասենյակի բացմանը ներկա էին նաև Ստամբուլում Ալբանիայի հյուպատոսության և Անկարայում Ալբանիայի դեսպանատան ներկայացուցիչները¹¹: Կոսովոյի գրասենյակի բացումը կարելի է մեկնաբանել որպես Թուրքիայի Հանրապետության հստակ աջակցություն Կոսովոյի խնդրին:

Ստամբուլում Կոսովոյի գրասենյակի բացմանը արձագանքել է Անկարայում Հարավսլավիայի դեսպան Տանասկովիչին՝ սպառնալով նույնիսկ ճանաչել քրդական կազմակերպությունները: Երկու օր անց վարչապետ Թանսու Չիլլերը մամուլի ասուլիս է հրավիրել և ասել, որ իրենք չեն ճանաչում Կոսովոյի կառավարությունը: Չնայած այս զարգացումներին և լարվածությանը, գրասենյակը շարունակել է իր գործունեությունը¹²: Այս քայլով Թուրքիան կրկին ցույց տվել, որ շարունակում է աջակցել Կոսովոյին նույնիսկ անկախ այն փաստից, որ այս ժամանակաշրջանում շարունակում էր խոսել Հարավսլավիայի տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտության մասին:

Այսինքն, ինչպես նկատում է պրոֆեսոր Բիրգյուլ Դեմիրթաշ Ջոշքունը, հակամարտության առաջին շրջանում Թուրքիան փորձել է շարունակել իր երկխոսությունը թե՛ սերբական, թե՛ ալբանական կողմերի հետ՝ շեշտը դնելով մի կողմից Հարավսլավիայի տա-

¹¹ Ferizi V., Kosova-Türkiye Diplomatik İlişkileri 1990-2015. Master's thesis, T. C Selçuk Üniversitesi, 2017, s. 54.

¹² Նույն տեղում, էջ 54:

րաձքային ամբողջականության, մյուս կողմից պլանացիների իրավունքների վրա¹³:

Երբ 1998 թվականին սերբական անվտանգության ուժերի և Կոսովոյի ազատագրության բանակի (ՍՇԿ)¹⁴ զինյալների միջև հակամարտությունները սրվեցին, այս ժամանակահատվածը համընկավ այն ժամանակաշրջանի հետ, երբ Թուրքիան փորձում էր բարելավել հարաբերությունները Բելգրադի վարչակազմի հետ: Այս ժամանակահատվածի համար կարելի է ասել, որ Բալկաններում խաղաղության, կարգուկանոնի և կայունության վերականգնման ու պահպանման համար կարևոր էր Սերբիայի հետ հարաբերությունների կարգավորումը: Սակայն Կոսովոյում սերբական բռնությունների աճը ստիպեց Անկարային վերանայել հարաբերությունները Սերբիայի հետ և հստակեցնել Կոսովոյի հարցում իր դիրքորոշումը¹⁵: Կարծում ենք, որ այս հարցում Թուրքիայի դիրքորոշումը պայմանավորված է եղել հետևյալ գործոններով.

- Նախ, Կոսովոն հանդիսանում էր ինքնավար մարզ, ուստի իրավական առումով Կոսովոյի անջատումը Հարավսլավիայից օրինական չէր: Հաշվի առնելով այս իրավիճակը, էթե Անկարան խառնվեր այս հարցին, ապա դա կլիներ միջամտություն Հարավսլավիայի ներքին գործերին:
- Կոսովոյում կար թուրքական փոքրամասնություն, որը հայտնվել էր հակամարտության գոտում, և սա խնդիրներ էր առաջացրել Թուրքիայի համար, որը պետք է պաշտպաներ նրանց իրավունքները:

¹³ Demirtaş-Coşkun B., նշվ. աշխ., էջ 78.

¹⁴ Կոսովոյի ազատագրության բանակի վերաբերյալ ավելին տե՛ս “What was the Kosovo Liberation Army and why are its leaders on trial?”, BBC, April 3, 2023, What was the Kosovo Liberation Army and why are its leaders on trial? - BBC News (մուտքի ամսաթիվ՝ 31.12.23)

¹⁵ Demirtaş-Coşkun B., նշվ. աշխ., էջ 58.

Այս գործոնների ազդեցության տակ Թուրքիան հակամարտող կողմերին կոչ է արել դադարեցնել բռնությունները և սկսել քաղաքական երկխոսություն: Անկարայի խոսքով՝ հակառակ դեպքում բռնությունները չէին դադարեցվի, և հնարավոր չէր լինի կանխել հակամարտությունները¹⁶:

Այս համատեքստում Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը, որը 1998 թվականի հուլիսի 15-ին այցելեց Ալբանիա, հայտարարեց հակամարտություններին վերջ տալու համար Թուրքիայի պատրաստած ծրագրի մասին: Այդ ծրագիրը հիմնված էր բռնության անհապաղ դադարեցման, Կոսովոյի ալբանացիների՝ մարդու հիմնական իրավունքների ճանաչման, պատերազմող կողմերի միջև կարճ ժամանակում երկխոսության վրա¹⁷: Այսպիսով՝ Թուրքիան ընդգծեց բռնությունների ավարտից հետո Կոսովոյի ինքնավարության վերականգնման կարևորությունը:

Հակամարտությունների սկզբնական փուլում Կոսովոյին աջակցելուն զուգահեռ Թուրքիայի և Սերբիայի հարաբերությունները բավական զգայուն էին դարձել: Թուրքիան գործադրեց իր ներուժը Բելգրադին համոզելու դադարեցնել բախումները: Այս քաղաքականության արդյունքում արտաքին գործերի նախարար Իսմայիլ Ջեմը 1998 թվականի մարտին այցելեց Բելգրադ՝ նախագահ Դեմիրելի ուղերձը փոխանցելու Հարավսլավիայի առաջնորդ Միլոշևիչին¹⁸: Ջեմի խոսքով, եթե կարճ ժամանակում խնդրի խաղաղ լուծում չգտնվի, վտանգ կա, որ պատերազմը կտարածվի ողջ Բալկաններում: Դեմիրելն իր ուղերձում նաև կոչ է արել զգույշ մտե-

¹⁶ Gangloff S., Turkish Policy Towards the Conflict in Kosovo: The Preeminence of National Political Interests, *Balkanologie* 8, N 1, 2004, p. 112

¹⁷ Demirtaş-Coşkun B., նշվ. աշխ., էջ 60:

¹⁸ Ferizi V., նշվ. աշխ., էջ 58.

նալ խնդրին և հայտարարել, որ լուծում գտնելու հարցում Թուրքիան պատրաստ է օգնել¹⁹:

1998 թ. հոկտեմբերին Անթալիայում տեղի ունեցավ Հարավարևելյան Եվրոպայի երկրների գագաթնաժողովը, որտեղ Հարավսլավիան հանդես եկավ հայտարարությամբ, որ ենթարկվելու է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 119937 բանաձևին²⁰: Թվում էր, թե կողմերը հասել են ինչ-որ կոնսենսուսի, սակայն Ալբանիան գագաթնաժողովի եզրափակիչ հռչակագրում հրաժարվեց Հարավսլավիային դատապարտելու իր պահանջից: Արդյունքում, Թուրքիան գոհ էր, որ իր հյուրընկալած գագաթնաժողովում փորձ էր արվել կոնսենսուս ձեռք բերել²¹, այսինքն՝ ցույց էր տվել, որ ինքը կարող է տարածաշրջանային խնդիրների լուծման համար հարթակ տրամադրել: Ահա այստեղ միջազգային վերահսկողության ներքո ընթացող սերբ-ալբանական բանակցությունները մտան փակուղի, և արևմտյան պետությունները աստիճանաբար գնացին Կոսովոյի անկախության գաղափարին, ինչն էլ ստիպեց Թուրքիային վերանայել իր քաղաքականությունը, որն ավելի կոշտ պոռալբանական կողմնորոշում ընդունեց:

Ինչպես հոդվածի առաջին գլխում նշվեց, ՆԱՏՕ-ն 1999 թվականի մարտին ռազմական միջամտություն իրականացրեց Կոսովոյում: Չնայած ՆԱՏՕ-ի ռազմական միջամտությունը Կոսովոյում համարվում է անօրինական²², սակայն Թուրքիան աջակցեց և նույ-

¹⁹ Belgrad'a 'kanı durdur' mesajı. Milliyet, Mart 9. 1998, Belgrad'a 'kanı durdur' mesajı - Güncel Haberler Milliyet, (մուտքի ամսաթիվ՝ 03.01.24).

²⁰ Վերոնշյալ բանաձևում կողմերին կոչ է արվել շուտափույթ հրադադար հայտարարել և երկխոսություն սկսել: Ավելին տե՛ս u Резолюция 119937, принятая Советом Безопасности на его 3930-м заседании, Организация Объединенных Наций, 31 марта 1998 года, N9827998.pdf (un.org), (մուտքի ամսաթիվ՝ 03.01.24).

²¹ Uzlaşma Antalya zirvesine de yansıdı, Milliyet, 14 Ekim 1998.

²² Wippman D., Kosovo and the Limits of International Law. Fordham International Law Journal, Vol. 25, Issue 1, Article 5, 2001, p. 131.

նիսկ ակտիվորեն մասնակցեց միջամտությանը: Թուրքիայի մասնակցությունը իրավական հիմք է ստացել Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում ընդունված խորհրդարանական 596 համարի որոշմամբ, որն ընդունվել էր դեռևս 1998 թվականի հոկտեմբերի 8-ին²³: Իսկ ժամանակի վարչապետ Բյուլենթ Էջնիթի հետևյալ խոսքերը ցույց են տալիս միջամտությանը մասնակցության վերաբերյալ Թուրքիայի վճռականությունը.

«Եթե ցամաքային գործողությունը սկսվի, մենք, որպես Թուրքիա, պատրաստ ենք²⁴»:

ՆԱՏՕ-ի միջամտության մեկնարկով Անկարան շարունակեց արդեն բացեփաց կանգնել Կոսովոյի ալբանացիների կողքին՝ հանդես գալով որպես «փրկիչ», և կոշտացրեց իր դիրքորոշումը սերբական ղեկավարության նկատմամբ: Այստեղից պարզ է դառնում թուրքական կողմի նկրտումները, ինչն էլ տեղավորվում է նախկին նախագահ Օզալի կողմից առաջ քաշված նեոսամանիզմի գաղափարախոսության շրջանակում:

Հյուսիսատլանտյան դաշինքի միջամտությունից առաջ՝ 1998 թ. հոկտեմբերին, երբ Կոսովոյում շարունակվում էր սերբ-ալբանական հակամարտությունը, Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովում Թուրքիայի քաղաքական գործիչները նույնպես ինտենսիվորեն քննարկում էին Կոսովոյի ապագան և Թուրքիայի քաղաքականությունը: Դիտարկելով քաղաքական գործիչների ելույթները՝ տեսնում ենք, որ տվյալ ժամանակաշրջանում եղել է հանրային կարծիքի կոնսուլիդացիա, որի վրա ազդել են մասնավորապես պրոմուսուլմանական գործիչները: Կոնսուլիդացիայի ստեղծման գործում

²³ Resmi Gazete T. C., TBMM Kararları, 596 Sayılı Kararı, 13 Ekim 1998, 23492.pdf (resmigazete.gov.tr) (մուտքի ամսաթիվ՝ 03.01.24).

²⁴ Özdağ A., Önal T., Kosova Sorunu ve Kosova'nın Bağımsızlık Süreci. Akademik Bakış Dergisi, N 61, 2017, s. 565.

հատկապես աչքի են ընկել «Մայր հայրենիք», «Ճշմարիտ ուղի», «Առաքինություն», «Ժողովրդավարական Թուրքիա» խմբակցությունների ներկայացուցիչները, որոնք իրենց ելույթներում կարմիր թելի պես անցկացնում էին նեոսամանիզմի գաղափարախոսությունը²⁵՝ պարբերաբար հղում անելով Թուրքիայի և Կոստվոյի միջև առկա «պատմական կապերին»²⁶: Ուշագրավ կետերից է նաև այն, որ աջ և ձախ գաղափարական կողմնորոշում ունեցող կուսակցությունները դրական էին վերաբերվում Կոստվոյի անկախության ճանաչմանը և պարբերաբար կառավարությանը մեղադրում էին պասիվ լինելու, Կոստվոյի խնդրին բավարար ուշադրություն չդարձնելու մեջ²⁷:

Նախագահ Դեմիրելը, որը միջամտության ժամանակ այցելել է Ալբանիայում և Մակեդոնիայում Կարմիր մահիկի կողմից հիմնված փախստականների ճամբարներ, այստեղ առաջին անգամ խոսել է «ցեղասպանությունից», մեղադրել սերբերին՝ նշելով, որ Միլոշևիչը չի կարողանա հասնել Կոստվոյի հետ կապված իր նպատակներին²⁸: Հարկ է նշել, որ Թուրքիան Կարմիր մահիկի կողմից ստեղծված ճամբարներում ընդունել է նաև փախստականների և թույլ տվել նրանց ապաստանել Քըրքլարելիի Գազիօսմանփաշա փախստականների ճամբարում, որը ստեղծվել է 1989 թվականին բուլղար թուրքերի գաղթի ժամանակ²⁹:

²⁵ TBMM Tutanak Dergisi, 20. Dönem, 67. Cilt, 4. Birleşim, s. 359-363, s. 366-375, tbmm20063004.pdf (մուտքի ամսաթիվ՝ 03.01.24).

²⁶ Կոստվոն ավելի քան 400 տարի եղել է Օսմանյան կայսրության տիրապետության տակ:

²⁷ TBMM Tutanak Dergisi, նույն տեղում:

²⁸ Ergin S., Demirel ve Kosova krizi, Hürriyet, 13 Nisan 1999, Sedat Ergin: Demirel ve Kosova krizi | Sedat ERGİN Köşe Yazısı - Hürriyet Haberler (hurriyet.com.tr) (մուտքի ամսաթիվ՝ 07.01.24).

²⁹ Demirtaş-Coşkun B., նշվ. աշխ., էջ 65:

Կոստվոյում խաղաղ բնակչության դեմ կոտորածների ակտիվացումից հետո Անկարան ուժեղացրեց իր քննադատությունը սերբական վարչակազմի նկատմամբ և սկսեց տեսնել սերբական վարչակազմին որպես իրադարձությունների գլխավոր պատասխանատու: Փաստորեն, կարելի է պնդել, որ այս միջադեպով Կոստվոյի հակամարտությունում Թուրքիան դադարեց զգուշավոր գործել: Թուրքիայի՝ ավելի հստակ գործելու վրա ազդել է նաև վերոնշյալ ԹԱՄԺ լսումներին մասնակցած յուրաքանչյուր խմբակցություն: Այստեղ կտեսնենք նաև լիբերալ հայացքներով աչքի ընկնող Ժողովրդավարական ձախ (ԺԶԿ) և Հանրապետական ժողովրդական (ՀԺԿ) խմբակցությունների ներկայացուցիչների կոչերն ուղղված կառավարությանը՝ «Կոստվոյի ցեղակից եղբայրներին օգնության հասնելու» վերաբերյալ³⁰:

ՆԱՏՕ-ի գործողությունը ու դրա արդյունքները վերլուծելիս՝ կարելի է փաստել, որ Թուրքիան առաջին հերթին աջակցեց օդային միջամտությանը՝ գործելով ԱՄՆ-ի և եվրոպական երկրների հետ զուգահեռ, և այս իրավիճակով պայմանավորված ՆԱՏՕ-ում ամրապնդեց իր դիրքերը, իսկ դաշնակիցների շրջանում բարձրացրեց իր հեղինակությունը:

ՆԱՏՕ-ի միջամտությանը հաջորդած իրադարձարից հետո անդրադառնալով Կոստվոյի ապագային՝ ժամանակի վարչապետ Բյուլենթ Էջլիթն ասել է հետևյալը.

«...Թուրքիան Կոստվոյի ապագան որոշելու հարցում պետք է անպայման հայտարարի իր կշռի մասին: Այնտեղի մարդիկ մեր հարազատներն են: Մենք պատմական հարաբերություններ

³⁰ TBMM Tutanak Dergisi, նույն տեղում, էջ 375–378, tbmm20063004.pdf (մուտքի ամսաթիվ՝ 07.01.24).

ունենք: Թուրքիայի ներդրումն անհրաժեշտ է Կոսովոյի վերակառուցման գործում³¹»:

Վարչապետ Բ. Էջևիթի խոսքերից կարելի է հասկանալ, որ իր Բալկանյան քաղաքականության մեջ Անկարան պետք է կարևորություն տա Կոսովոյին, քանի որ այնտեղ գոյություն ունի մուսուլմանական համայնք, որն էլ պատմական կապեր ունի հենց Թուրքիայի հետ: Տեղին է նշել, որ չնայած վարչապետ Էջևիթի լիբերալ հայացքներին և Ժողովրդավարական ձախ կուսակցության լիբերալ գաղափարախոսությանը, նրա կողմից հնչեցված «պատմական հարաբերությունների» խոսքն էլ պարզ վկայություն է այն բանի, որ Թուրքիան իրադարձությունները դիտարկում էր որպես ներօսմանյան խնդիր, տեղավորում նեոօսմանիզմի գաղափարախոսության շրջանակում և դրանով իսկ լեգիտիմացնում իր միջամտությունը ճգնաժամին:

Եզրակացություն

Բալկանները 1990-ականների ընթացքում եղել է Թուրքիայի արտաքին քաղաքականության օրակարգի կարևոր կետերից մեկը: Տարածաշրջանում տեղի ունեցած զարգացումների կողքով Անկարան չկարողացավ անտարբեր անցնել, և կարելի է ասել՝ Կիպրոսից հետո Թուրքիան իրականացրեց իր ամենաակտիվ արտաքին քաղաքականությունը՝ վարելով ոչ ֆորմալ հետևողական քաղաքականություն: Ճգնաժամի սկզբնական փուլում հակամարտող կողմերին կոչ անելով դադարեցնել բռնությունները, ինչպես նաև փորձելով չեզոք դիրքորոշում պահպանել հակամարտող կողմերի նկատմամբ՝ Թուրքիան ՆԱՏՕ-ի միջամտությունից հետո որդեգրել

³¹ Bila F., Ecevit'in gözüyle Kosova, Milliyet, 16 Haziran 1999, Ecevit'in gözüyle Kosova - Fikret Bila (milliyet.com.tr) (մուսքի ամսաթիվ՝ 07.01.24).

էր կոպիտ դիրքորոշում ընդդեմ սերբերի: Ինչպես կարելի է հասկանալ այս ամենից, սկզբնական շրջանում Կոսովոյում Թուրքիայի քաղաքականությունն իրականացվել է ակտիվ, բայց զգուշավոր կերպով՝ ձեռնպահ մնալով նրանցից որևէ մեկին սատարող երևալուց:

Ելնելով ՆԱՏՕ-ի միջամտությունից հետո Թուրքիայի ավելի ակտիվ և այբանամետ քաղաքականությունից՝ կարելի է պնդել, որ Անկարան Արևմուտքին հետևելով էր իր արտաքին քաղաքականության որոշումները կայացնում: Նրա համար պարզ էր, որ այբանացիներն արևմտյան որոշ երկրների, հատկապես ԱՄՆ-ի հովանավորությամբ իրենց պետությունն էին ստեղծում: Հետագայում այն փաստը, որ Թուրքիան դարձավ Կոսովոյի անկախությունը ճանաչած առաջին պետություններից մեկը, խոսում է Կոսովոյի հարցում Անկարայի քաղաքականության շարունակականության մասին, չնայած նրան, որ հենց Անկարան ունի փոքրամասնությունների հետ կապված խնդիր (խնդիրներ կապված կիպրացի հույների ու քրդերի հետ):

Ճգնաժամում այբանամետ դիրքորոշման որդեգրումը, իսկ 2008 թվականին Կոսովոյի անկախության ճանաչումը ցույց են տալիս, որ Թուրքիայի կառավարող շրջանակները հասկացել էին, որ Կոսովոն 1998–1999 թվականներին տեղի ունեցած բռնությունների պատճառով չէր կարող անցնել սերբական տիրապետության տակ և հնարավոր չէր շրջել Կոսովոյի այբանացիների անկախացմանը տանող գործընթացը, ինչի վրա ազդել էին նաև թուրք քաղաքական գործիչների և մի շարք կուսակցությունների դիրքորոշումը ճգնաժամի տարիներին: Այս առումով հատկանշական է ժամանակի արտգործնախարար Իսմայիլ Ջեմի խոսքն առ այն, որ 1990-ական-

ների վերջին Կոսովոն պետություն դառնալու փուլում էր³²: Ելնելով նեոսմանիզի գաղափարախոսությունից՝ Բալկանյան տարածաշրջանը շատ կարևոր է Թուրքիայի համար: Հենվելով տեղի թյուրք ազգաբնակչության վրա և սատարելով Կոսովոյին՝ նա կարող է ակտիվ դեր խաղալ տարածաշրջանում՝ միաժամանակ առաջ տանելով իր շահերը:

THE KOSOVO CRISIS AND TURKEY'S FOREIGN POLICY (1990–1999)

Volodya Mkrtchyan³³

The Balkans was one of the regions where Turkish foreign policy was active in the post-Cold War period. Ankara's policy during the Kosovo crisis is interesting, which will be the main topic of this work. This article aims to analyze Turkey's Kosovo policy from the early 1990s until the NATO intervention and the end of the Kosovo War.

In the first part of the study, the issue of Kosovo will be briefly presented, then the course of relations between Turkey and Kosovo will be examined during the above period and Turkey's attitude to the conflict that broke out in Kosovo will be revealed.

Keywords: Turkey, Kosovo, Balkans, foreign policy, neo-Ottomanism, Süleyman Demirel, İsmail Cem, NATO intervention.

КОСОВСКИЙ КРИЗИС И ВНЕШНЯЯ ПОЛИТИКА ТУРЦИИ (1990–1999 ГГ.)

Володя Мкртчян³⁴

Балканы были одним из регионов, где турецкая внешняя политика была активной в период после холодной войны. Интересна политика Анкары во время Косовского кризиса, которая станет основной темой данной работы.

³² Cem İ., Avrupa'nın "Birliği" ve Türkiye, İstanbul: İstanbul Bilgi Üniversitesi, 2005, s. 327.

³³ Volodya Mkrtchyan is an MA student at the Department of Turkic Studies of the Faculty of Oriental Studies at YSU, E-mail: mkvolodya21@gmail.com, ORCID 0009-0001-8716-2883.

³⁴ Володя Мкртчян – магистрант кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта: mkvolodya21@gmail.com, ORCID 0009-0001-8716-2883.

Целью данной статьи является анализ политики Турции в отношении Косово с начала 1990-х годов до вмешательства НАТО и окончания войны в Косово. В первой части исследования будет кратко представлен вопрос Косово, затем будет рассмотрен ход отношений между Турцией и Косово в указанный период, а также раскрыто отношение Турции к конфликту, разразившемуся в Косово.

Ключевые слова: Турция, Косово, Балканы, внешняя политика, неосоманизм, Сулейман Демирель, Исмаил Джем, интервенция НАТО.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Constitution of the Socialist Federal Republic of Yugoslavia. Constitution of the Socialist Federal Republic of Yugoslavia 21 Feb 1974 (worldstatesmen.org).
2. Wippman D., Kosovo and the Limits of International Law. Fordham International Law Journal, Volume 25, Issue 1, Article 5, 2001, 127-150.
3. Black I., Serbians to Attend French Peace Talks. The Guardian, February 5, 1999. Serbians to attend French peace talks|World news|The Guardian.
4. Kosovo Air Campaign (March-June 1999). NATO Topics. Last modified May 17, 2022. NATO - Topic: Kosovo Air Campaign (March-June 1999).
5. Kosovo Force, Homepage, KFOR (nato.int).
6. Chronology for Kosovo Albanians in Yugoslavia. Minorities at Risk Project, Refworld, 2004. Refworld|Chronology for Kosovo Albanians in Yugoslavia.
7. Nelsson R., How Milosevic stripped Kosovo's autonomy. The Guardian, 1989. How Milosevic stripped Kosovo's autonomy - archive, 1989| Kosovo|The Guardian.
8. Gangloff S., Turkish Policy Towards the Conflict in Kosovo: The Preeminence of National Political Interests. Balkanologie 8, N 1, 2004, 105–122.
9. What was the Kosovo Liberation Army and why are its Leaders on Trial? BBC, April 3, 2023. What was the Kosovo Liberation Army and why are its leaders on trial? - BBC News.
10. Abdullah Özdağ & Tekin Önal, “Kosova Sorunu ve Kosova'nın Bağımsızlık Süreci”. Akademik Bakış Dergisi, N 61, 2017, 556–571.
11. Belgrad'a 'kanı durdur' mesajı. Milliyet, Mart 9, 1998. Belgrad'a 'kanı durdur' mesajı - Güncel Haberler Milliyet.

12. Demirtaş-Coşkun B., Kosova'nın Bağımsızlığı ve Türk Dış Politikası (1990–2008). Uluslararası İlişkiler 7, N 27, 2010, 51–86.
13. Bila F., Ecevit'in gözüyle Kosova. Milliyet, 16 Haziran 1999. Ecevit'in gözüyle Kosova - Fikret Bila (milliyet.com.tr).
14. Cem I., Avrupa'nın “Birliği” ve Türkiye, İstanbul: İstanbul Bilgi Üniversitesi, 2005.
15. Ergin S., Demirel ve Kosova krizi. Hürriyet. 13 Nisan 1999. Sedat Ergin: Demirel ve Kosova krizi | Sedat ERGİN Köşe Yazısı - Hürriyet Haberler (hurriyet.com.tr).
16. TBMM Tutanak Dergisi, 20. Dönem, 67. Cilt, 4. Birleşim. tbmm20063004.pdf.
17. Resmi Gazete T. C., TBMM Kararları, 13 Ekim 1998. 23492.pdf (resmigazete.gov.tr).
18. Uzlaşma Antalya zirvesine de yansıdı. Milliyet, 14 Ekim 1998.
19. Ferizi V., Kosova-Türkiye Diplomatik İlişkileri 1990–2015. Master's thesis, T.C Selçuk Üniversitesi, 2017.
20. Резолюция 119937, принятая Советом Безопасности на его 3930-м заседании. Организация Объединенных Наций, 31 марта 1998 г. N9827998.pdf (un.org).
21. Резолюция 1244, принятая Советом Безопасности на его 4011-м заседании. Организация Объединенных Наций, 10 июня 1999 г. Резолюция 1244 (1999) (archive.org).

ՄՓՅՈՒՌՔԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ 2009 Թ. ՀԱՅ-ԹՈՒՐԲԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ

ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Արա Հովհաննիսյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.247

Հայ-թուրքական հարաբերությունների հարցը մշտապես մեծ հետաքրքրություն է առաջացրել հայության շրջանում: Այն մեծապես կարևորվել է հատկապես Սփյուռքում: 1991 թվականից ի վեր Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունները կարգավորելու մի քանի փորձեր են ձեռնարկվել, սակայն դրանք ոչ մի արդյունքի չեն հանգեցրել, քանի որ Թուրքիան մշտապես առաջ է քաշել Հայաստանի համար անընդունելի նախապայմաններ:

Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման ամենագործուն փորձը նախաձեռնել է Հայաստանի նախագահ Սերժ Մարգարյանը: Սակայն 2009 թ. հոկտեմբերի 10-ին ստորագրված հայ-թուրքական արձանագրությունները հանգեցրին հայության, նամանավանդ սփյուռքահայության շատ խիստ հակազդեցությանը: Կազմակերպվեցին բողոքի ստորագրահավաքներ, ցույցեր, հանրահավաքներ: Սփյուռքում կար նաև մի փոքրաթիվ հատված, որը կողմ էր գործընթացի կարգավորմանը:

Կարող ենք արձանագրել, որ սփյուռքահայերի և Սփյուռքում գործող կազմակերպությունների ճնշող մեծամասնությունը իրենց խիստ դժգոհությունն էին արտահայտում 2009 թ. հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացին և ամեն կերպ փորձում էին առկախել այն, քանի որ կարծում էին, որ ստորագրված արձանագրությունները իրենց մեջ ներառում են շատ նախապայմաններ, որոնք վտանգավոր են Հայաստանի և հայ ժողովրդի համար: Կարելի է փաստել նաև, որ գործըն-

¹ Արա Հովհաննիսյանը ԵՊՀ պատմության ֆակուլտետի հայոց պատմության ամբիոնի դոցենտ է, պատմական գիտությունների թեկնածու, էլ. փոստ arahovhannisyanyan@ysu.am, ORCID 0009-0002-8421-5908:

թացի բարեհաջող ընթացքին երկուստեք խանգարեցին մի շարք ներքին և արտաքին քաղաքական հանգամանքներ:

Բանալի բառեր՝ հասարակական-քաղաքական շրջանակներ, հայկական սփյուռք, հայ-թուրքական հարաբերություններ, հաշտեցման գործընթաց, ֆուտբոլային դիվանագիտություն, ստորագրված արձանագրություններ, նախապայմաններ, բողոքի դրսևորումներ:

Հայ-թուրքական հարաբերությունները մշտապես եղել են հայության հասարակական-քաղաքական շրջանակների հետաքրքրության կենտրոնում: Այս հարցը շատ զգայուն արձագանք է ունեցել հատկապես Մփյուռքում, քանի որ հայ-թուրքական հարաբերությունների ցանկացած զարգացում փոխկապակցված է համահայկական կարևորություն ունեցող հիմնախնդիրների և, մասնավորապես, Հայոց ցեղասպանության ճանաչման խնդրի հետ:

Թեև 1991թ. դեկտեմբերի 24-ին Թուրքիայի Հանրապետությունը պաշտոնապես ճանաչել է Հայաստանի Հանրապետության անկախությունը, Հայաստանի և Թուրքիայի միջև չեն հաստատվել դիվանագիտական հարաբերություններ: 1993 թ. Թուրքիան միակողմանիորեն փակել է Հայաստանի հետ օդային և ցամաքային *սահմանները՝ պայմանավորելով դա Արցախյան պատերազմում տեղի ունեցող* զարգացումներով: 1994 թ. կնքված զինադադարից հետո 1995 թ. Թուրքիան վերաբացել է օդային սահմանը²:

Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության հարաբերությունների կարգավորման ուղղությամբ, սկսած 1991 թվականից, կատարվել են մի քանի փորձեր, սակայն դրանք որևէ արդյունքի չեն հանգեցրել, քանի որ Թուրքիան, չնայած այն հանգամանքին, որ մշտապես հայտարարել է հարաբերություններ-

² Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr> (մուտքի ամսաթիվ 23.06.2023):

րի հաստատման և կարգավորման պատրաստակամության մասին, այնուամենայնիվ, որևէ գործուն քայլ չի կատարել դրանք կյանքի կոչելու համար: Ավելին, հարաբերությունների կարգավորման գործընթացը գրեթե միշտ ավարտվել է դեռ չսկսված, քանի որ Թուրքիան մշտապես առաջ է քաշել Հայաստանի համար անընդունելի նախապայմաններ³: 1993 թվականից ի վեր Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորումը Անկարան կապում էր Ղարաբաղյան հակամարտության կարգավորման հետ: Թուրքիան փակ էր պահում իր սահմանը՝ դրանով, փաստորեն, մասնակցելով Ադրբեջանի կողմից Հայաստանի շրջափակմանը⁴:

2009 թ. հայ-թուրքական հաշտեցման գործընթացը: Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունները կարգավորելու ուղղությամբ ամենագործուն փորձը թերևս 2009 թ. ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի նախաձեռնած հայ-թուրքական հաշտեցման գործընթացն էր, որին սկզբից ևեթ տարբեր ձևերով դեմ արտահայտվեցին սփյուռքյան շրջանակները՝ ամեն կերպ փորձելով վիժեցնել այն:

Նախագահ Սերժ Սարգսյանի հրավերով 2008 թ. սեպտեմբերի 6-ին Երևան ժամանեց Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլը՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի հավաքականների հանդիպումը: Հայաստանի և Թուրքիայի նախագահների երևանյան հանդիպումով սկսված «ֆուտբոլային դիվանագիտությունը» շարունակվեց երկու երկրների արտգործնախարարների մի ամբողջ շարք հանդիպումներով և Շվեյցարիայի Համադաշնության արտա-

³ Հայաստան-Թուրքիա հարաբերություններ. 4 դեկավարների դիրքորոշումները, (մուտքի ամսաթիվ 23.06.2023) <https://fip.am/16093>, 24.10.2022 (մուտքի ամսաթիվ 23.06.2023):

⁴ Այդաբիրյան Ռ., Լիպարիտյան Ժ., Փափազյան Թ., Սպիտակ թուրք, 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը և Հայաստանի ապագա արտաքին քաղաքականությունները, 2021 թ., հուլիս, էջ 42, <https://enlightngo.org/wp-content/uploads/2022/01-final.pdf> (մուտքի ամսաթիվ 23.06.2023):

քին գործերի նախարարության միջնորդությամբ՝ հայ-թուրքական գաղտնի դիվանագիտական բանակցություններով⁵:

2008 թ. սեպտեմբերին Թուրքիայի նախագահի այցով Հայաստան երկխոսության նոր փուլ սկսվեց հարաբերությունների կարգավորման համար, որը դիվանագիտական շրջանակներում հայտնի է «Ճանապարհային ծրագիր» կամ «Ֆուտբոլային դիվանագիտություն» անվանումներով: Սա Թուրքիայի բարձրաստիճան պաշտոնյայի առաջին պաշտոնական այցն էր Երևան՝ 73 տարի հետո⁶:

2009 թ. ապրիլի 22-23-ի գիշերը՝ Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակության ու ոգեկոչման նախօրեին Հայաստանը և Թուրքիան միջնորդ Շվեյցարիայի հետ տարածեցին հայտարարություն «Ճանապարհային» քարտեզի մասին⁷:

2009 թ. ապրիլի 24-ի նախօրեին Հայաստան-Թուրքիա հարաբերությունների կարգավորմանը նվիրված և Շվեյցարիայի միջնորդությամբ պատրաստված համաձայնագրի ուղեգծի պատմությունը տհաճ անակնկալ էր, որն առաջին հերթին հայությանը զայրույթ պատճառեց իր ընտրված ժամանակագրության առումով, քանզի Սփյուռքում ոմանք սկսեցին կարծել, որ այդ նախաձեռնության մեջ թուրքական պարզ խաղ է երևում: Խաղ, որ ուղղված էր կանխելու Թուրքիային սպառնացող ամենամյա և անմիջական վտանգը, որը գալիս էր «ցեղասպանություն» բառից և որը կարող էր ներառվել

⁵ Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա., Լեռնային Ղարաբաղի հարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Երևան, 2017, էջ 95–107:

⁶ Շիրանի Ա., Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների զարգացումը /1991–2013 թթ/, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2014, թիվ 1, էջ 125, https://arar.sci.am/Content/39557/file_0.pdf (մուտքի ամսաթիվ 23.06.2023):

⁷ Չախողված ֆուտբոլային դիվանագիտությունը. ժամանակագրություն, <https://www.civilnet.am/news/177401/> (մուտքի ամսաթիվ՝ 15.08.2023):

ԱՄՆ նախագահ Բ. Օբամայի ապրիլի 24-ի ճառի մեջ: «Ֆուտուրլային դիվանագիտությունը» տարբեր ուղղություններով սկսել էր տալ իր պտուղները և ունենալ իր հետևանքները: Հայաստանի ու Թուրքիայի արտաքին գործոց նախարարները ապրիլի 22-ին ստորագրեցին այդ ուղեգիծ–համաձայնագրի սկզբունքային ծրագրի տակ, որից երկու օր հետո, նախագահ Օբաման, մնալով բեմադրությանը հավատարիմ, չարտասանեց այդքան սպասված բառը, մերժեց հայ ժողովրդի 1915 թ. ապրածը կոչել իր անունով, փոխարենը ողջունեց հայերի ու թուրքերի երկխոսության ջանքերը⁸:

Ըստ Մամվել Ֆարմանյանի՝ հայ-թուրքական գործընթացի սկզբնավորման գործում առանցքային նշանակություն ունեցավ Բարաք Օբամայի ընտրությունը 2008 թ. նոյեմբերին ԱՄՆ նախագահի պաշտոնում: Վերջինիս նախընտրական խոստումներից մեկն այն էր, որ նա խոստացել էր ճանաչել Հայոց ցեղասպանությունը: Մակայն ընտրվելուց հետո թուրքական լոբբիստական կառույցները, Պենտագոնը և շատ այլ ազդեցիկ դերակատարներ նախագահին հասցրել էին ներկայացնել, թե ինչ հետևանքներ կունենա իր նախընտրական խոստումներից այդ մեկի իրագործումն ԱՄՆ ազգային շահերի տեսանկյունից: Սպիտակ տան ճանապարհին Օբաման արդեն գիտեր, որ չի իրագործելու իր նախընտրական խոստումը և հայ-թուրքական գործընթացը իսկական փրկօղակ էր նրա համար⁹:

Եթե հնարավոր լիներ ամերիկյան միջնորդությամբ հասնել Հայաստանի և Թուրքիայի միջև հարաբերությունների կարգավոր-

⁸ Հայաստան – Թուրքիա յարաբերություններու «բնականոնացում», «մեր պատմությունը սակարկութեան նիւթ կրնար ըլլալ», կըսէիք Հայաստանն եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Նոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

⁹ Ֆարմանյան Ս., Միայնակ ընդդեմ ճակատագրի. Ֆուտուրլային դիվանագիտություն, Երևան, 2023, էջ 195:

մանը գործընթացն Օբամայի վարչակարգին տալու էր լեզիտիմ հնարավորություն՝ բարձրացնելով ընթացող դիվանագիտական խաղի որակը՝ արդեն նախագահի և պետքարտուղարի մակարդակով ներգրավվել հայ-թուրքական գործընթացում: Նրանք փորձելու էին սևերես դուրս չգալ ամերիկահայ ընտրողների և քաղաքական ազդեցիկ թիմակիցների առաջ, որոնք ժամանակին համանման հրապարակային խոստումներ էին տվել: Փորձ էր արվում նախագահի նախընտրական խոստման չիրագործումը արդարացնել հանուն էլ ավելի բարձր նպատակի՝ հայ և թուրք ժողովուրդների ու պետությունների հաշտեցման¹⁰:

Սեպտեմբերի սկզբին, երբ, վերջապես, հայտնի դարձավ փաստաթղթի ամբողջական բովանդակությունը, պարզվեց, որ տվյալ համաձայնագրի գլխավոր կետերը ավելի քան անընդունելի են հայության մեծամասնության համար: Վերանայման ենթարկել պատմությունը, քննարկման նյութ դարձնել մեր անցյալը, ամբողջ ժողովրդի ապրած անասելի տառապանքը: Դեռ չենք խոսում Կարսի համաձայնագրով ճշտված սահմանների պաշտոնականացման, սահմանի վերաբացումը դարաբաղյան անընդունելի և թաքուն պահանջներով պայմանավորելու երևույթների մասին: Այն էլ հարց է, թե սահմանի բացումը իրապես նպաստավոր կլինե՞ր Հայաստանի համար: Հարցը շատ հեռու էր միանշանակ բոլորին գոհացնելուց, որքան Սփյուռքում, նույնքան էլ Հայաստանում¹¹:

Հայկական կողմի նախաձեռնությամբ, հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման փորձի արդյունքում, 2009 թ. հոկտեմբերի 10-ին Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հան-

¹⁰ Նույն տեղում, էջ 196:

¹¹ Հայաստան-Թուրքիա յարաբերություններու «բնականոնացում», «մեր պատմութիւնը սակարկութեան նիւթ կրնար ըլլալ», կըսէիք Հայաստանն եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Նոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

րապետության արտաքին գործերի նախարարները Յուրիխում ստորագրեցին «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերություններ հաստատելու մասին» և «Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին» արձանագրությունները¹², ինչը սակայն միանշանակ չընդունվեց ինչպես Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում:

Համաձայնագիրը, ըստ ստորագրող կողմերի, «առանց նախապայմանի» էր, ինչը շատ հաճախ շեշտվում էր: Նախագահ Սարգսյանն էլ նշել էր այդ մասին ևս մեկ անգամ ստորագրությանը նախորդող իր ելույթի մեջ: Սակայն բավական է նայել արձանագրություններում նշված սահմանումներին և Թուրքիայի բարձրաստիճան դեմքերի այս թեմայով արած արտահայտություններին, հասկանալու համար, որ որոշ կետեր, որոնք մեր համար անսակարկելի են, ինքնաբերաբար նախապայմաններ են թելադրում: Նույնքան կենսական որոշ այլ հարցերի առնչությամբ ևս քողարկված նախապայմաններ կային, ինչպես արցախյան հակամարտության մասին ծածուկ և վարպետորեն ստեղծված թելադրանքները¹³:

Արձանագրությունների ստորագրումը բերեց հայության, մանավանդ սփյուռքահայության շատ բուռն հակազդեցությանը: Կազմակերպվեցին բողոքի ստորագրահավաքներ, ցույցեր, հանրահավաքներ: Մարդաշատ ցույցեր տեղի ունեցան Երևանում, Փարիզում, Բեյրութում, ԱՄՆ-ում և հայաշատ այլ վայրերում: Առավելապես հատկանշական էին Փարիզի, Բեյրութի և Նյու Յորքի ցույ-

¹² Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr> (մուտքի ամսաթիվ՝ 23.06.2023):

¹³ Հայաստան–Թուրքիա յարաբերություններու «բնականոնացում», «մեր պատմությունը սակարկութեան նիւթ կրնար ըլլալ», կըսէիք Հայաստանն եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Նոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

ցերը, այն առումով, որ դրանք տեղի ունեցան նախագահ Սարգսյանի ներկայության ժամանակ, այն քաղաքները, ուր նա շտապել էր համոզելու համար տեղի հայ համայնքները: Փարիզի ցույցը նաև բեմ հանդիսացավ ծանրակշիռ միջադեպերի համար, երբ ոստիկանությունը բիրտ ուժ կիրառեց ժողովուրդին հեռացնելու համար Կոմիտասի արձանի մերձակայքից, ուր, ըստ կանոնակարգի, պետք է այցելեր նախագահ Սարգսյանը: Վերջինս իր կարճատև այցելության ընթացքում բախվեց բողոքի բուռն արտահայտումների: Աննախադեպ էր երևույթը այն առումով, որ առաջին անգամ Հայաստանի նախագահը իր կատարած այցելության ժամանակ նման ընդունելության արժանացավ Սփյուռքի կողմից¹⁴:

Իր համահայկական ուղևորության ընթացքում, որտեղ նախագահ Սարգսյանը նպատակ էր հետապնդում Սփյուռքի ներկայացուցիչների հետ քննարկել հայ-թուրքական գործընթացը տեղի ունեցան շատ դահլիճային հանդիպումներ: Այս հանդիպումներին Սփյուռքում գործող կառույցներից առավել լավ պատրաստվել էր ՀՅԴ-ն: Ականատեսների գնահատմամբ ՀՅԴ-ն, երևի թե, այս հանդիպումներին ավելի լավ էր պատրաստվել քան նախագահի աշխատակազմը և իր մտտեցումներով ստեղծում էր Սփյուռքում ճնշող մեծամասնություն լինելու տպավորություն¹⁵:

Կոմիտասի արձանի մոտ տեղի ունեցած հայտնի դեպքերից հետո Փարիզում եվրոպահայության հետ տեղի ունեցած դահլիճային հանդիպմանը մասնակցեցին Սփյուռքի եվրոպական շատ կառույցների մոտ 8 տասնյակ ներկայացուցիչներ: Օրինակ Եվրոպայի Հայ դատի պատասխանատու Հիլդա Չոբոյանի կարծիքով Թուրքիան ոչ մի շահ չուներ մինչև վերջ գնալու և սահմանը բացե-

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Ֆարմանյան Ս., նշվ. աշխ., էջ 261:

լու: Այն նպատակ էր հետապնդում չեզոքացնել Հայոց ցեղասպանության ճանաչմանը ուղղված աշխարհասփյուռ հայության ջանքը և միտում ունեւր ոչ հայանպաստ դիրքերից գնալու արցախյան հարցի կարգավորմանը: Վերջինիս խոսքով ոչ մի կերպ չի կարելի թույլ տալ հայ ազգի պառակտումը¹⁶: Նման հանդիպումների ժամանակ տեղի էին ունենում նաև որոշ շրջանակներից ուղղորդված նախագահին աջակցության ելույթներ¹⁷: Ի պատասխան այն քննադատություններին, որ հանդիպումը ձևական է և ամեն ինչ որոշված՝ նախագահը պատասխանեց, որ ոչինչ կանխորոշված կամ վերջնական որոշված չէ և լուրջ փաստարկների դեպքում կարելի է ցանկացած որոշում կայացնել:

Հանդիպման ընթացքում մասնակիցները հիմնականում մատնանշում էին այն վտանգները, որոնք կարող էին տեղի ունենալ արձանագրությունների ստորագրումից հետո: Թեև վերջիններս, ընդհանուր առմամբ, դրական էին վերաբերվում դիվանագիտական հարաբերությունների հաստատմանն ու սահմանների վերաբացմանը, քանի որ գիտակցում էին, թե որքան դժվար է Հայաստանի համար տարիներ շարունակ գտնվել շրջափակման մեջ, բայց պնդում էին, որ սահմանների բացումը պետք է տեղի ունենա առանց նախապայմանների: Ըստ նրանց՝ առկա արձանագրությունները պարունակում էին քողարկված նախապայմաններ, որոնք ներառում են սահմանների ճանաչման, հողային իրավունքների հրաժարման, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի կանխարգելմանը վերաբերող վտանգավոր դրույթներ: Կոչ ուղղվեց նախագահին, որպեսզի վերջինս հրաժարվի արձանա-

¹⁶ Նույն տեղում, էջ 261:

¹⁷ Նույն տեղում, էջ 263:

գրությունների ստորագրումից և ժամանակ հատկացնի խորհրդակցությունների համար¹⁸:

Ի պատասխան այս ամենի նախագահը նշել էր, որ եկել է կարծիքներ լսելու, այլ ոչ թե թելադրելու կամ համոզելու՝ ավելացնելով, որ երբեք թույլ չի տա, որպեսզի Հայոց ցեղասպանության եղելության հարցը կասկածի տակ դրվի: Մոտավորապես նույն կերպ էր պատասխանել նախագահը մյուս հարցերի վերաբերյալ հնչող մտահոգությունների մասով՝ պնդելով, որ հետամուտ է լինելու հայկական շահերի պաշտպանությանը¹⁹:

Եվրոպահայության հետ հանդիպումը, ընդհանուր առմամբ, անցավ լարված մթնոլորտում: Նախագահ Սարգսյանը լսեց եվրոպահայության բերանով հնչեցրած համայն հայության մտահոգությունները և մերժողական կեցվածքը: Նախագահը հասկացավ, որ հայ-թուրքական արձանագրություններն առկա դրույթներով ստորագրելու պարագայում հայությունը իր հետ չի լինի և կգոչի գորավոր «ՈՉ»-ը²⁰:

Հայ-թուրքական գործընթացի շուրջ Լիբանանում և Մերձավոր Արևելքում լարված մթնոլորտի աղբյուրներից մեկն Անթիլիասն էր: Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունն ու անձամբ Արամ Առաջինն իրենց դիրքավորել էին որպես գործընթացի համար մեկ ընդդիմախոս: Արամ Առաջինի ելույթները գործընթացի դեմ խորապես փոթորկել էին ավանդական Սփյուռքի ոգին և լայնորեն տարածվել Հայաստանում: Նախագահի այցելությունը Անթիլիաս անցավ շատ լարված մթնոլորտում, իսկ այցելության ընթացքում Անթիլիասի

¹⁸ ՀՀ նախագահ Սերժ Սարգսեանի հետ հանդիպում Փարիզի մեջ. Ծանր մթնոլորտի մեջ կայացաւ խորհրդակցութիւնը, «Ազատ օր», Աթենք, օրաթերթ, 2009 թ., 5 հոկտեմբեր, էջ 3-4:

¹⁹ Նույն տեղում:

²⁰ Նույն տեղում:

բակում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքարին նախագահ Սարգսյանի կողմից դրված ծաղկեպսակը վերջինիս հեռանալուց հետո շուտ տրվեց Անթիլիասում հավաքվածների կողմից և այդ կադրերը տարածվեցին լրատվամիջոցների կողմից²¹:

Համահայկական ուղևորության վերջին կանգառը Դոնի Ռուստովն էր, որտեղ Ռուսաստանի Դաշնության և ԱՊՀ շատ երկրների մեր հայրենակիցների հետ հանդիպումներն անցան լարվածության և աղմուկի իսպառ բացակայության պայմաններում: Ռուսաստանում բնակվող հայերը որքան էլ, որ նույն մտահոգություններն ունենային հայ-թուրքական գործընթացի կապակցությամբ պետության բարձրաստիճան պաշտոնյաների հրապարակային հայտարարությունները անանցանելի պատենեշ էին որևէ կազմակերպված բողոքի գործողության դիմելու համար²²:

Սակայն պետք է փաստել նաև, որ Ռուսաստանի որոշ քաղաքներում մեր հայրենակիցները բավական ակտիվ մասնակցում էին հայ-թուրքական արձանագրությունների դեմ կազմակերպված միջոցառումների: Օրինակ՝ Ռուսաստանի Նիժնի Նովգորոդ քաղաքում իրականացվում էր հայ-թուրքական արձանագրությունների մերժմանը նվիրված ստորագրահավաք: «Երկրամաս» տեղեկատվական կենտրոնի տեղեկացմամբ՝ ստորագրահավաքի կազմակերպման նախաձեռնությունը քաղաքում հրատարակվող «Կամուրջ» վերլուծական-տեղեկատվական ամսանախիսն էր: Ալմանախի գլխավոր խմբագիր Լիանա Պողոսյանի տեղեկացմամբ ստորագրահավաքը սկսվել էր օգոստոսի 16-ին և սեպտեմբերի 28-ի դրությամբ՝ հավաքվել էր շուրջ 500 ստորագրություն: Նրա հա-

²¹ Ֆարմանյան Ս., նշվ. աշխ., էջ 283:

²² Նույն տեղում, էջ 284–285:

վաստմամբ ստորագրողներից շատերն ասել էին, որ եթե իրենք Հայաստանում լինեին, ապա կմիանային կառավարության շենքի դիմաց տեղի ունեցող բողոքի ցույցերին և հացադուլին²³:

Հոկտեմբերի 1–7 տևած համահայկական ուղևորության ընթացքում նախագահի հետ հանդիպումներին մասնակցեց աշխարհի շուրջ 80 երկրի հայ համայնքների ու կազմակերպությունների շուրջ 800 մեր հայրենակից: Ուղևորության ընթացքում փողոցներում ու հյուրանոցների դիմաց հայ-թուրքական գործընթացի դեմ իրենց բողոքն արտահայտեցին տասնյակ հազարավոր մարդիկ²⁴:

Հայաստանում ևս հայ-թուրքական արձանագրությունների դեմ դեռևս սեպտեմբերից տեղի ունեցան բողոքներ, ցույցեր, կազմակերպվեց հացադուլ ԱԳՆ և կառավարության շենքերի առջև: Արձանագրությունների ստորագրմանը նախորդող օրը, բազմա-հազարանոց բողոքի երթ անցկացվեց Երևանում: Բողոքի ակցիաներին մասնակցում էին ավելի քան 10 կուսակցություններ: Կար տեսակետ, որ եթե այսպես շարունակվի, կգա «Հայաստանի մայրամուտը», քանի որ երկիրը «թե՛ տնտեսապես, թե՛ քաղաքականապես կլուծեն Թուրքիային»: Երևանի տարբեր թաղամասերում ստորագրահավաք էր կազմակերպվում «հայ-թուրքական արձանագրությունների» դեմ: Ընդդիմադիր հիմնական ուժերի համոզմամբ «Հայաստան-Թուրքիա արձանագրությունների ստորագրումը իշխող վարչախմբի քաղաքական սնանկության, դիվանագիտական խեղճության հերթական ցավալի ապացույցն էր»²⁵:

²³ Ռուսաստանի հայերը մերժում են արձանագրությունները, «Ալիք», օրաթերթ, Թեհրան, 2009, 3 հոկտեմբեր, էջ 1:

²⁴ Ֆարմանյան Ս., նշվ. աշխ., էջ 284–285:

²⁵ Հայաստան-Թուրքիա յարաբերություններու «բնականոնացում», «մեր պատմությունը սակարկութեան նիւթ կրնար ըլլալ», կըսէիք Հայաստանն եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Լոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

Չնայած նման տրամադրությունների առկայությանը, սոցիալական հարցումներ անցկացնող «Սոցիոմետր» կենտրոնի նախագահ Ահարոն Ադիբեկյանը լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել էր, որ հասարակության 40–45 տոկոսն անտարբեր է տեղի ունեցող իրադարձությունների նկատմամբ²⁶: Ըստ նրա, պատճառը կայանում էր նրանում, որ նրանց կացության վրա սահմանի բացումը ոչ մի կերպ չէր անդրադառնալու:

Ամերիկայի հայկական համագումարը, Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և մի քանի կազմակերպություններ ու անվանի հայ գործիչներ հանդես էին եկել հայ-թուրքական գործընթացին աջակցելու հայտարարություններով և կոչ էին արել սփյուռքահայ այն կառույցներին, որոնք դեմ էին գործընթացին իրենց հատվածական օրակարգը առաջ չտանել Հայաստանի ապագայի հաշվին: Ավանդական Սփյուռքի առավել կազմակերպված հատվածը, որ ՀՅԴ և քույր կառույցների ազդեցության տակ էր, դեմ էր գործընթացին: Կազմակերպվածության, կարգապահության և ավելի մեծ ռեսուրսների տիրապետելու արդյունքում ՀՅԴ-ին հաջողվել էր այնպիսի աղմուկ բարձրացնել, որ ստեղծվել էր տպավորություն, թե դա ամբողջ Սփյուռքի կարծիքն է: Դրան գումարվում էր Սփյուռքի վերջին շերտի դժգոհությունը, նրանց՝ ովքեր Հայաստանից հեռացել էին անկախությունից հետո: Բացառությամբ, երևի, Ռուսաստան արտագաղթածների՝ գործընթացը պատեհ առիթ էր նրանց համար արտահայտելու դժգոհությունը Հայաստանի իշխանություններից²⁷:

Առկա դժգոհություններն ու բողոքի տարատեսակ դրսևորումները չկարողացան խոչընդոտ հանդիսանալ, և հոկտեմբերի 10-ին

²⁶ Նույն տեղում:

²⁷ Ֆարմանյան Ս., նշվ. աշխ., էջ 253:

Յյուրիխում ամեն ինչ տեղի ունեցավ այնպես, ինչպես նախատեսված էր: Յյուրիխի համալսարանում տեղի ունեցած ստորագրության այս «պատմական» արարողությանը, ինչպես այն կորակեր համաշխարհային մամուլը, բացի Հայաստանի և Թուրքիայի արտաքին գործերի նախարարներ Է. Նալբանդյանից և Ա. Դավութթոլուից, ներկա էին նաև ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի արտաքին գործերի նախարարները, ԵՄ ԱԳԱԲ բարձր ներկայացուցիչը և Շվեյցարիայում Հայաստանի դեսպան Շ. Ազնավուրը²⁸:

Ընդհանուր առմամբ համաձայնագրի ստորագրումը գոհունակություն էր առաջացրել թուրքական իշխանությունների մոտ, սակայն համաձայնագիրը դրական աչքով չտեսնողների զանգվածն էլ բավական մեծ էր: Ազգայնական շարժում (ՄՀՓ) և Ժողովրդական Հանրապետություն կուսակցությունների (ՃՀՓ) գլխավորությամբ ընդդիմությունը բուռն կերպով քննադատում էր կառավարությանը՝ վերջինիս մեղադրելով անհեռատես քաղաքականություն վարելու մեջ, որը, ըստ նրանց, երկիրը տանելու էր դեպի անորոշ պարտավորություններով լի ապագա: Ժողովրդական խավերի մոտ ևս մեծ էր ընդդիմադիրների թիվը և կար այն համոզումը, ի միջիայլոց, որ Հայաստանը Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ որոշակի երաշխիքներ է ստացել ԱՄՆ-ից՝ նախքան նման համաձայնագիր ստորագրելը²⁹: Ավելին, Թուրքիայի Հանրապետական Ժողովրդական կուսակցության առաջնորդ Դենիզ Բայքալը Գյուլի և Էրդողանի գործողությունները Երևան այցի նախօրեին բացեիբաց «դավաճանություն» որակեց և ներողություն

²⁸ Հայաստան-Թուրքիա յարաբերություններու «բնականոնացում», «մեր պատմութիւնը սակարկութեան նիւթ կրնար ըլլալ», կըսէիք Հայաստանն եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Նոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

²⁹ Նույն տեղում:

խնդրեց ադրբեջանցիներից Գյուլի և Էրդողանի դավաճանության համար³⁰:

Ադրբեջանի հակազդեցությունը: Ադրբեջանի արտաքին գործերի նախարարության արձագանքը հայ-թուրքական արձանագրությունների վերաբերյալ անմիջական եղավ: Գրավոր հայտարարությամբ Բաքուն ասում էր. «Նախքան հայկական գործերի Ադրբեջանի գրավյալ հողերից նահանջը, Հայաստանի և Թուրքիայի հարաբերությունների կարգավորումն ուղղակի հակասում է Ադրբեջանի շահերին: Միաժամանակ, այն ստվերում է պատմական խոր արմատների վրա հիմնված թուրք-ադրբեջանական հարաբերությունների ոգին»: Բաքուն նաև օրակարգ էր բերել բնական գազի խաղաքարտը: Ադրբեջանը լուրջ կերպով ձգտում էր հակադարձել Թուրքիային: Ամենածանրակշիռն ու զգայունը կարող էր լինել գազի գների վերանայումը: Նախագահ Ալիևը այս առնչությամբ ազդանշան տվեց՝ ասելով. «ներկայիս Թուրքիային գազ ենք մատակարարում համաշխարհային սակագների մեկ երրորդով»³¹:

Ի պատասխան այս արձագանքին Թուրքիան անմիջապես լծվեց սիրաշահ խոսքերով մթնոլորտը մեղմացնելու գործին: Թուրքիայի արտաքին գործերի նախարարը, այս մասին ասաց. «նույնիսկ եթե երկինքը փուլ գա, մենք չենք փոխի մեր կեցվածքը»³², ակնարկելով Ադրբեջանի նկատմամբ Թուրքիայի եղբայրական քաղաքականությանը:

Գործընթացը, սակայն, սկիզբ էր առնելու համաձայնագիրը երկու երկրների խորհրդարանների կողմից վավերացվելուց հետո:

³⁰ Սաֆարյան Դ., «Ֆուտուրային դիվանագիտության» արձագանքներ թուրքական մամուլում, Բանբեր Երևանի համալսարանի-Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2018, vol. 27, N 3, էջ 49:

³¹ Հայաստան-Թուրքիա յարաբերություններու «բնականոնացում», «մեր պատմութիւնը սակարկութեան նիւթ կրնար ըլլալ», կըսէիք Հայաստանն եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Նոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

³² Նույն տեղում:

Համաձայնագրի համաձայն պետք է վերաբացվեր հայ-թուրքական սահմանը, որի համար նախատեսվում էր երկու ամիս ժամանակ:

Արձանագրությունների ստորագրումից հետո, սակայն, Թուրքիան կտրուկ փոխելով իր դիրքորոշումը՝ հրաժարվեց «խելամիտ ժամկետներում» և առանց նախապայմանների երկկողմ հարաբերությունները կարգավորելու ձեռք բերված համաձայնությունից³³: Թուրքիայի Ազգային մեծ ժողովում Արձանագրությունների վավերացումը պայմանավորեց Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի կարգավորմամբ:

Ստորագրության հաջորդ օրը, հարցի մասին ունեցած իր ելույթում Թուրքիայի վարչապետ Էրդոհանը իմիջիայլոց ասաց. «այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանը դուրս չի եկել ադրբեջանական հողերից, Թուրքիան չի կարող կառուցողական կեցվածք որդեգրել»³⁴: Ավելի ուշ, 2009 թ. դեկտեմբերին վերջինս հայտարարեց, որ Անկարան արձանագրությունները չի վավերացնի՝ առանց դարաբաղյան հակամարտության կարգավորման:

Հետագայում ևս, երբ պարզվեց, որ Թուրքիան, հակառակ իր հայտարարությունների, այդ հաշտեցմանը վերաբերվում է լուրջ նախապայմաններով, ինքն էլ «արդարացավ» նրանով, որ իր կրտսեր եղբայր Ադրբեջանը խիստ դժգոհ է հայ-թուրքական հավանական կապերի ստեղծմամբ, քանի դեռ արցախյան հարցը իրենց ուզածով չի հանգուցալուծվել³⁵:

Խորհրդային Միության փլուզումից և Թուրքիայի Հանրապետության կողմից Հայաստանի Հանրապետության անկախությունը

³³ Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr> (մուտքի ամսաթիվ 23.06.2023):

³⁴ Հայաստան-Թուրքիա յարաբերություններու «բնականոնացում», «մեր պատմութիւնը սակարկութեան նիւթ կրնար ըլլալ», կըսէիք Հայաստանն եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Նոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

³⁵ Ինչո՞ւ է գոհունակ Ազրպէյճանը հայ-թուրքական մոսկովեան բանակցութիւններից... <https://www.aztagdaily.com/archives/535449> (մուտքի ամսաթիվ 22.01.2022):

ճանաչելուց հետո Թուրքիայում իշխանության եկած բոլոր կառավարությունները Հայաստանի հետ հարաբերությունների կարգավորման «զգայուն կետը» մշտապես համարել են թուրք-ադրբեջանական հարաբերությունները. թուրք քաղաքական վերնախավի և գիտական ու լրագրողական ընտրանու ներկայացուցիչների զգալի մասը կրում էր Հայաստանին նախապայմաններ առաջադրող հայտարարությունների և հրապարակումների զգալի «բեռ», ինչն ակնհայտորեն հնարավոր չէր արագ թոթափել անգամ բարձր իշխանությունների կողմից ուղղորդվող որոշակի գործողությունների ու մոտեցումների պարագայում³⁶:

Սփյուռքում գործող քաղաքական ուժերի արձագանքը: Հայերեք քաղաքական կուսակցությունների նախաձեռնությամբ (ՌԱԿ, ՄԴՀԿ, ՀՅԴ) Լիբանանի շրջանային ղեկավար մարմինները 2010 թ. հունվարի 10-ին «Յակոբ Տեր Մելքոնեան» թատերասրահում անցկացրեցին ժողովրդային հավաք՝ «Մերժենք Հայաստան-Թուրքիա արձանագրությունների սահմանադրականությունը» կարգախոսով: Հավաքին ներկա էին լիբանանահայ հոգևոր առաջնորդները, համայնքային մարմինների և միությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև երիտասարդներ, ուսանողներ և ժողովրդային զանազան բազմություն³⁷:

Այս հավաքով և Հայաստանում Սահմանադրական դատարանի կողմից հայ-թուրքական արձանագրությունների մասին քննարկումների սկզբնավորման նախօրեին Սփյուռքում գործող մեր ամենաազդեցիկ կառույցները ևս մեկ անգամ արտահայտեցին

³⁶ «Տասը հարց, տասը պատասխան»/Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ (պատ. խմբ. պրոֆ. Ա. Սիմոնյան), Երևան., 2009, էջ 18–20:

³⁷ «Զարթոնք», օրաթերթ, թիվ 130, Բեյրութ, 12.01.2010:

իրենց միասնական տեսակետը՝ ընդդեմ հայ ժողովրդի ազգային անվտանգության խնդրո առարկա դարձնող գործընթացին, հատկապես տարբեր միջոցներով Թուրքիայի կողմից Հայաստանին ներկայացվող նախապայմանների շարունակման լույսի տակ:

Բացման խոսքով հանդես եկավ Հրայր Ճեպեճեանը, որը Հայաստան-Թուրքիա արձանագրությունները համարեց հակասական և ազգավնաս³⁸:

ՌԱԿ խոսքը փոխանցեց դոկտ. Վազգէն Ժամկոչեանը: Նրա խոսքով հայ և թուրք պատմաբանների հանձնաժողովի ճանապարհով Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը ինքնին հարված է ցեղասպանության ճանաչման գործընթացին, մինչ սահմանների փոխադարձ ճանաչումը՝ վերջակետ կհանդիսանա հայոց հողային պահանջատիրության անսակարկելի իրավունքին: Նա խոսեց նաև այն վտանգների մասին, որը սպառնում է Արցախի գոյությանը: Նա որոշակիորեն գովաբանեց հայրենի իշխանությունների նախանձախնդիր ու զգույշ քաղաքականությունը, որը նախաձեռնել է Թուրքիայի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու, ինչպես նաև շրջափակումը վերացնելու համար, բայց և այնպես վերապահումներ հայտնեց համաձայնագրերի մեջ տեղ գտած որոշ կետերի վերաբերյալ, հատկապես ինչ կվերաբերեր Ցեղասպանության և հողային պահանջատիրության հարցերին:

Ժամկոչեանը նկատեց, որ հայ-թուրքական արձանագրությունների մեջ հստակորեն երևում են թուրքական նախապայմաններն ու հայկական կողմի զիջումները ի հակառակ Հայաստանի նախագահի կողմից այս իմաստով արած հավաստիացումներին: Նա անհրաժեշտ համարեց, որ Հայաստանի Սահմանադրական

³⁸ Նույն տեղում:

դատարանը մերժի արձանագրությունների վավերացումը՝ առաջնորդվելով Հայաստանի ազգային անվտանգության հայեցակարգի պահանջներով:

ՄԴՀԿ-ի անունից խոսեց Ահարոն Շխրտըմեանը: Վերջինս հարցադրում արեց այն կապակցությամբ, որ թե արդյոք Հայոց ցեղասպանության ճանաչումը ուղղակիորեն կապված չէ Հայաստանի ներկային, ապագային և նրա անվտանգությանն ու գոյությանը: Նա նշեց, որ Թուրքիան շարունակելու է իր քարոզչական, հոգեբանական, գաղափարական, ու տնտեսական պատերազմը հայ ժողովրդի դեմ, որ միշտ պատրաստ է նոր Սարդարապատներին:

ՀՅԴ խոսքը արտահայտեց Տիգրան Ճինպաշեանը: Նա ասաց, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրությունը պարտավորեցնում է Հայաստանի կառավարությանը, որ չընդունի հայ ժողովրդի իրավունքները ոտնահարող այնպիսի նախապայմաններ, որոնք կան հայ-թուրքական արձանագրություններում: Նա շեշտեց, որ Հայաստանի սահմանադրական դատարանը և Ազգային ժողովը պետք է հայ ազգի կամքի հարազատ թարգմանը հանդիսանան և ընթացք չտան հայտնի արձանագրություններին:

Հավաքի ավարտին ընթերցվեց Հայաստանի Սահմանադրական դատարանին ուղղված հայ քաղաքական երեք կուսակցությունների միացյալ հուշագիրը³⁹:

Փաստորեն՝ մենք ականատես ենք լինում մի իրողության, որ Սփյուռքում գործող մեր բոլոր քաղաքական կուսակցությունները և հոգևոր կառույցները միակամ կերպով արտահայտելով իրենց տեսակետը՝ հիմնավոր կերպով իրենց բացասական վերաբերմունքն էին ցույց տալիս սկսված կարգավորման գործընթացին՝ մերժելով արձանագրությունները և կոչ անելով առկախել դրանք:

³⁹ Նույն տեղում:

Չնայած նշված իրողություններին, 2010 թվականի հունվարի 12-ին հրապարակվեց ՀՀ Սահմանադրական դատարանի (ՄԴ) որոշումը, որի համաձայն հայ-թուրքական «արձանագրություններում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը»⁴⁰:

Սակայն այս որոշումից մի քանի ամիս անց՝ 2010 թվականի ապրիլի 22-ին, հաշվի առնելով թուրքական կողմի պատճառով ստեղծված իրավիճակը, փաստելով, որ Թուրքիան պատրաստ չէ շարունակել սկսված գործընթացը, ինչպես նաև արձագանքելով ՀՀ իշխող կոալիցիայի կուսակցությունների քաղաքական խորհուրդների համատեղ դիմումին, ՀՀ նախագահը հրամանագիր ստորագրեց արձանագրությունների վավերացման գործընթացի կասեցման մասին^{[41}: Ապրիլի 22-ին նախ Հայաստանի իշխող կոալիցիան որոշում է կայացնում ՀՀ Ազգային ժողովում առկախել արձանագրությունների վավերացման ընթացքը, ապա նախագահ Սերժ Սարգսյանը հանդես է գալիս կոչով, որով հայտարարում է Հայաստանի Հանրապետության կողմից արձանագրությունների վավերացման ընթացքի կասեցման մասին: Այդ մասին ծանուցումն ուղարկվում է Թուրքիա:

Փաստաթղթերի վավերացման գործընթացը Թուրքիայի խորհրդարանում նույնպես սառեցված էր:

Հինգ տարի անց՝ 2015 թվականի փետրվարի 16-ին, ՀՀ նախագահի մեկ այլ հրամանագրով հայ-թուրքական արձանագրությունները հետ կանչվեցին Ազգային ժողովից, իսկ 2018 թ. մարտի 1-ի ՀՀ

⁴⁰ Սահմանադրական դատարանի որոշումը, <https://www.csi.am/hy/events/2010/01/12/decision> (մուտքի ամսաթիվ 14.03.2023):

⁴¹ Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա <https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr> (մուտքի ամսաթիվ՝ 23.06.2023):

նախագահի հրամանագրով դադարեցվեց հայ-թուրքական արձանագրությունների կնքման ընթացակարգը⁴²:

Այսպիսով՝ ավարտվել է դիվանագիտական հարաբերությունների վերականգնման հերթական փորձը: Կարելի է արձանագրել, որ այս փորձի հաջող ընթացքին երկուստեք խանգարեցին մի շարք ներքին և արտաքին քաղաքական հանգամանքներ:

Սփյուռքյան շրջանակների կարծիքով Սփյուռքի քաղաքական ու հասարակական հատվածների միահամուռ ջանքերի շնորհիվ հաջողվեց մեծ և վճռական դերակատարություն ունենալ Սերժ Սարգսյանի նախաձեռնած հայ-թուրքական հաշտեցման գործընթացի վիժեցման գործում՝ ընդդիմանալով ժամանակի ՀՀ իշխանությունների վարած քաղաքականությանը⁴³:

Ս. Ֆարմանյանի կարծիքով, սակայն այս գործընթացում ամեն ինչ ի սկզբանե պարզ է եղել: Բոլորն իմացել են գործընթացի վերջնարդյունքի մասին, բայց ելնելով սեփական շահերից և չցանկանալով հարաբերությունները լարել ԱՄՆ-ի նման գերտերության հետ՝ դարձել են նրա նախաձեռնած խաղի մի մասը, մասնակցել այդ կեղծ օրակարգին և սպասարկել վերջինիս շահերը⁴⁴:

Փաստորեն՝ մենք կարող ենք եզրակացնել, որ հայ-թուրքական գործընթացը և Հայոց ցեղասպանության ճանաչումը դրանք իրականում պայմանավորված էին թուրք-ամերիկյան բազմաշերտ հարաբերություններով և առնվազն միամտություն կլիներ կարծել, որ Հայաստանի Հանրապետությունը կամ հայկական սփյուռքը կարող են այստեղ լուրջ գործոն հանդիսանալ, որքան էլ աշխատեն այս ուղղությամբ ու մեծ ճիգեր գործադրեն: Ուժերն ու շահերը

⁴² Նույն տեղում:

⁴³ Ինչո՞ւ է գոհունակ Ազրպեյճանը հայ-թուրքական մոսկովեան բանակցություններից <https://www.aztagdaily.com/archives/535449> (մուտքի ամսաթիվ՝ 22.01.2022):

⁴⁴ Ֆարմանյան Ս., նշվ. աշխ., էջ 220–221:

Խիստ անհավասարաչափ են: Միաժամանակ պետք է փաստել, որ անկախ առկա իրողություններից գործընթացի նկատմամբ իր խիստ բացասական վերաբերմունքն արտահայտեց Սփյուռքի գերակշիռ հատվածը և ամեն կերպ իր ուժերի ներածի չափով փորձեց կասեցնել այն, ինչի մասին են վկայում գործընթացի ողջ ընթացքում տեղի ունեցած իրադարձություններն ու կազմակերպված ստրատեգիական բողոքի դրսևորումները:

ATTITUDE OF THE DIASPORA TO THE PROCESS OF NORMALIZATION OF ARMENIAN-TURKISH RELATIONS IN 2009

*Ara Hovhannisyan*⁴⁵

Armenian-Turkish relations have always been in the center of attention in Armenian socio-political circles. Especially in the Diaspora, this question caused a very ticklish reaction. Since 1991, several attempts were made to normalize relations between the Republic of Armenia and the Republic of Turkey, but they did not lead to any results since Turkey always put forward unacceptable preconditions for Armenia.

The most effective attempt to regulate relations between Armenia and Turkey was initiated by the president of the Republic of Armenia, Serzh Sargsyan. However, the signing of the Armenian-Turkish protocols on October 10, 2009 led to a very strong opposition of Armenians, especially Armenians of the Diaspora. Gatherings of protest signatures, demonstrations, and meetings were organized. There was also a small part of the diaspora that spoke out for regulation of the process.

We can state that the overwhelming majority of people and organizations of the diaspora expressed their strong dissatisfaction with the process of Armenian-Turkish settlement and tried in every way to stop it, because they believed that the signed protocols include many preconditions that are dangerous for Armenia and the Armenian people. It can also be noted that a number of internal and external

⁴⁵ Ara Hovhannisyan is an Associate Professor at the Department of Armenian History of the Faculty of History, YSU, E-mail: arahovhannisyan@ysu.am, ORCID 0009-0002-8421-5908.

political circumstances on both sides prevented the successful course of this process.

Keywords: socio-political frameworks, Armenian diaspora, Armenian-Turkish relations, reconciliation process, football diplomacy, signed protocols, preconditions, protests.

ОТНОШЕНИЕ ДИАСПОРЫ К ПРОЦЕССУ НОРМАЛИЗАЦИИ АРМЯНО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ 2009 ГОДА

Արա Օվաննիսյան⁴⁶

Армяно-турецкие отношения всегда находились в центре внимания армянских общественно-политических кругов. Особенно в диаспоре этот вопрос вызывал очень неоднозначную реакцию. С 1991 года было предпринято несколько попыток нормализации отношений между Республикой Армения и Турецкой Республикой, но они не привели ни к каким результатам, поскольку Турция всегда выдвигала неприемлемые условия для Армении.

Самая эффективная попытка урегулировать отношения между Арменией и Турцией была инициирована президентом РА Сержем Саргсяном. Однако подписание армяно-турецких протоколов, состоявшееся 10 октября 2009 года, привело к очень сильному противостоянию армян, особенно в диаспоре. Были организованы сборы подписей протеста, демонстрации, митинги. Лишь небольшая часть диаспоры высказывалась за урегулирования процесса.

Мы можем констатировать, что подавляющее большинство людей и организаций диаспоры выражали свое резкое недовольство к процессу армяно-турецкого урегулирования и всячески пытались его остановить, поскольку считали, что подписанные протоколы включают много предварительных условий, которые опасны для Армении и армянского народа. Можно также отметить, что успешному ходу этого процесса помешал ряд внутренних и внешних политических обстоятельств с обеих сторон.

⁴⁶ Արա Օվաննիսյան – կ.ի.տ.ն., доцент кафедры истории Армении факультета истории ЕГУ, эл. почта: arahovhannisyanyan@ysu.am, ORCID 0009-0002-8421-5908.

Ключевые слова: общественно-политический круг, Армянская диаспора, армяно-турецкие отношения, процесс урегулирования, футбольная дипломатия, подписанные протоколы, предварительные условия, протесты.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այդաբիրյան Ռ., Լիպարիտյան Ժ., Փափազյան Թ., Սպիտակ թուղթ, 2020 թ. Ղարաբաղյան պատերազմը և Հայաստանի ապագա արտաքին քաղաքականությունները, 2021 թ., հուլիս, <https://enlightngo.org/wp-content/uploads/2022/01-final.pdf>

2. Շիրանի Ա., Հայաստան-Թուրքիա միջպետական հարաբերությունների զարգացումը (1991–2013 թթ.), «Լրաբեր» հասարակական գիտությունների», 2014, թիվ 1, էջ 120–127: https://arar.sci.am/Content/39557/file_0.pdf

3. Սաֆարյան Դ., «Ֆուտբոլային դիվանագիտության» արձագանքներ թուրքական մամուլում, Բանբեր Երևանի համալսարանի-Միջազգային հարաբերություններ, Քաղաքագիտություն, Երևան, 2018, vol. 27, N 3, էջ 47–57:

4. Սաֆարյան Դ., Մելիքյան Գ., Ոսկանյան Վ., Սաֆարյան Ա., Լեռնային Ղարաբաղի հարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, խմբ. Ռ. Սաֆրաստյանի, Երևան, 2017, ԵՊՀ հրատ., 194 էջ:

5. «Տասը հարց, տասը պատասխան»/Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ (պատ. խմբ. պրոֆ. Ա. Սիմոնյան), Երևան., 2009, ԵՊՀ հրատ., 48 էջ:

6. Ֆարմանյան Ս., Միայնակ ընդդեմ ճակատագրի. Ֆուտբոլային դիվանագիտություն, Երևան, 2023, Նյու Մեք հրատ., 448 էջ:

7. Երկկողմ հարաբերություններ, Թուրքիա, <https://www.mfa.am/hy/bilateral-relations/tr> (մուտքի ամսաթիվ՝ 23.06.2023):

8. Ինչո՞ւ է գոհունակ Ազրպեյճանը հայ-թուրքական մոսկովեան բանակցութիւններից...

<https://www.aztagdaily.com/archives/535449> (մուտքի ամսաթիվ՝ 22.01.2022):

9. Հայաստան — Թուրքիա յարաբերութիւններու «բնականոնացում», «Մեր պատմութիւնը սակարկութեան նիւթ չի կրնար ըլլալ» կ'ըսէիք, Հայաստան եւ Թուրքիա ստորագրեցին «պատմական» որակուած համաձայնագիրը, «Նոր Յառաջ», Փարիզ, 27.10.2009:

10. Հայաստան-Թուրքիա հարաբերություններ. 4 ղեկավարների դիրքորոշումները, 19.06.2021: <https://fip.am/16093> (մուտքի ամսաթիվ՝ 24.10.2022).

11. ՀՀ նախագահ Մերժ Սարգսեանի հետ հանդիպում Փարիզի մէջ. Ծանր մթնոլորտի մէջ կայացաւ խորհրդակցութիւնը, «Ազատ օր», Աթենք, օրաթերթ, 2009 թ., 5 հոկտեմբեր:

12. Չախողված ֆուտբոլային դիվանագիտությունը. Ժամանակագրություն, <https://www.civilnet.am/news/177401/> (մուտքի ամսաթիվ՝ 15.08.2023).

13. Ռուսաստանի հայերը մերժում են արձանագրութիւնները, «Ալիք», օրաթերթ, Թեհրան, 2009, 3 հոկտեմբեր:

14. «Զարթօնք», օրաթերթ, թիվ 130, Բեյրութ, 12.01.2010:

15. Սահմանադրական դատարանի որոշումը, <https://www.csi.am/hy/events/2010/01/12/decision> (մուտքի ամսաթիվ՝ 14.03.2023).

ՊԵՏՐՈՍ Ա ԳԵՏԱԴԱՐԸ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ- ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1019–1045 թթ.

Վարդան Ալեքսանյան¹

DOI 10.46991/jos.2024.25.1.272

Հոդվածում հետազոտվում է հայոց կաթողիկոս Պետրոս Ա Գետադարձի (1019–1059 թթ.) գործունեությունը Բագրատունյաց հայոց թագավորության անկման նախօրեին՝ 1019–1045 թթ.: «Գետադարձ» հորջորջված Պետրոս Ա-ն գահ է բարձրացել կաթողիկոսների հաջորդականության ավանդական կարգի խախտմամբ՝ նախորդ հայրապետի՝ Մարգիս Սևանցու (992–1019 թթ.) կենդանության օրոք: Նրան հաջողվում է հարաբերականորեն լիցքաթափել երկրի ներքաղաքական լարվածությունը և ժամանակավորապես մեղմել արտաքին մարտահրավերների սաստկությունը: Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերություններում Պետրոս կաթողիկոսը բազմիցս հանդես է եկել դիվանագիտական առաքելությամբ: 1022 թ. նա Տրապիզոնում բանակցություններ է վարել Բյուզանդիայի Վասիլ Բ (976–1025 թթ.) կայսեր հետ ու նրան հանձնել հայոց թագավոր Հովհաննես-Սմբատի (1018–1041 թթ.) կտակը, որի համաձայն վերջինիս մահից հետո Անիի թագավորությունը պետք է անցնել Բյուզանդիային: Մրանով կանխվում էր բյուզանդական զորքի ներխուժումը Անի ու ժամանակավորապես երկարաձգվում հայոց թագավորության գոյությունը: Հայոց աշխարհիկ և հոգևոր ինքնակալների հարաբերությունների լարման հետևանքով 1037 թ. Պետրոս Գետադարձն աթոռանկ է արվում և բանտարկվում: Մակայն հոգևորականների և մեծաթիվ աշխարհիկ մարդկանց պահանջով նրան ազատ են արձակում և վերականգնում

¹ Վարդան Ալեքսանյանը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ և ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող, էլ. փոստ՝ vardan.aleqsanyan@ysu.am, ORCID 0009-0005-3615-4778.

կաթողիկոսական գահին: Մերժելով բյուզանդացիների քաղկեդոնական նկրտումները՝ նա հայոց միաբնակ դավանանքը չի դարձնում դավանաբանական «սակարկությունների» առարկա: Թագակիր եղբայրներ Աշոտ Դ-ի և Հովհաննես-Սմբատի մահից հետո (1041 թ.) Պետրոս Գետադարձը համագործակցում է ազգային ուժերի հետ և, 1042 թ. Գագիկ Բ-ին օժելով թագավոր, փորձում կանխել Բագրատունյաց թագավորության անկումը: Երկրի ներքին և արտաքին գործերի վրա զգալի մեծ էր Պետրոս Գետադարձի ազդեցությունը, ինչն ուղիղ համեմատական էր նրա գլխավորած կղերապետության տնտեսական և նյութական վիթխարի հարստությանը: Նրա օրոք Հայ եկեղեցու տնտեսական ներուժը հասնում է աննախադեպ մեծության: Հրաշագործի հոչակ վայելող հոգևոր վեհապետը ժամանակի ամենակրթված անձանցից մեկի՝ XI դարի հայ նշանավոր ռազմական, պետական գործիչ և փիլիսոփա Գրիգոր Մագիստրոսի գաղափարակից ընկերն էր: Հայ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունների պատմությանը անհրաժեշտ չափով չտիրապետող ու հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերություններին ոչ պատշաճ չափով տեղյակ հայ միջնադարյան պատմագրությունը Պետրոս Գետադարձի նկատմամբ ունի ոչ միանշանակ վերաբերմունք:

Բանալի բառեր՝ Պետրոս Ա Գետադարձ, Հովհաննես-Սմբատ, Կոստանդին Թ Մոնոմախ, Հայ եկեղեցի, Անի, Բյուզանդիա, Բագրատունյաց հայկական թագավորություն, անկում, կղերապետություն, կաթողիկոսություն:

Ներածություն. Իրադրությունը Հայաստանում 1020-ական թթ.

Գագիկ Ա-ի (990–1018 թթ.) մահով ընդհատվեց հայոց պետականության վերելքը, և Բագրատունյաց թագավորությունը հայտնվեց սոցիալ-քաղաքական ճգնաժամի մեջ: Աշխարհիկ և հոգևոր ավատատերերը կեղեքում էին նյութական բարիք արտադրող հիմնական խավին՝ հայ շինականությանը, որի հետևանքով հայկական իշխանություններում խորանում էր հասարակության բևեռա-

ցումը: Հարստացման մոլուցքը ոչնչացնում էր հասարակական հարաբերությունները կարգավորող բարոյական արժեքների համակարգը, քանզի «յարգի եղև արծաթասիրութիւն, քան զաստուածասիրութիւն եւ մամոնայ՝ քան զՔրիստոս», գրում է XI դարի նշանավոր ողբերգու Արիստակես Լաստիվերցին²: Առաջացած հոգևոր վակուումը լցվում էր ընչաքաղցության ախտով, որով վարակված էր նաև հանրության մեջ հոգևոր-բարոյական արժեքներ սերմանելու կոչված եկեղեցական դասը. «Բարձաւ եւ ի քահանայից երկիւղ եւ ընտրութիւն սրբութեան. նեղին եւ մղին մերձենալ ի սեղանն եւ սպասատրեն անճառ խորհրդոյն որ հրեշտակաց է զարհուրելի, թող թէ մարդկան, եւ զայն ի ձեռն արծաթոյ եւ ոչ Աստուծով»³:

XI դարի սկզբներից ներքին և արտաքին մարտահրավերները սպառնալիքի տակ էին դրել հայոց թագավորության գոյությունը: Տարոնի (966 թ.), Տայքի (1000 թ.) և Վասպուրականի (1021 թ.) իշխանություններին տիրանալուց հետո Բյուզանդիան թիրախավորում է Անի-Շիրակի Բագրատունյաց թագավորությունը: Միաժամանակ նշանառության տակ է վերցնում այն ինստիտուտները, որոնք նույնացվում էին պետականության հետ: Բյուզանդական իշխանությունները հասկանում էին Հայ եկեղեցու դերը պետականակիր էթնոսի՝ հայության ազգային ինքնության պահպանման գործում, ինչպես նաև տեսնում էին հայ հոգևոր դասի գործունե մասնակցությունը հասարակական-քաղաքական հարաբերություններում: Այդ պատճառով նրանք ծրագրել էին վերջ դնել Հայ եկեղեցու անկախությանը, կազմալուծել նրա բարձրագույն հոգևոր և եկեղեցավարչական իշխանությունն իրականացնող առաքելահաստատ կաթողիկոսությունը:

² Արիստակես Լաստիվերցի, Պատմութիւն, Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, ԺԱ դար, Երևան, 2012, էջ 572-573, (այսուհետ՝ Արիստակես Լաստիվերցի):

³ Նույն տեղում, էջ 573:

Գագիկ Ա-ի մահից հետո ավագության իրավունքով շահինշահի տիտղոսը ժառանգած «թուլամորթ ի պատերազմունս և անկիրթ» Հովհաննես-Սմբատի (1018–1041 թթ.) դեմ ապստամբում է կրտսեր եղբայր «արի և քաջ և գորաւոր, անպարտելի և յաղթող ի պատերազմունս» Աշոտ Դ-ն: Արքայազունների միջև թեժացող գահակալական կռիվները պարպում էին պետականության վերջին լիցքերը և սպառում նրա դիմադրական պոտենցիալը: Գահակալական առճակատման հետևանքով երկիրը բաժանվել էր երկու հակամարտ խմբավորումների: Եղբայրասպան կռիվերին օժանդակում էին նաև ներքին և արտաքին ուժերը: Աշոտին ռազմական աջակցություն էին տրամադրում Արծրունի նախարարները: Իսկ արտաքին շահառուն Բյուզանդիան էր, որը շահագրգռված էր Հայաստանում երկպառակությունների խորացմամբ: Բյուզանդացիները խրախուսում էին Աշոտի գործողությունները՝ հորջորջելով նրան «Մեծ Հայքի էքսուսիարի»⁴:

1021 թ. Աշոտը արշավում է Անիի վրա, որը ոտքի է կանգնում «ի պատերազմ ընդ Աշոտոյ»: Անեցիները ճակատամարտում պարտություն են կրում և մեծ կորուստներ տալիս: Ի վերջո կործանարար կրքերը տեղի են տալիս ողջախոհությանը և հայոց ավագանու ու Պետրոս կաթողիկոսի միջնորդությամբ, երկրի հերթական մասնատման գնով արյունահեղությունը դադարեցվում է. «Եւ յայնժամ սուրբ հայրապետն Պետրոս և իշխանքն ամենայն ելին առ Աշոտ և մեծաւ երդմամբ նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց, և Յովհաննէս նստցի թագաւոր ի քաղաքն յԱնի»⁵: Հայաստանում հաստատվում է երկիշխանություն, պայմա-

⁴ Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., Հայ-բյուզանդական հետազոտություններ, Աճեմյան մատենաշար, հ. Ա, Երևան, 2002, էջ 672:

⁵ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, տպ. Մայր աթոռոյ Սբբոյ Էջմիածնի, Վաղարշապատ, 1898, էջ 10, (այսուհետ՝ Մատթեոս Ուռհայեցի): Տարեգիրք Սմբատայ

նավորվում են, որ Հովհաննես-Սմբատի մահից հետո ամբողջ երկրի միահեծան տիրակալ է դառնալու Աշոտը:

Դրամատիկ իրադարձություններով հարուստ այս ժամանակաշրջանում հայոց նվիրապետությունը գլխավորում է «Գետադարձ» հորջորջված Պետրոս Ա-ն: Եկեղեցաքաղաքական բարդ պայմաններում նրան չի հաջողվում ապահովել հանրության հավաքական միասնականությունը և, ներքաշվելով քաղաքական գործընթացների մեջ, ի վերջո ինքն էլ դառնում է այդ գործելակերպի գոհ⁶:

Պետրոս Ա Կաթողիկոսի եկեղեցական-քաղաքական գործունեության սկիզբը

Գագիկ Ա-ի մահից⁷ հետո Հայաստանում աճող ներքաղաքական լարվածության պայմաններում «երկու առաջին» դեմքերի՝ Հովհաննես-Սմբատի և Աշոտ Դ-ի՝ գահի համար վեճի կարգավորումը վեր էր քաղաքական հենարանից զրկված շուրջ 90-ամյա կաթողիկոս Սարգիս Սևանցու (992–1019 թթ.) ուժերից: Այդ պատ-

Սպարապետի, Փարիզ, 1859, էջ 28, տպ. է. Թունոյի, Փարիզ, 1859 (այսուհետ՝ Սմբատ Սպարապետ):

⁶ Մաթևոսյան Կ., Անի, եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մայրաթոռ սուրբ Էջմիածին, Երևան, 1997, էջ 33:

⁷ Գագիկ Ա-ն մահացել է պատմագիտության մեջ ընդունված 1020 թվականից ավելի վաղ: Այս տեսակետը փաստարկված հիմնավորում է պատմաբան Կ. Յուզբաշյանը: Վկայակոչելով Վահրամ Պահլավունու հստակ թվագրված Մաստարայի 1015 թ. Արձանագրությունը, որտեղ հիշվում է Գագիկ Ա-ն (Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 136), այնուհետև՝ Տեկոբի՝ ուն Թաթուլի 1018 թ. թվագրված արձանագրությունը, որտեղ հիշվում է Հովհաննես-Սմբատը՝ (Ալիշան Ղ., Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 134–135) Կ. Յուզբաշյանը եզրակացնում է, որ Գագիկ Ա-ն վախճանվել է մինչև 1018 թվականը, 1017 թվականին, նույնիսկ՝ 1016 թվականին (Юзбашян К., К хронологии правления Гагика I Багратуни. Античная древность и средние века, вып. 10, 1973, с. 197; Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX-XI вв. М., 1988, с. 156–157, ծանոթ. 68): Ժամանակամերձ պատմիչների հաղորդումները ցույց են տալիս, որ նա մահացել է 1018 թ. սկզբին:

ճառով նա հարկադրված էր «ընտրել» հրաժարականի տարբերակը և տեր Պետրոսին «ի կենդանութեանն իւրում օծեալ էր իւրով ձեռօք ի յԱնի մեծ հանդիսի», -արձանագրում է Վարդան Արևելցի⁸: Լաստիվերցու արժանահավատ տեղեկության համաձայն՝ «Եւ ի չորեք-հարիւր վաթսուն և ութ թուականին (1019 թ.)՝ ձեռնադրի տեր Պետրոս ի կաթողիկոսութիւն առ կենալքն տէր Սարգսի»⁹: Նոր հոգևոր վեհապետի ձեռնադրության առիթով Անիում գումարված եպիսկոպոսական ժողովի մասին, դժբախտաբար, մանրամասներ չեն պահպանվել:

Լ. Տեր-Պետրոսյանի հրապարակած «Պատմութիւն սրբոց հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան» վերնագրով վավերագրում արձանագրված է, որ երկրի ալեկոծ և խռովահոյզ վիճակից ձանձրացած Սարգիս Սևանցու փոխարեն «ընտրեն գտեր Պետրոս ազատ ազգէ, երեւելի շնորհօք եւ հասակաւ»¹⁰: Կ. Մաթևոսյանը իրավացիորեն նկատում է, որ «ի ծփանաց աշխարիս» ձանձրացած կաթողիկոսը Գագիկ Ա-ի օրոք չէր կարող հրաժարվել աթոռից¹¹: Հետևաբար, դա տեղի է ունեցել Հովհաննես-Սմբատի գահակալության սկզբում, երբ ի հայտ էին եկել նոր մարտահրավերներ, որոնց դիմակայելու համար արքան կարիք ուներ եկեղեցու անվերապահ աջակցության: Տեր Պետրոսի աթոռակալությունը տեղի ունեցավ քաղաքական լարված մթնոլորտում, կաթողիկոսների հաջորդականության ավանդական կարգի խախտմամբ՝ նախորդ հայրապետի կենդանության օրոք: Փաստորեն, 1019 թ. Հովհաննես-Սմբատի ուղղակի միջամտությամբ և բյուզանդական իշխանությունների

⁸ Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Սբ. Ղազարի տպ., Վենետիկ, 1862, էջ 93, (այսուհետ՝ Վարդան վարդապետ):

⁹ Արիստակէս Լաստիվերցի, էջ 532:

¹⁰ Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Հայկական մատենաշար, Գալուստ Կիլիպէնկեան հիմնարկութիւն, Երևան, 2007, էջ 510:

¹¹ Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, ՊԲՀ, 2008, N 3, էջ 15:

անտեսանելի ձեռքով կաթողիկոսական գահ էր բարձրանում հունական քաղաքակրթական կողմնորոշում ունեցող մի անձ, որը ենթադրաբար պետք է աջակցեր Հայաստանի գրավման բյուզանդական ծրագրի իրագործմանը:

«Գետադարձ» հորջորջումով հայտնի տեր Պետրոսն իր ժամանակի հեղինակավոր և զարգացած անձնավորություններից էր՝ բարձր կրթությամբ և գիտական հմտություններով: Նրա ծագումնաբանության մասին մատենագրական վկայությունները հարուստ չեն: Դատելով XV դարասկզբի վերոհիշյալ վավերագրի «ԳՏԷր Պետրոս ազատ ազգէ» բնորոշումից՝ կարելի է ենթադրել, որ նա ունեցել է ազնվական ծագում¹²: Պետրոսի ծագման մասին ուշագրավ մանրամասն է պահպանվել 1404 թ. մի ճառընտիրում, որի համաձայն «էր նա (Պետրոս Գետադարձ՝ Վ.Ա.) ի գաւառէն Շիրակայ յազատ տանէ..., ի մեծաց եւ պատւաւորաց ի Կամրջաձորոյ, որ է ի յերկիրն Անույ»¹³: Նա պատկանում էր Անանիա Մոկացուց (942–965 թթ.) սկզբնավորված նոր կաթողիկոսական հարստությանը և ըստ պատմագիտության մեջ ընդունված տեսակետի՝ Պետրոս Անանիա Ա Մոկացու (942–965 թթ.) քրոջ որդին էր և Խաչիկ Ա Արշարունու (973–992 թթ.) եղբայրը¹⁴: Այս հարցում Մ. Օրմանյանը կասկած է հայտնում, ասելով որ Խաչիկ Արշարունու և Պետրոս Գետադարձի միջև առկա շուրջ հիսունամյա տարբերությունը ավելի հավանական է դարձնում վերջինիս՝ Խաչիկի եղբոր որդի լինելը¹⁵: Նա գահ է բարձրացել, երբ «երեւելի շնորհօք եւ հասակաւ»¹⁶

¹² X-XI դդ. Բագրատունի թագավորների ենթակա իշխանները կոչվել են «ազատ» (Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, Երևան, 1990, էջ 189–192):

¹³ Մաթևոսյան Վ., Անի-Շիրակի պատմության էջեր, հոդվածների ժողովածու, Երևան, 2010, էջ 21, ծանոթ. 35:

¹⁴ Չամչյան Ս., Հայոց պատմություն, հ. Բ, Երևան, 1984, էջ 896:

¹⁵ Օրմանյան Ս., Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, էջ 1389:

էր, ինչից կարելի է եզրակացնել, որ այդ ժամանակ եղել է շուրջ 40 տարեկան, այսինքն՝ ծնվել է 980-ականների սկզբին: Սարգիս Ա Սևանցու աթոռակալության վերջին շրջանում Պետրոսը հավանաբար եղել է նրա օգնականը և կաթողիկոսարանի պաշտոնետության մերձավոր անձանցից մեկը: Տեղեկություններ չկան նրա ուսանած դպրոցների մասին, սակայն ենթադրվում է, որ սկզբնական կրթությունը ստացել է Արգինայի և Անիի վարդապետարաններում: Այնուհետև ուսումը կատարելագործել և գիտելիքները հարստացրել է հունական միջավայրում: Հունական գրականության և մանավանդ փիլիսոփայության մեջ նրա ունեցած հմտությունը թույլ են տալիս կարծելու, որ նա եղել է Կ.Պոլսում, հաճախել է այնտեղի դպրոցները¹⁷: Բյուզանդիայում ստացած կրթությունը, գիտության ասպարեզում կայացածությունն ու հետաքրքրությունները ձևավորել են արժեհամակարգային այն հարացույցը, որի վրա կառուցվել է Պետրոս կաթողիկոսի և XI դարի նշանավոր գիտնական, փիլիսոփա, ռազմական և քաղաքական գործիչ Գրիգոր Մագիստրոսի բարեկամությունը: Այդ հարաբերությունները լավագույն կերպով արտացոլված են նրանց թղթակցության մեջ:

Մագիստրոսի անունով մեզ հասած նամակներում շոշափվում են գիտության և արվեստի տարատեսակ խնդիրներ, ինչը թույլ է տալիս վստահորեն պնդել, որ ինչպես Գրիգոր Մագիստրոսը, այնպես էլ նրա թղթակից Պետրոսը քաջաձանոթ են ոչ միայն հայ, այլև հույն, ասորի, արաբական հին և նոր գրականությանը, նրանց

¹⁶ «Հասակա» բառն ունի կյանքի հասուն տարիքի հասած լինելու իմաստ (Նոր Բազմիրք հայկազան լեզուի, հ. Բ, Երևան, 1981, էջ 49):

¹⁷ Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Երևան, 1967, էջ 651: Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1390: Հ. Աճառյանը հայտնում է, որն նա ուսանել է Տրապիզոնի վանքում (Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Պետական համալսարանի հրատ., Երևան, 1948, էջ 244: Զարբանալեան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1897, էջ 587):

ավանդություններին և ուսմունքներին¹⁸: Եփրեմ Ասորու գիրքն ուղարկելով Բջնիում կալանավորված տեր Պետրոսին՝ Մագիստրոսը խնդրում է թույլ տալ «զայտասիկ նախադրութիւն մակագրել մեծագունիդ գլխոյ, որ ամենայնի ես բաւական, և զանսպառն հեղուս գիտութիւն և շնորհ»¹⁹: Մագիստրոսն իր աշակերտներին հանձնում է Պետրոսի դաստիարակությանը, որին մեծարում է «գերակատարդ իմաստից», «ակն տունջեան» խոսքերով: Նրանց ջերմ հարաբերությունները շարունակվեցին նաև 1045 թվականից հետո, որի վկայությունը Մագիստրոսի՝ «Գիտեմք, որ հոգաս միշտ վասն իմ»²⁰ խոսքերն են՝ ուղղված Պետրոս հայրապետին:

Պետրոս Գետադարձը և Գրիգոր Մագիստրոսը գլխավորել են XI դարի առաջին կեսին Հայաստանում սպառնալի տարածում ստացած թոնդրակյան շարժման դեմ պայքարը: Կաթողիկոսը խստորեն պատժում է իր հակառակորդ ոմն հոգևորական Ներսեսի, ինչի մասին իր նամակում մեծ ոգևորությամբ է խոսում Գր. Մագիստրոսը: Ամբաստանելով «շեղված» հոգևորականին՝ Մագիստրոսը տեղին է համարում նրա պատիժը, որովհետև, ըստ Սուրբ գրքի «եթէ որ հայիոյէ զիշխան ժողովրդեան մահու մեռանել», առավել ևս, որ նա հայիոյէ է «մակաւասար պետականութեան եկեղեցոյ»²¹:

Խորագետ կաթողիկոսն օժտված էր մարդկանց հոգեբանական աջակցություն ցուցաբերելու շնորհներով, որ մասին ավանդություն-

¹⁸ Կոստանեանց Կ., Տէր Պետրոս Ա Գետադարձ, տպ. Մայր պթոռ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1897, էջ 7:

¹⁹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, աշխատասիր. Կ. Կոստանեանցի, տպ. Գ. Մանոյեանցի Աղեքսանդրապոլ, 1910, էջ 3:

²⁰ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 12:

²¹ Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 27: Ներսեսը եղել է Թոնդրակյան շարժման պարագլուխներից մեկը (Գրիգոր Մագիստրոս, Սատենագիրք Հայոց, ԺԶ հատոր, ԺԱ դար, էջ 96, ծանոթ. 2):

նը հետևյալն է պատմում. «Սքանչելի այր, լի ամենայն բարի մասամբ, եւ ուներ շնորհ իմն աստուածական բժշկելոյ զախտածէտս եւ հալածելոյ զղևս»²²: Միևնույն ժամանակ նրա բնավորությանը բնորոշ էր ընչաքաղցությունը, և ինչպես Լաստիվերցին է ասում, Պետրոսը «յոյժ գանձուց սիրաւոյ էր, որ եւ բազումք վասն այնր եպերէին զնա»²³:

Հայրապետության հենց առաջին օրերից Պետրոսը ներքաշվեց բուռն քաղաքական իրադարձությունների հորձանուտ ու, ինչպես նկատում է Կ. Կոստանյանը, նա «անկարող եղաւ ըմբռնելու իւր դիրքի բարձրութիւնն և զերծ մնալու այն կատաղի մրցման վնասակար ազդեցութիւնից, որ կար իւր ժամանակի հայ իշխանների և բիւզանդական դրան մէջ»²⁴: Հովհաննէս-Սմբատի կամքով հոգևոր վեհապետի իշխանությունն ձեռք բերած Պետրոսը, աջակցելով երկրի քաղաքական ղեկավարությանը, մեղսակից դարձավ Անի-Շիրակի թագավորության՝ Բյուզանդիային հանձնման աղետալի դեպքերին: Նա Բագրատունյաց թագավորության հունասեր նշանավոր «երրորդության» (Գրիգոր Մագիստրոս, Վեստ Սարգիս, Պետրոս Գետադարձ) ամենաազդեցիկ գործիչն էր, որովհետև գիտության հետ մեկտեղ ուներ նաև կաթողիկոսական բարձր իշխանությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՐՍՏՅԱՆ ԳԻՐԸ

Պարտության մատնելով իր դեմ ըմբոստացած Վրաց և Աբխազաց թագավոր Գեորգի Ա-ին (1014–1027 թթ.), և ավերածություններ

²² Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց Հայոց, Յանուարի 6 ի հայս, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1869, էջ 109:

²³ Արիստակես Լաստիվերցի, էջ 579: Գրիգոր Մագիստրոսը վկայում է, որ Պետրոսը գերադասում էր դավանաբանական, կանոնական գրքերի ընթերցանությունը, որն «ըղձալի էր քեզ քան զուսկի և քան զարծաթ» (Գրիգոր Մագիստրոսի թղթերը, էջ 4):

²⁴ Կոստանեանց Կ., Տեր Պետրոս Գետադարձ, էջ 8:

գործելով Տայքում՝ «բուլղարասպան» հորջորջումով հայտնի Վասիլ Բ կայսրը (976–1025 թթ.) ձևեռելու համար 1021 թ. վերջին մտավ Տրապիզոն²⁵: Նա արշավանք էր ծրագրում Բագրատունյաց թագավորության դեմ, սակայն մինչ այդ, ինչպես վկայում է XI դարի ժամանակագիր Հակոբ Սանահնեցին, դեսպանների միջոցով «խնդրեաց ի թագաւորէն Հայոց զԱնի եւ զԿարս» և «գամենայն տունն Շիրակայ»²⁶: Այդ ժամանակ Հովհաննես-Սմբատն «ահ ու դողի մեջ ընկավ» մտածելով, որ Վրաց թագավորին «իր ցուցաբերած զինակցության համար» կայսրը վերժխնդիր կլինի, պատմում է բյուզանդացի ժամանակագիր Հովհաննես Սկիլիցեսը²⁷: Անհնարին համարելով զենքի ուժով կասեցնել իր հզորության գազաթնակետին գտնվող Բյուզանդիայի առաջխաղացումը՝ Հովհաննես-Սմբատն աշխատում է մարտավարական քայլերով կանխել Վասիլ կայսեր հարձակումը և «փրկել» իրեն: Նա չի ցանկանում «դրացի մանրիկ թագաւորաց նմանիլ»²⁸ և դիվանագիտական առաքելությամբ Վասիլ արքայի մոտ է ուղարկում իր գլխավոր զինակից բյուզանդամետ կաթողիկոս Պետրոսին: Վերջինս պետք է կայսրին հանձնէր հայոց թագավորի գրությունը Անիի ճակատագրի վերաբերյալ: Մեծ

²⁵ Մելիքսեթ-բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, (Ե-ԺԲ դդ.), Երևան, 1934, էջ 137–138, 204–205: Տրապիզոնում ապրող հայությունը գերազանցապես քաղկեդոնական դավանանքի հետևորդներ էին: Այնտեղ գոյություն ուներ մետրոպոլիտություն, որի մեջ մտնում էին հայկական թեմեր, որոնք ենթակա էին բյուզանդական եկեղեցուն (Арутюнова-Фиданян В., К. вопросу о существовании Халкидонитской церкви в Армении. Вестник ПСТГУ, III, Филология, вып. 4 (22), 2010, сс. 11–13):

²⁶ Խաչիկյան Լ., Հակոբ Սանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, աշխատություններ, հ. Ա, Երևան, 2012, էջ 189: Մատթեոս Ուռհայեցի, էջ 49: Սմբատ սպարապետ, էջ 46: Հիշյալ իրադարձությունների վերաբերյալ Ուռհայեցու սկզբնաղբյուրը Հակոբ Սանահնեցու ամբողջությամբ չպահպանված երկն է:

²⁷ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 10, Բյուզանդական աղբյուրներ, հ. Գ, Հովհաննես Սկիլիցես, խմբ. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1979, էջ 146, (այսուհետ՝ Հովհաննես Սկիլիցես): Грен А., Династия Багратидов в Армении. Журнал Министерства народного просвещения, ССХС, СПб, 1893, N 11, с. 120:

²⁸ Ալիշան Ղ., Յուշիկը հայրենեաց, էջ 107:

նվերներով ու ընծաներով Տրապիզոն ուղևորված հայոց եկեղեցապետը տեղ է հասնում 1021 թ. դեկտեմբերի վերջին: Մպասվում էր, որ նա կհանդիպի կայսրին 1022 թ. հունվարի 6-ին՝ «յաւուրս Աստուածայայտնութեան մեծի տօնին»:

Տոնական արարողությանը Պետրոսը ներկայանում է հետևողների պատկառելի շքախմբով, որոնց թվում կային 12 եպիսկոպոս, 70 արեղա և քահանա «և երկու բանիբուն վարդապետս, զբազմիմաստն զՅովսէփ շընծուցն, և զբաջն և զանյաղթն զԿոզեռն Յովհաննէս»: Նրան ուղեկցում էին նաև երեք հարյուր հեծյալ թիկնապահներ՝ «ի փառաւորացն»²⁹: Կայսրը «ընկալաւ զնոսա մեծաւ պատուով»³⁰ և մի կողմ դնելով իր «կրօնամոլ բժախնդրութիւնները» ու շրջանցելով ծիսադավանական տարբերությունները, ջրօրհնէքի արարողություն կատարելու պատիվը ընձեռեց Հայոց կաթողիկոսին: Նա կարգադրեց «հայրապետին Պետրոսի արհնել զջուրն ըստ մերոյ կանոնիս, և Հռոմոնց եպիսկոպոսացն որ անդ դիպեցան՝ ըստ իւրեանց կանոնին»³¹: Ծիսահանդեսը նախատեսված էր ճորոխի գետի վրա, որտեղ Հայոց կաթողիկոսին և հոգևորականությանը կանգնեցրին «բարձր քան զառաջնորդսն Յունաց»³², այսինքն՝ գետի վերևի մասում, իսկ հույների տեղը գետաբերանի հատվածում էր: Միաբնակներին նման պատվի արժանացնելը կայսրության կողմից յուրատեսակ ուշադրության և հանդուրժամտության նշան էր դավանական այլ ուղղության ներկայացուցիչների նկատմամբ: Հայոց եկեղեցուն ցույց տրված առանձին պատիվ էր ոչ միայն կայսեր անձամբ ներկայությունը «հերետիկոս» հայերի արարողությանը, այլև այն, որ Պետրոս կաթողիկոսին գետակի հո-

²⁹ Ալիշան Ղ., Յուշիկք հայրենեաց, էջ 109: Խաչիկյան Լ., նշվ. աշխ., էջ 190:

³⁰ Մատթեոս Ուռհայեցի, էջ 50:

³¹ Արիստակես Լաստիվերցի, էջ 535:

³² Սմբատ սպարապետ, էջ 47: Մատթեոս Ուռհայեցի, էջ 50:

սանքի վրա ավելի բարձրադիր տեղ էին հատկացրել, մինչդեռ հույներն իրենց ծեսը կատարում էին ստորին մասում: Հայերի և հույների միջև գոյություն ունեցող կրոնական կատաղի անհանդուրժողականության մթնոլորտում նշանակություն ուներ ամեն մի մանրուք: Ուշադրության այդ ցույցը ուներ իր բացատրությունը. կայսեր կրոնական հանդուրժողականությունը³³ դիվանագիտական ժեստ էր, որով արտահայտում էր իր գոհունակությունը հայոց հովվապետից: Մինչդեռ հույն հոգևորականությունը գետի ստորին հոսանքն էր ընտրել, «զի թերակատար համարեին զօրհնութիւնն Հայոց, զի ինքեանք ի ներքոյ կալով՝ զօրհնեալն ի հայոց, վերստին օրհնեսցեն», -մեկնաբանում է Գանձակեցին³⁴: Մ. Օրմանյանի բացատրությամբ՝ այս հարցում նշանակություն է ունեցել նաև ծիսակատարությունն իրականացնող անձի կարգավիճակը: Ըստ այդմ՝ հայերի կողմից արարողությունը կատարում էր եկեղեցական հիերարխիայի ամենաբարձր հոգևորականը՝ Հայոց կաթողիկոսը, իսկ հույների գլխավոր պաշտոնյան մետրոպոլիտ էր³⁵:

Յուրատեսակ «մրցության» ասպարեզ էր բացված երկու դարավոր հակամարտ դավանությունների միջև և, բնականաբար, յուրաքանչյուր կողմը հրաշքի միջոցով պետք է ապացուցեր իր գերազանցությունը սրբության և ուղղափառության ասպարեզում: Լաստիվերցին, որը իր պատմած դեպքերի ժամանակակիցն է, բայց ներկա չի եղել Տրապիզոնում «խաղարկվող սցենարին», լսել է, որ երբ կաթողիկոսը «հեղուվ... զտէրունական իւղն ի ջուրսն, ցնցուղս լուսոյ ճառագայթից յանկարծակի ծագեսց ի ջուրցն, զոր տեսին առ

³³ Bartikyan H., The Religious Diplomacy of Byzantium in Armenia during the Tenth and Eleventh Centuries. Աճեմյան մատենաշար, հ. Բ, Երևան, 2002, էջ 919:

³⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիր. Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 94, (այսուհետ՝ Կիրակոս Գանձակեցի):

³⁵ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1404:

հասարակ ամենեքեան, և փառաւորեցին զԱստուած, և բարձրացաւ եղջիւր հաւատոյս մերոյ»³⁶: Կատարված հրաշքը Վարդանն այսպէս է նկարագրում. «Եղև հրաշալի նշան, լոյս փայլատակեալ ի յաջոյ հայրապետին եւ յօժմանէ սուրբ իւղոյն ի հիացումն տեսողացն, եւ յոյժ գովեցաւ հավատն Հայոց»³⁷: Ուռհայեցիին գունագարդում է կատարվածը և մեծացնում հրաշքի ուժը. «իբրև արկանէր զմիւռն սուրբ ձիթոյն ի ջուրն և հարկանէր սուրբ Նշանան զջուրն, հուր սաստկապէս ցոլացեալ երեւէր ի վերայ ջրոյն և կապեցաւ գետն առ վայր մի և ոչ շարժէր. և տեսեալ թագաւորին և զօրացն զարհուրեցան և խոնարհեալ թագաւորն՝ արկանէր զօրհնեալ ջուրն ի վերայ գլխոյն աջովն Տէր Պետրոսի»³⁸: Հրաշագործությունը բարձրացնում է հայոց հավատի հեղինակությունը: Հրաշագործի փառապասկ էր հյուսվում Պետրոս հայրապետի ճակատին ճիշտ այն պահին, երբ զուգահեռաբար ընթանում էր Անիի սակարկությունն ու վաճառքը: Լաստիվերցու նկարագրած այս հրաշապատումը բավական էր, ինչպէս նկատում է Լեոն, որ հետագա ժամանակներում առասպելը նոր գունավորումներ ստանար և ուռճացվեր, որպէսզի ավելի զարմանահրաշ փաստերով վավերացվեր հայոց հավատի գերազանցությունը³⁹: Հետագա զրոյցների մեջ դուրս է գալիս այն

³⁶ Արիստակէս Լաստիվերցի, էջ 535:

³⁷ Վարդան վարդապետ, էջ 93: Գիրք որ կոչի Յայսամուրք, մեհեկի ԻԳ, մարտի 2, տպ. Գր. Մարզվանեցու, Կ. Պոլիս, 1730:

³⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 50: Սամուէլ Անեցի և շարունակողներ, աշխատասիր. Կ. Մաթևոսյանի, Երևան, 2014, էջ 184: Կիրակոս Գանձակեցի, էջ 94: Սմբատ սպարապետ, էջ 47: Ե3701 ձեռագիրը Հայոց ՇԱ. 1052 թ. ներքո ունի այս տեքստը. «Տէր Պետրոս կաթողիկոսն երբ Կենաց փայտն ի Պոնտոս, որ է Տրապիզոն, ի ժամանակս Վասիլ կայսերն Յունաց եւ արար զջուրօրհնէքն եւ գետն արգելաւ յետս ժամ մի, եւ անտի դարձաւ ի Կոստանդնուպօլիս եւ եկաց անդ ամս Դ (4)» (Մաթևոսյան Կ., Սամուէլ Անեցի և շարունակողներ, ծանոթ. 226):

³⁹ Լեո, նշվ. աշխ., էջ 653: Հակոբ Մանահնեցու երկում պահպանվել է մի ավանդազրոյց, ըստ որի այդ հրաշագործությունից հետո Վասիլ Բ-ն «երկմտեալ ի հաւատս

ահեղ պատկերը, որ գետի ընթացքը կանգ է առել և ջուրը հոսել է դեպի ետ: Այս հրաշագործ սրբության համար պատմությունը Պետրոսին վարձատրել է «Գետադարձ» տիտղոսով⁴⁰: Այս անվանումը նրան տվել են համեմատաբար ուշ շրջանի հեղինակները, քանզի նույն ժամանակ ապրած Լաստիվերցին նման անուն չի հիշատակում:

«Գետադարձության հրաշքով» պսակված սրբազնագործությունը դրամատիկ եզրափակում է ստանում, երբ նույն հանդիսության ժամանակ «վեհափառ դեսպանը» Վասիլ Բ-ին է հանձնում Հովհաննես-Սմբատի գիրը, որում ասվում էր. «Յետ իմոյ (Հովհաննես-Սմբատի-Վ. Ա.) վախճանին՝ զիմ քաղաքս և գերկիրս նմա տաց ի ժառանգութիւն»⁴¹: Մատթեոս Ուռհայեցին գրում է. «Յովհաննէս ի կենդանութեան իւրում զիր էր տուեալ Հոռոմոց՝ եթէ զկնի մահուան իմոյ Անի Հոռոմոց լիցի»⁴²: Վարդան վարդապետն էլ գրում է, թե թագավորը «պատրիարքին պատուիրէ տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ ի Հոռոմս, որպէս եւ կիրապաղատն Դավիթ»⁴³:

Անիի թագավորության կորստյան նախերգանքը այլ կերպ են ներկայացնում բյուզանդական աղբյուրները: XI դարի բյուզանդացի ժամանակագիր Հովհաննես Սկիլիցեսը հայտնում է, որ Հովհաննես-Սմբատն անձամբ մեկնում է կայսեր մոտ, հպատակություն է հայտնում և «ընձեռում բանալիները»: Կայսրը գնահատում

Հոռոմոց» և ծածուկ Սև լեռան Պաղակիձակ վանքում մկրտվում է հայոց ծեսով (Խաչիկյան Լ., նշվ. աշխ., էջ 191):

⁴⁰ XVIII դարի ժամանակագիր Բաղդասար Դպիրի երկում նա անվանված է «Պետրոս Գետարգել» (Մանր ժամանակագրություններ, XIII-XVIII դդ., հ. Ա, կազմեց Վ. Հակոբյան, Երևան, 1951, էջ 342): «Գետարգել» կոչվել է նրա սքանչելագործ խաչը (Ալիշան Ղ., Հայապատում, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1901, էջ 329):

⁴¹ Արիստակէս Լաստիվերցի, էջ 535:

⁴² Մատթեոս Ուռհայեցի, էջ 84:

⁴³ Վարդան վարդապետ, էջ 93:

է նրա խելամտությունը, շնորհում մագիստրոսի պատվաստիճան, և նշանակում Անիի և Մեծ Հայքի ցմահ կառավարիչ: Հովհաննես-Սմբատից կայսրը պահանջում է գրավոր փաստաթուղթ, որով նրա մահից հետո Անի-Շիրակի թագավորությունը պետք է անցնի Բյուզանդիային⁴⁴: Բյուզանդացի հեղինակի այս պատմությունը Անիի գավթման իրավական հիմնավորումն էր⁴⁵: «Կայսեր պահանջը պետք է բավարարվեր, քանի որ «այն ժամանակ Բյուզանդիային ոչ մի հարևան պետություն չէր կարող ընդդիմակայել», - գրում է Հ. Բարթիկյանը, -Հովհաննես-Սմբատն այդ ձևով փորձում էր երկարաձգել իր երկրի անկախությունը՝ հույս ունենալով, որ Վասիլ Բ-ին հաջորդողը Հայաստանի նկատմամբ այլ քաղաքականություն կորդեգրեր»⁴⁶:

Հայոց թագավորության գլխին Դամոկլյան սուր դարձած տրպաչիզոնյան դաշնագրի ծնունդը Արիստակես վարդապետը բացատրում է հայոց թագավորի անզավակությանը. «Քանզի իւր ոչ գոյր որդի թագակալ թագաւորութեանն»⁴⁷: Նրա միակ որդին վախճանվել էր, ուստի թագավորն իր «հոժար» կամքով ժառանգ է կարգում կայսրին: Վարդան Արևելցին կտակի շարժառիթ է համարում այն, որ Հովհաննես-Սմբատին խիստ նեղում էր Վրաց թագավորը: Հանձնելով Անին կայսրին՝ նա ստանում էր անվտանգության երաշխիքներ, կայսրը «պահէ զնա ի նեղչաց իւրոց»⁴⁸, որով հասկացվում էին հատկապես արտաքին թշնամիները: Հովհաննես

⁴⁴ Հովհաննես Սկիլիցես, էջ 146–147:

⁴⁵ Բյուզանդական կայսրությունը կարևոր նշանակություն էր տալիս որևէ տարածքի բռնագավթման իրավական հիմքերի առկայությանը: Նրանք նույնիսկ պատրաստ էին սպասել տարիներ, մինչ այդ իրավական հիմքը կմտներ ուժի մեջ (Юзбашян К., Армянские государства..., с. 173):

⁴⁶ Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ., հ. Ա, էջ 671:

⁴⁷ Արիստակես Լաստիվերցի, էջ 535:

⁴⁸ Վարդան վարդապետ, էջ 93:

Սկիլիցեսի կարծիքով՝ կտակի իսկական պատճառը Հովհաննես-Սմբատի երկյուղն էր Վասիլ Բ-ի վրեժխնդրությունից⁴⁹: Հ. Մանանդյանը հատուկ քննության նյութ է դարձրել Հովհաննես-Սմբատի չարաբաստիկ կտակին վերաբերող տարբեր տեղեկությունները և եզրակացրել, որ ամենահավաստին Սկիլիցեսի հաղորդածն է⁵⁰: Ուշագրավ է, որ ժամանակակիցները ճիշտ են հասկացել եղելության էությունը, և դրա լավագույն արտահայտությունը հայրենասեր ողբերգուհի՝ տրապիզոնյան իրադարձությունների շարադրանքը եզրափակող «Անդ եղեւ Հայոց կորստեան գիր և նամակ»⁵¹ ձևակերպումն է:

Անիից հրաժարվելու դիմաց կայսրը ապահովում է Հովհաննես-Սմբատի նյութական բարեկեցությունը և կայսերական գանձարանից «ցկեանս» դրամական նպաստ նշանակում. «Առնոյր տուրս եւ իշխանութիւնս ի Հռոմոնց զամս հնգետասան»⁵²: Անի-Շիրակի թագավորության յուրացման՝ իր համար հաջող ձեռնարկում կայսրը վարձահատույց է լինում նաև կաթողիկոսին, որը «մեծարեալ պատուի ի նմանէ (Վասիլ Բ կայսրից՝ Վ. Ա.)», և քանի որ Պետրոսը «յոյժ գանձուց սիրաւ էր», բյուզանդական արքունիքը նրան տարեկան նպաստ է նշանակում⁵³:

Կորստյան գիր ստորագրողը, զարմանում է Լեոն, դուրս էր գալիս Տրապիզոնից ոչ թե արատի բիծը ճակատին, այլ՝ արդարության լուսապակով զարդարված⁵⁴: Սակայն այս դեպքերից հետո հայոց քահանայապետն Անի չի վերադառնում, որի շարժառիթներ-

⁴⁹ Հովհաննես Սկիլիցես, էջ 146:

⁵⁰ Մանանդյան Հ., Երկեր, հ. Գ, Երևան, 1977, էջ 22-24: Юзбашян К., Скилица о захвате Анийского царства в 1045 г. Византийский временник, РАН, т. 40 (65), 1979, с. 76–91:

⁵¹ Արիստակես Լաստիվերցի, էջ 535:

⁵² Մատթեոս Ուռհայեցի, էջ 84:

⁵³ Մատթեոս Ուռհայեցի, էջ 106: Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1403:

⁵⁴ Լեո, նշվ. աշխ., էջ 653:

րի մասին աղբյուրները բացատրություն չեն տալիս: Ակնհայտ է, որ նա գիտակցում էր իր արարքի նշանակությունը և հասկանում էր, որ չի կարող վերադառնալ մի տեղ, որի կորստյան դատավճռին ինքը մասնակից է եղել: Ուստի Անի վերադառնալու փոխարեն ուղարկում է իր «գործած հրաշքի» լուրը, որը face-saving-ի անհույս փորձ էր: Գարնանը նա կայսեր ցուցումով Տրապիզոնից տեղափոխվում է Սեբաստիա՝ Վասպուրականի վերջին արքա Սենեքերիմի մոտ: Գանձակեցու ուշագրավ հաղորդման համաձայն՝ կայսրն առաջարկել է Պետրոսին «դնել աթոռ իւր ի Սեբաստիա և անտի հովուել զհօտ իւր»⁵⁵: Այս վկայությունը աներկբա ապացույցն է Բյուզանդիայի այն մտադրության, ըստ որի հույները ցանկանում էին Հայաստանից հեռացնել և լուծարել Հայոց կաթողիկոսությունը:

ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՍՍԲԱՏԻ Ու ՊԵՏՐՈՍ ԳԵՏԱԴԱՐՁԻ ՄԻՋԵՎ

1026 թ. Սենեքերիմ Արծրունու և Վասիլ Բ-ի մահից հետո Պետրոսը Սեբաստիայից վերադարձավ Անի: Տրապիզոնի դաշնագրի առաջ բերած զգացմունքային տրամադրություններն այդ ժամանակ արդեն մարել էին, և ժողովրդի մեծ մասը չէր էլ հիշում դրա մասին: Այնուամենայնիվ, տրապիզոնյան դեպքերից հետո արքայի և կաթողիկոսի հարաբերություններն ընդունեցին լարված բնույթ: Եթե նախկինում թագավորի գլխավոր զինակիցը Պետրոս կաթողիկոսն էր, ապա հիշյալ դեպքերից հետո նրա հենարանն են դառնում արքունիքում բյուզանդամետ հոսանքի երկու ազդեցիկ պարագլուխները՝ «մեծապատիւ» Վեստ Սարգիսը և Գրիգոր Պահլավունի Մագիստրոսը: Լեոյի կարծիքով, լարված հարաբերությունների

⁵⁵ Կիրակոս Գանձակեցի, էջ 95:

պատճառն այն էր, որ թագավորը Պետրոս կաթողիկոսին չէր արտոնել այնպիսի լիազորություններ, որոնք նա գործադրել էր Տրապիզոնում⁵⁶:

Սեբաստիայում Պետրոս կաթողիկոսի անցկացրած ժամանակաշրջանի մասին (1022–1026 թթ.) պատմական աղբյուրները լռում են: Սակայն միամտություն կլինի կարծել, թե թագավորի և կաթողիկոսի միջև գժտության պատճառը վերջինիս երկարատև բացակայությունն էր: Հակասությունների իրական պատճառը աշխարհիկ և հոգևոր ինքնակալների անզիջում պայքարն էր երկրում սեփական ազդեցության ուժեղացման համար: Վայելելով Բյուզանդիայի քաղաքական և հոգևոր վերնախավի հովանավորությունը⁵⁷ և ծանրակշիռ դեր ունենալով երկրի եկեղեցական-քաղաքական կյանքում՝ Պետրոս կաթողիկոսը բախվում էր Հովհաննես-Սմբատ թագավորի և իշխանների հակազդեցությանը: Հայոց վեհապետի հոգևոր-քաղաքական կշիռն ուղիղ համեմատական էր եկեղեցապետության վիթխարի տնտեսական և նյութական հարստությանը, որի մեջ մտնում էին ընդարձակ կալվածքներ, եկեղեցիներից և վանքերից ստացվող հասույթներ, զանազան նվիրատվություններ և անթիվ զանձեր: Սերելով ազնվական տոհմից՝ Պետրոսն Արշարունյաց գավառում ժառանգել էր բազմաթիվ հայրենական կալվածքներ: Ուռհայեցին հայտնում է, որ «յորժամ էր Տէր Պետրոս յաթոռ հայրապետութեանն և ի Հայաստան աշխարհին, ունէր կազմութիւն հայրենեաց՝ տուեալ ի թագաւորացն Հայոց՝ հինգ հարիւր գեղ անուանի և մեծանիստ և շահաւէտ ընտիր ընտիր, նոյնպէս և

⁵⁶ Լեո, նշվ. աշխ., էջ 654: Զամինեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, տպ. Ս. Աւագեանի, Նոր-Նախիջևան, 1908, էջ 176: Կ. Յուզբաշյանի կարծիքով նրանց հարաբերությունները լարվել էին կտակի առիթով, որովհետև Հովհաննես-Սմբատը Անին կտակել է Բյուզանդիային Պետրոսի ազդեցությամբ (Юзбашян К., Армянские государства..., с. 162):

⁵⁷ Չամչյան Ս., նշվ. աշխ., էջ 945:

Եպիսկոպոսս հինգ հարիւր փառաւոր և զաւառատեսուչս ի վերայ եօթն հարիւր թեմի հանապազ»⁵⁸: Հոգևոր կալվածատեր Պետրոսի սեփականությունն էր Աշնակ գյուղը, որի այգին՝ «որմով եւ ծառովք պտղաբերովք եւ անպտղաւք եւ խոտագետնովք և Գ /3/ աւր ջուր ազատ ի խալաէ և ի գեղջէ յամենայն հասուց»⁵⁹ նա նվիրել էր Աբլղարիի Պահլավունուն: Վերջինս էլ այդ այգին նվիրել է Անիի Ս. Փրկչի եկեղեցուն, որն ինքն էր կառուցել: Աբլղարիբը 1031 թ. Ս. Փրկչի եկեղեցուն նվիրել է նաև գանձագին այգի, հողեր, ձիթանոց և երեք կուղպակ, իսկ առաքելոց եկեղեցուն՝ «ԿԿառնուտի արտն»: Նույն տոհմից Գրիգոր Մագիստրոսը, որին պատկանում էր Բջնին իր բերդերով, Բջնիի եկեղեցուն և Հավուց Թառի վանքին նվիրել է ընդարձակ հողեր⁶⁰: Մխիթար Այրիվանեցին հիշում է, որ 1011 թ. Պետրոսը «շինեաց զՍուրմարի և զԾառաքար»⁶¹ վանքերը:

⁵⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 153–154: Ընդունելով գյուղերի թվաքանակի չափազանցվածության վարկածը՝ պետք է փաստել, որ նա «հայրենեաց» ժառանգական մեծաթիվ կալվածքների սեփականատեր էր: Ղ. Ալիշանը հինգ հարյուրից մինչև յոթ հարյուր եպիսկոպոսի գոյության կապակցությամբ իրավացիորեն տարակուսում է, թե պահպանված եկեղեցական ժողովների փաստաթղթերում ստորագրող եպիսկոպոսների թիվը չի անցնում 40–50-ը (Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1873, էջ 366):

⁵⁹ Դիվան հայ վիմագրության, պրակ Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1966, էջ 48:

⁶⁰ Դիվան հայ վիմագրության, հտ. Ա, էջ 14, 17: Ալիշան Ղ., Շիրակ, էջ 84:

⁶¹ Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն հայոց, տպ. Լազարեան ճեմարանի, Մոսկվա, 1860, էջ 58: Հարկ է նկատել, որ վանական կալվածատիրության աննախադեպ հարստացման երևույթը բնորոշ էր նաև Բյուզանդական եկեղեցուն: Աղբյուրները վկայում են X–XI դարերում բյուզանդական վանականության խոշոր նվիրատվությունների և նոր հողերի յուրացման և ազահության մասին: Նրանք հաճախ աչքի չէին ընկնում բարքերի սրբությամբ ու բարեգթությամբ՝ գերադասելով աշխարհիկ կենսակերպը: Այդ պատճառով նման «սևագետնները» հարուցում էին իշխանությունների և ժողովրդի դժգոհությունը (Скабаланович Н., Византийское Государство и церковь в XI веке. Типография Ф. Елеонского, СПб, 1884, сс. 442–448. Շառլ Դիլ, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, առաջ. Հ. Բարթիկյանի, տպ. Սարգիս Խաչենց փրիթինֆո, Եր., 2005, էջ 65–66:

Անիի կաթողիկոսարանն ուներ մեծաթիվ միաբանություն և պաշտոնեություն: Տեղեկություններ են պահպանվել Պետրոսի գլխավորած վեհարանի շքեղության և բազմամարդության մասին, ինչը հոգևոր բյուրոկրատիայի աննախադեպ ուռճացման օրինակ է: Կաթողիկոսարանի տասներկու եպիսկոպոսներից բացի, որոնք ավանդաբար եղել են հայրապետների «գործակիցք և խորհրդակիցք»⁶², կային նաև «չորս վարդապետ...և վաթսուն երեց ի կրօնաւորաց՝ և յաշխարհականաց՝ հինգ հարիւր»: Եղեսացի ժամանակագիրը պատմում է կաթողիկոսարանի և առանձին եկեղեցիների անհամար գանձերի մասին. «Նաև զարդարանք եկեղեցեացն և տանն հայրապետութեանն բազում և անհամար և հրաշալի մեծութեամբ լցեալ, որ առաջին թագաւորացն տուեալ հաստատութեամբ առաջին հայրապետացն»⁶³: Հարյուրավոր կղերականները, որոնց մի մասը հասարակության դժգոհությունը հարուցող ապաշնորհ և ապիկար անձնավորություններ էին, ապրում էին ճոխության մեջ, որն ապահովվում էր իրենց կալվածքներից ստացվող հսկայական հասույթների հաշվին: Ձևավորվել էր նպաստավոր միջավայր չարաշահումների համար, այդ պատճառով Պետրոսին մեղադրում էին, որ «իր թագաւորանման հայրապետանոցը ենթարկուած էր պալատական գեղծումներու»⁶⁴: Նրա հարստությունն այնքան աչքի զարնող էր, որ դրան տիրանալու անթաքույց ցանկություն ուներ անգամ բյուզանդական արքունիքը: Բագրատունյաց թագավորության վերջին շրջանում հայրապետանոցն այնպիսի շուք ու փառք էր ստացել, որ «չէր նուաստ աթոռ հայրապետութեանն քան զթագաւորութեանն»⁶⁵:

⁶² Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, ԵՊՀ հրատ., Եր., 1987, էջ 403–405: Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 284–285:

⁶³ Մատթեոս Ուռհայեցի, էջ 154:

⁶⁴ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1412:

⁶⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 154:

Բազմամարդ հայրապետանոցը և կաթողիկոսի տեսչության ներքո գտնվող հարյուրավոր թեմակալ-առաջնորդները իրենց կոչմանը արժանի չէին, որովհետև տարված էին ընչաքաղցությամբ, արծաթասիրությամբ, իսկ հարստության կուտակման ձգտումը հասնում էր մոլուցքի: Խոսելով 1049թ. Արծն քաղաքի ավերման ու կողոպուտի մասին՝ Ուռհայեցի ասում է, որ ինքը «բազում անգամ լուեալ մեր ի բազմաց յաղագս քորեպիսկոպոսին», որի անունն էր Դավթուկ, ամեն առավոտ նրա տնից «ուլթ հարիւր վեցկի եզանց ելանէին», իսկ նրա գանձերն այնքան շատ էին, որ «քառասուն ուղտ բարձան»⁶⁶: Գյուղական եպիսկոպոսի կալվածքներն այնքան մեծ էին, որոնք վարելու համար նրա տնից ամեն օր դուրս էր գալիս երեք լուծ եզներով աշխատող 800 արոր: Հարստություններն ու գանձերը ստացվում էին ինչպես նրա ընդարձակ կալվածքներից, այնպես էլ այն ուլթ հարյուր եկեղեցիների տուրքերից, որոնք եպիսկոպոսական հարկ էին վճարում⁶⁷: Կարելի է եզրակացնել, որ թեմակալների մեջ Դավթուկի նման ազահ կղերականներ քիչ չեն եղել:

Անիի շքեղ հայրապետանոցի բարոյական պատկերը ու հոգևորականության շրջանում տիրող բարքերը ամբողջությամբ արտացոլված են արևի խավարման մասին պատմող մի ավանդության մեջ, որն աղերսվում է ժամանակի նշանավոր վարդապետ

⁶⁶ Մատթեոս Ուռհայեցի, էջ 103: Վեցկին այն գուրսանն է, որին լծվում է վեց եզ: Ինչպես երևում է, հարստացման մոլուցքը պակաս ուժեղ չէր նաև հույն հոգևորականության մոտ. Դավթուկից ետ չէր մնում նրա ժամանակակից Կեսարիայի հույն մետրոպոլիտ Մարկոսը, որն ուներ ոսկյա և արծաթյա անհամար գանձեր, վեց հազար ոչխար, քառասուն գունեշի լուծ, քսան եզան լուծ (Մատթեոս Ուռհայեցի, էջ 182):

⁶⁷ Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, Երևան, 1976, էջ 178: Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները միջնադարյան հայաստանում IX– XIII դարերում, հ. Բ, Երևան, 1964, էջ 123:

Հովհաննես Կոզեռնի անվան հետ⁶⁸: 1033 թ. օգստոսի 10-ին Քրիստոսի խաչելության 1000-ամյակին տեղի է ունենում արևի խավարում, որի ընթացքում «մեծաւ շարժամաբ դողաց ամենայն երկիր»: Բնության տարերքի ազդեցությունը շատ մեծ էր ժամանակակիցների վրա: Հովհաննես-Սմբատն ու Պետրոս կաթողիկոսը այդ երևույթը համարելով չարագուշակ նշան, Գրիգոր Մագիստրոսին, Վեստ Սարգսին և «յագատաց տանն Հայոց եւ այլք ի քահանայիցն» ուղարկում են Սևանավանք՝ «առաքելական և մարգարեական գրոց» քաջագիտակ Հովհաննես Կոզեռնից բացատրություններ ստանալու: Վերջինս տարերքը մեկնում է, որպես աստվածային պատիժ՝ ի պատասխան քրիստոնեական պատվիրաններից շեղման: Գիտնական վարդապետը կանխատեսում է մոտալուտ բազում դժբախտություններ, որոնք հետևանք են բարքերի համընդհանուր անկման և սրբությունների ոտնահարման: Կոզեռնը եկեղեցական դասին, մասնավորապես նրա առաջնորդներին մեղադրում է նյութապաշտության մեջ՝ կանխագուշակելով եկեղեցու կարգերի խաթարում, ճշմարիտ քարոզչության արհամարիում, աղանդների բազմացում⁶⁹:

Հովհաննես Կոզեռնի գուշակությունները և եկեղեցու առաջնորդի թագավորավայել հայրապետանոցի ու առասպելական հարստությունների մասին լուրերը վարկաբեկում էին Պետրոս Գետադարձին: Այս ամենը նրա կացությունն Անիում դարձնում էր անհարմարավետ, և նա ստիպված էր հեռանալ: Գանձակեցու մեկ-

⁶⁸ Ըստ Մառի՝ արևի խավարման ավանդություն-տեսիլքը ապոկրիֆ է, որը վերաբերում է Անիի պատմությանը: Այն ստեղծվել է XII դ., բայց բովանդակությամբ վերաբերում է XI դ. (Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, Երևան, 1988, էջ 73: Мар Н., Сказание о католосе Петре и ученом Иоанне Козерне. СПб, 1895, с. 9–19):

⁶⁹ Մատթեոս Ուռուխյեցի, էջ 52–54: Սմբատ սպարապետ, էջ 53: Աճառյանի կարծիքով Կոզեռնի տեսիլք գրվել է 1033 թ. (Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Պետական համալսարանի հրատ., Եր., 1946, էջ 566):

նաբանությամբ՝ «թագաւորն Յովհաննէս գծտութեամբ լեալ ընդ հայրապետին Պետրոսի»⁷⁰: Թագավորը «քինով» էր վարվում պատրիարքի հետ⁷¹: Ուստի «զայրացեալ տէր Պետրոս կաթողիկոսն յԱնի ի Յովանէս թագաւորէն եւ յիշխանացն»⁷² և խռովության պատճառով, որ «յարուցեալ յաթոռոյ իւրմէ ծածկաբար և գնաց ի Վասպուրական»⁷³:

Աղբյուրները նրա հեռանալու համոզիչ շարժառիթներ չեն մատնանշում: Յուրայինները Պետրոսի հեռանալու պատճառ էին համարում թագավորի, նախարարների «և ազատագուևոք զօրքն Հայոց ոչ լինէին ունկնդիր աստուածային պատուիրանացն»⁷⁴: Սակայն բազմաթիվ փաստերը, մասնավորաբար նաև Կոզեռնի խոսքերը վկայում են, որ կաթողիկոսն ինքն անգամ աստվածային պատվիրանների ջերմեռանդ հետևող չէր և ավելի շատ աշխարհիկ և քաղաքական գործերով էր զբաղված: Եթե իրականում աստվածային պատվիրանների գանցառումն էր նրա մեկնելու շարժառիթը, ապա նա կհեռանար ոչ թե գաղտնի և ծածուկ եղանակով, այլ բացահայտ հանդիմանությամբ ու բողոքով (*démarche*): Եվ այդ դեպքում կառանձնանար մերձակա վանքում, մինչդեռ նա թողնում է Անիի թագավորության սահմանները և հեռանում Ձորովանք, որը գտնվում էր բյուզանդացիների հոգևոր ազդեցության տիրույթում և ապավինում է Վասպուրականի հույն կուսակալի պաշտպանությանը: Պետրոսն այնտեղ «եկաց Դ /4/ ամ ի Ձորավանս Սալնապատի գոր շինեալ էր տէր Ներսէսի»⁷⁵:

⁷⁰ Գիրակոս Գանձակեցի, էջ 89–90:

⁷¹ Վարդան վարդապետ, էջ 98:

⁷² Սամուել Անեցի, էջ 185:

⁷³ Մատթեոս Ուռհայեցի, էջ 75:

⁷⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 75: Грен А., Указ. соч., 1893, N 11, с. 121:

⁷⁵ Սամուել Անեցի, էջ 185:

Գետադարձին, անշուշտ, հայտնի էին իրենից ավելի քան կես դար առաջ տեղի ունեցած իրադարձությունները, երբ Վահան Ա Սյունեցի կաթողիկոսը (965–970 թթ.) նույնպես բռնել էր այդ ճանապարհը և անփառունակ վախճանի էր «արժանացել»: Սակայն նրանց միջև կար մի էական տարբերություն. Պետրոսին դժվար է կասկածել դեպի հունադավանություն հակվելու մեջ, «վասնզի երբեք քաղկեդոնականության կասկածի ներքեւ չինկաւ իր ընթացքը, այլ Յոյներուն աչքին քաղաքական օգուտի եւ տիրապետութեան խոստումները շողացնելով, հեռու կը պահէր կրօնական պահանջումներ ընելէ», - գրում է Մ. Օրմանյանը⁷⁶: Բյուզանդական իշխանությունների հետ նրա գործակցությունը չէր կատարվում Հայոց եկեղեցու ինքնուրույնության սահմանափակման հաշվին: Գործողությունների տրամաբանությունը հուշում է, որ հայրապետի հեռանալը Անիից ավելի շուտ թելադրված էր քաղաքական շարժառիթներից:

Վաթողիկոսի աթոռանկությունը

Հայրապետական աթոռը լքելով՝ Պետրոսն «անչափելի տրսմութիւն»⁷⁷ պատճառեց իր հոտին: Հովհաննես-Սմբատն ու նախարարները տարբեր միջոցների են դիմում նրան Անի վերադարձնելու համար. «Թագաւորն Յովհաննէս և ամենայն նախարարք Հայոց գրեցին նենգութեամբ թուղթ առ Տէր Պետրոս՝ լինել ունկնդիր ամենայն հրամանաց նորա և ականջալուր լինել ամենայն լուսաւոր վարդապետութեան նորա», - պատմում է Ուռհայե-

⁷⁶ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1416: Այդ մասին է վկայում այն փաստը, որ Պետրոս Գետադարձը պատվիրել է XI դարի նշանավոր մատենագիր Անանիա Սանահնեցուն գրել հակաքաղկեդոնական բնույթի երկասիրություն (Քյոսեյան Հ., Հայ եկեղեցական մատենագրություն, էջ 349):

⁷⁷ Մատթեոս Ուռհայեցի, էջ 75:

ցին⁷⁸: Հայոց արքունիքը հավանաբար զգուշանում էր Բյուզանդիայի ազդեցության աճից և գործողություններից: Այդ պատճառով դիմում են Վասպուրականի Բյուզանդական կուսակալներին՝ խնդրելով միջնորդել և համոզել Պետրոսին վերադառնալ Անի: Անշուշտ, կաթողիկոսը կռահում էր, թե վերադառնալու դեպքում իրեն ինչ էր սպասվում հակառակորդների կողմից, այդ պատճառով, նա նույնիսկ «աղաչանօք ոչ դարձալ»⁷⁹: Ինչպես ենթադրում է Ս. Օրմանյանը, նրանց նպատակը սուկ Պետրոսին տուն վերադարձնելը չէր, այլ՝ արթոից զրկելը⁸⁰: Նրանք չէին համարձակվի այդպես վարվել այն ժամանակ, երբ նա ազատության մեջ էր, քանի որ այդ դեպքում կարող էր առաջանալ արթոի երկփեղկման իրական վտանգ: Պետրոսը վայելում էր հույների հովանավորությունը, իսկ Հայաստանի մեծ մասն այդ ժամանակ կայսրության տիրապետության տակ էր:

Վերջապես «զամս չորս» անց 1037 թ., ըստ Սամվել Անեցու, հայ իշխանները Պետրոս Գետադարձին Վասպուրականից «խաբանօք յուղարկեալ տարան յԱնի»⁸¹, որտեղ նա թագավորի հրամանով կալանավորվում է և բանտարկվում Բջնիի բերդում⁸²: Վարդանն ասում է, որ կաթողիկոսին մայրաքաղաք «բերման ենթարկելու» հարցում օգնել է Վասպուրականի հույն դուքս-կառավարիչը, որը

⁷⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 75–76:

⁷⁹ Վարդան վարդապետ, էջ 98:

⁸⁰ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1416:

⁸¹ Սամուել Անեցի, էջ 185:

⁸² Ուռհայեցու հաղորդմամբ Պետրոս կաթողիկոսին կալանել են քաղաք մտնելուն պես (Մատթեոս Ուռհայեցի, էջ 76): Կ. Մաթևոսյանը, քննելով 1036 թ. Պետրոս կաթողիկոսի Անիի Ս. Փրկիչ եկեղեցում թողած և Հռոմոսի Ս. Գևորգ եկեղեցուն Հովհաննես-Սմբատի կատարած նվիրատվական արձանագրությունների տեղեկությունները, եզրակացնում է, որ կաթողիկոսը 1036 թ. արդեն Անիում էր: Նրա կարծիքով կաթողիկոսի և թագավորի գծությունը ծագել է 1036 թ. վերջերին (Մաթևոսյան Կ., Անի, եկեղեցական կյանքը..., էջ 324, ծանոթ. 11: Վիմակյան տարեգիր, կազմ. Կ. Կոստանեանց: Տպ. Գիտութեանց ճեմարանի կայսերականի, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 20):

նրան բռնությամբ է վերադարձրել Անի⁸³: Նույն տարվա վերջերին արքայի գումարած ժողովը, որին մասնակցում էին միայն յուրայիններ, աթոռանկ է անում Պետրոսին⁸⁴: Նոր կաթողիկոս է ձեռնադրվում Սանահինի վանքի առաջնորդ Դեոսկորոսը: Կատարվածը անօրինական էր և հակառակ եկեղեցու կանոններին, որովհետև նման վճիռ կարող էր կայացնել միայն ներկայացուցչական կազմ ունեցող եպիսկոպոսական ժողովը. «և ի ձեռնադրութեանն նորա (Դեոսկորոսի՝ Վ. Ա.) ոչ ժողովեցան եպիսկոպոսք և քահանայք և հայրապետք»⁸⁵: Գործող կաթողիկոսին աթոռանկ անելու համար նրա դեմ պետք է ունենային գորավոր մեղադրական փաստարկներ, մինչդեռ նման վկայությունները բացակայում են⁸⁶: Այդ ամենի փոխարեն վճռորոշ նշանակություն ուներ Հովհաննես-Սմբատի հակապետրոսյան դիրքորոշումը: Արքունիքի պահանջով աթոռից հեռացված Պետրոսը բանտարկվում է:

«Այր սուրբ եւ առաքինի»⁸⁷ բնութագրված Սանահինի վանահայր Դեոսկորոսը ընդդիմադիրներին լռեցնելու հարմար թեկնածու էր, որը գնահատվում էր թագավորի կողմից: Կաթողիկոս ընտրվելու Դեոսկորոսի համաձայնությունը մատենագիրները համարում են միամտության հետևանք, թե «կարի յոյժ խաբեալ եղել մեծ հռետորն Դեոսկորոս»⁸⁸: Վերջինիս պաշտոնավարությունը

⁸³ Վարդան վարդապետ, էջ 98:

⁸⁴ Այս իրադարձություններին մոտ նախադեպը Վահան Ա Սյունեցու աթոռագրկումն էր 970 թ. Անիում գումարված եկեղեցական ժողովում: «Թուլամորթ և երկչոտ» ներկայացվող Հովհաննես-Սմբատը բազմիցս խախտել է եկեղեցական ավանդույթը: Նրա առաջին հաջողված փորձը 1019 թ. Սարգիս Սևանցու հրաժարումը և Պետրոսի ընտրությունն էր (Մաթևոսյան Վ., Անիի մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, ՊԲՀ, 2008, N 3, էջ 15):

⁸⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 76:

⁸⁶ Ա. Գրենի կարծիքով՝ Պետրոսին մեղադրում էին թշնամու հետ համագործակցելու մեջ (Грен А., Указ. соч., 1893, N 11, с. 121).

⁸⁷ Վարդան վարդապետ, էջ 98:

⁸⁸ Մատթեոս Ուռհայեցի, էջ 76:

տևում է «գտարի մի և զամիսս երկու»: Նրա թե՛ աթոռակալությունը, թե՛ աթոռագրկությունը, ինչպես Ուռհայեցին է ասում, «Ոչ ըստ Աստուծոյ հրամանացն», այսինքն՝ եկեղեցական կանոններով չէին: Դեռսկորոսի ձեռնադրությունը ոչ ոք չճանաչեց, և նա «կորոյս զայնչափ պատիւն՝ զոր ունէր»: «Ի ձեռնադրութեանն նորա (Դեռսկորոսի՝ Վ. Ա.) ոչ ժողովեցան եպիսկոպոսք և քահանայք և հայրապետք» և «ոչ քարոզեցաւ անուն նորա (Դեռսկորոսի՝ Վ. Ա.) ի մէջ եկեղեցւոյ» մյուս հայրապետների շարքում⁸⁹: Իհարկե, նրա օժման արարողության համար անհրաժեշտ թվով եպիսկոպոսներ գտնվել են, որոնք կատարել են արքունիքի կամքը, ուստի Ուռհայեցու խոսքը վերաբերում է եպիսկոպոսական գավազան կրող հոգևորականների մեծամասնությանը: Դեռսկորոսի կարճատև գահակալության ընթացքում տեղի ունեցան եկեղեցու բարքերի նկատելի անկում, եպիսկոպոսական դասի պատակտում. յուրայինների թիվը մեծացնելու նպատակով նա եպիսկոպոս ձեռնադրեց բազմաթիվ անարժանների, որոնք իրենց «յայտնի յանցանաց» համար բանադրվել էին նախորդ հայրապետների կողմից:

Արքունիքի վերոնշյալ գործողությունները նոր խմորումների տեղիք են տալիս եկեղեցականների շրջանում: Եպիսկոպոսներն ու վարդապետները եկեղեցում հրահրած խռովությունների պատճառով «նզովիւք փակեցին զթագաւորն և զամենայն նախարարսն Հայոց վասն հակառակութեան»: Պետրոսին աթոռագրկելով՝ Հովհաննես-Սմբատը և նրա համախոհ նախարարները սպառնալից արդյունքի չեն հասնում: Ընդհակառակը ներքին հակասություններն ավելի են խորանում և երկրում ստեղծվում է տագնապալի կացություն, որի միակ լուծումը հայրապետական գահին Պետրոսի վերականգնումն էր: Թագավորն ու իշխանները «սարսեալք ի յահե

⁸⁹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 76:

անիծիցն» և վերահաս ընդվզումները կանխելու համար «կամեցան դարձուցանել զտէր Պետրոս յաթոռ իւր»⁹⁰: Նրա վերադարձի գործում էական դեր է ունեցել Գրիգոր Մագիստրոսը, որն արքունիքի գլխավոր անձանցից էր:

Նամակագրությունից երևում է, որ բանտարկության ընթացքում Պետրոսը զբաղվել է եկեղեցու հայրերի գործերի ուսումնասիրությամբ և ընթերցանությամբ: Երբ նա բանտում էր, Գրիգոր Մագիստրոսը նրան է փոխանցել Եփրեմ Ասորու «Հավատոց գիրքը՝ ասելով, որ այն կլինի «զընկերդ քո (Պետրոս Գետադարձի՝ Վ. Ա.) ի քում միայնութեան»⁹¹:

Պետրոսը կայուն հայացքների տեր, համառ և հետևողական անձնավորություն էր, և ի հեճուկս հալածանքների, գահընկեցության ու պատիվներից զրկելու, նա իր համոզունքներում մնաց անդրդվելի:

Պետրոս Գետադարձի վերահաստատումը հայրապետական գահին

Երկրում ստեղծված ոչ դյուրին իրավիճակում հոգևոր դասի մեծամասնությունը պահանջում էր հայրապետական գահին վերահաստատել Պետրոս Գետադարձին, որը եկեղեցում ուներ հետևորդների մեծ շրջանակ և իր հեղինակության շնորհիվ կարող էր ազդել հանրային տրամադրությունների վրա: Նրա վերադարձով հնարավոր կլինէր վերականգնել երկրի ներքին կայունությունը և հանրային համերաշխությունը: Այս իրողությունները ստիպում են արքունիքին տեղի տալ: Չնայած այն բանին, որ շատերը ընդունում էին իրենց գործած սխալները և թողություն էին խնդրում մեղքերի

⁹⁰ Մատթեոս Ուռհայեցի, էջ 77:

⁹¹ Կոստանեանց Կ., Գր. Մագիստրոսի թղթերը, էջ 4:

համար, այդուհանդերձ Պետրոսը «պնդեալ կայր» և «գաուրս բագունս ոչ առնոյր յանձն» վերադառնալ աթոռին, քանի որ չէր փոխել ընդդիմադիր կեցվածքը թագավորի նկատմամբ: Ենթադրվում է, որ նա ոչ թե հրաժարվել է նորից գահ բարձրանալ, այլ պահանջել է վերացնել գործած ապօրինությունը և իր իրավունքները վերականգնել օրինական եպիսկոպոսական ժողովով: Միայն այդ դեպքում նա կխուսափեր թագավորի ձեռքին «գործիք» դառնալուց և խոցելի չէր լինի:

Հայոց ավագանին նամակով դիմում է Աղվանքի կաթողիկոս Հովսեփին, խնդրում նրա միջնորդությունը՝ տեր Պետրոսին կաթողիկոսական աթոռին վերահաստատելու համար: 1038թ. Հովսեփ կաթողիկոսն իր եպիսկոպոսական դասով ժամանում է Անի: Նույն թվականին նրա նախագահությամբ գումարվում է ազգային-եկեղեցական ժողով, որին բացի բազմաթիվ եպիսկոպոսներից, վարդապետներից, վանահայրերից, մասնակցում էին նաև իշխաններ և ազատներ, որոնց ընդհանուր թիվը հասնում էր «իբրեւ չորք հազարաց»⁹²: Ժողովականները Պետրոսի աթոռազրկությունը որակում են որպես եկեղեցական ավանդության խախտում, իսկ Դեոսկորոսին «մերժեցին ի պատուոյ և ընկեցին յաթոռոյ հայրապետութեան»⁹³: Կուտակված հանրային ցասումը հանգեցրեց մոլեգին պողոթնումի, և «յաւուր Յայտնութեան Տեառն, մինչդեռ օրինէին զջուրն», այն է՝ 1039 թ. հունվարի 6-ին ժողովուրդը հարձակվեց Դեոսկորոսի վրա: Պատռելով հայրապետական քողը՝ նրան դուրս են բերում եկեղեցուց, որից հետո «հանին զնա անարգանօք ի քաղա-

⁹² Սա Հայ եկեղեցու պատմության մեջ ամենափառավոր ժողովներից է, թե՛ մասնակիցների թվով, թե՛ դասային ներկայացվածությամբ: Այն վերահաստատեց կաթողիկոսի ընտրության և գահընկեց անելու դարավոր ավանդական կարգը:

⁹³ Թուրքիզի կարծիքով ժողովականների մեծ մասը եղել են քաղկեդոնական դավանանքի հայ հոգևորականներ (Tournebize Fr., *Histoire politique et religieuse de l'Arménie*, T. I, 1910, էջ 372):

քեն»: Կարգալույծ են արվում Դեոսկորոսի ձեռնադրած հոգևորականները, որպեսզի այսուհետև նրանցից ոչ ոք քահանաների շարքին չդասվի: Դեոսկորոսը գոչում է իր արարքի համար, որը հավանաբար փառասիրական գայթակղության հետևանք էր, և անաղմուկ հեռանում «ի Սանահինն ի վանքն իւր»⁹⁴: Այդուհանդերձ նրան, որպես «այր սուրբ եւ առաքինի», դրվատանքով են հիշում մատենագիրները⁹⁵:

Մեկ տարի հինգ ամիս բանտարկված մնալուց հետո Պետրոսը «հաղթականորեն» վերադառնում է կաթողիկոսական գահին ու «եղև խաղաղութիւն սուրբ եկեղեցւոյն Հայաստան աշխարհին»: Չնայած այն հանգամանքին, որ յոթ-ութ տարի Սեբաստիայում և Վասպուրականում անցկացնելը մասամբ թուլացրել էին Պետրոսի դիրքերը Անիում, սակայն եպիսկոպոսական դասի զգալի մասը շարունակում էր հետևել նրա ուղղությանը: «Հայոց անկախության շրջանի վերջում կաթողիկոսի դիրքն այնքան ամուր էր, որ նույնիսկ Պետրոս Գետադարձի երկիմաստ քաղաքականությունը չէր կարող խաթարել այն, և 1038-ին Անիում հավաքված եպիսկոպոսները ստիպեցին նրան վերադառնալ հակառակ թագավորական պահանջներին և Յովհաննէս-Սմբատի առաջադրած թեկնածուի», - գրում է Ն. Գարսոյանը⁹⁶: Բյուզանդացիները բավարարված էին քաղաքական հարցերում կաթողիկոսի ունեցած բացահայտ հունա-

⁹⁴ Մատթեոս Ուռհայեցի, էջ 78: Սանահինի վանականությունը Դեոսկորոսին անվանել է «հայրապետ» (Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա Տպագրատուն Հոգևոր ձեմարանի Հայոց Տիխիսայ, Տիխիս, 1842, էջ 28, 52:

⁹⁵ Վարդան վարդապետ, էջ 98: Ուռհայեցին Դեոսկորոսին անվանում է «Մեծ հռետորն» (Մատթեոս Ուռհայեցի, էջ 76): Անանիա Սանահնեցին Դեոսկորոսին պատվում է «Երկրորդ Լուսավորիչ» կոչումով (Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, աշխ. Ա. Մաթևոսյանի, Եր., 1988, էջ 99, ծանոթ. 2):

⁹⁶ Garsoyan N., The Armenian People from Ancient to Modern Times. Vol. I, 7, The Independent Kingdoms of Medieval Armenia, New-York, 1997, էջ 173: Գարսոյանը Պետրոս Գետադարձին բնորոշում է որպես «հանելուկային գործիչ» (Նույն տեղում, էջ 172):

կան կողմնորոշմամբ և առժամանակ դավանաբանական խնդիրներ չեն հարուցում, սակայն ակտիվացնում են Հայաստանից գրաված տարածքներում քաղկեդոնական եպիսկոպոսությունների ստեղծման աշխատանքները⁹⁷:

1039 թ. Պետրոսի վերադարձով թագավորությունում հաստատված հարաբերական անդորրը խաթարվում է 1041 թ. վերջերին, երբ «ի միում ամի» մահանում են թագակիր եղբայրներ Աշոտն ու Հովհաննեսը: Քանի որ Հովհաննեսը ժառանգ չունեի, իսկ Աշոտի որդին դեռ հասուն տարիքի չէր, գլուխ են բարձրացնում գահի բազմաթիվ հավակնորդներ: Իրենց Անիի ժառանգորդներ էին հռչակել Բյուզանդիայի կայսրերը, որոնցից Միքայել Կալաֆատեսը (1041 դեկտեմբերի 10-1042 ապրիլի 21), կյանքի կոչելով տխրահռչակ տրապիզոնյան կտակը, դեսպան է ուղարկում Անի և փորձում է տիրանալ իր «ժառանգությանը»⁹⁸: Դրան հետևում է կայսերական զորքի արշավանքը դեպի Անի: Վահրամ Սպարապետի գլխավորությամբ հայերին հաջողվում է հերոսական պայքարով պաշտպանել քաղաքական անկախությունը: Բագրատունյաց գահը դեռևս թափուր էր, և Կալաֆատես կայսրին փոխարինած Կոստանդին IX Մոնոմախը (1042–1055 թթ.) համառորեն պահանջում

⁹⁷ Հովհաննես Սկիլիցես, էջ LXVIII:

⁹⁸ Լաստիվերցու մոտ պահպանվել է կասկածելի արժանահավատությամբ մի պատմություն, որը, կարծես թե, խորհրդանշում է Բյուզանդիային անցնելու եղանակով Անիի թագավորության անկման անխուսափելիությունը. Վասիլ Բ-ի հաջորդ Կոստանդին Ը-ն (1026–1028 թթ.) 1028 թ. կանչում է կաթողիկոսարանի հյուրընկալ հայազգի Կիրակոս քահանային ու նրան է հանձնում Հովհաննես-Սմբատի կտակը: Քահանային պատվիրում է. «Տար զգիրդ և տուր ի թագաւորն Հայոց» որպէսզի հայոց թագավորությունը ընդմիջտ մնա «որդոյ քո, և որդի քո որդոց իւրեանց»: Արիստակէս Լաստիվերցի, էջ 556–557: Սակայն Կիրակոս երեցը նամակը ոչ ոքի չի հանձնում և ավելի ուշ վաճառում է Միքայել Դ Պաֆլագոնացի (1034–1041 թթ.) կայսրին, որի դիմաց ստանում է «գանձ բազում»: Այս ավանդությամբ ևս մեկ անգամ հաստատվում է, որ գոյություն է ունեցել կտակ, որով էլ օրինականացվել են Կոստանդին Թ Մոնոմախի գործողությունները (Юзбашян К., Армянские государства..., с. 159):

եր Անիի թագավորությունը: Վերջինս անմիջապես զենքի չի դիմում, փորձում է «խաղաղ» ճանապարհով վերացնել Հայաստանի անկախությունը: «Հայ իշխանավորներին մի բան էր մնում, դիմել դիվանագիտության օգնությանը, քանզի անհնարին էր դիմակայել Բյուզանդիայի ռազմական ուժին», - գրում է Հ. Բարթիկյանը⁹⁹: Ստեղծված պայմաններում բյուզանդական արքունիքի հետ բանակցություններ վարելու համար ամենանպատակահարմար անձնավորությունը կաթողիկոսն էր, որի բյուզանդամետությունը հաջողության նախապայման էր: 1042 թ. Պետրոս Գետադարձը մեկնում է Բյուզանդիա՝ հայ-բյուզանդական եկեղեցական միության շուրջ բանակցություններ վարելու, որը տևում է չորս ամիս: Ուռհայեցու նկարագրությամբ կաթողիկոսը ճանապարհվում է պատկառելի շքախմբով, ուղեկցությամբ՝ «հւր տանեցի ազատօքն փառաւոր արամբք երեք հարիւր՝ վառեալ զինուք, և վարդապետս և եպիսկոպոսունս և երաժիշտս և կրոնաւօրս, քահանայս հարիւր և հեծեալս ի փառաւոր ջորւոջ, հետեւակ պաշտոնեայս երկերիւրս»¹⁰⁰: Բյուզանդական իշխանությունները վստահ էին, որ կաթողիկոսը գալիս է ստորագրելու Քաղկեդոնի որոշումների տակ: Դա էր պատճառը, որ հայոց քահանայապետն արժանացավ աննախադեպ ընդունելության և նրա առջև «դղրդեցաւ ամենայն քաղաքն Կոստանդնուպօլսի..., հանդերձ մեծամեծօք եւ ահաւոր փառօք տարան զնա (Պետրոս կաթողիկոսին՝ Վ. Ա.) ի սուրբն Սոփի և անդ հանդիպեալ թագաւորին և պատրիարգին»¹⁰¹: Պետրոս Ա Գետա-

⁹⁹ Բարթիկյան Հ., Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնոմախ, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Աճեմյան մատենաշար, Երևան, 2002, էջ 593:

¹⁰⁰ Մատթեոս Ուռհայեցի, էջ 104: Յովսեփյան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Անթիլիաս, 1951, էջ 417-418:

¹⁰¹ Մատթեոս Ուռհայեցի, էջ 105: Այդ ժամանակ Կոստանդնուպոլսի պատրիարքը Կերուլլարիոսն էր (1043-1058 թթ.), որը պայքարում էր եկեղեցու անկախության համար և

դարձի առաքելությունը Կոստանդնուպոլիս դիվանագիտական քայլ էր՝ կանխելու Միքայել Կալաֆատեսի անհաջող, բայց Հայաստանի վրա թանկ նստած ռազմական գործողությունների շարունակությունը Կոստանդին Մոնոմախի կողմից¹⁰²: Պետրոսն այնտեղ հավանաբար մասնակցել է քաղկեդոնական ծեսով կատարված կրոնական արարողության¹⁰³: Հայաստանում քաղաքական անբարենպաստ իրավիճակներում հայոց կաթողիկոսները երբեմն դիմում էին նման քայլերի, այն է՝ բարձրաստիճան հույների հետ շփվելիս ցուցաբերում էին կրոնական հանդուրժամտություն, խոստանում էին քննարկել եկեղեցիների միության առաջարկը: Պետրոս Գետադարձի արածը հենց այդպիսի քայլ էր¹⁰⁴, որի շարժառիթը բարդ իրավիճակից ճողոպրելն էր՝ թեկուզ խաբեության գնով, որովհետև եկեղեցիների միության հարցը մեկ անձի ստորագրությամբ չէր վճռվում, այլ երկրի բոլոր եպիսկոպոսների ժողովում¹⁰⁵:

Պետրոս կաթողիկոսի դերն Անիի հանձնման գործում

Թագակիր եղբայրների մահից հետո Անիի հունամետ կուսակցությունն առաջնորդող եռյակում որոշակի տարաձայնություններ

ընդդիմադիր էր կայսրին (Скабаланович Н., указ. соч., էջ 383: Շառլ Դիլ, նշվ. աշխ., էջ 59, 62, 265):

¹⁰² Բարթիկյան Հ., Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնոմախ, էջ 599:

¹⁰³ Առկախ թողնելով Պետրոս Գետադարձի դավանական կողմորոշման խնդիրը՝ Հացունին արձանագրում է, որ Ս. Մոֆիայի մեջ կայսեր և պատրիարքի կողմից ընդունվելը «կրօնական հաղորդակցութեան ձև մ'ը էր ըստ ինքեան» (Հացունի Վ., Կարենոր խնդիրներ հայ եկեղեցոյ պատմութենէն, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1927, էջ 491):

¹⁰⁴ Բարթիկյան Հ., Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնոմախ, էջ 599: Նախկինում բազմիցս նման հրավերներ եղել են, բայց կաթողիկոսները մերժել են՝ հասկանալով, որ բյուզանդական ճնշումների տեղատարափին դիմակայելն անհնար է: Հայոց կաթողիկոսներից առաջինը Պետրոս Ա-ն էր, որ համաձայնեց մեկնել Կոստանդնուպոլիս:

¹⁰⁵ Հայոց պատմություն, հ. Բ, Միջին դարեր (IV-XVII դարի առաջին կես), գիրք II, (IX դարի կես- XVII դարի առաջին կես), Ջանգակ-97 հրատ., Երևան, 2014, էջ 159-160:

են ծագում. օգտվելով պատեհ հանգամանքներից՝ Հովհաննես-Սմբատի արքունի հոգաբարձու Վեստ Սարգիսը հափշտակեց և իր հայրենական բերդերում թաքցրեց թագավորական գանձերը: Նա մտադիր էր «թագաւորել ի վերայ տանն Շիրակայ եւ որ շուրջ զնովաւ գաւառք»¹⁰⁶:

Ազգային ուժերը համախմբված էին Վահրամ Պահլավունու շուրջ, որին Լաստիվերցին բնորոշում է որպես «այր հօր եւ անուանի, եւ բարեպաշտութեամբ յոյժ վեհ»¹⁰⁷: Երկիրը պառակտումից փրկելու և թագաժառանգի հարցը լուծելու համար Պետրոս կաթողիկոսը, Վահրամ Պահլավունին և մի քանի իշխաններ գահ են բարձրացնում Աշոտի որդի 18-ամյա Գագիկ Բ-ին: Նրանց հաջողվում է զսպել գահի բոլոր անօրինական հավակնորդների նկրտումները և, պահպանելով գահաժառանգության ավանդական կարգը, 1042 թ. վերջին Անիի Մայր տաճարում կաթողիկոսը Գագիկին օծում է թագավոր. «իմաստութեամբ եւ հնարիւք մուծին» Գագիկին մայրաքաղաք և «թագաւորեցուցին ի վերայ իւրեանց»: «Զարգացեալ եւ վայելուչ եւ իմաստուն եւ հմուտ աստուածային ուսմանց»¹⁰⁸ երիտասարդ Գագիկը հնազանդեցնում է Վեստ Սարգսին և շուրջ «երկու ամ» խաղաղ կառավարում երկիրը: Սմբատ պատմիչի խոսքերով. «իմաստութեամբ հաստատեաց զաթոռ թագաւորութեանն Հայոց» և «խաղաղացաւ աշխարհն Հայոց»¹⁰⁹: Ազգային ուժերի հետ համագործակցելը և Գագիկ Բ-ի օժման փաստը վկայում են, որ Պետրոս Ա-ն այդ ժամանակ դեմ էր Անին Բյուզանդիային կտակելու ծրագրին և փորձում էր երկարաձգել թագավորության գոյությունը:

¹⁰⁶ Արիստակես Լաստիվերցի, էջ 557:

¹⁰⁷ Արիստակես Լաստիվերցի, էջ 557:

¹⁰⁸ Սմբատ սպարապետ, էջ 57:

¹⁰⁹ Սմբատ սպարապետ, էջ 58:

Ի դեմս նորած արքայի՝ պառակտված թագավորությունը վերստին միավորվում է և, որ ամենակարևորն էր մերժվում է եկեղեցիների միությունը և ձախողվում է Անի-Շիրակի թագավորությունը խաղաղ ճանապարհով բյուզանդացիներին հանձնելու ծրագիրը¹¹⁰: Գրիգոր Մագիստրոս Պահլավունին այդ ժամանակ դե ֆակտո երկրի քաղաքական ղեկավարն էր, Պահլավունիները մնացել էին վտանգված թագավորության վերջին նեցուկը¹¹¹:

Գագիկ Բ-ի իշխանությունը չճանաչող Բյուզանդիան մեծացնում է ճնշումը Անիի Բագրատունյաց թագավորության վրա՝ նրա դեմ դուրս բերելով նաև Դվինի ամիրային և Դավիթ Անհողինին¹¹²: Բյուզանդացիներին հայտնի էր, որ Հայոց թագավորությունը գրավելու ծրագրեր ունեին նաև թուրք-սելջուկները Տուրքիլ բեկի գլխավորությամբ: Ի վերջո՝ 1044 թ. Կոստանդին Մոնոմախ կայսրը Վեստ Սարգսի խորհրդով հաշտություն կնքելու և բարեկամություն հաստատելու պատրվակով «կոչեա զԳագիկ պատճառանօք սիրոյ ի Կոստանդնուպոլիս»¹¹³: Վեստ Սարգիսը, «հանդերձ համախոհօքն իւրովք» խորհուրդ են տալիս ընդունել հրավերը՝ հավաստիացնելով, որ հավատարմորեն կսպասեն նրա վերադարձին: Պետրոս

¹¹⁰ Բարթիկյան Հ., Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնոմախ, էջ 600:

¹¹¹ Թեև Պահլավունի նախարարական տոհմը ենթարկվում էր Բագրատունիներին, սակայն XI դարում իրենց հզորությամբ գերազանցում էին վերջիններիս: Նրանք ունեին բացահայտ բյուզանդամետ դիրքորոշում, որը գնահատվում էր կայսրության կողմից, և այդ բանը երևաց թագավորության անկումից հետո Գրիգոր Մագիստրոս Պահլավունուն շնորհված բարձր տիտղոսով (Federico Alpi, 8 luglio 2014, *Playing the Great Game: Armenian Nobility and Its Foreign Politics from the 9th-11th Centuries*, Leeds International Medieval Congress 2014, University of Leeds, Leeds, page 5–6).

¹¹² Թուրք-սելջուկների դժոխային պայմանները տեսած ժամանակամերձ հայ պատմիչները՝ Լաստիվերցին, Հակոբ Սանահնեցին, Ուռհայեցին, ոչ միայն հանդուրժամիտ վերաբերմունք են ունեցել Բյուզանդիայի արևելյան նվաճումների հարցում, այլև որոշ տեղերում նույնիսկ արդարացնում են այդ քաղաքականությունը (Арутюнова-Фиданян В., *Армянские средневековые историки об экспансии Византийской империи*, Историко-филологический журнал, № 2, Ереван, 1978, сс. 191-206, с. 201).

¹¹³ Սմբատ սպարապետ, էջ 61: Մատթեոս Ուռհայեցի, էջ 93:

կաթողիկոսի միջնորդությամբ նրանք նույնիսկ գրում և վավերացնում են իրենց երդումը. «թանային զգրիչս յարինն Կենարարին, և արարին երդման գիր հայրապետն և ամենայն իշխանքն Հայոց»¹¹⁴: Գագիկի Կոստանդնուպոլիս մեկնելուն դեմ էր միայն Վահրամ Պահլավունին, սակայն ինչպես մեկնաբանում է Մ. Օրմանյանը «Սուրբ խորհուրդին նուիրականութիւնը, երդման սրբութիւնը, ու կաթողիկոսին ներկայութիւնը ազդեցին երիտասարդ Գագիկի վրա»¹¹⁵: Վերջինս որոշում է ընդունել հրավերը և, Անի բանալիները հանձնելով Պետրոս կաթողիկոսին և նրան նշանակելով քաղաքի գլխավոր, «միակողմանի տոմսով» ուղևորվում է Կ.Պոլիս: «Մեծաւ փառաւորութեամբ» թագավորավայել ընդունելության արժանացած Գագիկն այնտեղ հայտնվում է «իբրև գձուկն ի կարթէ ըմբոնեալ կամ իբրև զհաւ ի ծուղակաց» դրության մեջ: Ստոր մեքենայություններով արգելափակում են Գագիկին և պահանջում իրեն հանձնել Անին՝ փոխարենն առաջարկելով «զՄելիտինէ և զգաւառսն, որ շուրջ գնովաւ»¹¹⁶:

Համոզվելով, որ Գագիկի վերադարձն անհնարին է, իսկ Անիի նոր տիրակալ ունենալը անխուսափելի՝ Պետրոս կաթողիկոսը դիմում է Անիի թագավորության ստվարաթիվ բյուզանդամետ իշխանների տրամադրություններին համահունչ քայլի. նա լուր է ուղարկում Մամոսատի հույն կուսակալին, թե «ծանս թագաւորին (Կոստանդին Մոնոմախին-Վ.Ա.) թէ մեզ զինչ հատուցանէ փոխարէնս, եւ ես տաց զքաղաքս եւ զայլ ամուրս որ յաշխարհիս են»: Բա-

¹¹⁴ Մատթեոս Ուռնայեցի, էջ 94: Ղ. Ալիշանը թերահավատ է կաթողիկոսի կողմից նման սրբազան ծիսակատարություն կազմակերպելու հարցում և կարծում է, որ նրա հորդորի մեջ ոչ մի նենգամտություն չկար (Ալիշան Ղ., Հայապատում, էջ 320, ծանոթ. 1):

¹¹⁵ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1432: Լեոն համոզված է, որ Կոստանդնուպոլիս մեկնելու Գագիկի շարժառիթներից ամենավճռականը եղել է Պետրոս կաթողիկոսի խոսքը (Լեո, Անի, ԵՊՀ հրատ., Եր., 1963, էջ 333):

¹¹⁶ Արիստակես Լաստիվերցի, 561:

նակցությունների և սակարկությունների արդյունքը լինում է այն, որ կաթողիկոսը, գայթակղվելով խոստացված «գանձիք եւ իշխանութեամբ», համաձայնություն է հայտնում Անին Բյուզանդիային հանձնելու պահանջին¹¹⁷: Մ. Օրմանյանը գրում է. «Վասիլի եւ Միքայելի հետ կնքուած վաճառումներէն ետքը, այդ երրորդն է գոր Պետրոս կը կնքէ Մոնումախոսի հետ, եւ միեւնոյն Անին կրկին ու կրկին նորանոր շահերու առարկայ կը կազմէ»¹¹⁸: Անին բյուզանդացիներին հանձնելը Պետրոսի միանձնյա որոշումը չէր, քաղաքում կար բավական ուժեղ հունասեր խմբավորում, որն էլ իրականացրեց կայսրության ցանկությունը¹¹⁹: Սամվել Անեցին աներկբայորեն հայտարարում է այս գործում մեղսակից անձանց անունները. «Տէր Պետրոս եւ ազատ Սարգիս եւ Գրիգոր Բջնեցին նենգեցին զԳագիկ եւ զԱնի ետուն ի կայսրն Յունաց»¹²⁰: Կոստանդին Մոնումախին նրանք ուղարկում են մայրաքաղաքի քառասուն բանալիները և «գիր զկնի թէ ամենայն Արեւելք քո (Կոստանդին Մոնումախին՝ Վ. Ա.) եղել»¹²¹: Գագիկը համառորեն ընդդիմանում է կայսեր պնդումներին. «Երեսուն օր պնդեալ Գագիկ ոչ հաւանէր»¹²²: Որպես իր պահանջի իրավական հիմնավորում, կայսրը ցինիկաբար Գագիկի առաջ է դնում հայոց իշխանների թուղթն ու Անիի բանալիները: Ազատագրկության և արգելափակման պայմաններում Բագրատունի վերջին թագակիրը հարկադրաբար գնում է զիջման: Խոս-

¹¹⁷ Արիստակէս Լաստիվերցի, էջ 562:

¹¹⁸ Օրմանյան Մ., նշվ. աշխ., էջ 1433:

¹¹⁹ Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք, ՊԲՀ, 2008, N 3, էջ 24:

¹²⁰ Սամուել Անեցի, էջ 187:

¹²¹ Սմբատ սպարապետ, էջ 62: Մատթեոս Ուռհայեցի, էջ 95: Մ. Չամչյանը գրում է, որ Անիի բանալիները, կաթողիկոսից ծածուկ, կայսրին են ուղարկել Վեստ Սարգիսը և մի քանի այլ նախարարներ (Չամչյան Մ., նշվ. աշխ., էջ 933):

¹²² Սմբատ սպարապետ, էջ 62: Անին կամովին չհանձնելու Գագիկի համառության մասին վկայում է նաև հույն հեղինակը՝ ասելով, որ Գագիկը «չէր ուզում հրաժարվել հորենական իշխանությունից, կայսրը վճռեց պատերազմել» (Հովհաննես Սկիլիցես, էջ 147):

տումնագանց կայսրը Մելիտինեի փոխարեն Գագիկին տալիս է Կալոն-պաղատ և Պիզու քաղաքները:

Զնայած Գագիկ Բ-ի հետ ունեցած ոչ դյուրին հարաբերություններին՝ նույն ժամանակ Բյուզանդիայի մայրաքաղաք է շտապում Գրիգոր Պահլավունին, հավանաբար հույս ունենալով փրկել հայոց գահը¹²³: Բայց այնտեղ հասկանում է, որ Բյուզանդական արքունիքի ծրագիրն անբեկանելի է և «ոչ են թողլոց զԳագիկ ի տեղի իւր»¹²⁴: Հասկանալով, որ անկարող է դիմադրել՝ ինքն էլ իր հայրենի Բջնին, Կայան և Կայծոն բերդերը հանձնում է կայսրությանը և, ստանալով բյուզանդական մագիստրոսի պատվաստիճան, զինվորական ծառայության է անցնում Տարոնում ու Հյուսիսային Միջագետքում:

Անիում տիրող ողբերգական տրամադրությունների մասին Ուռհայեցին գրում է, երբ անեցիներն իմացան, որ Գագիկն այլևս չի վերադառնալու «արարին ամենայն քաղաքն ժողով» Հայոց առաջին թագավորների գերեզմանի մոտ ողբացին «զանտիրանալն ազգին հայոց» և «անէծս ցաւազին կարդային նենգաւորացն Գագկայ»¹²⁵: Գր. Մագիստրոսի՝ ուն Պետրոս սարկավազին ուղղված նամակից երևում է, որ այդ ժամանակ Անիում ծայր են առել ժողովրդական հուզումներ, որոնց սլաքն առաջին հերթին ուղղված էր Պետրոս կաթողիկոսի դեմ¹²⁶:

1044 թ. մարտի 10-ին Մոնումախ կայսրը Անին գրավելու և կառավարելու համար Հայաստան է ուղարկում Իսախտես անունով հույն իշխանին: Անեցիները Պահլավունիների գլխավորությամբ կրկին զինված դիմադրություն են ցույց տալիս: Որոշ ժամանակ

¹²³ Կոստանեանց Կ., Պետրոս Գետադարձ, էջ 33:

¹²⁴ Արիստակես Լաստիվերցի, 561:

¹²⁵ Մատթեոս Ուռհայեցի, էջ 96–97:

¹²⁶ Լեոն գտնում է, որ նման ժողովրդական ցատում կարող էր լինել միայն համայնական սգի և լքման այդ օրերին (Լեո, Երկեր, էջ 682):

դիմագրավելուց հետո, երբ անեցիներին հասնում է Գագիկ թագավորի և Գրիգոր Պահլավունու հանձնվելու լուրը, հուսահատվում են, հասկանում, որ բոլոր կողմերից պաշարված են թշնամիներով, ու ոչ մի տեղից օգնության հույս չկա: Ստիպված լուր են ուղարկում պարակումանոս Իասիտեսին և «ետուն զԱնի ի ձեռս նորա»: Վահրամ Պահլավունին հասկացավ, որ միայնակ Անին դատապարտված է, իսկ հետագա դիմադրությունը համարում էր ժողովրդի անիմաստ կոտորած: «Աստանօր բարձաւ թագաւորութիւն Հայոց, եւ անկաւ տէրութիւն ազգին Բագրատունեաց»¹²⁷, - ցավալի այս խոսքերով է ամփոփում հայոց պատմության ողբերգական շրջափուլը XIII դարի տարեգիր Սմբատ Սպարապետը:

Անիի Բագրատունյաց թագավորության կործանման պատասխանատուն Հովհաննես-Սմբատ թագավորն է, որը երկիրը կտակեց Բյուզանդիային: Անտարակույս, այդ հարցում նրա գլխավոր գործակիցը կաթողիկոս Պետրոս Գետադարձն էր, որն ինչ դերակատարություն էլ ունեցած լինի, չի կարող հավասարվել թագավորին: Նրանք բյուզանդական տիրապետությունը գերադասել են թուրք-սելջուկյան, կամ վիրաափխսազական տիրապետությունից¹²⁸: Այս է պատճառը, որ «դավաճան» որակումը նրանց տվել են ոչ թե ժամանակակիցները, այլ հաջորդ դարերի պատմագիրները:

¹²⁷ Սմբատ սպարապետ, էջ 63: Մատթեոս Ուռհայեցի, էջ 220: Քննելով հայ-բյուզանդական հարաբերությունները քաղաքակրթական դաշտում՝ Հարությունովա-Ֆիդանյանը եզրակացնում է, որ նախքան Հայաստանի ֆիզիկական նվաճումը բյուզանդացիները վաղուց իշխում էին հայերի վրա գաղափարախոսական հարթության մեջ (Арутюнова-Фиданян В., Роль «образа другого» во взаимодействии цивилизации. Армяно-византийская контактная зона (X–XI вв.), Вестник ПСТГУ, Сер. III, филология, 2021, вып. 69, էջ 16): Անին բյուզանդացիներին հարկավոր էր ոչ այնքան հարստության և կավաճքների համար, որքան իր ռազմավարական նշանակության (Арутюнова-Фиданян В., К истории падения Ани (о личности «царского раба» в “истории” Михаила Атталиата). Вестн. обществ. наук АН Армянской ССР. 1967, № 9, с. 98).

¹²⁸ Պերպլերեան Հ., Հայոց կաթողիկոսական աթոռի բարձումն 11-րդ դարուն երկրորդ կեսին, Հանդես ամսօրեայ, 1967, N 4–6, էջ 148:

Անիի առաջին հույն կուսակալ Իասիտեսը հարգալից էր վերաբերվում և «անչափ պատուով մեծարել զհայրապետն Պետրոս», մինչդեռ նրան փոխարինած Կամենասը անարգում է և «ոչ ըստ առաջին պատույն մեծարել զհայրապետն»¹²⁹: Անի-Շիրակի թագավորության գրավումից հետո կայսրությունը, որը մտադիր էր վերացնել նաև Հայ եկեղեցու անկախությունը, հալածանքներ է սկսում Պետրոս կաթողիկոսի նկատմամբ: 1046 թ. վերջին նրան ստիպում են Անիից տեղափոխվել Արծն քաղաք:

Եզրակցություններ

- XI դարի առաջին կեսին Բյուզանդական կայսրության արևելյան քաղաքականության նպատակներից մեկը Հայաստանի ամբողջական գրավումն էր, որի իրականացումը ենթադրում էր հայոց քաղաքական ու հոգևոր-եկեղեցական անկախության վերացում:

- Բյուզանդացիները խորապես հասկանում էին Հայ եկեղեցու նվիրապետական համակարգը դեկավարող կաթողիկոսության դերը պետականակիր էթնոսի՝ հայության ազգային ինքնության պահպանման գործում, այդ պատճառով Հայ եկեղեցու ինքնուրույնության վերացումը նրանց զավթողական ծրագրի կարևոր բաղադրիչներից էր:

- Պետրոս Ա Գետադարձը գահ բարձրացավ (1019 թ.) կաթողիկոսների հաջորդականության ավանդական կարգի խախտմամբ՝ նախորդ հայրապետի՝ Մարգիս Սևանցու կենդանության օրոք: Բյուզանդական քաղաքակրթական արժեհամակարգի հետևորդ կաթողիկոսի ընտրությամբ հայոց քաղաքական և հոգևոր վերանախապը լուծում էր կարճաժամկետ երկու խնդիր. լիցքաթա-

¹²⁹ Արիստակես Լաստիվերցի, էջ 562:

վում էր երկրի ներքաղաքական լարված դրությունը և մեղմում էր սաստկացող արտաքին մարտահրավերների ուժը:

- Հայ-բյուզանդական եկեղեցաքաղաքական հարաբերություններում Պետրոս կաթողիկոսը բազմիցս հանդես է եկել դիվանագիտական առաքելությամբ: 1022 թ. Տրապիզոնում նա բանակցություններ է վարել կայսր Վասիլ Բ-ի հետ ու նրան հանձնել հայոց թագավոր Հովհաննես-Սմբատի կտակը, որի համաձայն վերջինիս մահից հետո Անիի թագավորությունն անցնելու էր Բյուզանդիային: Այս ակտով կանխվում էր բյուզանդական զորաբանակի ներխուժումը Անի և ժամանակավորապես երկարաձգվում թագավորության գոյությունը:

- Աթոռակալելով եկեղեցաքաղաքական իրադարձություններով հարուստ ժամանակաշրջանում՝ Պետրոս Գետադարձը ներքաշվեց քաղաքական գործընթացների հորձանուտ: 1030-ական թթ. հայոց աշխարհիկ և հոգևոր ինքնակալների հարաբերությունների խիստ լարման հետևանքով կաթողիկոսը գահընկեց է արվում և բանտարկվում:

- Մերժելով բյուզանդացիների քաղկեդոնական նկրտումները՝ Պետրոսը հայոց միաբնակ դավանանքը չի դարձնում դավանաբանական «սակարկությունների» առարկա: Նա խիստ միջոցներ է գործադրել Հայ եկեղեցու վարդապետությունը մերժող թոնդրակյան աղանդավորական շարժման անդամների նկատմամբ:

- Պետրոս Գետադարձի օրոք Հայ եկեղեցու տնտեսական ներուժը հասնում է աննախադեպ չափերի: Նրա գլխավորած կղերապետությունը տիրապետում էր տնտեսական և նյութական վիթխարի հարստության, ինչը թույլ էր տալիս հոգևոր վեհապետին ազդեցիկ դերակատարություն ունենալ երկրի ներքին և արտաքին գործերում:

- Պետրոս Գետադարձի օրոք նկատվում է բարքերի անկում հոգևորականների շրջանում: Արժաթասեր բարձր եկեղեցական դասը յուրացնում էր աշխարհիկ իշխանների կենսակերպն ու կենցաղը, օտարվում հոգևոր-բարոյական արժեքներից:

- Աշոտ Դ-ի և Հովհաննես-Սմբատի մահից հետո համագործակցելով ազգային ուժերի հետ՝ Պետրոս Ա-ն 1042-ին Գագիկ Բ Անեցուն օծում է թագավոր: Երբեմնի հունասեր կաթողիկոսը այդ ժամանակ փոխել էր դիրքորոշումն ու դեմ էր Անին Բյուզանդիային կտակելուն:

- Հայ աշխարհիկ և հոգևոր իշխանությունների հարաբերությունների պատմությանը անհրաժեշտ չափով չտիրապետող ու հայ-բյուզանդական դիվանագիտական հարաբերություններին ոչ պատշաճ չափով տեղյակ միջնադարյան հայ պատմագրությունը Պետրոս Գետադարձի նկատմամբ ունի ոչ միանշանակ վերաբերմունք: Ժամանակակից պատմիչները նրան բնութագրել են որպես «Հայ եկեղեցու սուրբ», «հրաշագործ» և «հմուտ դիվանագետ», մինչդեռ հետագայի հեղինակները, տուրք տալով զգացմունքային մոտեցումներին, շեշտադրել են այլ նարրատիվ և նրան որակել որպես «հայրենավաճառ» և «բյուզանդական գործակալ»:

ECCLESIASTICAL AND POLITICAL ACTIVITY OF CATHOLICOS PETROS GETHADARDZ 1019–1045

*Vardan Alexanyan*¹³⁰

The article investigates the activities of the Armenian Catholicos Petros Gethadardz (1019–1059) on the eve of the fall of the Armenian Bagratid Kingdom, 1019–1045. Petros I, nicknamed “Gethadardz” (i.e., turning back the river),

¹³⁰ Vardan Alexanyan is an Associate Professor of the Department of Armenian History and Social Studies at YSU Ijevan Branch, Researcher at the Institute of Armenian Studies at YSU, E-mail: vardan.aleqsanyan@ysu.am, ORCID 0009-0005-3615-4778.

ascended the throne during the lifetime of the previous Patriarch Sargis Sevantsi (992–1019), violating the traditional order of succession of Catholicoses. He manages to relatively defuse internal political tensions in the country and temporarily mitigate the severity of external challenges. In Armenian-Byzantine ecclesiastical and political relations, Petros Gethadardz undertook diplomatic missions many times. In 1022, he negotiated with the Byzantine Emperor Basil II (976–1025) in Trebizond and gave him the will of the Armenian king Hovhannes-Smbat (1018–1041), according to which the kingdom of Ani was to pass to Byzantium after the death of the latter. By this, the invasion of Ani by the Byzantine army was prevented and the existence of the kingdom was temporarily extended. In 1037, as a result of the tension between the political and ecclesiastical sovereigns of Armenia, Petros was dethroned and imprisoned. However, at the request of the clergy and many secular people, he was released and restored to the Patriarchal throne. Rejecting the Chalcedonian aspirations of the Byzantines, he does not make the Armenian Monophysite religion an object of theological "bargaining". After the death of the crowned brothers Ashot IV and Hovhannes-Smbat (1041), Petros cooperated with the national forces and, anointing Gagik II as king in 1042, tries to prevent the fall of the Bagratid kingdom. Peter Gethadardz's influence on the internal and external affairs of the country was significant, which was directly proportional to the enormous economic and material wealth of the ecclesiastical state led by him. During his reign, the economic potential of the Armenian Church reached an unprecedented level. The clergyman, who was famous as a miracle worker, was an ideological friend of one of the most educated people of the time, the Armenian prominent military, political figure and philosopher of the 11th century Grigor Magistros. Medieval Armenian historiography, which does not have the necessary amount of information about the history of relations between the Armenian secular and spiritual authorities and is also insufficiently aware of Armenian-Byzantine diplomatic relations, has an ambiguous attitude towards Petros Gethadardz.

Keywords: Petros I Gethadardz, Hovhannes-Smbat, Constantine IX Monomachos, Armenian church, Ani, Byzantium, Armenian kingdom of Bagratid, decline, Ecclesiastical state, Catholicosate.

ЦЕРКОВНО-ПОЛИТИЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ КАТОЛИКОСА ПЕТРОСА ГЕТАДАРДЗА В 1019–1045 гг.

Вардан Александян¹³¹

В статье исследуется деятельность армянского католикоса Петроса Гетадардза (1019–1059) накануне падения Армянского царства Багратидов в 1019–1045 гг. Петрос I по прозвищу «Гетадардз» (т.е. поворачивающий реку вспять), взошел на престол при жизни предыдущего патриарха Саргиса Севанци (992–1019 гг.), нарушив традиционный порядок преемственности католикосов. Ему удалось относительно разрядить внутривнутриполитическую напряженность в стране и временно смягчить остроту внешних вызовов. В армяно-византийских церковно-политических отношениях Католикос Петрос I неоднократно выполнял дипломатические миссии. В 1022 г. он вел переговоры с византийским императором Василием II (976–1025) в Трабзоне и передал ему завещание армянского царя Ованнеса-Смбата (1018–1041 гг.), согласно которому Анийское царство должно было перейти к Византии после смерти последнего. Тем самым было предотвращено вторжение византийской армии в Ани и временно продлено существование королевства. В 1037 г. в результате напряженности между политическими и церковными владыками Армении Петрос I был лишен престола и заключен в тюрьму. Однако по требованию духовенства и многих светских людей он был освобожден и восстановлен на Патриаршем престоле. Отвергая халкидонские устремления византийцев, он не делает армянскую монофизитскую религию предметом богословского «торга». После смерти венценосных братьев Ашота IV и Ованнеса-Смбата (1041 г.) Петрос Гетадардз сотрудничал с национальными силами и, помазав Гагика II на престол в 1042 г., пытался предотвратить падение Багратидского царства. Влияние Петроса Гетадардза на внутренние и внешние дела страны было значительным, что было прямо пропорционально огромному экономическому и материальному богатству возглавляемого им церковного государства. Во время его правления экономический потенциал Армянской церкви достиг беспрецедентного уровня. Священнослужитель, прославившийся как чудотворец, был идейным другом одного из самых образованных людей того

¹³¹ Вардан Александян - доцент кафедры истории Армении и обществознания Иджеванского филиала ЕГУ, научный сотрудник института арменоведения ЕГУ, эл. почта: vardan.aleqsanyan@ysu.am, ORCID 0009-0005-3615-4778.

времени, видного армянского военного, политического деятеля и философа XI века Григора Магистроса. Средневековая армянская историография, не владеющая необходимым объемом информации об истории отношений между армянскими светскими и духовными властями, а также недостаточно осведомленная об армяно-византийских дипломатических отношениях, имеет к Петросу Гетадардзу неоднозначное отношение.

Ключевые слова: *Петрос I Гетадардз, Ованнес-Смбат, Константин IX Мономах, Армянская церковь, Ани, Византия, Армянское царство Багратидов, падение, церковное государство, Католикосат.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալիշան Ղ., Այրարատ, Սուրբ Ղազար, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1890:
2. Ալիշան Ղ., Հայապատում, Սուրբ Ղազար, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1901:
3. Ալիշան Ղ., Յուշիկը հայրենեաց Հայոց, Յանուարի 6-ի հայս, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1869:
4. Ալիշան Ղ., Շիրակ, Սուրբ Ղազար, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1881:
5. Ալիշան Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1873:
6. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Գ, Պետական համալսարանի հրատ., Երևան, 1946:
7. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, հ. Դ, Պետական համալսարանի հրատ., Երևան, 1948:
8. Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները միջնադարյան Հայաստանում IX-XIII դարերում, հ. Բ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1964:
9. Արիստակես Լաստիվերցի, Պատմութիւն, Մատենագիրք Հայոց, հ. ԺԶ, ԺԱ դար, ԵՊՀ հրատ., Երևան, 2012:
10. Բարթիկյան Հ., Բյուզանդիան և հայ պետականությունը X-XI դդ. Հայ-բյուզանդական հետազոտություններ, Աճեմյան մատենաշար, հ. Ա., Երևան, 2002:

11. Բարթիկյան Հ., Պետրոս Ա Գետադարձ և Կոստանդին IX Մոնումախ, Հայ-բյուզանդական հետազոտություններ, հ. Ա, Աճեմյան մատենաշար, Երևան, 2002:
12. Գիրք որ կոչի Յայսմաուրքք, մեհեկի ԻԳ, մարտի 2, տպ. Գր. Մարզվանեցու, Կ. Պոլիս, 1730:
13. Գրիգոր Մազիստրոսի թղթերը, աշխատասիրութեամբ Կ. Կոստանեանցի, Տպարան Գ. Մանոյեանցի Աղեքսանդրապոլ, 1910:
14. Դիվան հայ վիմագրության, պրակ Ա, Անի քաղաք, կազմեց Հ. Օրբելի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1966:
15. Զամինեան Ա., Հայոց եկեղեցու պատմութիւն, տպ. Ս. Աւագեանի, Նոր-Նախիջևան, 1908:
16. Զարբհանալեան Գ., Հայկական հին դպրութեան պատմութիւն, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1897:
17. Լեո, Անի, ԵՊՀ հրատ., Երևան, 1963:
18. Լեո, Երկերի ժողովածու, հ. Բ, Հայաստան հրատ., Երևան, 1967:
19. Խաչիկյան Լ., Հակոբ Մանահնեցի՝ ժամանակագիր XI դարի, աշխատություններ, հ. Ա, Նաիրի հրատ., Երևան, 2012:
20. Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիր. Կ. Մելիք-Օհանջանյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1961:
21. Կոստանեանց Կ., Տէր Պետրոս Ա Գետադարձ, տպ. Մայր աթոռ Ս. Էջմիածնի, Վաղարշապատ, 1897:
22. Հակոբյան Թ., Անի մայրաքաղաք, ԵՊՀ հրատ., Երևան, 1988:
23. Հայ ժողովրդի պատմություն, հ. Գ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1976:
24. Հայոց պատմություն, հ. Բ, Միջին դարեր (IV-XVII դարի առաջին կես), Գիրք II, (IX դարի կես- XVII դարի առաջին կես), Զանգակ-97 հրատ., Երևան, 2014:
25. Հուաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Մբ. Ղազարի տպ., Վենետիկ, 1862:
26. Հացունի Վ., Կարեւոր խնդիրներ հայ եկեղեցւոյ պատմութենէն, Մխիթարեան տպ., Վենետիկ, 1927:
27. Մաթևոսյան Ա., Ե-ԺԲ դարերի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1988:

28. Մաթևոսյան Կ., Անի, եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Մայր աթոռ սուրբ Էջմիածին, Երևան, 1997:
29. Մաթևոսյան Կ., Անին մայրաքաղաք և կաթողիկոսանիստ, ՊԲՀ, № 3, 2008:
30. Մաթևոսյան Կ., Անի-Շիրակի պատմության էջեր, հոդվածների ժողովածու, հեղինակային հրատ., Երևան, 2010:
31. Մաթևոսյան Ռ., Բագրատունյաց Հայաստանի պետական կառուցվածքն ու վարչական կարգը, ՀԽՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1990:
32. Մանանդյան Հ., Երկեր, հ. Գ, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1977:
33. Մանր ժամանակագրություններ, XIII–XVIII դդ., հ. Ա, կազմեց Վ. Հակոբյան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1951:
34. Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, տպ. Մայր աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, Վաղարշապատ, 1898:
35. Մելիքսեթ-Բեկ Լ., Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Ա, (Ե-ԺԲ դդ.), հրատ. Մելքոնյան ֆոնդի, Երևան, 1934:
36. Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն հայոց, տպ. Լազարեան ճեմարանի, Մոսկվա, 1860:
37. Յովսեփյան Գ., Յիշատակարանք ձեռագրաց, հ. Ա, Կիլիկիայի հայոց կաթողիկոսութեան տպ., Անթիլիաս, 1951:
38. Նոր Բառգիրք հայկազեան լեզուի, հ. Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 1981:
39. Շառլ Դիլ, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, առաջ. Հ. Բարթիկյանի, տպ. Սարգիս Խաչենց փրիթինֆո, Երևան, 2005:
40. Չամչյան Մ., Հայոց պատմություն, հ. Բ, ԵՊՀ հրատ., Երևան, 1984:
41. Պերպլերեան Հ., Հայոց կաթողիկոսական աթոռի բարձուն 11-րդ դարուն երկրորդ կեսին, Հանդես ամսօրեայ, 1967, № 4–6:
42. Ջալալեանց Ս., Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան, մասն Ա, Տպագրատուն Հոգեւոր ճեմարանի Հայոց Տփխիսայ, Տփխիս, 1842:
43. Սամուէլ Անեցի և շարունակողներ, աշխատասիր. Կ. Մաթևոսյանի, Նաիրի, հրատ., Երևան, 2014:
44. Վիմական տարեգիր, Կազմ. Կ. Կոստանեանց, Տպ. Գիտութեանց ճեմարանի կայսերականի, Ս. Պետերբուրգ, 1913:
45. Տարեգիրք Սմբատայ Սպարապետի, Փարիզ, 1859, էջ 28, տպ. Է. Թունտյի, Փարիզ, 1859:

46. Տեր-Պետրոսյան Լ., Խաչակիրները և հայերը, հ. Բ, Հայկական մատենաշար, Գալուստ Կիլիկիական հիմնարկություն, Երևան, 2007:
47. Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, թարգմ. և ծանոթ. Ստ. Մալխասյանի, ԵՊՀ հրատ., Երևան, 1987:
48. Քյոսեյան Հ., Հայ եկեղեցական մատենագրություն:
49. Օրմանյան Մ., Ազգապատում, հ. Ա, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001:
50. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. 10, Բյուզանդական աղբյուրներ, հ. Գ, Հովհաննես Սկիլիցես, խմբ. Ս. Կրկյաշարյանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979:
51. Арутюнова-Фиданян В., Армянские средневековые историки об экспансии Византийской империи. СПб, 1978, № 2.
52. Арутюнова-Фиданян В., К истории падения Ани (о личности “царского раба” в “истории” Михаила Аталиата). Вестн. обществ. наук АН Армянской ССР, 1967, № 9.
53. Арутюнова-Фиданян, Роль «образа другого» во взаимодействии цивилизации. Армяно-византийская контактная зона (X–XI вв.). Вестник ПСТГУ, Сер. III, филология, 2021, вып. 69.
54. Грен А., Династия Багратидов в Армении. Журнал министерства народного просвещения, ССХС, Типография В. Балашева, СПб, 1893, № 11.
55. Мар Н., Сказание о католикосе Петре и ученом Иоанне Козерне, СПб, 1895.
56. Скабаланович Н., Византийское государство и церковь в XI веке. Типография Ф. Елеонского, СПб, 1884.
57. Юзбашян К., Армянские государства эпохи Багратидов и Византия IX–XI вв. Изд. Наука, М., 1988.
58. Юзбашян К., К хронологии правления Гагика I Багратуни. Античная древность и средние века., вып. 10, 1973.
59. Юзбашян К., Скилица о захвате Анийского царства в 1045 г. Византийский временник, РАН, изд. Наука, т. 40 (65), 1979.
60. Bartikyan H., The religious diplomacy of Byzantium in Armenia during the tenth and eleventh centuries, Աճեմյան մատենաշար, հ. Բ, Երևան, 2002:
61. Federico Alpi, 8 luglio 2014, Playing the Great Game: Armenian Nobility and Its Foreign Politics from the 9th-11th Centuries, Leeds International Medieval Congress 2014, University of Leeds, Leeds.


62. Garsoyan N., *The Armenian People from Ancient to Modern Times*, volume I, 7, *The Independent Kingdoms of Medieval Armenia*, New-York, 1997.

63. Tournebize Fr., *Histoire politique et religieuse de l'Arménie*, T. I, Paris, 1910.

ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ

Mann, Oskar. “Our Steppe Is Vast ...”: Kurdish Epics and Tribal Stories from Urfā, 1906. Kurmanji – English. Edited by Barbara Strāuli, Göttinger Orientforschungen, Reihe 3, Iranica, 19, Wiesbaden, Harrassowitz Verlag, 2021, XI+270pp., ISBN 978-3-447-11663-3

DOI 10.46991/jos.2024.25.1.322



Բարբարա Շթրոյլիի ծավալուն առաջաբանով (7–62 էջ), խմբագրությամբ և անգլերեն թարգմանությամբ Գերմանիայում լույս են տեսել արևմտաիրանական լեզուների և բարբառների համակարգային ուսումնասիրության ոլորտում ակնառու ներդրում ունեցած և 20-րդ դարի առաջին տասնամյակի ընթացքում երկու ուղևորությունների արդյունքում (առաջինը՝ 1901–1903 թթ., երկրորդը՝ 1906–1907 թթ.) նախորդ հարյուրամյակի ընթացքում արևմտաիրանական լեզուներով և բարբառներով թերևս ամենամեծաքանակ, մեթոդապես օրինակելի ու համակարգված դաշտային նյութ հավաքած իրանագետ Օսկար Մաննի (1867–1917 թթ.) քրդական այն բանահյուսական տեքստերը, որոնք վերջինս գրի էր առել 1906 թ. գարնանը Ուռհայում (պատմական Եդեսիա, Ուրֆա, Ժամանակակից Թուրքիայում՝ Շանլուրֆա):

Օսկար Մաննը, որը ուսանել էր հայագրի իրանագետ, Գերմանիայում դասական իրանագիտության խոշորագույն ներկայացուցիչներից Ֆրիդրիխ Կառլ Անդրեաս Բագրատունու մոտ և վերջինիս հետ նամակագրությունը պահպանում էր նշված երկու ուղևոր-

րությունների ողջ ընթացքում, հաղորդում դաշտային աշխատանքների մանրամասները¹, ցավոք, իր կենդանության օրոք հասցնում է տպագրել իր դաշտային աշխատանքների և դրանց հիման վրա իրականացրած ուսումնասիրությունների միայն մի մասը, մասնավորապես Ֆարսի հարավարևմտաիրանական բարբառների (սոմդունի, մասարմի, փափունի, բուրինգունի, լարի) և Քալուն–Աբդուհի քրդական խոսվածքի քննությունը², լուրական և բախթիարական խոսվածքների քննությունը³ և ավելի վաղ՝ նաև կենտրոնական քրդերենի Մուքրիի բարբառի երկհատոր ուսումնասիրությունը՝ ծավալուն առաջաբաններով, որի առաջին հատորում զետեղված են Մուքրիի քրդերենով գրառված և զիտական տառադարձության բերված արձակ պատումներ, էպիկական երգեր (Dimdim, Mām û Zîn, Lās û Khâzâl, Nâsir û Mâlmâl, Brâimôk û Mâlmâl, Shêkh Fârkh û Khâtûn Ästî, Maḥmâl û Brâimî dâstîân, Qôc ‘usmân, ṣulindî, Khazêm, Kâka mîr û kâka shêkh, Lâshkirî, Qâr û Gulazâr, Bâjtî zâmbîlfirôsh, Bâjtî Bâpîrî âghâî mañgur, Bâjtî Abdurrahmân pâshâ bâbâ) և

¹ Kolivand M. (Hrsg.), Persische und kurdische Reiseberichte. Die Briefe des Berliner Orientalisten Oskar Mann während seiner beiden Expeditionen in den Vorderen Orient 1901-1907, Wiesbaden, Harrassowitz Verlag, 2014.

² Mann O., Kurdisch-persische Forschungen: Ergebnisse einer von 1901 bis 1903 und 1906 bis 1907 in Persien und der asiatischen Türkei ausgeführten Forschungsreise, Abteilung I, Teile 1-2, Die Tâjik-Mundarten der Provinz Fârs, Berlin, Druck und Verlag von Georg Reimer, 1909.

³ Mann O., Kurdisch-persische Forschungen: Ergebnisse einer von 1901 bis 1903 und 1906 bis 1907 in Persien und der asiatischen Türkei ausgeführten Forschungsreise, Abteilung II, Die Mundarten der Lur-Stämme im südwestlichen Persien, Berlin, Druck und Verlag von Georg Reimer, 1910.

ժողովրդական երգերի նմուշներ⁴, իսկ երկրորդ հատորում՝ դրանց գերմաներեն թարգմանությունները⁵:

Առաջին համաշխարհային պատերազմը, դրա հարկադրած մասնագիտական որոշ, բայց, բնականաբար, ոչ բարբառագիտական աշխատանքները և ապա առողջության կտրուկ վատթարացումն ու վաղաժամ մահը, ցավոք, ընդհատում են տաղանդավոր իրանագետի ծրագրած և մասնագիտական գրականության մեջ KPF հապավմամբ հայտնի «քրդական–պարսկական հետազոտությունների» (Kurdisch-Persische Forschungen) շարքի տպագրությունը:

Օսկար Մաննի անտիպ դաշտային նյութերի և հետազոտությունների մի մասը, այնուամենայնիվ, չպետք է երկար սպասեին իրենց հրատարակողին, և, չանցած մեկ տասնամյակ, վերջինիս գործընկերներից Կառլ Հադանկը (1882–1945 թթ.) ստանձնում է ծանր մի աշխատանք, և ընկերոջ վաղաժամ մահից հետո քրոջից ի պահ է ստանում անձնական արխիվի մեծ մասը և սկսում նրա արևմտաիրանական դաշտային նյութի ու հետազոտությունների մշակումն ու տպագրումը՝ 6 տարվա ընթացքում, ըստ էության, ավարտին հասցնելով Մաննի ծրագրած KPF շարքի 3-րդ հատորի, այն է կենտրոնական իրանական բարբառների և հյուսիսարևմտաիրանականներից գուրանիի և զազայերենի հիմնական

⁴ Mann O., *Kurdisch-Persische Forschungen, Ergebnisse einer von 1901 bis 1903 in Persien ausgeführten Forschungsreise, Abteilung IV, Band III, Die Mundart der Mukri-Kurden. Teil I. Grammatische Skizze, Texte in phonetischen und persischer Umschrift*, Berlin, Druck und Verlag von Georg Reimer, 1906.

⁵ Mann O., *Kurdisch-Persische Forschungen, Ergebnisse einer von 1901 bis 1903 und 1906 bis 1907 in Persien und der asiatischen Türkei ausgeführten Forschungsreise, Abteilung IV, Band III, Die Mundart der Mukri-Kurden. Teil II. Deutsche Übersetzung der Texte mit einer Einleitung über Inhalt und Form der ostkurdischen Volksepiek*, Berlin, Druck und Verlag von Georg Reimer, 1906.

մասի⁶ լույս ընծայումը⁷: Կառլ Հադանկի խմբագրությամբ և մանրամասն ներածություններով 1926–1932 թթ. լույս են տեսնում Օսկար Մաննի KPF շարքի արդեն երրորդ հատորի երեք և առավել կարևոր գրքերը, որոնցից առաջինը նվիրված է կենտրոնական իրանական բարբառներին (խունսարի, մահալլաթի, նաթանգի, նայինի, սոհի, քոհրուդի) և սրանց հետ սերտորեն կապված Մեմնանի ու Միվանդի խոսվածքներին⁸, երկրորդը՝ գուրանիական (քանդուլաի, ավրամանի, բաջալանի, բիվանիջի, գյահվարաի, ռիջաբի, սայլիդի և զարդաի) խոսվածքներին⁹, և երրորդը՝ նվիրված զագայերենին, մասնավորապես դեյլամական չորս՝ Սևերեկի (/Քըչադի), Քդիի, Կորի և Ճապադջրի խոսվածքներին, որի դաշտային նյութը Մաննը հավաքել էր իր երկրորդ ուղևորության ընթացքում՝ 1906 թ. հուլիսին¹⁰:

⁶ Հատորի ամբողջական բովանդակությունը՝ ըստ առանձին գրքերի, որոնք Մաննը նախատեսել էր լույս ընծայել, տե՛ս «Հավելված»-ում:

⁷ Կառլ Հադանկի և Մաննի մահից հետո KPF շարքի հաջորդ երեք հատորների գործում Հադանկի կատարած աշխատանքների մանրամասները տե՛ս Paul L. Karl Hadank (1882–1945) and the Kurdisch-Persische Forschungen: Ambitions, Achievements, and Ideological Entanglements, *Diyâr 1/2*, 2020, pp. 289–309.

⁸ Mann O., *Kurdisch-Persische Forschungen, Ergebnisse einer von 1901 bis 1903 und 1906 bis 1907 in Persien und der asiatischen Türkei ausgeführten Forschungsreise, Abteilung III (Nordwestiransich), Band I, Die Mundarten von Khunsâr, Mahallât, Natânz, Nâyin, Sâmnân, Sîvând und Sô-Kohrud*, bearbeitet von Karl Hadank, Berlin und Leipzig, Verlag von Walter de Gruyter & Co, 1926.

⁹ Mann O., *Kurdisch-Persische Forschungen, Ergebnisse einer von 1901 bis 1903 und 1906 bis 1907 in Persien und der asiatischen Türkei ausgeführten Forschungsreise, Abteilung III (Nordwestiransich), Band II, Die Mundarten der Gûrân, besonders das Kândûlâi, Auramânî und Bâdschâlânî*, bearbeitet von Karl Hadank, Berlin, Verlag der Akademie der Wissenschaften, in Kommission bei Walter de Gruyter & Co, 1930.

¹⁰ Mann O., *Kurdisch-Persische Forschungen, Ergebnisse einer von 1901 bis 1903 und 1906 bis 1907 in Persien und der asiatischen Türkei ausgeführten Forschungsreise, Abteilung III (Nordwestiransich), Band IV, Mundarten der Zâzâ, hauptsächlich aus Siwerek und Kor*, bearbeitet von Karl Hadank, Berlin, Verlag der Akademie der Wissenschaften, in Kommission bei Walter de Gruyter & Co, 1932.

Վերջնարդյունքում Կառլ Հադանկը լույս է ընծայում Օսկար Մաննի՝ KPF շարքով տպագրության համար ծրագրված նյութերի երրորդ գրքի (Abteilung III)՝ հյուսիսարևմտաիրանականի (nordwestiransich) հիմնական նյութը՝ բաց թողնելով միայն «Հատոր երրորդը» (*Band III), որը պետք է հաջորդեր «Հատոր երկրորդին»՝ գուրանիականին (Band II), և նախորդեր վերջին չորրորդին՝ գալայերենի բարբառներին (Band IV):

2020 թ. պրոֆ. Լ. Պուլը կարողացավ լույս սփռել այն հարցի վրա, թե ինչ էր նախատեսված տպագրության համար երրորդ գրքի՝ հյուսիսարևմտաիրանականի «Մաս երրորդի» տակ (*Band III), որն այդպես էլ Կ. Հադանկը դեռևս չպարզաբանված պատճառներով լույս չի ընծայել մինչև իր մահը¹¹: Պարզվում է՝ «Մաս երրորդով» նախատեսվում էր Մուքրիի քրդերենի օրինակով տպագրել գուրանիի տեքստային հատորը, որը վերնագրված էր «Նմուշներ գորանիական գրականությունից» (գերմ. Proben aus der Gorani-Literatur) և որի ուղիղ կեսը Հադանկը մշակել էր արդեն 1935 թ. վերջին, իսկ 1937 թ. վերջին արդեն ամբողջությամբ հասցրել ավարտին, գրել բովանդակ մի ներածություն, պատրաստել գերմաներեն թարգմանությունը, ավելացրել բառացանկ՝ գերմաներեն համարժեքներով¹²: Դեռ անտիպ այս հատորում գետեղված է 1763 թ. Միրզա Ալմաս Խանի գրչին պատկանող «Նադիրի գիրք» (Nāder-nāme, գուր. Nīyar-nāma) պատմական երկի 400 էջ ծավալով տառադարձված թարգմանությունը գուրանիով՝ ամբողջը թելադրված գուրանիախոս մեկ բարբառակրի կողմից¹³:

Նադիր-նամեի գուրանիով արված թարգմանությունը մինչ սպասում է իր հրատարակողին, Բարբառա Շթրոյլին լույս է ըն-

¹¹ Paul L., op. cit., pp. 296-298.

¹² Ibid.

¹³ Ibid.

ծայել Օսկար Մաննի՝ Ուրֆայում 1906 թ. գարնանը քուրդ աշուղներ Շեյխ Բոզանից (Բերազի ցեղից), Այիբ Ադա Թեմիրից և իր ուղեկից թարգմանիչ Օսմանօղլուից գրառած քրդական բանահյուսական տեքստերը, որոնք, ըստ Բարբարա Շրյոդերի, Մաննը նախատեսել էր տպագրել KPF չորրորդ հատորում, առանձին գրքով՝ «Արևմտակուրմանջիական բարբառներ. ժողովրդական էպոսներ և գեղարվեստական պոեզիայի նմուշներ» (էջ 9) վերնագրով:

Գրքում հրատարակողի՝ Բարբարա Շրյոդլիի ծավալուն՝ մոտ 60 էջանոց ազգագրագիտական և բանագիտական առաջաբանից հետո, տեղ է գտել հարավ-արևմտյան քրդերենով՝ Մաննի գրառած 14 տեքստ: Տեքստերից առաջին չորսը (էջ 65–75) փոքր պատումներ են՝ ասված Օսմանօղլուի կողմից, որոնք ունեն ոչ միայն լեզվաբանական, այլ նաև սկզբնաղբյուրային բարձր արժեք: Պատումներից մեկը վերաբերում է 1875 թ. Մինջարում իրականացված եզդիական ջարդերին և, դա, ըստ էության, վկայություն է ականատեսի (Օսմանօղլուի):

Հաջորդ 5 պատումները (էջ 76–102) օրհներգեր են՝ նվիրված քրդական Միլան ցեղի առաջնորդներին, մասնավորապես Թեմիր Փաշային, Այիբ Ադային, Իբրահիմ Փաշային, որոնք Մաննը գրառել է Շեյխ Բոզանից: Վերջին երրորդ բաժնում զետեղված է 5 էպիկական պատում, որոնցից վերջին երկուսը «Մամ ու Զին» քրդական ժողովրդական ասքի երկու տարբերակներ են՝ գրառված համապատասխանաբար Շեյխ Բոզանից (էջ 159–183) և Այիբ Ադա Թեմիրից (էջ 184–228): Մյուս էպիկական պատումներից առաջինը (Siyamed, էջ 103–131), երկրորդը (Ali(yê) Hacılarî, էջ 132–137) և երրորդը (Derwêşê Ewdî, էջ 139–158)¹⁴ պատմել է դարձյալ Շեյխ Բոզանը:

¹⁴ Derwêşê Ewdî քրդական ժողովրդական պատումի մեկ այլ տարբերակ, որի ասողի՝ դարձյալ քրդական Բերազի ցեղից սերող Բադի Խըրոյի (ապրել է Քոբանիում) ապրած

Գրքի վերջում գետեղված են լուսապատճեններ Մաննի ձեռագրերից, նաև լուսանկարներ, որոնց մի մասն արվել է Օսկար Մաննի կողմից դեպի Արևելք իր երկու ուղևորությունների ժամանակ:

Կցված է նաև Շթրոյլիի կողմից կազմված քրդերենի բառացանկ՝ անգլերեն թարգմանություններով (էջ 246–255) և հատուկ անունների (անձնանուններ և տեղանուններ) համառոտ ցանկ (էջ 266–270):

Շթրոյլիի խմբագրությամբ լույս տեսած այս աշխատանքը էականորեն տարբերվում է KPF շարքի բոլոր մյուս գրքերից նախևառաջ իր ոճով և կառուցվածքով: Ի տարբերություն Մաննի և Հադանկի հրատարակած հատորների՝ այստեղ բացակայում է լեզվաբանական և բարբառագիտական մոտեցումը: Չկա, ըստ էության, այն ավանդական բարբառագիտական ներածությունը, որին սովոր է ընթերցողի աչքը Մաննի և Հադանկի հատորները բացելիս: Չկա բարբառագիտական քննություն, բառապաշարի առանձնահատկությունների վրա կենտրոնացում, քերականական և հնչյունական առանձնահատկությունների վերհանում, որոնք արել էր Մաննը իր հրատարակած չորս հատորներում, և որը պահպանել էր Հադանկը հաջորդ երեք հատորները հրատարակելիս: Բացակայում են նաև Մաննի գերմաներեն թարգմանությունները, որոնց վրա իրանագետը ծախսել էր ժամեր, կրկնակի և, երբեմն, եռակի անգամ ստուգել իր թարգմանիչների ու բարբառակիրների հետ: Փոխարենը, Մաննի թարգմանությունների գերմաներեն բնօրինակները փոխարինվել են Շթրոյլիի անգլերեն թարգմանություններով:

Ժամանակը երկու սերնդի չափով զիջում է Շեյխ Բոզանի ժամանակին, տպագրվել է Բարբառա Շթրոյլիի կողմից 2017թ. (Sträuli B., Dewrêşê Evdî – Dewresh, Son of Evdi): A Kurmanji epic as performed by the Berazi singer Baqî Xido, Göttinger Orientforschungen, Reihe 3, Iranica, 15, Wiesbaden, Harrassowitz Verlag, 2017.

Այսուհանդերձ, արվել է մեծ աշխատանք և հրապարակ են եկել Ուրֆայում Մաննի գրառած քրդերեն բանահյուսական տեքստերը՝ բարեբախտաբար, առանց Մաննի տառադարձության համակարգի խախտման ու խմբագրման:

Այսպիսով՝ այս հրատարակությամբ արդեն իրանագետների տրամադրության տակ են արևմտաիրանական լեզուների և բարբառների ուսումնասիրության ոլորտում Մաննի՝ չափազանց կարևոր KPF շարքի 4-րդ հատորի չորրորդ գրքի տեքստերը: Թեև, սրանով հանդերձ, KPF շարքից ամենաքիչ հրատարակվածը դեռևս շարունակում է մնալ հենց 4-րդ քրդական հատորը (տե՛ս Հատոր 4-ը Հավելվածում):

Այսպիսով՝ Օսկար Մաննի՝ 12 առանձին գրքով նախատեսված KPF շարքից այս պահին լույս է տեսել ուղիղ 2/3-ը՝ 8 գիրք, որոնցից 4-ը տպագրվել է հենց հեղինակի՝ Օսկար Մաննի կողմից, 3-ը՝ Կառլ Հադանկի, 1-ը՝ Բարբարա Շթրոյլի կողմից: Ամբողջապես տպագրված են 1-ին և 2-րդ հատորները, 3-րդ հատորի 3/4-ը, որի բացակա մեկ հատորը՝ «Նմուշներ գորանիական գրականությունից», Հադանկի կողմից ամբողջապես մշակվել է և, ըստ էության, պատրաստ է տպագրության: Մաննի նախատեսած 4-րդ քրդական հատորից, այս պահի դրությամբ տպագրված է ուղիղ 1/2-ը, իսկ մյուս կեսը մնում է անտիպ: Ավելին, ի տարբերություն երրորդ հատորի վերջին կտորի, որը պատրաստ է տպագրության, քրդական հատորի անտիպ մնացած հատվածի մշակման և տպագրության պատրաստման ուղղությամբ աշխատանքներ չեն իրականացվում:

Հավելված

Օսկար Մաննի՝ **KPF (Kurdisch-Persische Forschungen)** ամբողջական ցանկը՝ ըստ Վ. Նիկիտինի¹⁵

¹⁵ Никитин В., Курды. Пер. с французского, вступ. статья и редакция И.О. Фаризова, М., 1964, сс. 420-421.

Հատոր 1

Գիրք 1-2 – Ֆարս նահանգի, այսպես կոչված, տաճկական բարբառները¹⁶ (հրատարակվել է Օսկար Մաննի կողմից):

Հատոր 2

Պարսկաստանի հարավարևմտյան լուրական ծագման բարբառները¹⁷ (հրատարակվել է Օսկար Մաննի կողմից):

Հատոր 3

Գիրք 1 – Խունսարի, Մահալլաթի, Նաթանգի, Նայինի, Սեմնանի, Սիվանդի և Սո-Քոհոռոդի խոսվածքները¹⁸ (հրատարակվել է Կառլ Հադանկի կողմից):

Գիրք 2 – Գուրանի, ի մասնավորի Քանդուլաի, Ավրամանի, և Բաջալանի խոսվածքները¹⁹ (հրատարակվել է Կառլ Հադանկի կողմից)

Գիրք 3 – Նմուշներ գորանիական գրականությունից²⁰ (**անտիպ**)

Գիրք 4 – Ջազայերենի, գլխավորապես Սևերեկի և Կորի խոսվածքները²¹ (հրատարակվել է Կառլ Հադանկի կողմից)

Հատոր 4

Գիրք 1 – Քերմանշահ նահանգի հարավքրդական խոսվածքները. քերմանշահի և քալիորի, լաքի, փահրավանդի, նանաքալի, քուլլիահի²² (**անտիպ**)

¹⁶ Գերմ. Die Tâjik-Mundarten der Provinz Fârs:

¹⁷ Գերմ. Die Mundarten der Lur-Stämme im südwestlichen Persien:

¹⁸ Գերմ. Die Mundarten von Khunsâr, Mahallât, Natânz, Nâyin, Sâmnân, Sîvând und Sô-Kohrud:

¹⁹ Գերմ. Die Mundarten der Gûrân, besonders das Kândûlâi, Auramânî und Bâdschälânî:

²⁰ Գերմ. Proben aus der Gorani-Literatur:

²¹ Գերմ. Mundarten der Zâzâ, hauptsächlich aus Siwerek und Kor:

Գիրք 2 – Քրդստան նահանգի խոսվածքը՝ կից մեկ հավելվածով (գյարրուսի և քիրինդի)²³ (**անտիպ**)

Գիրք 3 – Մուքրի քրդերի խոսվածքը

Մաս 1 – Քերականության ուրվագծեր և տեքստեր՝ հնչյունագիր փոխադրմամբ և պարսկագիր²⁴ (հրատարակվել է Օսկար Մաննի կողմից)

Մաս 2 – Տեքստերի գերմաներեն թարգմանությունները՝ ներածությամբ արևելաքրդական ժողովրդական էպոսի բովանդակության և ձևի²⁵ (հրատարակվել է Օսկար Մաննի կողմից)

Մաս 3 – Գեղարվեստական պոեզիայի նմուշներ արևելակուրմանջիական բարբառով. տեքստեր և թարգմանություն²⁶ (**անտիպ**)

Գիրք 4 – Արևմտակուրմանջիական բարբառներ. ժողովրդական էպոսներ և գեղարվեստական պոեզիայի նմուշներ²⁷ (հրատարակված է այս գրախոսությամբ ներկայացվող գրքում Բարբարա Շթրոյլիի կողմից):

Արտյոմ Տոնոյան, ք.գ.թ.

ԵՊՀ իրանագիտության ամբիոնի դոցենտ,

ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի

Իրանի բաժնի գիտաշխատող

²² Գերմ. Die Südkurdischen Mundarten (aus der Provinz Kirmânshâh); Kirmânshâhî und Kälhurî, Lâkkî; Pâhrawândî, Nânakalî, Kullîâhî:

²³ Գերմ. Die Mundart der Provinz Kurdistân. Mit einem Anhang: Gârrûsî und Kirindî:

²⁴ Գերմ. Grammatische Skizze, Texte in phonetischen und persischer Umschrift:

²⁵ Գերմ. Deutsche Übersetzung der Texte mit einer Einleitung über Inhalt und Form der ostkurdischen Volksepik:

²⁶ Գերմ. Proben aus der Kunstpoesie der Ost-Kirmândschî-Dialekte; Texte und Übersetzung.

²⁷ Գերմ. Die westlichen Kirmândschî-Dialekte. Volksepen und Proben aus der Kunstpoesie.

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

POLITICAL NOTES ON THE TREATY OF SÈVRES

Naira Ginosyan¹

DOI 10.46991/jos.2024.25.1.332

Articles 88–93 of the Treaty of Sevres, signed on August 10, 1920, restored the rights of the Armenian people to a part of their homeland, which was Western Armenia. The mentioned articles of the Treaty of Sèvres de jure recognized not only the Republic of Armenia, including the Armenian provinces of Transcaucasia, but also the United Armenia, including Eastern and Western Armenia. The signatory countries, including the Turkish state defeated in World War I, recognized the independence of United Armenia and agreed to expand Armenia's borders to include most of the territories of the provinces of Erzurum, Van and Bitlis, as well as part of the province of Trabzon, thereby securing Armenia's access to the Black Sea. The publication presents several key points about the Treaty of Sèvres, which marked the collapse of the Ottoman Empire and aimed to divide its territories between the allied states. Alas, it was not realized.

Keywords: *Treaty of Sèvres, Western Armenia, National House, Allied Powers, legal document, delimitation, arbitral award.*

The Treaty of Sevres signed as of August 10, 1920 was considered by Armenian socio-political thought exclusively in the context of Articles 88–93, which are directly related to Armenia. This was quite natural, as these articles restored the right of the Armenian people to their homeland, a part of Western Armenia. The mentioned articles of the Treaty of Sevres de jure recognized not only the Republic of Armenia including the Armenian provinces of Transcaucasia, but also United Armenia with Eastern and Western Armenias united. The signatory states, including the Turkish state

¹ Naira Ginosyan is an Associate Professor at the Department of Turkic Studies at the Faculty of Oriental Studies at Yerevan State University, E-mail naira.ginosyan@ysu.am, ORCID`0009-0008-2004-682X

that was defeated in the First World War, recognized the independence of United Armenia and agreed to expand the borders of Armenia by annexing most of the territories of the provinces of Erzurum, Van and Bitlis, as well as part of the province of Trabzon, thus ensuring the exit of Armenia to the Black Sea.

The Conference of the Prime Ministers and Foreign Ministers of England, France, Italy and Japan, convened in London from February 12 to April 10 in 1920, worked out all the main technical issues related to the Armenian-Turkish border.

On April 26, on the initiative of the Prime Minister of Great Britain D. George Lloyd the issue of the demarcation of Armenian territories was redirected to US President W. Wilson, who was invited to take on the role of border arbitrator².

The arbitration process started before the signing of the Treaty of Sevres, therefore it was a completely independent international legal document by Great Britain, France, Italy, Japan, as members of the Supreme Council of the Allied Powers on the one hand, and Woodrow Wilson, as President of the United States on the other³.

W. Wilson had signed the arbitral resolution just 10 days before the Sovietization of Armenia on November 22, 1920. The official and full name of the resolution is “Decision of the President of the United States of America respecting the frontier between Turkey and Armenia, access for Armenia to the sea and the demilitarization of the Turkish territory Adjacent to the Armenian Frontier”⁴. The arbitral award made by US President Woodrow Wilson on the demarcation of the Armenian-Turkish border is an international legal document by which Ottoman-era Turkey, subject to legal rights, was held politically responsible for the Armenian

² Մախմուդյան Գ., Հայաստանի սահմանի հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի գործունեությունը, Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավաբար վճիռը, Երևան, 2020, էջ 81:

³ Մարուքյան Ա., Հայոց Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014, էջ 115:

⁴ Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. IV, Երևան, 2016, էջ 48:

Genocide. This document deprived Turkey of its sovereignty over its former territories⁵. The area to be transferred to Armenia by an arbitral resolution was to be 103 599 sq. km, approximately 40% of Western Armenia⁶.

The 1921 London Conference should be considered as attempt to review the Treaty of Sevres. In January 1921, at a meeting of the Entente General Council in Paris, France proposed a revision of the Treaty of Sevres. In February-March of the same year, at a conference in London with the participation of Germany and the Ottoman Empire, which had lost the war to the Entente Powers, the issue of revising the reconciliation of the Treaty of Sevres was discussed at the suggestion of France and Italy. On the eve of the conference, the official delegation of the Republic of Armenia headed by Avetis Aharonyan and the National delegation headed by Boghos Nubar Pasha had arrived in London.

In that conference an attempt was made to replace the provisions of the Treaty of Sevres, which represented the legal rights of Armenia and the Armenian people, with the vague idea of a “Home National”, which, however, was rejected by the Turks themselves. By rejecting this idea at the London conference, the Turks themselves were, in fact, the first to reject the cancellation of the Treaty of Sevres⁷.

The Treaty of Sevres could only be replaced by a new document in London, the preamble of which should have specifically emphasized that the treaty was revising or amending the previously signed Treaty of Sevres. Albeit the signatories of the Treaty of Sevres in London announced their intention to revise it, no document was signed during the London Conference. This means that the conference did not achieve its goal, and the attempt to review the Treaty failed.

⁵ Մարուքյան Ա., Հայոց Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, 2014, էջ 120:

⁶ Պապյան, Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հողվածների ժողովածու), Երևան, 2007, էջ 75:

⁷ Ահարոնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր 1919–1927), Երևան, 2001, էջ 142–158:

The Treaty of Sevres, together with the award of Mr. Wilson upon the boundaries of the proposed Armenian State, constitutes Armenia's political charter of independence. The Armenian clauses of that Treaty were drafted by the Allies without consultation with Armenian representatives. Consequently, it is upon the Allies that the responsibility for executing those clauses falls, and the official representatives of the Armenians have no moral or legal justification for renouncing their rights as recognized by the Allies in the Treaty of Sevres, at least until that document is technically abrogated by a fresh treaty.

Already, however, it has long been obvious that the Allies do not have the will to enforce the Treaty of Sèvres as it stands.

Although the Allies are solely responsible for this situation, the Armenians are the worst sufferers (compare, for example, Poland or Czecho-Slovakia):

(1) Turkish Armenia is in the hands of Mustafa Kemal, who has also seized certain territory in Russian Armenia, including Kars and Ardahan;

(2) the rest of Russian Armenia is in the hands of a Soviet Government forming part of the Russian Socialist Federal Soviet Republic, and the people have accepted this regime as the best hope of peace;

(3) Cilicia or Little Armenia is at the moment occupied by French troops, who however are to evacuate it almost immediately according to the recently signed agreement between France and the Angora Government. No provision is made for the effective protection of the non-Turkish populations when this territory is handed back to the Turks, and in the East it is widely believed that the evacuation of French troops will be followed by the systematic extermination of the non-Turkish elements.

In March 1921, the Allies made certain proposals for the modification of the Treaty of Sèvres, in as much as Armenia was concerned, the proposals required only the recognition by Turk of the right of Turkish Armenians to a national home on the eastern frontiers of Turkey in Asia, the boundaries of which were to be delimited by a Commission appointed by the Council of the League of Nations. These proposals were not

accepted by the Immediate protagonists, Greeks and Turks, who went on with their war today, nine months later, still no military decision has been reached. But it is highly probable that in the near future the Allies will make another attempt to work out a settlement in the Near East. It is in their own interest to put a stop to the political ferment and economic dislocation caused by the war, and it appears as if both Greece and Turkey would now be prepared to negotiate.

It is clear that any further negotiations must start from the Allied proposals of March 1921, this must be so as regards Armenia at least, for in September 1921 the Assembly of the League of Nations - which the Allies cannot very well ignore - adopted the following resolution:

*Seeing that the First Assembly on November 18th, 1920, entrusted the Council with the duty of safeguarding the future of Armenia;

that the Council on February 25th, 1921, while holding that the situation in Asia Minor made action for the time being impossible, entrusted the Secretary General with the duty of watching developments in Armenian affairs with a view to procuring subsequent decisions by the Council:

And that in the meantime the Supreme Council in the revision of the Treaty of Sèvres proposed to make provision for a National Home for the Armenians;

Seeing, further, the probable imminence of a Peace Treaty between Turkey and the Allied Powers at no distant date:

The Assembly urges the Council to press upon the Supreme Council of the Allies the necessity of making provisions in this Treaty for safeguarding the future of Armenia, and in particular of providing the Armenians with a National Home entirely Independent of Turkish rule.

It is incumbent upon the Allies, in creating a national home for the Armenians, to give it a form that will enable it to exist in spite of the open or veiled hostility of its neighbor,

Turkey. If the national home is created under conditions that themselves constitute prima facie evidence of its inability to maintain itself, even in the most favorable circumstances conceivable, the nations of the

world, whether members of the League or not, will hardly feel justified in making on its behalf efforts that would have no permanent value. In this connection, two points are of importance.

In the first place, guarantees must be obtained for the evacuation by Turkey of the territories to be assigned to the Armenian national home. For this purpose, the concessions to Turkey that are contemplated in other regions should be made conditional upon her previously evacuating the Armenian territory that it now holds. Turkish interests, however, might be directly represented in the Commission or other transitional regime which will presumably be needed to supervise the evacuation and carry on the administration until more permanent institutions are established.

In the second place, the territory to be transferred to form an Armenian national home must cover an area which potentially at least - comprises a geographical and economic unit, capable of military defense. An Armenia without territorial access to the sea does not fulfill this condition; nor does any Armenian State on the eastern frontiers of Turkey which leaves the latter in occupation of the Erzurum plateau.

The frontiers of Armenia as laid down by Mr. Wilson may be open to slight modification in detail, but in general, they give to Armenia most of the Turkish territory, which is justly hers, and little more than is necessary to make possible the existence of an independent Armenian State. For these reasons the Committee strongly urges that the terms of reference of the proposed League of Nations Commission to delimit the frontiers of the Armenian national home shall be based upon Mr. Wilson's award, and also take into consideration the distribution of races in the eastern vilayets of Turkey before August 1914, if not before the methodical massacres of Abdul Hamid. In order that the decisions of the Commission may enjoy the respect both of Turkey and of these countries which may be asked to provide material or other assistance for the Armenian national home, the Committee suggests that the majority of the Commission be nationals of neutral states, and that in any case its president be a subject of a neutral power who would command international confidence.

The Committee also wishes to urge upon the Supreme Council of the principal Allied Powers that the Council of the League of Nations be invited to appoint a Commission for the purpose of outlining a form of administration or constitution for the Armenian national home, upon which it would be willing to take action as suggested in its Memorandum of 11th April 1920.

NAA, f.412, l. 1, work 2316, p. 1–4.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՄԵՎՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Նաիրա Գինոսյան⁸

1920 թվականի օգոստոսի 10-ին ստորագրված Սևրի պայմանագրի 88-93 հոդվածներով վերականգնվում էր հայ ժողովրդի իրավունքը իր հայրենիքի մի մասի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ:

Սևրի պայմանագրի նշված հոդվածները դե յուրե ճանաչում էին ոչ միայն Հայաստանի Հանրապետությունը՝ ներառելով Անդրկովկասի հայկական գավառները, այլև Միացյալ Հայաստանը՝ Արևելյան և Արևմտյան Հայաստաններով միավորված: Ստորագրող երկրները, այդ թվում՝ Առաջին համաշխարհային պատերազմում պարտված թուրքական պետությունը, ճանաչեցին Միացյալ Հայաստանի անկախությունը և համաձայնեցին ընդլայնել Հայաստանի սահմանները՝ միացնելով Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգների տարածքների մեծ մասը, ինչպես նաև Տրապիզոնի նահանգի մի մասը՝ դրանով իսկ ապահովելով Հայաստանի ելքը դեպի Սև ծով:

Հրապարակման մեջ ներկայացվում են Սևրի դաշնագրի մասին մի քանի հիմնական կետեր, որոնք նշանավորում էին Օսմանյան կայսրության փլուզումը և նպատակ ունեին նրա տարածքները բաժանել դաշնակից պետությունների միջև: Ավաղ, այն կյանքի չկոչվեց:

⁸ Նաիրա Գինոսյանը ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնի դոցենտ է, պատմական գիտությունների թեկնածու, Էլ. փոստ naira.ginosyan@ysu.am, ORCID՝ 0009-0008-2004-682X:

Բանալի բառեր. *Սևրի պայմանագիր, Արևմտյան Հայաստան, Ազգային տուն (օջախ), դաշնակից տերություններ, իրավական փաստաթուղթ, սահմանազատում, իրավաբար վճիռ:*

ПОЛИТИЧЕСКИЕ ЗАМЕТКИ О СЕВРСКОМ ДОГОВОРЕ

Наира Гиносян⁹

Статьи 88–93 Севрского договора, подписанного 10 августа 1920 года, восстановили права армянского народа на часть его родины – Западной Армении.

Упомянутые статьи Севрского договора де-юре признавали не только Республику Армения, включая армянские провинции Закавказья, но и Единую Армению, объединенную Восточную и Западную Армению. Страны-подписанты, в том числе потерпевшее поражение в Первой мировой войне турецкое государство, признали независимость Единой Армении и согласились расширить границы Армении, включив в нее большую часть территорий провинций Эрзурум, Ван и Битлис, а также часть провинции Трабзон, тем самым обеспечив выход Армении к Черному морю.

В публикации представлены несколько ключевых моментов Севрского договора, ознаменовавшего распад Османской империи и направленного на раздел ее территорий между союзными государствами. Увы, он не воплотился в жизнь.

Ключевые слова: *Севрский договор, Западная Армения, национальный дом, союзные державы, правовой документ, делимитация, арбитражное решение.*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ահարնյան Ա., Սարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր 1919–1927 թթ.), ԵՊՀ հրատ., Երևան, 2001, 252 էջ:

⁹ Наира Гиносян – к.ист.н., доцент кафедры тюркологии факультета востоковедения ЕГУ, эл. почта naira.ginosyan@ysu.am, ORCID՝ 0009-0008-2004-682X.

2. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ. IV, Երևան, Տիգրան Մեծ, 2016, 546 էջ:

3. Մախմուրյան Գ., Հայաստանի սահմանի հարցով Վ. Վիլսոնի կոմիտեի գործունեությունը, Սևրի պայմանագիրն ու ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար վճիռը, Երևան, Լուսակն, 2020, 250 էջ:

4. Մարության Ա., Հայոց Ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, Պատմության ինստ., 2014, 332 էջ:

5. Պապյան Ա., Հայոց պահանջատիրության իրավական հիմքերը (հոդվածների ժողովածու), Երևան, 2007, 119 էջ:

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
ԹՅՈՒՐՔԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ, Պ.Գ.Թ.,
ՊՐՈՖ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԻԼԵՆԻ ՍԱՖԱՐՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՑՈՒՑԱԿ**

ԴԱՍԱԳՐՔԵՐ

1. Թուրքերենի դասագիրք (երաշխավորվել է ՀՀ ԿԳՆ կողմից որպես դասագիրք բուհերի ուսանողների համար), Երևան, 2001, 320 էջ (համահեղինակ՝ Աշոտ Սողոմոնյան):
2. Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, երրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2007, 316 էջ (համահեղինակներ՝ Աշոտ Սողոմոնյան, Տիրան Լոքմագյոզյան):
3. Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, չորրորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2011, 316 էջ (համահեղինակներ՝ Աշոտ Սողոմոնյան, Տիրան Լոքմագյոզյան):
4. Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, հինգերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2013, 318 էջ (համահեղինակներ՝ Աշոտ Սողոմոնյան, Տիրան Լոքմագյոզյան):
5. Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, վեցերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2015, 320 էջ (համահեղինակներ՝ Աշոտ Սողոմոնյան, Տիրան Լոքմագյոզյան):
6. Օսմաներենի դասագիրք., Երևան, 2016, 324 էջ, (համահեղինակ՝ Անի Սարգսյան, Լուսինե Սահակյան):
7. 8. Թուրքերենի դասագիրք, գիրք Ա, յոթերորդ լրամշակված հրատարակություն, Երևան, 2021, 326 էջ (համահեղինակներ՝ Աշոտ Սողոմոնյան, Տիրան Լոքմագյոզյան):

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

8. «Թուրք գրականության պատմության» դասընթացի ծրագիր, Երևան, 2007, 28 էջ (համահեղինակներ՝ Լուսինե Սահակյան, Միրանույշ Գալշոյան):
9. Թուրքերենի ծրագիր, Երևան, 2010, 20 էջ (համահեղինակներ՝ Ռուբեն Մելքոնյան, Քնարիկ Միրզոյան, Լուսինե Սահակյան):
10. «Տնտեսական թյուրքականությունը», Էտատիզմի քաղաքականությունը Թուրքիայում և տնտեսության «թուրքացումը», Երևան, 2012, 48 էջ:

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

11. Զիյա Գյոքալփը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012, 300 էջ:
12. Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը Թուրքիայի հասարակական-քաղաքական դիսկուրսում, Երևան, 2017, 190 էջ (համահեղինակներ՝ Դավիթ Սաֆարյան, Գուրգեն Մելիքյան, Վարդան Ոսկանյան):

ՀՈՒՎԱԾՆԵՐ

13. О гуманизме Григора Нарекаци и поэтов суфиев. Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 1990, թիվ 7, էջ 62–68:
14. Ի վկայություն Նարեկացու աստծվածաբանական ռեալիզմի, «Երևանի համալսարան» (Գիտաինֆորմացիոն հանդես), ԵՊՀ, 1992, թիվ 3 (74), էջ 31–34:
15. Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների «ադապտացման» մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, 1993, թիվ 2, էջ 103–113:

16. Մտորումներ Գրիգոր Նարեկացու և սուֆի բանաստեղծների բարոյագիտական հայացքների մասին, «Իրան-Նամե», թիվ 1, 1993, հունիս, էջ 29–30:
17. Բոնադատված Հրաչյա Աճառյանի «գործը» (գիտնականի կենսագրության երկու անհայտ տարին), Արևելագիտական հանդես - «Իրան-Նամե», թիվ 4–5, (20–21), Երևան, 1996: Արտատպ.՝ «Ալիք» (Իրան), փետրվարի 17–18, 19, 20; 1997, էջ 10–1, (համահեղինակ՝ Ռ. Ավագյան):
18. Գրախոսություն. Պ. Խաչատրյան. Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, գիրք Ա, Սուրբ Էջմիածին, 1996 թ., Արևելագիտական հանդես - «Իրան-Նամե», թիվ 6, (1996), 7 (1997) (22), էջ 20–21, (համահեղինակ՝ Ս. Մխիթարյան):
19. Հայացք հայ-ադրբեջանական հարաբերություններին (գերմաներեն), «Վոստոկ» (Քյոլն, Գերմանիա), 2/1997, էջ 21, (համահեղինակ՝ Հ. Քոթանջյան):
20. Գրախոսություն. Արևելագիտական նոր ժողովածու (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, հատ. XIV, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1996 թ.), «Հանդես Երևանի համալսարանի», 1997, թիվ 2 (88) (համահեղինակ՝ Ա. Ստամբոլցյան):
21. Փաստաթղթեր բոնադատված Գրիգոր Չուբարյանի «Գործերից» (Էջեր մեծ իրավագետի «դանթեականից»), Արևելագիտական հանդես - «Իրան-Նամե», թիվ 1-2-3, Երևան, 2000, էջ 24–36 (համահեղինակ՝ Ռ. Ավագյան):
22. Արժեքավոր ներդրում հայ իրավունքի ուսումնասիրության գործում (գրախոսություն – Р. Авакян. Памятники армянского права, Ереван (ЕФ МНЮИ – XX век). Արևելագիտական հանդես «Իրան-Նամե», հատ. 36, 2001/ նույնը՝ ЕФ МНЮИ – XXI век, N 15, 2001, էջ 67–68) (համահեղինակներ՝ Հ. Հովսեփյան, Ս. Ստեփանյան):

23. «Օսմանյան մոդելի» քննադատությունը Ջիյա Գյոքալվիի «Թյուրքականության հիմունքները» աշխատությունում, Արևելագիտական հանդես «Իրան-Նամե», հատ. 37, թիվ 2, 2001, էջ 1–6:
24. Ջիյա Գյոքալվիը՝ կրթության և դաստիարակության հիմնահարցերի մասին, «Արևելագիտական ժողովածու», Հատոր 5-րդ, Երևան, 2004, էջ 288–309:
25. Պրոֆեսոր Մ. Հ. Քոչարի կյանքի ու գիտամանկավարժական գործունեության մասին, «Արևելագիտական ժողովածու», Հատոր 5-րդ, Երևան, 2004, էջ 3–7 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):
26. Ziya Gökalp on National Education, Iran and the Caucasus.
27. Volume 8.2, BRILL, Leiden-Boston, 2004, pp. 219–229.
28. Ջիյա Գյոքալվիը՝ թուրքական տնտեսության զարգացման մասին, Հայոց մեծ եղեռն-90: Հոդվածների ժողովածու, Երևան, 2005, էջ 416–431:
29. Մեծ եղեռնի և ազգային վերածննդի արտացոլումը Հրաչյա Քոչարի ստեղծագործություններում, հրապարակախոսության մեջ և նամակներում, Հայոց Մեծ եղեռն-90 (հոդվածների ժողովածու), Երևան, 2005, էջ 510–523 (համահեղինակ՝ Ն. Քոչար):
30. Ջիյա Գյոքալվիը՝ թուրք կանանց իրավունքների մասին, «Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ» (պատ. իսր. պրոֆ.՝ Ռ. Ա. Սաֆրաստյան), հ. 4, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2006, էջ 13–37:
31. Սուրեն Սահակյանի գրառած «Ասք Անդրանիկի մասին» վիպասքի պատմաբանասիրական արժեքը, Արևելագիտության հարցեր, հատոր 5, Երևան, 2006, էջ 262–295 (համահեղինակ՝ Լ. Սահակյան):
32. Ժամանակակից թուրքերենի դերբայների դասակարգման հիմնահարցի շուրջ, Արևելագիտության հարցեր, հատոր 6, Երևան

- 2006, էջ 296–318 (համահեղինակներ՝ Լ. Սահակյան, Լ. Ամիրխանյան):
33. *Armenie – Turquie: en finir avec le dernier mur de la honte*, France - Armeniet. Tout sur l'Armenie. Hors Serie 2006. Paris, pp. 284–285.
34. Ժամանակակից թուրքերենի անորոշ դերբայի ձևաբանական և շարահյուսական առանձնահատկությունները, «Լրաբեր հասարակական գիտությունների», ՀՀ ԳԱԱ, Երևան, 2007, էջ 84–91 (համահեղինակ՝ Լ. Ամիրխանյան):
35. *On the History of Turkish Feminism, "Iran and the Caucasus"*, Volume 11.1, Brill, Leiden-Boston, 2007, pp. 141–152.
36. Զորավար Անդրանիկի մասին վիպասքի ակունքները, պատմաբանական առանձնահատկությունները և արժեքը, Ասք Անդրանիկ զորավարի մասին (բանահավաք և մշակող՝ Սուրեն Սահակյան), Երևան, 2008, էջ 3–13 (համահեղինակ՝ Լ. Սահակյան):
37. «Ֆուտբոլային դիվանագիտության» արտացոլումը Թուրքիայի ԶԼՄ-ներում, «Աշխատանքային տետրեր», հ. 3–4 (7–8), ՀՀ ՊՆ հրատ., Երևան, 2008, էջ 184–196 (համահեղինակ՝ Ար. Սաֆարյան):
38. Ակադեմիկոս Վ. Ա. Գորդլևսկին՝ Օսմանյան կայսրությունում բռնի իսլամացման մասին, «Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ», (պատ. խմբ.՝ պրոֆ. Ռ. Սաֆրաստյան), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, թիվ 6, Երևան, 2009, էջ 298–304 (համահեղինակ՝ Ռ. Մելքոնյան):
39. Պրոֆեսոր Ջոն Կիրակոսյանի գիտամանկավարժական գործունեությունը /համառոտ ակնարկ/, Ջոն Կիրակոսյան. անկախ պետականության և քաղաքական հայագիտության ակունքներում (խմբ.՝ Ա. Ջ. Կիրակոսյան), ՀՀ ԳԱԱ արևելագի-

տության ինստիտուտ, Երևան, 2009, էջ 558–561 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):

40. Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհը, «Կանթեղ» Գիտական հոդվածների ժողովածու, 4/29/, Երևան, 2006, էջ 58–65 /նույնը՝ «Գրական համալսարան», ԵՊՀ հրատ., Երևան, 2009, էջ 471–480 (համահեղինակ՝ Ռ. Մելքոնյան):
41. Թուրքական հասարակական կարծիքը՝ Հայաստանի և Թուրքիայի միջև ստորագրված արձանագրությունների մասին, Տասը հարց, տասը պատասխան. Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման ու երկկողմ հարաբերությունների զարգացման մասին արձանագրություններ: Տեսակետներ են հայտնում ԵՊՀ փորձագետները (խմբ.՝ Ա. Հ. Միմոնյան), Երևան, 2009, էջ 18–20:
42. Ցեղասպանության հիշողությունն իբրև հարստություն (գրախոս.), «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ», թիվ 2, Երևան, 2010, էջ 26–29 (համահեղինակ՝ Ռ. Մելքոնյան):
43. Գրախոս. Ս. Ռամազյան, Հայ-հունական ռազմական առնչությունների և համագործակցության պատմություն, Աթենք, «Միջազգային հարաբերություններ. Հայկական աշխարհ», թիվ 3, 2010, էջ 58–59 (համահեղինակ՝ Վ. Ոսկանյան):
44. Ժամանակակից թուրքերենի մակբայական դերբայի իմաստաքերականական յուրահատկությունների մասին, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ (խմբ.՝ Ռ. Մաֆրասոյան), VII, Երևան, 2011, էջ 34–56 (համահեղինակներ՝ Լ. Սահակյան, Լ. Ամիրխանյան):
45. О стремлении вовлечения Турции в процесс урегулирования карабахского конфликта. Армяно-российское взаимодействие и

- региональные проблемы (материалы международной конференции). Ереван, 2011, с. 52–56 (соавтор Ар. Сафарян).
46. Նոր արժեքավոր գիրք Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմնախնդիրների մասին, «Միջազգային հարաբերություններ. հայկական աշխարհ», թիվ 4, Երևան, 2011, էջ 50–52 (համահեղինակ՝ Ար. Սաֆարյան):
47. Ռուբեն Մելքոնյան, Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, «Նորավանք» հրատ., 2009, 112 էջ (գրախոս.), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 4 (632), նոյեմբեր-դեկտեմբեր, 2011, էջ 295–296:
48. Բաքիի՝ Երևանի Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ-Մատենադարանում պահվող N 321 ձեռագիրը, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2-3 (634-635), Մայիս-օգոստոս, սեպտեմբեր-դեկտեմբեր, 2012, էջ 442-446 (համահեղինակներ՝ Ա. Սարգսյան, Գ. Մելիքյան):
49. XVII դարի գրիչ Ավետիքի՝ Մատենադարանի № 3522 ձեռագրի պատմաբանասիրական արժեքը, «Իրան-Նամե»-արևելագիտական հանդես, հատոր 44–45, 2012–2013, էջ 48–51 (համահեղինակներ՝ Լ. Սահակյան, Գ. Մելիքյան):
50. Ակադեմիկոս Վլադիմիր Գորդլևսկին՝ հայագիտական հիմնահարցերի մասին, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների ժողովածու), VII, ԵՊՀ հրատ., Երևան, 2012, էջ 148–165 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):
51. Մահթումկուլի-Ֆրագիի բանաստեղծությունների հայերեն երրորդ հրատարակության առթիվ, Մահթումկուլի-Ֆրագի, Հատընտիր (կազմ. և խմբ.՝ Վ. Խաստուր և Ալ. Սաֆարյան), Երևան, 2014, էջ 178–181 (համահեղինակ՝ Ա. Սիմոնյան):

52. Պողոսյան Վարուժան, Հայոց ցեղասպանության առաջին փուլը ֆրանսիական պատմագրության և հասարակական-քաղաքական մտքի գնահատմամբ (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ) (Երկրորդ, բարեփոխված և լրացված հրատարակություն), Երևան, ԵՊՀ հրատ., 2011 (գրախոսություն), Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), № 8, ԵՊՀ հրատ., Երևան, 2013, էջ 213–218 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):
53. Քեմալականների լեզվական քաղաքականության ակունքներում. Զիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքները, Ժամակակից Եվրասիա (խմբ.՝ Ռ. Սաֆրաստյան), հատոր III (2), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ, Երևան, 2014, էջ 52–76:
54. Զիյա Գյոքալփը՝ թուրք բանահյուսության և գրականության մասին, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 10-րդ հատոր, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 150–174:
55. Գրախոսություն. Թուրքիայի Հանրապետության պատմություն: Բուհական դասագիրք (պատ. խմբ.՝ Ռ. Սաֆրաստյան): Երևան, ԵՊՀ հրատ., 2014, 396 էջ, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 9-րդ հատոր, Երևան, ԵՊՀ հրատ., 2015, էջ 512–519 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):
56. Об изучении вопросов тюркской филологии в Армении. Актуальные вопросы отечественной и зарубежной иранистики. Международная научно-практическая конференция, Казань, 15-16 мая 2015 г., с. 244–249 (соавтор А. Симонян).

57. Խորհրդային արևելագետները՝ Զիյա Գյոքալփի մասին, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 11-րդ հատոր, Երևան, 2016, էջ 512–526:
58. Թուրքական գյոքալփագիտության պատմությունից, Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2 (647), մայիս-օգոստոս, Երևան, 2016, էջ 86–93:
59. Об армяно-казахских культурных связях и научном сотрудничестве между Арменией и Казахстаном. Вестник Евразийского национального университета им. Л. Н. Гумилева (научный журнал), № 1 (110), Астана, 2016, сс. 113–118 (соавтор Ж. Адилбаев).
60. Թուրքականությունը՝ Զիյա Գյոքալփից հարյուր տարի անց, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու), 12-րդ հատոր, Երևան, 2016, էջ 67-79:
61. Նոր օսմանականության հիմնահարցերը և հետխորհրդային թուրքագիտությունը, Հայոց ցեղասպանության ժխտողականությունը նոր օսմանականության գաղափարախոսության համատեքստում. Գիտաժողով, Երևան, 2016, էջ 51–56 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):
62. Армяно-кыпчакские рукописи – источники изучения истории тюркских языков. Россия–тюркско-мусульманский мир: историко-культурные связи. Казань–Елабуга, 2016, сс. 168–176 (соавтор Л. Саакян).
63. О взаимодействии тюркологов Казанского (Приволжского) федерального университета, Евразийского национального университета им. Л. Н. Гумилева и Ереванского государственного университета. Россия–тюркско-мусульманский мир: историко-культурные связи. Казань–Елабуга, 2016, сс. 160–167 (соавтор Ж. Адилбаев).

64. ТМД елдерінің түркітану орталықтары ынтымақтастығының келешегі туралы, ԱՊՀ թյուրքագիտական կենտրոնների համագործակցության հեռանկարների մասին (ղազախերեն), Түркі әлемі және халықаралық байланыстар: тарих, тұлға, келешек, 26-27 мамыр 2017 жыл, Астана 2017, б. 259–262. Թյուրքական աշխարհն ու միջազգային հարաբերությունները. Կատարումը, ներկան և ապագան, Աստանա, 2017, էջ 259–262 (ղազախերեն) (համահեղինակ՝ Մ. Ադիլբաев):
65. О преподавании турецкого языка в Ереванском государственном университете. Язык и культура в эпоху интеграции научного знания и профессионализации образования. Материалы международной конференции, Пятигорск, 2017, сс. 294–298 (соавторы Р. Мелконян, Н. Погосян).
66. Հայ ուսանողներին թյուրքերենի դասավանդման որոշ առանձնահատկությունների մասին, Արևելագիտության հարցեր (գիտական հոդվածների պարբերական ժողովածու, 13-րդ հատոր, Երևան, 2017, էջ 416-435 (համահեղինակ՝ Ս. Գալշոյան):
67. О преподавании восточных языков в Ереванском государственном университете. Тюркский мир и исламская цивилизация: проблемы языка, литературы, истории и религии. IX международная тюркологическая конференция 13-14 апреля 2018 г., К(П)ФУ, Казань, 2018, сс. 422-425 (соавторы Ж. Адилбаев, В. Восканян).
68. Незабываемые страницы истории изучения и популяризации творческого наследия великого узбекского поэта и гуманиста Алишера Навои в Армении и в Казахстан. Творческое наследие Алишера Навои и современность. Сборник докладов международной научной конференции, М., МГУ им. М.В. Ломоно-

- сова, 11-13 февраля, 2018 г., сс. 8-11 (соавторы Ж. Адилбаев, Н. Погосян).
69. О духовных ценностях и культурно-гуманитарном пространстве, объединяющих народы стран ЕАЭС. Армения в ЕАЭС. Евразийская экономическая интеграция в действии (сборник статей, глав. ред. - проф. А.А. Тавадян). Ереванский университет «Гладзор», Ереван, 2018, с. 83-95 (ред. Ар. Сафарян).
70. Еще раз об армяно-казахском научно-культурном сотрудничестве и вопросах лингвистического изучения армяно-кыпчакских рукописей. Материалы II-й научной конференции средневековой истории Дешт-и-Кыпчака. ТОО «Научно-исследовательский центр Дешт-и-Кыпчак», Астана, 2018, сс. 150–156 (соавтор А. Сафарян).
71. Об армяно-туркменских культурных связях и научно-образовательном сотрудничестве между Арменией и Туркменистаном. «Հայագիտության հարցեր» հանդես, թիվ 1(16), Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 226–235 (համահեղինակ՝ Ս. Մինոնյան)։
72. Safrastyan R., Melkonyan R., Ter-Matevosyan V., Dumanyan A., Chakryan H., Geghamyan V., Hovhannisyan A., History of the Republic of Turkey, Yerevan, 2018, 364 p. Journal of Oriental Studies (Dedicated to the 50th Anniversary of The Foundation of The Faculty of Oriental Studies of YSU), Yerevan, YSU Press, 2019, pp. 141-144 (coauthor՝ N. Poghosyan):
73. Օսմանյան կայսրության «միլլեթների համակարգի» և «հայ միլլեթի» կարգավիճակի հիմնահարցերի շուրջ, Հայագիտության հարցեր հանդես, թիվ 3(18), Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 79-90 (համահեղինակներ՝ Լ. Սահակյան, Դ. Հայրապետյան)։
74. Հայ-ղազախական պատմամշակութային առնչությունների պատմությունից /առաջարան, Ղազախական գրականության

- անթոլոգիա, խմբ.՝ Վ. Դևրիկյանի, Ալ. Սաֆարյանի, Երևան, 2019, էջ 5-38:
75. Հայաստանյան պատմաբանների աշխատություններում թյուրքականության գաղափարախոսության գնահատման պատմությունից, Պատմություն և մշակույթ հայազիտական հանդես, N 2, Երևան, 2019, էջ 129-136 (համահեղինակ՝ Ա. Սիմոնյան):
76. Աբայի «Սև խոսքերի» հայերեն հրատարակության առթիվ, Աբայ: Սև խոսքեր, Երևան, 2020, էջ 5-10 (նույնը՝ դազախերեն, նույն տեղում, էջ 11-15, նույնը՝ ռուսերեն, նույն տեղում՝ էջ 16-20, համահեղինակ՝ Թ. Ուրազան):
77. Մուխտար Աուեզովի «Աբայ» վեպի հայերեն երկրորդ հրատարակության առթիվ (Առաջաբան), Մուխթար Աուզով, Աբայ (վեպ), Երևան, 2020, էջ 5-15 (նույնը՝ ռուսերեն, նույն տեղում՝ էջ 11-15, համահեղինակ՝ Թ. Ուրազան):
78. Из истории армяно-казахских культурных связей. «Простор», Казахстан, N 2, 2020, с. 162-173.
79. О научно-образовательном сотрудничестве между Арменией и Казахстаном: реалии и перспективы. Հայազիտության հարցեր, № 3(21), Երևան, 2020, էջ 3-11 (соавтор А. Симонян).
80. О перспективах изучения традиций многовекового культурного сотрудничества народов стран ЕАЭС и опровержении европоцентричного императива. Армения в ЕАЭС. Экономический эффект интеграции. (Сборник статей, глав. ред.- проф. Ашот Тавадян), Ереван, 2020, с. 35-39.
81. Грамматика кыпчакского языка, включенная в армянский манускрипт (Матенадаран, рук. № 3522), созданный во Львове в XVII веке. Հայազիտության հարցեր, № 2(26), 2022, с. 213-235: (соавторы А. Симонян, Л. Саакян).

82. О перспективных направлениях сотрудничества университетов стран ЕАЭС: императив изучения проблематики многовековых традиций национальной и религиозной толерантности и культурного взаимообогащения народов Северной Евразии. Семь лет членства Армении в ЕАЭС: успехи, уроки и перспективы Евразийской интеграции. (Сборник статей, глав. ред.– проф. А. Тавадян), Ереван, 2022, сс. 43-48 (соавтор Ар. Сафарян).
83. О сотрудничестве Евразийских университетов в области изучения остродискуссионной проблематики на стыке арменистики и тюркологии. Избранные страницы Российско-армянского стратегического союза. (Сборник статей, глав. ред. – проф. Г. Петросян). Центр российских исследований факультета международных отношений Ереванского государственного университета, Ереван, 2022, сс. 34-38 (соавтор Н. Погосян).
84. Художественный перевод как вид культурной трансмисии в условиях социальных трансформаций. О переводах казахской литературы на армянский язык. Արևելագիտության հարցեր, 21, Երևան, ԵՊՀ հրատ. 2022, էջ 145-166 (համահեղինակներ Կ. Ուրազանա, Վ. Ռազումովսկայա)։
85. Թուրքերենի üzere և diye հետադրություններով կազմված բառակապակցությունների ու դրանց հայերեն համարժեքների դասավանդման առանձնահատկությունների շուրջ, Արևելագիտության հարցեր, 22, Երևան, 2022, էջ 95-109 (համահեղինակներ՝ Լ. Խաչատրյան Ա. Մարտիրոսյան)։
86. Թուրքական գրականության պատմության՝ Հայաստանում դասավանդման մեթոդական առանձնահատկությունների շուրջ, Արևելագիտության հարցեր, 23, Երևան, 2023, էջ 81-105 (համահեղինակ՝ Ա. Մարտիրոսյան, Ս. Գալշոյան)։

87. Об освещении армянскими тюркологами-османистами ряда междисциплинарных проблем арменистики и тюркологии на современном этапе. Բանբեր հայագիտության, 2023, N 3 (33), էջ 140-151 (համահեղինակ՝ Պետրոսյան Վ., Սահակյան Լ.).

ԶԵՎՈՒՑՈՒՄՆԵՐԻ ԹԵԶԻՄՆԵՐ

88. Сравнительно-типологическое изучение “ранневозрожденских” тенденций в творчестве Григора Нарекаци и поэтов-суфиев (постановка проблемы). Тезисы докладов 3-й республиканской конференции аспирантов Арм. ССР, Ереван, 1989.
89. Նոր թարգմանություններ Յունուս Էմրեի «Դիվանից», Բանասիրության հարցեր (հոդվածների և հաղորդումների ժողովածու՝ նվիրված պրոֆ. Գ. Նալբանդյանի 70-ամյակին, խմբ. Գ. Մելիքյան), «Իրան-Նամե» մատենաշար, Երևան, 1996, էջ 5:
90. Թուրք-հայկական հարաբերությունների արտացոլումը թուրքական տեղեկատվության միջոցներում (1991–1996 թթ.), «Գիտական տեղեկատվության արդի վիճակը, հեռանկարները և հնարավորությունները ՀՀ-ում» հանրապետական գիտաժողովի նյութերը», ՀՀ ԳԱԱ, Երևան, 1997, էջ 33-35 (համահեղինակ՝ Զ. Միրզոյան):
91. Աղոթքի և զիբրի փոխկապակցվածության մեկնաբանությունը Իբն Արաբիի «Ֆուտուս-ալ-Հիքամ»-ում, Երիտասարդ արևելագետների հանրապետական XX գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ, Երևան, 1999 (համահեղինակ՝ Ռ. Միրաքյան):
92. Զիյա Գյոքալվիի մշակութաբանական հայացքների շուրջ, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի 30-ամյակին նվիրված գիտաժողովի զեկուցումների թեզիսների ժողովածու, Երևան, 1998, էջ 33–34 (համահեղինակ՝ Զ. Միրզոյան):

93. Կրկին Զիյա Գյոքալփի մշակութաբանական հայացքների շուրջ, Պրոֆ. Ջոն Կիրակոսյանի 70-ամյակին նվիրված գիտա-ժողովի զեկուցումների թեզիսների ժողովածու, ԵՊՀ, «Արտագերս», Երևան, 1999, էջ 75-77 (համահեղինակ՝ Լ. Սահակյան):
94. Ժամանակակից թուրքերենի դերբայների և նրանց դասավանդման մի քանի առանձնահատկությունների մասին, Երիտասարդ արևելագետների հանրապետական XX գիտական նստաշրջանի զեկուցումների թեզիսներ, ՀՀ ԳԱԱ, Երևան, 1999 (համահեղինակ՝ Լ.Սահակյան):
95. Apology of Sufism in Divan by Yunus Emre. XXVIth International Congress of Assian and North African Studies, Book of Abstracts of ICANAS –2000, Montreal, Canada, 2000, p. 60 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):
96. Սփյուռքահայ ուսանողներին օսմանագիտական կրթական ու հետազոտական ծրագրերում ընդգրկելու մասին, Օտարերկրացիների ուսուցումը Հայաստանում, «Հիմնախնդիրներ և լուծումներ», Միջազգային կրթական գիտաժողով, Երևան, 2008, էջ 117–118 (համահեղինակ՝ Լ. Սահակյան):
97. Զիյա Գյոքալփի լեզվաբանական հայացքների շուրջ, Մերձավոր Արևելք և Կովկաս (Միջազգային գիտաժողով՝ նվիրված Արևելագիտության ինստիտուտի հիմնադրման 50-ամյակին), Երևան, 2008, էջ 78–79:
98. Investigations of Prominent Turkmen Thinker – Sufi Nejmeddin Kubra in Armenia Nejmeddin Kubra and Spiritual – Cultural World of Orient, Asgabat- Dashoguz, 2008, pp.184–185 (նույնը՝ թուրքմ. էջ 88–89, նույնը՝ ռուս. էջ 285–286) (coauthor R. Melkonyan).
99. Л. Рашони – об истории и культуре периода правления Сельджуков. Литература и культура эпохи сельджуков. Материалы международной конференции (11–13 марта 2009 г.), Нацио-

нальный культурный центр Туркменистана, Высший совет по науке при президенте Туркменистана, Ашгабад, 2009, с. 355–356.

100. Л. Рашони – исследователь средневековой туркменской культуры. Туркмения в представлениях иностранных путешественников. Материалы международной научной конференции (28–29 апреля 2009), Ашгабад, 209, сс. 302–303.
101. Об эпосе Героглы Кероглы и его армянских версиях, сюжет Героглы и литература Востока. Материалы международной научной конференции (23–25 сентября 2009), Дашпогуз, 2009, сс. 360–361 (соавтор А.Согомонян).
102. A View on Armenian-Turkish Relations. Warsaw East European Conference 2010, Where are we? Post-Communist and Post-Soviet Countries over Past Twenty Years (Bibliotheca Europae Orientalis, XXXVI), Abstracts, parva 5, Warsaw, 2010, p. 42 (coauthor R. Melkonyan).
103. О литературном наследии Молланепеси и его переводах на армянский язык. Молланепеси. Жизнь туркмен XIX века. Материалы международной научной конференции, Национальный институт рукописей Туркменистана, Мары, 2010, с. 334 (соавтор А. Согомонян).
104. On Adaptation of Traditional Images in the Works of Eastern Christian and Islamic Poets, Abstracts of the World Philosophy Day Congress, Tehran, Iran, 2010, p. 249 (coauthor L. Sahakyan).
105. О результатах мониторинга информации, отражающей армяно-турецкие и армяно-азербайджанские отношения в турецких и азербайджанских СМИ. Պատմություն և մշակույթ. ընդդեմ կեղծիքի և ունձգության, Հանրապետական գիտաժողովի հիմ-

- նաիրույթներ, Երևան, 2011, էջ 104 (համահեղինակ՝ Ար. Սաֆարյան)։
106. О филологической ценности армяно-кыпчакских рукописей XVII в., хранящихся в Матенадаране (Ереван). Тезисы международного тюркологического симпозиума «Тюркский мир: история и современность», Евразийский Национальный университет им. Л. Н. Гумилева, Астана, Казахстан, 2011, с. 103 (соавтор Л. Саакян).
107. Об адаптации традиционных образов в произведениях восточно-христианских мистиков и суфиев. Формирование туркменского народа и история мировой культуры. Материалы международной научно конференции НАН Туркменистана, Ашгабад, 2011, с. 524 (նւյնը՝ թւրքու. էջ 165, անգլ. էջ 338) (соавтор Р. Мелконян).
108. Об изучении туркменской литературы в Армении. Рукописи – первичный источник изучения национального наследия. Материалы международной научной конференции 13-14 марта 2013 г., Ашхабад, 2013, с. 421 (соавтор Г. Меликян).
109. Образ Махмуда Газнави в “Маснави и Маанави” Мевляны Джелаледина Руми. Туркменская литература эпохи Газнавидов и духовная культура мира. Тезисы международной научной конференции. Ашхабад, 2013, сс. 428–429. (նւյնը՝ թւրքու. էջ 133, անգլ. էջ 286–287) (соавтор А. Саргсян).
110. О переводах произведений Махтумкули Фраги на армянский язык. Махтумкули Фраги и общечеловеческие культурные ценности (Материалы международной научной конференции, 14-16 мая 2014 г.), Национальный институт рукописей АН Туркменистана, «Ылым», Ашгабад, 2014, сс. 62-63 (соавтор А. Симонян).

111. О перспективных направлениях сотрудничества туркменских и армянских медиевистов и востоковедов. «Образование и спорт в эпоху могущества и счастья», Ашгабад, ноябрь 2015 г., сс. 377-378 (соавтор А. Саргсян).
112. Խորհրդային և ռուսաստանյան արևելագետները՝ թուրքիզմի և պանթուրքիզմի մասին, Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո, միջազգային գիտաժողով-4, Երևանի պետական համալսարան, Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա, մայիս, 2016 թ., Երևան, ԵՊՀ հրատ., էջ 49 (համահեղինակ՝ Գ. Մելիքյան):
113. Օսմաներենի դասավանդման սկզբունքները հայալեզու լսարանում, Ժամանակակից լեզվաբանությունը միջգիտակարգայնության լույսի ներքո, միջազգային գիտաժողով-4, Երևանի պետական համալսարան, Անգլերենի ուսումնասիրության հայկական ասոցիացիա, մայիս, 2016 թ., Երևան, ԵՊՀ հրատ., էջ 58-59 (համահեղինակ՝ Լ. Սահակյան, Ա. Սարգսյան):
114. Об армяно-туркменских культурных связях и научно-образовательном сотрудничестве между Арменией и Туркменистаном. «Образование и спорт в эпоху могущества и счастья» (Материалы международной научной конференции, 9-10 ноября 2016 г.) Ашгабад, 2016, с. 316-317 (соавтор А. Симонян).
115. О перспективах гуманитарного сотрудничества между Арменией и Казахстаном. Казахстан во всемирной истории: вечные ценности и новые горизонты. МГУ им. М. В. Ломоносова, М., 2016, с. 142 (соавторы Н. Погосян, Ж. Адилбаев).
116. Об изучении армянографических тюркоязычных литературных памятников. «Азия и Африка: наследие и современность» (XXIX Международный конгресс по историковедению и историографии стран Азии и Африки, 21-23 июня 2017 г. Материалы

конгресса (отв. ред. Н. Н. Дьяков, А. С. Матвеев), СПбГУ, СПб, 2017, сс. 295–296 (соавтор А. Саргсян).

117. О сотрудничестве Ереванского государственного университета с ведущими тюркологическими центрами Туркменистана. «Образование и спорт в эпоху могущества и счастья» (Материалы международной научной конференции). Ашгабад, 2018, сс. 66–68 (соавтор А. Симонян).
118. Русский язык и мировая тюркология: история, реалии и перспективы. II Международный конгресс «Языковая политика стран Содружества Независимых Государств» (Алма-Аты, 26–28 октября 2021 г.), сборник тезисов, М., 2021, сс. 119–120.
119. Ermenistanda we ermeni diasporasynda beýik türkmen şahyry we akyldary Magtymguly Pyragynyň döredijilik mirasyny wagyz etmek barada, “Magtymguly pyragy we türkmen halkynyň garaşsyz döwletlilik taglymaty” atly halkara maslahat (2021-nji ýylyň 26-njy iýuny), Aşgabat, 2021, s. 13 (թուրքմեններեն, համահեղինակ՝ Ա. Պետրոսյան).

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ВОПРОСЫ ВОСТОКОВЕДЕНИЯ

JOURNAL OF ORIENTAL STUDIES

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.y-su.am